ԱԶԱՏ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

ԷՅՄՈՆ ԲԱԹԼԵՐ

ԵՐԵՎԱՆ
2015

ՀՏԴ 32.001
ԳՄԴ 66.0
Բ 170

«Ազատ հասարակության հիմունքները» գրքի ներկա՝ հայերեն թարգմանությունը հրատարակվել է Ֆրիդրիխ Նաուման հիմնադրամի աջակցությամբ

The present Armenian translation of the book "Foundations of a Free Society" is published with the support of Friedrich Naumann Foundation for Freedom

«Ազատ հասարակության հիմունքները» գրքի սույն հայերեն թարգմանությունն անգլերենից կատարել է «Լայն հնարավորություններ» երիտասարդական հասարակական կազմակերպությունն իր՝ «Հայկական ազատություն ուսանողական կազմակերպություն» ծրագրի շրջանակներում

The present Armenian translation of the book "Foundations of a Free Society" from English into Armenian language was done by "Wide Opportunities" Youth NGO under its program "Armenian Liberty Students Organization"

Բ 170 Ազատ հասարակության հիմունքները/Էյմոն Բաթլեր:.- Եր.: «Տիր» հրատ., 2015. - 198 էջ:

ՀՏԴ 32.001
ԳՄԴ 66.0

ISBN 978-9939-865-13-3

© Տնտեսական գործերի ինստիտուտ, 2013
© «Լայն հնարավորություններ» երիտասարդական հասարակական կազմակերպություն՝ թարգմանության համար, 2015

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հեղինակի մասին……1
Նախաբան Ալի Սալմանի կողմից……2
Շնորհակալական խոսք……5
Համառոտագիր……6

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……9
Սույն գրքի նպատակը……9
Ինչպես է կառուցված գիրքը……10

2. ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ……12
Ազատ հասարակություն……12
Ազատության բարոյական կողմը……16
Ազատության տնտեսական կողմը……25

3. ԱԶԱՏ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԸ……39
Հասարակությունն առանց պետության……39
Ինչո՞ւ կառավարությունը պետք է սահմանափակ լինի……42
Կառավարության սահմանափակման եղանակները……56
Կանոններ սահմանելը……62

4. ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ……66
Հավասարությունն ազատ հասարակությունում……66
Հավասարության տեսակները……67
Արդյունքների հավասարություն……76
Հավասարություն և արդարություն……81
Հավասարապաշտության հետագա վնասները……86

5. ԱԶԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԵՎՏՈՒՐ……91
Ազատ շուկայական տնտեսությունը……91
Ինչպես հարստանալ……95
Ինչպես են գործում շուկաները……102
Միջազգային առևտուրը……109

6. ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ…….....114
Մասնավոր սեփականություն……....…...114
Արդարության կանոնները……....……120
Օրենքի գերակայությունը…….....127
Մարդու իրավունքներ……...……..…133

7. ԻՆՔՆԱԲՈՒԽ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ……...136
Կարգ ու կանոն առանց հրահանգների……...136
Հանդուրժողականություն.....140
Այլասիրության խնդիրը (ալտրուիզմ).....152

8. ՄԱՄՆԱՎՈՐԵՑՈՒՄ ԵՎ ԳԼՈԲԱԼԻԶԱՑԻԱ……..158
Միգրացիա և տեխնոլոգիաներ……158
Ազատ հասարակության աճը……...159
Սեփականության իրավունքները գործողության մեջ……..161
Հանրային ծառայություններն առանց կառավարության……170
Գլոբալիզացիա և առևտուր……...179
Խաղաղության կարևորությունը.....183

9. ՀԱՄԱՌՈՏ ՓԱՍՏԱՐԿՆԵՐ……...186
Փաստարկ հօգուտ ազատության……186
Սահմանափակ լիազորություններով կառավարություն……187
Ավելի մեծ հավասարություն……187
Ազատ տնտեսություն……..188
Արդարադատություն և օրենքի գերակայություն……..189
Ինքնաբուխ հասարակություն……..190
Ազատության աշխարհը……..191

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....193

ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Էյմոն Բաթլերը Ադամ Սմիթ ինստիտուտի՝ քաղաքականության առաջատար վերլուծական կենտրոնի տնօրենն է: Նա գիտական աստիճաններ ունի տնտեսագիտությունից, փիլիսոփայությունից և հոգեբանությունից, իսկ դոկտորի կոչումն ստացել է 1978 թվականին՝ սուրբ Էնդրյուսի համալսարանում: 1970-ական թվականներին նա աշխատել է ԱՄՆ Ներկայացուցիչների պալատում և փիլիսոփայություն դասավանդել Միչիգանի Հիլսդեյլ քոլեջում, ապա վերադարձել Մեծ Բրիտանիա և օժանդակել Ադամ Սմիթ ինստիտուտի ստեղծմանը: 2012 թվականին նա Էդինբուրգի բիզնես դպրոցի կողմից արժանացել է գրականության պատվավոր դոկտորի կոչման: Ներկայումս նա Մոնթ Պերելին ընկերակցության քարտուղարն է:

Էյմոնը հեղինակել է մի շարք գրքեր, նվիրված նորարարական տնտեսագետներ Միլթոն Ֆրիդմանի, Ֆ. Ա. Հայեկի և Լյուդվիգ ֆոն Միզեսի աշխատանքներին, ինչպես նաև Ավստրալիայի տնտեսագիտության դպրոցի դասագիրքը: ՏԳԻ համար նա դասագրքեր է գրել Ադամ Սմիթի, Լյուդվիգ ֆոն Միզեսի և հանրային ընտրության տեսության մասին: Էյմոնը աշխատավարձի և գների վերահսկողության պատմության և մտավոր զարգացման գործակցի (IQ) մասին մի շարք գրքերի համահեղինակ է: Նրա վերջին հայտնի հրապարակումները՝ «Լավագույն գիրքը շուկայի մասին», «Բրիտանիայի փտած պետությունն ու այլընտրանքային մանիֆեստը», մեծ ուշադրության են արժանացել: Նա հաճախ հանդես է գալիս հեռարձակվող լրատվամիջոցներով և տպագրվում մամուլում:

ՆԱԽԱԲԱՆ

Տնտեսական և քաղաքական ճգնաժամերի դեպքում ազատությունը հաճախ հարձակումների է ենթարկվում: «Մեծ դեպրեսիայի» ընթացքում առևտուրը սահմանափակվեց բոլոր խոշոր տնտեսությունների կողմից սակագները բարձրացնելու հետևանքով: Այս ինքնաբուխ ռեակցիան միայն ավելի վատթարացրեց աշխարհաքաղաքական լարվածությունն ու էլ ավելի սրեց տնտեսական խնդիրները: Արմատական սոցիալիստական վարչակարգերի առաջացումը հանգեցրեց երկրագնդի կեսում քաղաքացիական, քաղաքական և տնտեսական ազատությունների համընդհանուր ընկճվածությանը:

Ավելի ուշ, սեպտեմբերի 11-ի իրադարձություններն ու ԱՄՆ-ի արձագանքը սկիզբ դրեցին մի մարտավարության, որը, հօգուտ անվտանգության մեծացման, սահմանափակեց ազատությունը: Նույն կերպ, համաշխարհային տնտեսական ճգնաժամը, որն սկսվել էր 2008 թվականին և ևս ծնունդ էր առել ամերիկյան հողում, ուղեկցվում էր վերահսկողության, կարգավորումների ու պաշտպանական միջոցների աճով: Ազատ շուկայի ստեղծարար ոչնչացնող սկզբունքի վրա հիմնվելու փոխարեն՝ Ատլանտյան օվկիանոսի երկու կողմերում պետությունները հարկատուների ահռելի գումարներ օգտագործեցին՝ ձախողվող բիզնեսներին ձեռք մեկնելու համար:

Ազատությունը հայտնվեց աճող սպառնալիքի տակ: Քառորդ դար առաջ աշխարհը համակվեց Խորհրդային Միության հռչակած «հրապարակայնությամբ», ապա տոնեց Բեռլինի պատի փլուզումը: Սակայն, նոր մարտահրավերներ առաջացան Եվրոպայում՝ նեո-ազգայնականության, իսկ Մերձավոր Արևելքում՝ ռադիկալիզմի ձևով: Վերահսկողությունից դուրս լինելու դեպքում երկու միտումներն էլ կհանգեցնեն ազատության նվազեցմանը: Եվրոպայի այս վերադարձը դեպի ազգայնականություն և նույնիսկ դեպի ռասիզմ տեղի է ունենում ի հեճուկս քաղաքական ազատության առավել բարձր աստիճանի, գործող ժողովրդավարության առկայությամբ: Մերձավոր Արևելքում կրոնական

արմատականության աճը այդքան էլ զարմանալի չէ, քանի որ ոչ շուկան և ոչ էլ ժողովրդավարությունը այստեղ լավ վիճակում չեն:

Չնայած այս խնդիրներին, 21-րդ դարում անհատները շատ առումներով ավելի ազատ են, քան նախորդ դարի իրենց նախնիները: Տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների հեղափոխությունը տապալեց բոլոր արգելքները: Չինաստանում, օրինակ, ականավոր գրող և քննադատ Լի Չենգպենգի «Սինա Վեյբո» բլոգն ունի վեց միլիոն հետևորդ: «Արաբական գարնան» ընթացքում սոցիալական լրացվամիջոցները նպաստեցին լայնատարած քաղաքական և սոցիալական առաջընթացի ապահովմանը: Եթե տեղեկատվությունն ուժ է, ապա տեղեկատվական տեխնոլոգիաներն անհատին զինում են իրավունքներով: Աշխարհագրական սահմանները մնում են, սակայն դրանք ավելի ու ավելի անկարևոր են դառնում:

Այս ենթատեքստում, Էյմոն Բաթլերի մենագրության հրատարակումը ճիշտ ժամանակին էր: «Ազատ հասարակության հիմունքները» գիրքը ցանկալի լրացում է ազատության ժամանակակից դասագրքերի ընտանիքում: Բաթլերի եզակի հմտությունը կայանում է բարդ և ազդեցիկ գաղափարները պարզ անգլերենով արտահայտելու իր ունակության մեջ: Իր գաղափարները լուսաբանող և տեսական փաստարկներն ամրապնդող իրական աշխարհի օրինակներով նա հաջողությամբ հօդս է ցնդեցնում քննադատների ու հակառակորդների փաստարկները:

Այս «Պարբերական հրատարակությունը» հիանալի ներածական տեքստ է նրանց համար, ովքեր կցանկանան հասկանալ ազատ հասարակության հիմնարար սկզբունքները: Այն հատկապես օգտակար կլինի այս սկզբունքներին մեծամասամբ անտեղյակ բնակչություն ունեցող երկրներում ազատության գաղափարները տարածողների, ինչպես նաև ազատության պաշտպանների համար՝ այն վայրերում, որտեղ ավանդական ազատությունները ենթարկվում են հարձակումների:

ԱԼԻ ՍԱԼՄԱՆ

Շուկայական տնտեսության քաղաքականության
հետազոտական ինստիտուտի (ՇՏՔՀԻ)
հիմնադիր և գործադիր տնօրեն
Իսլամաբադ, Պակիստան, Սեպտեմբեր, 2013

Այս մենագրությունում, ինչպես և ՏԳԻ բոլոր հրապարակումներում, արտահայտված տեսակետերը պատկանում են հեղինակին, այլ ոչ թե ինստիտուտին (որը չունի կորպորատիվ տեսակետ), նրա ղեկավար հոգաբարձուներին, Ակադեմիական խորհրդատվական խորհրդի անդամներին կամ ավագ աշխատակիցներին: Որոշակի բացառություններով, ինչպիսիք են՝ դասախոսությունների հրապարակումները, բոլոր ՏԳԻ մենագրությունները կույր գրաքննության են ենթարկվում ոլորտի փորձագետների՝ առնվազն երկու գիտնականի կամ հետազոտողի կողմից:

ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ԽՈՍՔ

Հատուկ շնորհակալություն Նիգել Աշֆորդին, ով հեղինակին թույլ է տվել բազմաթիվ գաղափարներ օգտագործել իր «Ազատ հասարակության սկզբունքները» գրքից: Մյուս օգտակար աղբյուրներից են Հ. Բ. Էքթոնի «Շուկաների բարոյականությունը», Ջ. Ս. Միլի «Ազատության մասին», Մադսեն Փիրիի «Ազատություն 101», Ռիչարդ Վելլինգսի «Ազատության ուղեցույց սկսնակների համար», Էռնեստ Բենի «Ինչու է ազատությունը գործում» և Թոմ Փալմերի «Կապիտալիզմի բարոյականությունը» գրքերը:

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

- Ազատությունը բարեկեցություն է ստեղծում: Այն կապանքներից ազատում է մարդկային տաղանդը, գյուտարարությունն ու նորարարությունը՝ ստեղծելով հարստություն այնտեղ, որտեղ այն նախկինում գոյություն չի ունեցել: Ազատություն որդեգրած հասարակությունները հարստացել են, մյուսները մնացել են աղքատ:
- Ազատ հասարակությունում մարդիկ չեն հարստանում մյուսներին շահագործելու միջոցով, ինչպես դա անում են պակաս ազատ երկրների վերնախավերը: Նրանք չեն կարող հարստանալ մյուսներին աղքատացնելու հաշվին: Նրանք հարստանում են միայն այլոց կյանքը բարելավելով և մյուսներին տրամադրելով նրանց ցանկացածը:
- Ազատ հասարակությունների տնտեսական հարաշարժության գլխավոր շահառուներն աղքատներն են: Ազատ հասարակությունները տնտեսապես ավելի հավասար են, քան ոչ ազատները: Մեծամասամբ ազատ հասարակություններում աղքատները վայելում են այն ճոխությունը, որի մասին նրանք մի քանի տարի առաջ չէին կարող երազել, և որոնք ոչ ազատ հասարակություններում հասանելի են միայն իշխող վերնախավին:
- Միջազգային առևտուրը ձեռնարկատերերին տալիս է նոր շուկայական հնարավորություններ: Միայն վերջին քսան տարվա ընթացքում այն օգնել է միլիարդավոր մարդկանց դուրս գալ ծայրահեղ չքավորությունից: Ազատությունը, հիրավի, մարդկային պատմության ամենաորակյալ և արդյունավետ ուժերից մեկն է:
- Հարստությունը կամ եկամուտները հավասարեցնելու կառավարության փորձերը ոչ արդյունավետ են: Դրանք ոչնչացնում են համառ աշխատանքի և ձեռնարկատիրական խթանները և վհատեցնում են մարդկանց՝ ստեղծելու ամբողջ հասարակության արդյունավետությունն ավելացնող կապիտալը: Ազատ հասարակությունն ինքնա-

բուխ է: Այն կառուցվում է այնպիսի կանոնների հետևող անհատների գործողությունների հիման վրա, որոնք նպաստում են խաղաղ համագործակցությանը: Այն պարտադրված չէ քաղաքական վերնախավի կողմից:

- Ազատ հասարակությունում կառավարության դերը շատ սահմանափակ է: Այն նպատակ ունի կանխել իր քաղաքացիներին պատճառվող վնասները՝ արդարության ապահովման և հարկադրման միջոցներով: Այն չի ձգտում նյութական հավասարության և չի արգելում արարքները միայն այն պատճառով, որ որոշ մարդիկ դրանք համարում են անախորժ կամ վիրավորական: Առաջնորդները չեն կարող ի նպաստ իրենց կողոպտել քաղաքացիներին, առավելություններ բաշխել իրենց ընկերներին կամ կիրառել իրենց իշխանությունը թշնամիների դեմ:
- Ազատ հասարակության կառավարությունը սահմանափակված է օրենքի գերակայությամբ: Օրենքները կիրառվում են հավասարապես բոլորի նկատմամբ: Բոլոր դեպքերում պարտադիր է պատշաճ իրավական գործընթացի ապահովումը, որը պետք է ուղեկցվի արդար դատավարություններով, և ոչ ոք չպետք է ենթարկվի երկարաժամկետ կալանքի առանց դատավարության: Իրավախախտումների մեջ մեղադրվող անձանց հարկավոր է վերաբերվել որպես անմեղների, քանի դեռ չի ապացուցվել նրանց մեղավորությունը, և անհատները չպետք է մի քանի անգամ հետապնդվեն միևնույն իրավախախտման համար, եթե դրա համար նրանք արդեն պատասխանատվություն են կրել օրենքով սահմանված կարգով:
- Հանդուրժողականությունը այլոց գաղափարների ու կենսակերպի նկատմամբ օգուտ է բերում հասարակությանը: Ճշմարտությունը միշտ չէ, որ ակնհայտ է. այն առաջանում է գաղափարների պայքարում: Մենք չենք կարող վստահ լինել, որ գրաքննիչները ճնշում են միայն սխալ գաղափարները: Նրանք կարող են թյուրիմացաբար ճնշել այն գաղափարներն ու գործելակերպը, որոնցից հասարակությունը մեծապես կշահեր ապագայում:

- Հեռահաղորդակցության տեխնոլոգիաներն ավելի են բարդացնում ավտորիտար կառավարությունների կողմից իրենց գործողությունները մնացած աշխարհից թաքցնելը: Արդյունքում, ավելի ու ավելի շատ երկրներ են բացվում առևտրի ու տուրիզմի առջև, և նորանոր գաղափարներ են տարածվում: Ավելի շատ մարդիկ են տեսնում սոցիալական ու տնտեսական ազատության առավելությունները և պահանջում դրանք:

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն գրքի նպատակը

Սույն գիրքը նախանշում է ազատ հասարակությունը բնորոշող հիմնարար սկզբունքները: Գրքի անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ իրական անձնական, սոցիալական, քաղաքական և տնտեսական ազատությունները հազվադեպ են հանդիպում նույնիսկ այն երկրներում, որոնք իրենց ազատ են համարում: Ամենաազատ և անազատ երկրների միջև տարբերությունը իսկապես մեծ է, թեև բոլոր երկրներում, շատ թե քիչ չափով, մարդկանց սոցիալ-տնտեսական կյանքը սահմանափակվում կամ հսկվում է պաշտոնատար և քաղաքական դեմքերի կողմից: Այդպիսի սահմանափակումներն ու հսկողությունը այնքան երկար են մեզ շրջապատել և այնքան շատ են մտել մեր առօրյա կյանքի մեջ, որ մշակույթի մի մաս են դարձել: Պարզապես, մարդիկ վերաբերում են դրանց որպես կյանքի մի մաս՝ համարելով բնական ու անխուսափելի:

Արդյունքում, աշխարհի բնակչության մեծ մասը՝ նույնիսկ հավատալով, որ ապրում է ազատ հասարակությունում, դժվարությամբ է պատկերացնում, թե ինչ է իրենից ներկայացնում իրական ազատությունը: Դեռևս քչերն են հասկանում, թե ինչի է նման ազատ հասարակությունը և ինչպես կարող է այն գործել:

Այնուամենայնիվ, մարդկանց մեծամասնությունն ազատատենչ է: Նրանք ցանկանում են հնարավորություն ունենալ առանց անթիվ թույլատրություններ ստանալու մտնել առևտրային հարաբերությունների մեջ: Նրանք ցանկանում են իրենց անվտանգ զգալ իրենց տներում, ֆերմաներում ու աշխատանքի վայրերում, այլ ոչ թե ենթարկվել քաղաքական գործիչների որոշումներից տուժելու ռիսկին: Նրանք ցանկանում են ինքնուրույն որոշել, թե ինչն է լավ իրենց ընտանիքների համար, այլ ոչ թե հետևել, թե ինչ կթելադրեն քաղաքական գործիչները: Նրանք ցանկանում են ապրել, առանց պարտադրված լինելու կաշառել ոստիկանությանն ու բյուրոկրատներին՝ իրենց հանգիստ թողնելու համար:

Ահա թե ինչու է այդքան կարևոր ընդգծել սոցիալական ու տնտեսական ազատության հիմնարար սկզբունքները: Ազատության էության ու դրա գործելու եղանակի հստակ տեսլականը այն հիմքն է, որի վրա մարդիկ կարող են կառուցել ճշմարիտ ազատ հասարակություն:

Ինչպես է կառուցված գիրքը

2-րդ գլխում բացատրվում են ոչ միայն ազատ հասարակություն ունենալու *տնտեսական* առավելությունները, այլ նաև ազատության *բարոյական* կողմը: Ազատ տնտեսությունն ու հասարակությունը հիմնված են խորն արժեքների վրա. ոչ թե այն արժեքների, որոնք մարտահրավեր են նետում այլ բարոյական համակարգերին, այլ արժեքներ, որոնք զորակցում, ամրապնդում ու բարելավում են դրանք: Ազատությունը բոլորի համար է:

3-րդ գլխում նշվում է, թե ինչպես կարող է ազատ հասարակությունը համաչափ ու արդյունավետ կերպով բավարարել մարդկանց պահանջմունքները, առանց իշխանավոր ղեկավարների, որոնք յուրաքանչյուրին թելադրում են, թե ինչ անել: Բացատրվում է, թե ինչու կառավարությունը իր գործունեության և իշխանության հարցերում պետք է *սահմանափակված* լինի, ցույց է տրվում, թե ինչպիսին կարող է լինել ազատ հասարակությունն ու ինչպես այն կգործի:

4-րդ գլխում քննարկվում է *ազատության* և *հավասարության* միջև առկա ակնհայտ լարվածությունը: Փաստարկներ են բերվում առ այն, որ ավելի մեծ ազատությունը հանգեցնում է ավելի մեծ հավասարության այնտեղ, որտեղ դա կարևոր է: Սակայն հասարակությանը արդյունքների հավասարություն պարտադրելու փորձերը խարխլում են ազատության սկզբունքները և պատճառում երկարաժամկետ վնասներ:

5-րդ գլխում ընդգծվում է ազատ հասարակության տնտեսական շրջանակը՝ բացատրելով, թե պետական վերահսկողությունից ազատվելուց հետո ինչպես է շուկայում բարեկեցություն ստեղծվում ու տարածվում: Թվարկվում են այն կանոն-

ները, որոնց մենք հետևում ենք այդ գործընթացի համաչափությունն ապահովելու համար, ինչպես նաև նշվում է մարդկային համագործակցության խթանման հարցում ազատ առևտրի որոշիչ կարևորությունը:

6-րդ գլխում ուսումնասիրվում են *սեփականության* ու *արդարության սկզբունքները*: Բացատրվում է, թե ինչպես է հարկավոր ապահովել ազատ հասարակության օրենքների ընդհանրությունը, որպեսզի նրանք հավասարապես վերաբերեն թե՛ իշխանության ներկայացուցիչներին, թե՛ հասարակ քաղաքացիներին, եթե հարկադրանքն ու շահագործումը հնարավորինս նվազեցվեն: Բացատրվում է նաև, թե ինչպես է ազատ հասարակությունը հարգում մարդու հիմնարար իրավունքները:

7-րդ գլխում մանրամասն բացատրվում է, թե ազատ հասարակությունն ինչպես է գործում՝ առանց իշխանավորների հրահանգների կարիքի: Ընդգծվում են այն հիմնական *բարոյական* ու *վարքագծային կանոնները*, որոնք սահմանում են լավ գործող, սակայն ազատ սոցիալական կարգ: Նշվում են հանդուրժողականության անհրաժեշտությունը և հասարակությունը ալտրուիզմի վրա հիմնելու խնդիրները:

8-րդ գլխում դիտարկվում է, թե ինչպես է կառուցվում ազատ հասարակությունն այնտեղ, որտեղ այն գոյություն չունի: Ցույց է տրվում առաջընթաց ապահովող *խթանների* կարևորությունը առօրյա կյանքում և վերևից որոշումներ պարտադրելու անհեռատեսությունը: Նկարագրվում է, թե ինչպես նույնիսկ կենսական ծառայությունները կարող են իրականացվել առանց կառավարության: Ընդգծվում է *ազատ առևտրի* ու *խաղաղության* կարևորությունը:

2. ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ազատ հասարակություն

Ինչ է նշանակում ազատություն

Ազատությունը նշանակում է ավելին, քան բանտարկված կամ ստրկացված չլինելը: Այն նշանակում է իրավունք ունենալ գործելու, խոսելու և մտածելու այնպես, ինչպես դուք եք ընտրում, առանց այլ, ներառյալ իշխանության մեջ եղած, անձանց կողմից հարկադրվող կոշտ սահմանափակումների: Այն վերաբերում է ձեր անձնական, ընտանեկան և սոցիալական կյանքին, ինչպես նաև քաղաքական հայացքներին և մյուսների հետ ձեր տնտեսական գործարքներին:

Ազատ հասարակությունը ձգտում է պահպանել այս սկզբունքները: Պատմության ընթացքում և այսօր ազատությունը նկատելի հաջողություններ է արձանագրել բարեկեցության ստեղծման և տարածման գործում: Այն ապացուցել է, որ հանդիսանում է մարդկության ամենաստեղծարար ու արդյունավետ ուժերից մեկը: Այն բարելավել է մարդկանց, հատկապես ամենաաղքատների կյանքը ամբողջ աշխարհում:

Ազատությունը նշանակում է, որ որևէ խոչընդոտ չկա ձեր ճանապարհին, և ոչ մի սահմանափակում չի խանգարում ձեզ վարվել այնպես, ինչպես դուք եք ընտրում: Դա նշանակում է չենթարկվել հարկադրանքի, թելադրանքի, սպառնալիքների, վախի, միջամտության կամ մանիպուլյացիայի (մանիպուլյացիայի) այլոց կողմից: Դա նշանակում է ապրել առանց հարձակումների և խարդախության ենթարկվելու, կողոպտված կամ վնասված լինելու: Դա այդպես է, քանի որ ազատության սկզբունքը ազատ հասարակությունում վերաբերում է հավասարապես բոլորին: Մեզանից ոչ ոք իրավունք չունի միջամտել, խոչընդոտել կամ վնասել այլոց, ինչը կհերքի այն ազատությունը, որը նրանք նույնպես ունեն:

Այսպիսով, ազատությունը գոյություն ունի այնքան ժամանակ, քանի դեռ չի վնասում մյուսներին: Ձեր բռունցքները

թափահարելու իրավունքը ավարտվում է այնտեղ, որտեղ սկսվում է իմ քիթը: Դուք ազատություն չեք իրացնում, եթե սպառնում, հարկադրում, կողոպտում, հարձակում եք գործում կամ սպանում եք մյուսներին: Հակառակը, դուք սահմանափակում եք նրանց անվտանգ լինելու ազատությունը: Սա կոչվում է «չվնասելու» սկզբունք. դուք ազատ եք անել այն, ինչ ուզում եք, պայմանով, որ դա չի վնասում այլոց:

Նույն կերպ, դուք չեք սահմանափակում այլոց ազատությունը նրանց ագրեսիան զսպելու միջոցով: Ազատությունն ու չվնասելու սկզբունքը հնարավորություն է տալիս կանխել մյուսների կողմից ձեզ ու ձեր մտերիմներին վնաս պատճառելը: Արդարացված է նաև ձեր միջամտությունը՝ ուղղված որևէ մեկին, ներառյալ արտերկրացիներին, պատճառվելիք վնասը կանխելուն, թեև արտերկրացիներին պաշտպանելու գործառույթը վերապահված է ոստիկանությանն ու իրավապահ մարմիններին:

Այնուամենայնիվ, չվնասելու սկզբունքը վերաբերում է միայն այլոց պատճառվող վնասին: Այն ձեզ թույլ է տալիս վարվել ձեր սեփական մարմնի ու գույքի հետ այնպես, ինչպես ուզում եք՝ չխախտելով մյուսների ազատություններն այդ գործընթացում: Օրինակ, դուք կարող եք օտարել ձեր ամբողջ գույքը, հնարավոր է ձեզ վնաս պատճառող վտանգավոր բաներ անել կամ վնասել ձեր սեփական մարմինը այնքան ժամանակ, քանի դեռ այս արարքներից որևէ մեկը չի վնասել այլոց: Եվ չնայած մյուսները կարող էին փորձել խոչընդոտել ձեր ինքնավնասմանը, նրանք չեն կարող ֆիզիկապես կանգնեցնել ձեզ, եթե դա ձեր կանխամտածված ընտրությունն է:

Ազատությունն ու կառավարության դերը

Հնարավոր է կոպիտ է հնչում, սակայն մենք ազատ չենք միջամտելու ուրիշների գործերին, եթե այդ միջամտությունն արվում է նույնիսկ նրանց օգտին: Ոչ ոք իրապես չի կարող իմանալ մյուսների շահերի բնույթը: Անհատներն իրենց սեփական բարեկեցության լավագույն դատավորներն են: Նրանք ավելի լավ են հասկանում իրենց սեփական արժեքը, հանգամանքները,

կարիքները, ցանկությունները, վախերը, հույսերը, նպատակներն ու ձգտումները, քան ցանկացած այլ մարդ: Նրանք իրենց նպատակների ու արարքների լավագույն դատավորներն են:

Մյուս կողմից, կողմնակի անձինք կարող են կողմնակալ լինել մյուսներին դատելու ժամանակ: Եթե մենք թույլ տանք մարդկանց միջամտել մյուսների ազատությանը, նրանք կարող են դա անել (գիտակցաբար կամ անգիտակցաբար) հօգուտ իրենց, այլ ոչ թե տվյալ անձի: Այդ իսկ պատճառով մյուսներին կաշկանդող որոշումների ընդունումը թողնված է ոստիկանությանն ու դատական ատյաններին, որոնք, առնվազն ազատ հասարակությունում, կարող են առավել օբյեկտիվություն դրսևորել:

Ով էլ որ մենք լինենք, մեր անհատական նպատակները լավագույնս իրագործվում են այն հասարակությունում, որտեղ մենք ազատ ենք: Այդպիսի հասարակությունում կառավարության դերը մեր ազատությունը պաշտպանելն է այլոց ոտնձգություններից, դրա տարածումն այնտեղ, որտեղ այն բացակայում է և ընդլայնումն այնտեղ, որտեղ այն թերի է: Երբ մարդիկ միավորվում են իրենց ղեկավար կառավարություն կամ որևէ այլ մարմին ձևավորելու համար, նրանք նպատակ են ունենում պաշտպանել ու ընդլայնել իրենց ազատությունները, այլ ոչ թե սահմանափակել դրանք:

Շատ հաճախ, սակայն, կառավարություններն այդպիսին չեն: Դրանք պարտադրված են բնակչությանը այն խմբերի կողմից, որոնք ցանկանում են օգտագործել իշխանությունը հօգուտ իրենց սեփական շահերի, այլ ոչ թե ի նպաստ յուրաքանչյուրի ազատության ընդլայնման: Այսպիսի գիշատիչ վարքագիծը հաճախ վայելում է մեծամասնության համաձայնությունը, որը, իր հերթին, շահում է փոքրամասնության շահագործումից: Սակայն ազատությունը թվերի մեջ չէ. որևէ իմաստ ձեռք բերելու համար այն պետք է վերաբերի հավասարապես ամբողջ բնակչությանը:

Նույնիսկ ի սրտե բոլորի լավը ցանկացող կառավարությունները հաճախ սահմանափակում են ազատությունը, որովհետև չվնասելու սկզբունքը լիովին չեն հասկանում կամ հարգում, և չեն էլ տեսնում իրենց միջամտությամբ պատճառված վնասը: Կառավարության գրաքննիչները, օրինակ, կարող են արգելել քննարկվող կամ ցուցադրվող որոշ մտքեր, բառեր կամ նկարներ՝

համարելով, որ դրանք կարող են հանգեցնել հանրային իրավախախտումների: Սակայն այս գործընթացը վնասում է տաղանդավոր հեղինակներին, արվեստագետներին, ֆիլմեր ստեղծողներին, լրագրողներին և մյուսներին՝ սանձելով նրանց մտքի ու արտահայտման ազատությունը, խափանելով նրանց կարիերան և զրկելով նրանց իրենց աշխատանքի, ստեղծարարության ու մտքի պտուղներից: Հենց պետական գրաքննության սկզբունքը ընդունվի, իշխանություն ունեցողները հեշտությամբ կընդլայնեն այն՝ արգելելով իրենց կառավարության ցանկացած քննադատություն կամ ճնշելով ցանկացած գաղափար, որը նրանք սպառնալիք կհամարեն:

Եվ նորից, լավագույն դրդապատճառներով գործող իշխանությունները կարող են պարտադրել հարկերը նպատակ ունենալով հավասարեցնել եկամուտները, վերահսկել, թե ինչպես է այս գործընթացը ազդում հարկատուների ազատությունների վրա, նպատակ ունենալով ավելացնել իրենց սեփական ունեցվածքը, ինչպես դա անում են սովորական գողերը: Այդպիսի բռնագանձումների սպառնալիքը ստուգված միջոց է խնայողություններ և ներդրումներ կատարելուց մարդկանց հետ պահելու համար, ինչը, իր հերթին, վնասակար ազդեցություն է գործում ամբողջ բնակչության անվտանգության ու բարեկեցության վրա:

Այդպիսի կառավարությունները կարող են պնդել, թե գործում են հանրային շահի օգտին, սակայն ո՞վ գիտի, թե ինչ է հանրային շահը: Տարբեր մարդիկ ունեն տարբեր, հաճախ մրցակցող, շահեր: Այդպիսի մրցակցող շահերը ներդաշնակեցնելն անհնար աշխատանք է: Սակայն անհատներն ավելի լավ գիտեն, և ավելի լավ կարող են գործել հօգուտ իրենց շահերի, քան հեռվում եղած կառավարությունները, որոնք նրանց փոխարեն դա անելու համար կիրառում են իրենց իշխանությունը:

Հարկադրանքը չարիք է: Եվ թեև որոշակի հարկադրանք, օրինակ՝ ագրեսորներին զսպելը, կարող է անհրաժեշտ չարիք լինել, մենք պետք է ձգտենք հարկադրանքը նվազագույնի հասցնել: Ազատության շատ պաշտպաններ պնդում են, որ բոլոր մարդկային էակներն ունեն «բնական իրավունքներ», ինչպիսիք են՝ կյանքի և մասնավոր սեփականության իրավունքները, որոնք սահմանափակում են կառավարության իշխանությունը: Մենք

չենք կարող թույլ տալ մյուս քաղաքացիներին կողոպտել կամ սահմանափակել մեզ, հետևաբար ինչո՞ւ պետք է թույլ տանք կառավարությանը դա անել:

Մարդկային պատմության ընթացքում, մարդիկ մեծ մասամբ ազատ չեն եղել: Կառավարությունները ստեղծվել են ոչ թե մարդկանց կամավոր համաձայնությունների միջոցով, այլ պարտադրվել են ուժ կիրառելու ցանկություն ունեցողների կողմից: Սակայն, իշխանությունների կողմից հարկադրաբար թելադրվող կյանքով ապրող որևէ անհատ չի կարող լիարժեք մարդ լինել: Մարդիկ բարոյապես լիարժեք են միայն այն դեպքում, երբ իրենք են ընտրություն կատարում: Նրանք բարոյազուրկ են, եթե ուրիշներն են որոշում իրենց փոխարեն: Այդ դեպքում նրանք պարզապես ոչնչություն են, այլ ոչ թե մարդկային էակներ:

Ազատության բարոյական կողմը

Ազատությունը թույլ է տալիս մարդկանց լիարժեք մարդկային էակներ դառնալ՝ օգտագործելով իրենց տաղանդները և ունակություններն այնպես, ինչպես նրանք հարմար են համարում ոչ միայն իրենց, այլև իրենց ընտանիքների և մտերիմների համար: Ազատ հասարակությունը մեկուսացված ու շահախնդիր անհատների զանգված չէ. այն լիարժեք ու հասարակական անհատների համակեցություն է: Ամբողջ մարդկությանն օգնելու նրա ունակությունն ընդգծում է ազատ հասարակության բարոյական բնութագիրը:

Ազատության հոգևոր և մշակութային արմատները

Նոբելյան տնտեսագետ Ամարթյա Սենը նշել է, որ ազատությունն ունիվերսալ գաղափար է[1]: Այն կայուն արմատներ ունի գրեթե բոլոր կրոններում և մշակույթներում, սկսած իսլամից

[1] Amartya Sen, 'Universal truths: human rights and the Westernizing illusion', Harvard International Review, 20(3), 1998, pp. 40–43

մինչև բուդդայականություն, Ասիայից մինչև Արևմուտք: Հնդկաստանի կայսր Աշոկան ազատության և քաղաքական հանդուրժողականության կոչ էր անում ավելի քան քսան դար առաջ: Տասնվեցերորդ դարի մոնղոլ կայսր Ակբարը դասական դիտարկումներ էր կատարում հանդուրժողականության վերաբերյալ նույնիսկ այն ժամանակ, երբ Եվրոպայում ինկվիզիցիան հետապնդում էր կրոնական այլախոհներին: Իսլամը, իր ամենավաղ ակունքներում, տնտեսական ազատության և ձեռնարկատիրության համար բաց էր շատ ավելի վաղ, քան այս գաղափարները սկսեցին հարգվել Արևմուտքում: Թուրք կայսրերը հաճախ ավելի հանդուրժող էին, քան եվրոպացի միապետերը:

Ազատությունը, այլ կերպ ասած, կատարելապես համատեղելի է աշխարհի բոլոր մեծ մշակույթների ու կրոնների հետ: Դա միայն արևմտյան կամ մատերիալիստական գաղափար չէ կամ խիստ սոցիալական արժեքների վրա հիմնված հասարակության հետ հակասության մեջ գտնվող գաղափար: Իրականում ազատ հասարակությունը հիմնվում է այն մարդկանց վրա, ովքեր կարող են ընդունել տարածված նորմերն ու կանոնները, որոնք արգելում են վնասը, խարդախությունը, շահագործումն ու իշխանության չարաշահումը, կանոններ, որոնք օգնում են ստեղծել ներդաշնակ հասարակական կարգ, ուր մարդիկ կարող են գոյակցել ու համագործակցել: Այս լայն շրջանակներում ազատությունը թույլ է տալիս մարդկանց որոշել իրենց սեփական արժեքները, պահպանել սեփական մշակույթներն ու հետևել սեփական կրոնական կանոններին: Նրանք ստիպված չեն ընդունել որևէ պետական իշխանության արժեքները, մշակույթը և հրահանգները:

Վստահության և համագործակցության մշակույթը

Ազատ հասարակությունը գործում է ոչ թե ուժի և իշխանության, այլ վստահության և համագործակցության հիման վրա: Ազատ հասարակությունում բարեկեցությունն ապահովվում է կամավոր փոխանակման, մարդկանց կողմից օգտակար ապրանքներ ստեղծելու և մյուսների հետ առևտուր անելու միջոցով: Այն չի ստեղծվում գիշատիչ վերնախավերի կողոպտման ու

թալանի մարտավարության միջոցով, որոնք օգտագործում են իրենց իշխանությունը բնակչությունից հարկեր շորթելու և իրենց, իրենց ընտանիքներին ու մտերիմներին մենաշնորհներ ու արտոնություններ տրամադրելու համար: Դա կարող է ցույց տալ, թե ինչպես է մարդկային պատմության ընթացքում կուտակվել շատ երկրների մեծաթիվ հարստությունը՝ հարկադիր ուժի վրա հիմնված շահագործման միջոցով: Ի տարբերություն դրա, ազատ հասարակությունը հիմնված է կամավոր համագործակցության ու փոխանակման ավելի առողջ դրդապատճառների վրա:

Աշխատելը, կամավոր համագործակցությունն ու փոխանակումը վստահություն են պահանջում: Ոչ ոք առևտուր չի անի այն մարդկանց հետ, ում կհամարի ագահ խաբեբաներ, եթե միայն նրան չհարկադրեն դա անել, կամ էլ եթե նա այլընտրանք չունենա (օրինակ, երբ արտադրությունը վերահսկում են իշխանությունները կամ նրանց մտերիմները): Ազատ հասարակությունում մարդիկ ընտրություն ունեն և ազատ են ձեռնարկատիրական գործունեություն ծավալել ցանկացած վայրում, ուստի արտադրողները պետք է համոզեն ինչպես ներկա, այնպես էլ հեռանկարային սպառողներին, որ իրենք ազնիվ են: Նրանք պետք է իրականացնեն իրենց խոստումները, հակառակ դեպքում կկորցնեն իրենց հեղինակությունն ու դուրս կմնան բիզնեսից: Շատերի համար, հեղինակության ու ապրուստի կորուստը լուրջ մտահոգություն է:

Ազատ հասարակությունը չի առաջնորդվում ուժ կիրառող վերնախավի կողմից: Այն գործում է միանգամայն բնական ու ինքնաբուխ կերպով, հուսալիության ու ազնվության մշակույթով ուղղորդվող սովորական մարդկանց կամավոր փոխազդեցությունների միջոցով: Ազատ հասարակությունում ինքնաբուխ համագործակցությունը վարող կանոններն ու նորմերը դարձել են այնքան բնական, որ մարդիկ կարիք չունեն մտածել դրանց մասին: Այլևս չի պահանջվում, որ իշխանությունը նրանց պարտադրի լինել ազնիվ և արդյունավետ, աշխատել և համագործակցել մյուսների հետ: Մարդիկ բնականոն կերպով դա անում են ամեն օր:

Ազատ հասարակությունում վստահության և համագործակցության կարիքը անհատների ու խմբերի միջև եղած փոխ-

հարաբերությունները դարձնում է ավելի կարևոր, քան իշխանության կողմից ուղղորդված հասարակություններում: Ընդհանուր շահերով համախմբված մարդկանց հոգևոր արժեքների, ընտանեկան, ընկերական, համայնքային, ժառանգական, հարևանական և միավորումներ ստեղծելու կապերն ավելի նշանակալի բնույթ են ձեռք բերում: Շատ կառավարություններ ոչ ազատ հասարակություններում այսպիսի միավորումները դիտարկում են որպես սպառնալիք իրենց իշխանության հանդեպ և փորձում են թուլացնել, քանդել կամ վերացնել դրանք: Սովորաբար, նրանց հաջողվում է միայն այդ խմբերն ընդհատակ տանել: Մարդիկ այնքան են կարևորում կամավոր միավորումները, որ այն շատ ավելի հզոր ուժ է նրանց համար, քան նվիրվածությունը իշխանություններին:

Անձնական շահերը և կանոնները

Ազատ հասարակությունը վերևների կարգադրությունների կարիք չի զգում: Այն գործում է հասարակ անհատների կողմից իրենց ծրագրերն ու գործողություններն այլ մարդկանց ծրագրերին ու գործողություններին հարմարեցնելու միջոցով: Նրանք այդպես են վարվում՝ շնորհիվ տարբեր անձնական շահեր ունեցող տարբեր մարդկանց միջև կոնֆլիկտները կանխող ընդհանուր կանոնների ու արժեքների, ինչպիսիք են ազնվությունը և բռնի մեթոդներից հրաժարվելը:

Այս հիմնարար կանոններն ու ընդհանուր արժեքներն ավելին են անում, քան անհատներին խաղաղության մեջ ապրելու հնարավորություն տալը: Դրանք նաև ազատ են թողնում անհատներին՝ համագործակցելու իրենց ընդհանուր շահերի զարգացման նպատակով: Օրինակ, ազատ հասարակությունում, փոխշահավետ գործարքներ կնքելով, մարդիկ ազատ կարող են առևտուր անել միմյանց հետ: Որևէ իշխանավոր չի որոշում, թե ինչը կարող է նրանց համար շահավետ լինել, ինչպես պետք է հավասարակշռվեն նրանց տարբեր շահերը, ինչ պետք է արվի նրանց շահերին ծառայեցնելու նպատակով, և ոչ էլ կարող է հարկադրել մարդկանց՝ հետևել այդ ծրագրին: Ազատ

հասարակությունում մարդիկ իրենք են որոշում, թե որն է իրենց սեփական շահը, և ընտրում են, թե ինչպես, այլ մարդկանց հետ համագործակցելով, հասնեն լավագույն հաջողությունների: Եվ նրանք ազատ են իրենց ընտրությամբ ցանկացած գործարք կնքել, քանի դեռ այդ գործընթացում ոչ մեկին վնաս չի պատճառվում:

Որոշ քննադատներ չեն հասկանում, թե ինչպես կարող է հասարակությունը գործել և բարգավաճել, քանի դեռ այն ընդհանուր նպատակներ չի սահմանել և իր բոլոր քաղաքացիներին չի պարտավորեցրել՝ աշխատել դրանց ուղղությամբ: Նրանք մտավախություն ունեն, որ ազատ հասարակությունը անձնական նկրտումների շարունակական, անարդյունավետ ու զայրացնող բախում կլինի, որը պետք է ճնշել, որպեսզի գերակայություն տրվի հանրային շահերին:

Սա սխալ է: Ազատ հասարակությունն ընդունում է, որ մարդիկ գերադասում են իրենց անձնական շահերը: Այն ընդունում է նաև, որ անձնական շահն այնքան մեծ մոտիվացիա է, որ այն չի կարող հեշտորեն ճնշվել: Մարդիկ «հանրային շահը», ինչպես դա բնութագրվում է իշխանավորների և քաղաքական գործիչների կողմից, համարում են իրենց շահերի համեմատ պակաս հրատապ և կարևոր: Մենք պետք է հիշենք, որ անձնական շահը, իրականում, օգտակար է և կարևոր. եթե անհատներն անուշադրության մատնեն իրենց տարրական կարիքները, ինչպիսիք են՝ սնունդը, խմիչքը, կացարանն ու հագուստը, նրանք շատ երկար չեն գոյատևի, ինչքան էլ գթառատ հասարակությունում նրանք ապրեն:

Ազատ հասարակությունն անձնական շահերն ուղղորդում է օգտակար ճանապարհով: Այն չի փորձում իզուր ճնշել դրանք՝ ուտոպիայի անիմաստ հույսեր փայփայելով: Կանոնների ամբողջությունը պահանջում է միայն, որ մարդիկ իրենց հավակնությունները չպարտադրեն մյուսներին: Մարդիկ ազատ են, անհատապես կամ այլոց հետ համագործակցելով, հետապնդել իրենց շահերը, քանի դեռ նրանք հարգում են նույն կերպ վարվելու մյուսների իրավունքը: Նրանք չեն կարող այլոց ստիպել ընդունել իրենց մասնավոր նպատակները և ծառայել դրանց:

Քննադատների մտավախությունը, թե ազատ հասարակությունում մրցակցող շահերի հավերժ պատերազմ կլինի, հօդս է ցնդում այն փաստով, որ հարաբերականորեն ազատ հասարակություններն իսկապես բարգավաճում են, և համարյա միշտ ավելի շատ են բարգավաճում, քան վերահսկվող հասարակությունները: Օգտագործելով պարզ կանոններ, որոնց հիման վրա մարդիկ հարգում են այլոց ազատությունը, նրանք անհատական շահերն ուղղորդում են օգտավետ համագործակցության և համատեղ աշխատանքի ուղղությամբ:

Այն մտավախությունը, թե ազատ հասարակությունում անհատները կմտածեն միայն իրենց սեփական շահերն առաջ տանելու մասին, պարզապես սխալ է: Մարդիկ հանրային էակներ են: Նրանք բնական կապվածություն ունեն ընտանիքի, ընկերների և հարևանների հետ, ում շահերը հաշվի են առնում իրենց գործողություններում: Նրանք ձգտում են արժանանալ իրենց ընկերների հարգանքին ու բարյացակամությանը, և լավ հարևանի համբավ ունենալ: Այս նպատակով նրանք ինքնակամ չափավորում են իրենց իրենց սեփական շահերը՝ այլոց հետ լավ հարաբերություններ պահպանելու համար: Այս գաղափարը պարգևատրվում է, քանի որ դրան ի պատասխան մյուսներն ավելի մեծ հավանականությամբ կօգնեն նրանց:

Մենք կարող ենք տեսնել, որ սա աշխատում է համեմատաբար ազատ հասարակություններում: Այլոց, անգամ լրիվ անծանոթներին, մասնավոր բարեգործության միջոցով օժանդակելը մեծ տարածում ունի ավելի շատ համեմատաբար ազատ, քան պակաս ազատ հասարակություններում, ոչ թե այն պատճառով, որ մարդիկ այնտեղ ավելի հարուստ են, այլ այն պատճառով, որ ազատ հասարակություններն ավելի մեծ շեշտ են դնում կամավոր, ոչ թե պարտադրված, հասարակական պարտավորությունների վրա:

Համագործակցություն՝ համաձայնեցված կանոններով

Այլոց հետ բարեհաջող համագործակցելու համար մեզանից յուրաքանչյուրը պետք է կանխատեսելի և վստահելի

դարձնի իր գործողությունները: Համագործակցությունն անհնար կլիներ, եթե մարդիկ անընդհատ փոխեին իրենց մտադրությունները, գործեին կամայականորեն կամ հրաժարվեին իրենց խոստումներից: Ազատ հասարակությունը հնարավորություն է տալիս մարդկանց իրենց անձնական կյանքում վարվել այնպես, ինչպես իրենք են նախընտրում՝ պայմանով, որ այլոք չեն վնասվի: Բայց այն նաև խրախուսում է վարքագծի այնպիսի հետևողականություն, որը կենսական է սոցիալական համագործակցության համար:

Օրինակ, ազատ հասարակությունը իրավական կանոններ ունի սեփականության, վերահսկման և գույքի փոխանցման վերաբերյալ: Սա մարդկանց հնարավորություն է տալիս ունեցվածք ձեռք բերել և ներդնել այնպիսի կապիտալ արժեքների մեջ, ինչպիսիք են՝ տները, գործարանները և սարքավորումները, որոնք կբարելավեն իրենց ապագա կյանքը, և արտադրությունը կդարձնեն ավելի հեշտ և էժան՝ առանց այլ մարդկանց կամ իշխանավորների կողմից թալանված կամ շահագործված լինելու սպառնալիքի: Այս կանոնները («սեփականության իրավունք») պետությունների կողմից չեն ձևավորվել, այլ պարզապես առաջացել են դարերի ընթացքում: Դրանց սահմանները ստուգվել են անթիվ դատարաններում անթիվ վեճերի շրջանակում՝ ձևավորելով օրենքի և պրակտիկայի մի մարմին, որն այլոց հետ իրենց գործարքներում մարդկանց ավելի ապահով է դարձնում, իսկ համագործակցությունը՝ ավելի հեշտ և ավելի արգասաբեր:

Ավելի ազատ հասարակություններն ընդունել են նաև շատ այլ կանոններ և նորմեր, որոնք կենսական անհրաժեշտություն ունեն ներդաշնակ սոցիալական համագործակցության համար: Բարոյական կանոնները գծում են այն սահմանները, որոնք օգնում են սոցիալական փոխգործակցությունը ավելի հեշտ դարձնել բոլորի համար: Եվ կան հասարակական վարքագծի ընդհանուր ստանդարտներ՝ բարքեր, քաղաքավարություն և լավ բիզնեսի պրակտիկայի նորմեր, որոնք առաջացել են աստիճանաբար, մարդկանց շփման երկարատև ժամանակահատվածում: Համեմատաբար ազատ հասարակությունների համար սովորական շահավետ նորմերը կարող են պակաս ազատ երկրների համար դժվար կիրառելի կամ անհնար լինել:

Ազատ հասարակությունների քաղաքացիներն ունեն նաև հիմնարար *քաղաքացիական իրավունքներ*: Դրանց ճշգրիտ ձևը կարող է տարբեր լինել, սակայն այս ընդունված նորմերը ներառում են հարկադիր աշխատանքից կամ ստրկությունից, ինչպես նաև խոշտանգումներից կամ իրավախախտման համար անհամաչափ պատիժների կիրառումից ազատ լինելը: Դրանք ներառում են խղճի և հավատի ազատությունը, այն է՝ առանց սպառնալիքների կամ ահաբեկման ենթարկվելու կրոնի կամ քաղաքականության վերաբերյալ սեփական մտքեր ունենալու, նախընտրած կրոնին դավանելու և քաղաքական կյանքին մասնակցելու ազատությունը: Դրանք ներառում են խոսքի ազատությունը, այն է՝ ազատ արտահայտվելու և զանգվածային լրատվամիջոցների (ռադիո, հեռուստատեսություն, թերթեր, համացանց) կողմից իրենց նախընտրությամբ մեկնաբանելու և լուսաբանելու ազատությունը: Դրանք ներառում են ձեր նախընտրած անձանց հետ հավաքվելու և շփվելու ազատությունը: Եվ դրանք ներառում են անձնական կյանքի անձեռնմխելիությունը՝ մյուսների, մանավանդ իշխանավորների կողմից լրտեսության և վերահսկման չենթարկվելու իրավունքը: Կարճ ասած, ազատ հասարակությունը իր քաղաքացիներից ակնկալում է մարդկանց տեսակետների, հավատքի, կենսակերպի և արարքների նկատմամբ հանդուրժող լինել, չմիջամտել դրանց և ենթարկվել չվնասելու կանոնին:

Արդարություն և օրենքի գերակայություն

Ազատ հասարակությունը նույնպես արդարության կանոններ ունի: Ուրիշներին ֆիզիկական վնաս հասցնելու, ինչպես նաև՝ խաբեբայությունների և այլ վնասներ պատճառելու համար պատիժներ կան: Եվ, հավանաբար, ամենակարևորն այն է, որ ազատ հասարակությունն ապահովում է օրենքի գերակայությունը: Քաղաքական կազմակերպության հիմնական խնդիրը ոչ թե այն է, թե ինչպես ընտրել առաջնորդներին, դա հեշտ է, այլ այն, թե ինչպես նրանց *սահմանափակել*: Ազատ հասարակությունում իշխող ուժերի դերակատարումն ու իշխանությունը

խստորեն սահմանափակված են: Սա ապահովում է, որ քաղաքացիներին ագրեսիայից պաշտպանելու և հանցագործներին պատժելու իշխանությունը չօգտագործվի կամայականորեն և իշխանավորների անձնական շահերի համար:

Պետական իշխանությանը սահմանափակելու համար ազատ հասարակությունները մշակել են տարբեր մեխանիզմներ, ինչպիսիք են՝ ընտրական օրենքը, սահմանադրություններն ու իշխանությունների տարանջատումը: Սակայն քաղաքացիներին վերնախավի կողմից շահագործելուց պաշտպանելու հիմնական ճանապարհն այն է, որ օրենքները վերաբերեն հավասարապես բոլորին: Սա հայտնի է որպես օրենքի գերակայություն: Այս սկզբունքի հիման վրա կառավարությունը չի կարող օժանդակել առանձին խմբերի կամ արտոնություններ սահմանել նրանց համար, օրինակ՝ որոշակի սոցիալական խմբերի չհարկել: Օրենքները պետք է կիրառվեն ինչպես կառավարության, այնպես էլ՝ հանրության նկատմամբ:

Նույնը վերաբերում է այդ օրենքների կատարմանը: Որպեսզի դատական իշխանությունն օգտագործվի անաչառորեն և ոչ թե կամայականորեն, ազատ հասարակությունում արդարադատության կանոնները կիրառվում են հավասարապես բոլորի համար: Քաղաքացիներն ունեն հավասար վերաբերմունքի և արդարադատության գործընթացների իրավունք: Դա ներառում է մարդկանց կամայական կալանքի չենթարկելը, առանց դատավարության չբանտարկելը, ապացույցների հիման վրա արդար դատավարություն անցկացնելը, շարքային քաղաքացիներ, այլ ոչ թե նշանակված պաշտոնատար անձիք հանդիսացող երդվյալ ատենակալների կողմից վճիռներ կայացնելը, և որևէ հանցագործության համար արդեն դատապարտված լինելուց հետո կրկին դատավարության չենթարկվելը:

Քաղաքական գործիչների, պաշտոնյաների և դատավորների բոլոր այդ սահմանափակումների նպատակն է թույլ չտալ իշխանավորների կողմից իշխանության չարաշահումը, վերացնել հատուկ արտոնությունները և նվազեցնել հարկադրանքի չարիքը: Ի վերջո, ազատ հասարակությունում պետությունը անհատների ազատության պաշտպանության ու ընդլայնման, այլ ոչ թե կրճատման համար է:

Ազատության տնտեսական կողմը

Կենսամակարդակի հսկայական աճը

Մինչև 1750-ական թվականները մարդկային կյանքը շատ չի փոխվել: Գրեթե բոլորն աշխատել են դրսում, հողի վրա՝ մթերքի մշակման աշխատատար, անորոշ, եղանակից կախված գործունեություն ծավալելով: Գյուղատնտեսության մեթոդները հիմնականում նույնն էին, ինչ փարավոնների ժամանակներում: Շատ մարդիկ գումար չունեին ճոխության համար, ինչպես, օրինակ, հագուստի պահեստային հավաքածու ունենալն էր: Քչերը կարող էին իրենց թույլ տալ միս ուտել: Նկատելիորեն հարուստ միակ մարդիկ հարստության մեջ ծնվածներն էին: Եվ սովորաբար, այդ հարստությունը կուտակել էր գյուղացիներին սեփական շահի համար հարկելու իշխանություն ունեցողը կամ նրա ծառան կամ ընկերը:

Մարդկանց մեծ մասի համար դա մի թշվառ գոյություն էր: 1800 թվականին, ինչպես հաշվարկում է տնտեսագետ Դեյրդր Մքքլոսկեյը, աշխարհի միջին քաղաքացու եկամուտը կազմում էր օրական 1-5 ԱՄՆ դոլար, ինչը ներկայումս աշխարհի շատ մայրաքաղաքներում հազիվ բավականացնի մեկ բաժակ սուրճի համար:[2] Այժմ համաշխարհային միջին եկամուտը օրական կազմում է համարյա 50 ԱՄՆ դոլար: Սա բարգավաճման հսկայական աճ է:

Այնուամենայնիվ, սա ընդամենը միջին ցուցանիշ է, որը թաքցնում է այն բարեկեցությունը, որին կարողացել են հասնել որոշ երկրներ, իսկ մյուսները՝ ոչ: Տաջիկստանում՝ աշխարհի ամենաքիչ ազատ երկրներից մեկում, միջին եկամուտը մնում է օրական 7 ԱՄՆ դոլարից մի փոքր ավելի: Բայց աշխարհի ամենաազատ երկրներից մեկում՝ ԱՄՆ-ում, այժմ օրական միջին եկամուտը 100 ԱՄՆ դոլարից ավելի է: Շնորհիվ ազատության առավելությունների, ամերիկացիներն այսօր տասնչորս անգամ ավելի հարուստ են, քան Տաջիկստանի մարդիկ, 20 - 100 անգամ

---

[2] Deirdre N. McCloskey, ‘Liberty and dignity explain the modern world’, in Tom G. Palmer (ed.), The Morality of Capitalism, Students for Liberty and Atlas Foundation, Arlington, VA, 2011.

ավելի հարուստ, քան 1800 թվականի նրանց նախնիները: Շվեյցարիայում, Ավստրալիայում, Կանադայում և Միացյալ Թագավորությունում, որոնք տնտեսական ազատության համաշխարհային զեկույցում դասվում են աշխարհի ամենաազատ երկրների շարքին, օրական միջին եկամուտը կազմում է ավելի քան 90 ԱՄՆ դոլար: Ազատությունն ու բարեկեցությունը ընթանում են միասին:[3]

Ուստի զարմանալի չէ, որ մարդիկ աղքատ, ազատության ցածր աստիճան ունեցող երկրներից արտագաղթում են հարուստ, ավելի ազատ երկրներ: Ամեն տարի, ազատության ցածր աստիճան ունեցող 20 երկրներ ականատես են լինում այդ երկրների 1000 բնակիչներից մոտավորապես 1.12-ի արտագաղթին: Ի հակադրություն դրան, ամենաազատ 20 երկրների 1000 բնակիչներից 3.81-ը ներգաղթել են:[4] Եվ ամենամեծ ներգաղթը առկա է տնտեսապես ամենաազատ այդ 20 երկրներում: Այսինքն, ազատության սանդղակի ստորին կեսում գտնվող երկրները կորցնում են միգրանտների, իսկ նրանք, ովքեր բարձր կեսում են՝ ձեռք են բերում նրանց: Այլ կերպ ասած, մարդիկ իրենց ոտքերով քվեարկում են ազատության համար: Եվ այդ գործընթացը տեղի է ունենում ի հեճուկս ոչ ազատ երկրներում մարդկանց արտագաղթի կանխմանն ուղղված լավագույն ջանքերի և ավելի ազատ երկրներում ներգաղթի սահմանափակման միջոցների:

Ազատություն և բարեգործություն

Ազատ երկրներն իրենց աղքատների շահագործումից չէ, որ հարստանում են: Ռուս բարոյական փիլիսոփա Լեոնիդ Նիկոնովը նկատել է, որ բնակչության ամենաաղքատ տասներորդ մասին հասնող ազգային եկամտի միջին մասնա-

---

[3] Fraser Institute, Economic Freedom of the World 2012 Annual Report, Fraser Institute, Vancouver, BC, 2012.

[4] Gabriel Openshaw, ‘Free markets and social welfare’, Mises Daily, 4 October 2005, http://www.mises.org/daily/1915#_edn2

բաժինը առավել ազատ ու քիչ ազատ երկրներում գրեթե նույնն է (համապատասխանաբար 2,58 տոկոս և 2,47 տոկոս): Սակայն շատ ավելի լավ է աղքատ լինել հարուստ երկրում (որտեղ տասը տոկոսի միջին օրական վաստակը կազմում է 23 ԱՄՆ դոլար), քան աղքատ երկրում (որտեղ ամենաաղքատ տասը տոկոսի միջին օրական վաստակը 2,50 ԱՄՆ դոլար է)[5]:

Բացի այդ, բարեկեցությունն ազատ, հարուստ երկրում ավելի հասանելի է մարդկանց համար: Չի բացառվում, որ այնտեղ աղքատ քաղաքացիները կհարստանան, ի տարբերություն պակաս ազատ երկրների աղքատ քաղաքացիների, որոնց վիճակը պայմանավորված է ընտանիքի, կաստայի, ռասայի, կրոնի կամ քաղաքական խմբի պատկանելիությամբ: Ավելի ազատ երկրներում սոցիալական շարժունակությունն ավելի մեծ է: Աշխարհի ամենահարուստ մարդը՝ Մայքրոսոֆթի հիմնադիր Բիլ Գեյթսը, իր ծրագրային ապահովության բիզնեսը սկսել է ավտոտնակում: Այժմ Գեյթսը մտադիր է բաշխել իր ամբողջ կարողությունը լավ նպատակների համար: Դա բավականին տիպիկ երևույթ է. մեծ չափերով մասնավոր բարեգործությունը նույնպես հարուստ երկրներում է հանդիպում: Բարկլայսի ուսումնասիրությունը պարզել է, որ ամենահարուստ ամերիկացիների երկու հինգերորդը բարեգործությունը համարում են իրենց ծախսերի երեք առաջնահերթություններից մեկը:[6]

Ըստ Միացյալ Թագավորության բարեգործական օգնության հիմնադրամի՝ այն հինգ երկրները, որտեղ մարդիկ առավել հավանական է, որ կնվիրաբերեն իրենց գումարն ու ժամանակը բարեգործական նպատակների համար, հանդիսանում են Ավստրալիան, Իռլանդիան, Կանադան, Նոր Զելանդիան և Միացյալ Նահանգները, որոնք ամենաբարձր դիրքերն են զբաղեցնում ազատության առումով:[7] Բոլոր այս երկրներն ավելի

---

[5] Leonid Nikonov, 'The moral logic of equality and inequality in market society', in Tom G. Palmer (ed.), The Morality of Capitalism, Students for Liberty and Atlas Foundation, Arlington, VA, 2011.

[6] Barclays Wealth, Global Giving: The Culture of Philanthropy, London, 2010.

[7] Charities Aid Foundation, World Giving Index 2012, Charities Aid Foundation, West Malling, 2012.

շատ հարստություն ունեն նվիրաբերելու համար, քան աղքատ, պակաս ազատ երկրների քաղաքացիները:

Ազատությունն ընդդեմ խտրականության

Ոչ ազատ երկրներում խտրականությունը սովորական երևույթ է: Լավ աշխատանք ստանալը կամ լավ ծառայության անցնելը դժվար է, եթե դուք համապատասխան դասից, կաստայից, կրոնից, սեռից կամ ընտանիքից չեք: Սակայն ազատ շուկայական տնտեսությունում խտրականությանը դուրս է մղվում: Ազատ հասարակության արտադրողները չեն կարող իրենց խտրականություն թույլ տալ, երբ ընտրում են, թե ում հետ առևտուր անել կամ ում վարձել:[8]

Հարց - արդյո՞ք ազատ հասարակությունները գռեհիկ մատերիալիստական չեն:

Ոչ: Տնտեսական ազատությունը մարդկանց ընտրություններ ու հնարավորություններ է տալիս: Այն շատ ավելի լավ է բավարարում նրանց հիմնական կարիքները՝ սնունդը, կացարանն ու հագուստը: Ազատ առևտուր և շուկաներ հիմնելու համար այն ապահովում է այնպիսի հնարավորություններ, որոնց մասին մարդիկ չէին կարող երազել նախկինում: Մարդկանց ծանր ու ստորացուցիչ աշխատանքի դատապարտելու փոխարեն, այն թույլ է տալիս նրանց վայելել առավել արժեքավոր բաներ, ինչպիսիք են՝ ճանապարհորդությունը, երաժշտությունը, արվեստը, մշակույթը և հասարակական գործունեությունը: Մարդիկ հնարավորություն են ունենում անհրաժեշտ առողջապահական ծառայություն և ավելի լավ կրթություն ստանալ: Հարստությունը պարզապես գործիք է, որը մեզ օգնում է հասնել նրան, ինչը մենք իսկապես արժևորում ենք, ոչ թե որպես պարզապես նյութական հարմարավետություն, այլ որպես մշակույթ և սոցիալական

[8] Milton Friedman and Rose Friedman, Capitalism and Freedom, University of Chicago Press, Chicago, IL, 1962.

արժեք: Այդ իսկ պատճառով ավելի հարուստ, ազատ հասարակություններն ունեն ավելի շատ սպորտային մարզադաշտեր, համերգային սրահներ, թատրոններ, համալսարաններ, գրադարաններ ու թանգարաններ:

Գործատուները, օրինակ, կարող են հակակրանք ունենալ ներգաղթյալների նկատմամբ, հատկապես, եթե նրանք տարբերվում են իրենց մշակույթով, ռասայով կամ կրոնով: Սակայն ներգաղթյալ խմբերը հաճախ միևնույն աշխատանքի համար դեմ չեն լինում ստանալ ավելի ցածր վարձատրություն: Այս դեպքում, խտրականություն դրսևորող և միայն տեղի բնակչությանը աշխատանքի ընդունող գործատուները համեմատական վնաս կկրեն: Նրանք ավելի բարձր աշխատավարձեր կվճարեն, քան նրանց այն մրցակիցները, ովքեր պատրաստ են եղել վարձել ներգաղթյալներին: Արդյունքում, նրանց շահույթն ավելի քիչ կլինի կամ նրանք ստիպված կլինեն սահմանել ավելի բարձր գներ և կկանգնեն բիզնեսը կորցնելու վտանգի առջև: Դա վատ է բիզնեսի համար: Գործատուները խտրականություն դրսևորելու համար պարզապես կոմերցիոն շահ չունեն:

Նույնիսկ ներքին աշխատուժի շրջանակներում խտրականությունը ճնշվում է ազատ շուկայական տնտեսության կողմից: Օրինակ, կարող է մշակութային դիմադրություն լինել աշխատանքի գնացող կանանց նկատմամբ՝ նրանց համար դժվարեցնելով աշխատանք ստանալը: Սակայն, կանանց նկատմամբ խտրականություն դրսևորող գործատուները տաղանդավոր անձնակազմ կազմավորելու ավելի քիչ հնարավորություն կունենան, քան նրանց մրցակիցները: Հաջորդ հետաքրքիր օրինակը վերաբերում է Հնդկաստանի կաստաներին: Հիդերաբադի նման կենտրոններում բարձր տեխնոլոգիական արտադրությունների աճը ընդլայնեց ավելի ցածր կաստայի հնդիկ աշխատողների զբաղվածության հեռանկարները: Այս մրցակցային արտադրության գործատուները մարդկանց կարիք ունեին՝ իրենց մտավոր կարողություններն ավելացնելու նպատակով: Նրանք իրենց թույլ չէին կարող տալ խտրականություն դրսևորել ըստ կաստայի կամ այլ մշակութային գործոնի: Ինչի չէին հասել հակախտրականության օրենքները տասնամյակների ընթացքում, մի քանի

տարիների ընթացքում հասան գործարար մարդկանց պարզ անձնական շահերը:

Ազատ մարդկանց ստեղծարարությունը

Ավելի ազատ տնտեսությունների հարստության պատճառներից մեկը բոլոր հնարավոր տաղանդների օգտագործումն է նրանց կողմից: Իրենց նկատմամբ խտրականության խոչընդոտների քիչ լինելու պայմաններում, ազատ հասարակության բոլոր քաղաքացիներն ազատորեն ներդնում են իրենց մտավոր կարողություններն ու հմտություններն աշխատանքի մեջ: Եթե նրանք ստեղծեն, բարելավեն և մատակարարեն մյուսների կյանքը բարելավող ապրանքներ, ապա այդ մարդիկ կպարգևատրեն նրանց՝ գնելով այդ ապրանքները: Այսպիսով, ազատ հասարակություններն ավելի ստեղծարար ու նորարարական են, հետևաբար ավելի արագ են զարգանում:

Տնտեսական ազատությունը մարդկանց անձնական շահերն ուղղորդում է սոցիալապես ձեռնտու ուղղություններով: Դուք փող եք վաստակում, արտադրելով այն, ինչ մարդիկ ուզում են և պատրաստ են ձեզ վճարել դրա համար: Դուք ցանկանում եք, որպեսզի նրանք վերադառնան ավելի շատ գնելու համար, և պատմեն իրենց ընկերներին, թե որքան լավն եք դուք: Դա արտադրողներին կենտրոնացնում է ավելի շատ սպառողների, քան իրենց վրա: Հայտնի ձեռնարկատերերից շատերը համեմատաբար ազատ հասարակություններում ասում են, որ նրանք իրենց բիզնեսների հաջողությունն ապահովել են իրենց սպառողների ցանկություններն ու կարիքները բավարարելու, այլ ոչ թե նրանցից ավելի մեծ եկամուտ ստանալ փորձելու միջոցով:

Այս իրողությունը շատ հեռու է ազատ տնտեսություններում գործող «գայլային օրենքների» մասին ծաղրանկարներից: Իրապես ազատ տնտեսությունը համագործակցային համակարգ է՝ հիմնված ոչ թե հարկադրանքի, այլ ազատ մարդկանց միջև կամավոր առևտրի և ապրանքափոխանակության վրա:

Խրախուսելով նորարարությունն ու հաճախորդներին մատուցվող ծառայությունները, ազատ տնտեսությունները հարստացան արդյունավետ կապիտալ ստեղծելու միջոցով: Շատ ավելի հեշտ է ձուկը բռնել ցանցով, քան ձեռքով, սակայն սա նշանակում է, որ մինչ դուք պատրաստում եք ձեր ցանցը՝ որոշ ժամանակ ավելի քիչ ձուկ կբռնեք: Հրաժարվելով սպառողական մոտեցումից՝ դուք կարող եք կապիտալ ստեղծել և շատ ավելի արդյունավետ դարձնել ապագա արտադրությունը:

Սա կապիտալիզմի հիմքն է: Մարդիկ ստեղծում են կապիտալ, ինչպես օրինակ՝ տներ, գործարաններ ու սարքավորումներ, ինչն ավելի է հեշտացնում նրանց կյանքը և ավելի արդյունավետ դարձնում աշխատանքը (հաճախ շատ ավելի արդյունավետ. մտածեք հողը ձեռքի գութաններով մշակելու և տրակտորներով մշակելու ջանքերի տարբերության մասին): Գործընթացը կուտակային է. արտադրական տեխնոլոգիայի յուրաքանչյուր լրացում ու բարելավում ավելի է կատարելագործում արտադրությունը և ավելի նվազեցնում ջանքերը:

Ազատ հասարակությունը կարող է կուտակել այս արտադրական կապիտալը և արտադրողականության ու բարեկեցության աճ ապահովել միայն այն պատճառով, որ այն մարդկանց տալիս է տներ, գործարաններ, սարքավորումներ և այլ կապիտալ արժեքներ սեփականացնելու հնարավորություն՝ առանց դրանք հետագայում բռնագրավված կամ գողացված լինելու վտանգի: Այն պաշտպանում է մարդկանց բռնագրավման վտանգից և ունի բարոյական ու իրավական կանոններ գույքի սեփականության մասին, ինչը նվազեցնում է գողության հավանականությունը:

Գույքի սեփականության պաշտպանությունն օրենքի և մշակույթի միջոցով ազատ հասարակության և ազատ տնտեսության շատ կարևոր առանձնահատկությունն է: Ի վերջո, քիչ ֆերմերներ ջանքեր կներդնեն հացահատիկի սերմեր ցանելու, տնկելու, մշակելու ու սնուցման վրա, եթե կարծեն, որ իրենց բերքը, հավանաբար, կհափշտակեն ավազակները: Նույն կերպ, հավանաբար քչերը կաշխատեն ավելին, քան պարտավոր են, եթե նրանց եկամտի մեծ մասը հարկվի: Ընտանիքները կապիտալ չեն

կուտակի, եթե նրանց գումարը վերցվի գնաճի թաքնված հարկի միջոցով: Քիչ հավանական է, որ ձեռնարկատերերը ներդրումներ կատարեն իրենց բիզնեսներում, եթե նրանց ակտիվները կարող են ազգայնացվել առանց փոխհատուցման: Արտոնությունները, որոնք հօգուտ վերնախավի աղավաղում են շուկան, ավելի քիչ հավանական են դարձնում, որ մեկ ուրիշը կփորձի նոր բիզնես զարգացնել:

Իսկ որքան ավելի մեծ է գողերի կամ իշխանությունների կողմից այս շահագործումը, այնքան ավելի շատ են աշխատանքի, խնայողության և առաջընթացի խոչընդոտները: Տասնչորսերորդ դարի իսլամական գիտնական և իրավաբան Իբն Խանդունը այս ամենը շատ լավ էր հասկանում: Նա գրել է.

«Հարկավոր է իմանալ, որ մարդկանց ունեցվածքի նկատմամբ հարձակումները վերացնում են ունեցվածք ձեռք բերելու և ավելացնելու խթանները: Դրանք մարդկանց մոտ ձևավորում են այն կարծիքը, որ ունեցվածք ձեռք բերելու նպատակն ու վերջնական ճակատագիրը այն իրենցից վերցնելն է: Եթե այլևս չկա ունեցվածք ձեռք բերելու ու ստեղծելու դրդապատճառ, մարդիկ այլևս ջանքեր չեն ներդնում դա անելու համար: Գույքային իրավունքների խախտման չափն ու աստիճանը պայմանավորում են սուբյեկտի կողմից ունեցվածք ձեռք բերելու ջանքերի թուլացման չափն ու աստիճանը»:[9]

Սեփականություն և առաջընթաց

Անվտանգությունը ունեցվածքի սեփականության հարցում ձեր ու ձեր ընտանիքի ապագայի հիմքն է: Օրինակ, եթե դուք կարող եք սեփականացնել ձեր տունը, ինչը շատ երկրներում մարդկանց մեծ մասը չի կարողանում անել, դուք տեսնում եք մի անվտանգ կետ, որի շուրջ պտտվում է ձեր կյանքը: Դուք նաև ունեք ակտիվ, ինչի դիմաց կարող եք պարտք անել՝ բիզնես սկսելու և արտադրական կապիտալ ստեղծելու համար, ընդմիշտ հարուստ վերնախավի ողորմությանը մնալու փոխարեն: Այն ձեզ

[9] Ibn Khaldun, Muqaddimah: An Introduction to History, 1377.

ֆինանսական բարձ է ապահովում, ինչը հնարավորություն է տալիս նոր բաներ փորձարկել, ասենք, թողնել ձեր աշխատանքը և փնտրել նորը, կամ ֆինանսավորել նոր ձեռնարկատիրական նախաձեռնություն:

Ունեցվածքի անվտանգ սեփականությունը խթանում է մասնագիտացումն ու առևտուրը, ինչը բարձրացնում է մարդկանց արտադրողականությունն ու դրանով ավելացնում մարդկանց հարստությունը: Մեր կյանքը շատ աղքատ կլիներ, եթե մենք ամեն ինչ անեինք մեզ համար՝ աճեցնեինք մեր սեփական սնունդը, ձեռք բերեինք մեր սեփական ջուրը, ստեղծեինք մեր սեփական վառելիքը, կարեինք մեր սեփական հագուստը, կառուցեինք մեր սեփական տները կամ պաշտպանվեինք հարձակումներից: Այս ամենն անելու համար մեզանից քչերը հմտություններ ունեն, բացի այդ, մենք պատշաճ գործիքների կարիք կունենայինք՝ այդ բոլորը հեշտությամբ ու արդյունավետ կատարելու համար: Սակայն եթե մարդկանց ունեցվածքի սեփականությունը հարգված է, մենք կարիք չունենք ամեն ինչ ինքնուրույն անել: Մարդիկ կարող են մասնագիտական գործիքներ ստեղծել, որոնք անհրաժեշտ են որևէ գործ արդյունավետ կատարելու համար, ապա վաճառել իրենց արտադրանքը մնացած մարդկանց: Ֆերմերը կարող է ներդրումներ կատարել գութանների ու տրակտորների, շինարարը՝ սանդուղքների ու էքսկավատորների, դերձակը՝ ջուլհակահաստոցների ու կարի մեքենաների մեջ: Նրանք կարող են ավելի հմտանալ իրենց մասնագիտություններում, ավելի լավ կառավարիչներ դառնալ իրենց արտադրություններում, քան շրջապատի ինքնաբավ, սիրողական մակարդակի մարդիկ երբևէ կերազեին լինել: Աշխատանքի այս բաժանման միջոցով մենք վայելում ենք բարձրորակ ապրանքներ, ցածր գներ և շատ ավելի բազմահարուստ կյանք:

Եվ նորից, սա հնարավոր է միայն այն դեպքում, երբ մարդիկ բավականաչափ անվտանգ են արտադրողական կապիտալ ստեղծելու և առևտրում ներգրավվելու համար, վստահ լինելով, որ կողոպտված կամ խաբված չեն լինի: Այլընտրանքը մռայլ է: Ինչպես շարունակում է Իբն Խալդունը. «Երբ մարդիկ այլևս ապրուստի միջոց վաստակելու համար չեն զբաղվում բիզնեսով, և երբ նրանք դադարեցնում են իրենց եկամտաբեր

գործունեությունը, քաղաքակրթության բիզնեսը փլուզվում է և ամեն ինչ անկում է ապրում: Ապրուստի միջոց հայթայթելու համար մարդիկ ցրվում են ամենուր՝ իրենց ներկա կառավարության իրավասությունից դուրս գտնվող վայրեր»: Այս ամենը չափազանց պարզ է երևում այսօր, քանի որ տեսնում ենք միգրացիան ոչ ազատ երկրներից դեպի ավելի ազատ երկրներ:

Կարողության ստեղծում՝ առանց ծախսերի

Որոշ մարդիկ պատկերացնում են, որ որևէ անձի ունեցվածքը կարող է ստեղծվել միայն մեկ ուրիշի հաշվին: Դա ճիշտ չէ: Ազատ տնտեսությունը, ըստ էության, ունեցվածք է ստեղծում և ավելացնում եղած ունեցվածքի արժեքը:

Արժեքը իրերի ֆիզիկական որակը չէ: Դա այն է, ինչ մարդիկ մտածում են իրերի մասին: Վաճառողները բաժանվում են ապրանքներից, քանի որ նրանք այդ ապրանքներն ավելի քիչ են արժևորում, քան իրենց սպառողների կանխիկ գումարը: Սպառողները բաժանվում են իրենց կանխիկ գումարից, քանի որ իրենց գնած ապրանքները նրանք ավելի են արժևորում, քան այն գումարը, որ վճարում են դրանց դիմաց: Նույնիսկ աշակերտները կփոխանակեն խաղալիքները, յուրաքանչյուրը կարծելով, թե օգուտ է քաղում՝ փոխանակելով մի բան, ինչից հոգնել է, մի այլ բանի հետ, ինչը ցանկանում է: Նրանց փոխանակումն արժեք է ստեղծում: Ոչ ոք չի տուժում այդպիսի առևտրից. հիրավի, ոչ մի կողմ չի ընդունի գործարքը, եթե մտածի, որ կտուժի դրանից:

Նմանապես, եթե որևէ մեկը սերմեր է ցանում և բերք է աճեցնում այնտեղ, որտեղ նախկինում ոչինչ չէր եղել, և մյուսները պատրաստ են վճարել այդ արտադրանքի դիմաց, նրանք նոր արժեք են ստեղծում այնպիսի մի բանից, ինչը նախկինում անարդյունավետ էր: Հարստությունն ստեղծված է, սակայն ոչ ոք թալանված չէ:

Եվ կրկին, եթե ձեռնարկատերը գործարան է կառուցում կոշիկ, հագուստ, ավտոմեքենա արտադրելու կամ որևէ նոր հայտնագործություն կատարելու համար, որը մարդիկ պատրաստ են գնել, և գումար է վաստակում այդ գործընթացից, ապա

ո՞վ է թալանված: Նրանք կկարողանան կուտակել կարողությունը՝ առանց որևէ մեկից որևէ բան գողանալու: Եվ հակառակը, նրանք արժեք են ստեղծել և տարածել այնտեղ, որտեղ այն նախկինում գոյություն չի ունեցել:[10]

Ազատ հասարակությունը կլանային կապիտալիզմ չէ

Որոշ մարդիկ պնդում են, որ կապիտալիզմի պարագայում աղքատները շահագործվում են հարուստ, կորպորատիվ շահերի համար, իսկ քաղաքական գործիչները հարստությունը գողանում են զանգվածներից՝ իրենց գործարար ընկերներին տրամադրելով մոնոպոլիաներ, արտոնություններ, դրամաշնորհներ և սուբսիդիաներ:

Իրապես ազատ հասարակությունում, մրցակցությունն անհնարին է դարձնում շահագործումն ու «կլանային կապիտալիզմը»: Բիզնեսների գոյությունն անգամ կախված է սպառողներից: Եթե նրանք լավ ծառայություն չմատուցեն, այդ սպառողները կլքեն նրանց՝ հօգուտ այլ մատակարարների: Միշտ էլ կլինեն ուրիշ հնարավոր մատակարարներ, քանի որ ազատ հասարակությունում պետությունը իշխանություն չունի մենաշնորհներ ստեղծելու, մասնավոր ընկերություններին պաշտպանելու կամ մարդկանց կողմից նոր բիզնեսների հիմնումը կանխելու համար: Իրապես ազատ տնտեսությունը ստեղծում է մրցակցություն, ինչը սպառողներին իշխանություն է տալիս արտադրողների նկատմամբ. ընկերությունները դուրս կմնան բիզնեսից, եթե չարտադրեն գնին համապատասխան արժեք ունեցող ապրանքներ, որոնք ցանկանում են մարդիկ: Որոշ ընկերություններ կարող են նաև ընդարձակվել, օրինակ, ավտոմեքենայի արտադրության ոլորտում, ինչը կապիտալի մեծ ներդրում է պահանջում: Սակայն նրանք առերեսվում են իրական և հնարավոր մրցակցության հետ այլ խոշոր ներդրողների կողմից, ովքեր կարծում են, թե կարող են դա ավելի լավ անել: Խնդիրներն առաջանում են միայն այն ժամանակ, երբ իշխանությունները

[10] «Why Freedom Works», Sir Ernest Benn Ltd, London, 1964:

ճնշում են մրցակցությունը և խոչընդոտում կամ կանխարգելում նոր մրցակիցների ի հայտ գալը:

Հիրավի, իրապես բաց մրցակցությունը դժվար է պահպանել: Ներկայումս նույնիսկ աշխարհի շատ ազատ հասարակություններում քաղաքական գործիչները պարտադրում են կանոններ ու կարգավորումներ, որոնք, հաճախ ոչ միտումնավոր, նվազեցնում են մրցակցությունն ու այդպիսով թուլացնում այն իշխանությունը, որ սպառողներն ունեն արտադրողների նկատմամբ: Եվ արտադրողները շատ հաճախ գաղտնի պայմանավորվածություններ են ձեռք բերում այս հարցում: Օրինակ, հիմնված ընկերությունները կարող են ճնշում գործադրել քաղաքական գործիչների վրա, որպեսզի վերջիններս կարգավորումներ ընդունեն ապրանքների որակի և արտադրության չափանիշների վերաբերյալ, մանրամասնելով, թե ինչ կարող է արտադրվել և ինչպես: Նրանք կարող են հիմնավորել, որ այս կանոններն անհրաժեշտ են հասարակությանը անպիտան ապրանքներից պաշտպանելու համար: Սակայն արդյունքում նրանք կպաշտպանեն իրենց բիզնեսները նոր կամ ավելի փոքր մատակարարներից, ովքեր կարող են նոր ապրանքներ արտադրել նորարարական միջոցներով, որոնք թվարկված չեն կարգավորումներում: Կամ նորից, քաղաքական գործիչները կարող են միջնորդել, որ հանրային միջոցներն օգտագործվեն սնանկացող կամ օտարերկրյա մրցակցությամբ վտանգված արտադրություններին նեցուկ կանգնելու համար՝ պնդելով, որ տեղական արտադրողները պետք է պաշտպանված լինեն: Տեղական արտադրությունը պաշտպանելու համար նրանք կարող են անգամ արգելել օտարերկրյա ներմուծումները: Դա կարող է ժամանակավոր թեթևացում բերել նրանց, ովքեր աշխատում են այդպիսի արտադրություններում, սակայն հարկատուների ու հանրության հաշվին, ովքեր այնուհետև ընտրելու ավելի քիչ հնարավորություններ կունենան և ստիպված ավելի շատ կվճարեն, քան պետք է վճարեին ավելի ցածր որակի ապրանքների համար:

Որքան շատ է հասարակությունը հեռանում ազատությունից և փոխարենը կառավարողներին օժտում տնտեսական իշխանությամբ, այնքան ավելի շատ են արտադրողներն ու քաղաքական գործիչները գաղտնի համաձայնության գալիս

իրենց սեփական շահերի համար մարդկանց շահագործելու հարցում: Այսպիսի կլանային կապիտալիզմի հետքեր հայտնաբերվում են ամենուր, սակայն խնդիրը շատ ավելի վատ է ազատության ցածր մակարդակով տնտեսություններում: Հաճախ որպես օրինաչափություն է ընկալվում, որ նրանք, ովքեր հասել են իշխանության, պետք է կիրառեն այն՝ իրենց ու իրենց ընտանիքներին ու ընկերներին հարստացնելու համար: Եթե նրանք այդպես չվարվեն, ապա դա կարող է թուլության նշան համարվել:

Այնուամենայնիվ, իրապես ազատ հասարակությունում իշխանություններին չի թույլատրվում օգտագործել օրենսդիր իշխանությունը կամ հարկատուների գումարները կլաններին հատուկ տնտեսական արտոնություններ շնորհելու համար: Կան խիստ կանոններ, թե ինչպես պետք է գործի իշխանությունը և որտեղ պետք է ծախսվեն հանրային միջոցները: Արտադրողները չեն կարող սուբսիդիաներ և հովանավորչություն ստանալու նպատակով հաջողությամբ լոբբինգ անել իշխանավորներին, քանի որ վերջիններս այդպիսի առավելություններ շնորհելու իրավունք չունեն:

Ընկերություններին ու քաղաքական գործիչներին սովորական մարդկանց շահագործելու իշխանությունը տալիս է ազատության բացակայությունը, այլ ոչ թե մրցակցային կապիտալիզմը:

Ազատության տրիումֆը

Չնայած նրան, որ տնտեսական ազատությունը և առևտուրը հազվադեպ են բացարձակապես ազատ լինում, այնուամենայնիվ նրանց շնորհիվ հաջողվել է վերջին 30 տարիների ընթացքում մոտ երկու միլիարդ մարդ հանել ծայրահեղ աղքատությունից: Սա այն է, ինչին Ռուսաստանի, Չինաստանի և Հարավ-Արևելյան Ասիայի կենտրոնացված և հզոր կառավարությունները երբևէ չեն հասել, չնայած կես դար տևող ջանքերի: Սակայն քանի որ պատերն ու առևտրի արգելքները փլուզվել են, ավելի ու ավելի շատ երկրներ են մտել համաշխարհային առևտրային համակարգ, և բարեկեցությունը տարածվել է: Այն

մասնավորապես հասել է ամենաաղքատ երկրների ամենաաղքատ մարդկանց, ովքեր ընկալել են միջազգայնորեն առևտուր անելու նոր ազատությունը: Արդյո՞ք կարող է երկրագնդի վրա լինել ավելի բարի և արդյունավետ սկզբունք, քան ազատությունն է:

3. ԱԶԱՏ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԸ

Հասարակությունն առանց պետության

Ազատություն և մշակույթ

Ազատ հասարակությունում մարդկանց մեծամասնությունն ապրում է կառավարության կատարյալ բացակայության պայմաններում: Սա պարզապես մի հին հնդկական կատակ չէ, ըստ որի. «Տնտեսությունն աճում է գիշերը, երբ կառավարությունը քնած է»: Սա ավելի շուտ այն դեպքն է, երբ մարդկանց համար իսկապես կարևորություն ներկայացնող գործունեության տեսակների մեծ մասում կառավարությունը որևէ դերակատարություն չունի:

Ազատ հասարակությունում մարդիկ մեկուսացված անհատներ չեն: Հակառակը, նրանք հասարակական էակներ են: Նրանք փնտրում են մյուսների ընկերակցությունը, փորձում հարմարվել նրանց և համագործակցել տարաբնույթ եղանակներով: Նրանք կարող են լինել կրոնական խմբերի ակտիվ անդամներ: Ակումբներում և ընկերություններում մարդիկ միավորվում են նրանց հետ, ովքեր կիսում են նույն հետաքրքրությունները, օրինակ՝ երգեցողություն, ընթերցանություն, խոհարարություն, ձկնորսություն, սպորտով զբաղվելը և սպորտային հաղորդումներ դիտելը կամ հավաքածուներ կազմելը: Մարդիկ միավորվում և խմբեր են ստեղծում նաև իրենց նմանների հետ, օրինակ՝ երիտասարդները, մեծահասակները, դպրոցական ընկերներները, երիտասարդ ծնողները կամ միատեսակ հաշմանդամություն ունեցող մարդիկ: Նրանք կարող են բարեգործական ճաշարաններ կամ հանրակացարաններ ստեղծել անապահով և անօթևան մարդկանց համար: Այս ամենը կոչվում է *քաղաքացիական հասարակություն*:

Եվ չնայած գործելու և տեղաշարժվելու ազատությանը, որն առկա է ավելի ազատ հասարակություններում, այս հասարակությունների քաղաքացիները հիմնականում կիսում և հարգանք են դրսևորում ընդհանուր արժեքների, մշակույթների և ավանդույթների նկատմամբ: Ազատ անհատները, հատկապես

երիտասարդները, երբեմն կարող են մարտահրավեր նետել հին եղանակներին, ինչը, իրականում, կենսագործունեության ավելի լավ միջոցներ գտնելու և առաջընթաց արձանագրելու լավագույն եղանակն է: Այնուամենայնիվ, ազատությունը մշակույթի թշնամին չէ: Նույնիսկ ներգաղթածները, չկիսելով տվյալ հասարակությունում գերիշխող մշակույթը, պարտավոր են առնվազն հարգել այն, եթե ցանկանում են ինտեգրվել հասարակությանը: Նրանք հավանաբար կարիք կունենան սովորել լեզուն, եթե ցանկանում են աշխատանք ունենալ: Ու թեև նրանք չեն կարող միանգամից հասկանալ իրենց ընդունած երկրի ավանդույթներն ու բարոյական սկզբունքները, նրանք ստիպված կլինեն դա անել սեղմ ժամկետում, որպեսզի խուսափեն խախտումներից և բարեկեցիկ կյանք ունենան: Դա չի նշանակում, որ նրանք կենթարկվեն գործուն խտրականության. ազատ հասարակությունում մարդկանց հավասարապես են վերաբերվում: Այդուհանդերձ, տեղի կամ որևէ այլ վայրի ոչ մի բնակիչ չի փնտրի այն անձի ընկերակցությունը, ում համարում է անբարեհամբույր, կամ ով չի հարգում իր վարվելաձևը կամ չի կարողանում պատշաճ հաղորդակցվել իր հետ:

Մարդկային էակներն ընկերակցության կարիք ունեն. դա նրանց անհրաժեշտ է որպես հնարավորություններ ապահովելու և սեփական շահերն առաջ տանելու միջոց: Այսպիսով, կողմնակի անձ լինելը կհանգեցնի ծայրահեղ անբարենպաստ վիճակի: Ազատ հասարակությունում ոչ բոլորն են կիսում միմյանց արժեքները, սակայն պարզ մարդկային ձևով հանդուրժողականություն են դրսևորում միմյանց նկատմամբ: Ազատ հասարակությունում առկա մտքի, խոսքի և գործի ազատությունը պարտադիր կերպով հարգանք է ցուցաբերում գերիշխող մշակույթի, բարոյականության և ավանդույթների հանդեպ:

Ո՞վ ունի կառավարության կարիքը

Փոխադարձ շահերի, համագործակցության, պարտավորվածության, հավատի և վստահության ոչ ֆորմալ համացանցը զգալիորեն հարստացնում է մեր կյանքը: Սակայն դրա համար

նրան կառավարություն պետք չէ: Մենք համագործակցում ենք միմյանց հետ և հաջողությունների հասնում տարատեսակ խմբերին անդամակցելով, առանց որևէ իշխանավորի ներգրավման:

Նույնիսկ իրավական ոլորտում, որն անառարկելիորեն կարող է դիտարկվել որպես պետական գործառույթ, շատ բան մենք ինքներս ենք որոշում: Ազատ հասարակությունում պայմանագրերը պետության կողմից չեն մշակվում և պարտադրվում. դրանք կազմում են շահագրգիռ կողմերը, որոնք նախանշում են այն պայմանները, որոնք պատրաստ են ընդունել, և ազատ կամաարտահայտության սկզբունքով համաձայնում դրանց: Պայմանագրային հարաբերությունների մեջ մտնող անձիք ավելի հաճախ համաձայնում են իրենց միջև առաջացած վեճերը լուծել անկախ արբիտրաժի, քան պետական դատարանների կողմից, քանի որ վերջիններս կարող են գործել ավելի դանդաղ, արժենալ ավելի թանկ և պակաս արդար լինել, քան մասնավոր այլընտրանքը:

Դա նպաստում է ոչ պաշտոնական և համագործակցային հասարակական հարաբերությունների ստեղծմանը, եթե, իհարկե, հասարակությունն ինքնին բավականին միատարր է: Եթե մարդկանց մեծամասնությունը ծագեր միևնույն ռասայից կամ կրոնից, ապա կկիսեր նույն արժեքներն ու ավելի հեշտ, վստահության վրա հիմնված համաձայնության կգար: Գաղութային ռեժիմները և հետպատերազմյան միջազգային կոնֆերանսները հակառակն են արել՝ վերագծելով ավանդական սահմանները և տարբեր էթնիկական խմբերին հավաքելով նույն տարածքում: Վերջերս հակամարտության հետևանքով շատ երկրներ են տրոհվել, օրինակ՝ Սիրիան, Լիբիան, Լիբանանը կամ Իրաքը մեկ դար առաջ չկային. դրանք ոչ թե մարդկանց, այլ քաղաքական գործիչների ստեղծածներն են: Բրիտանացիները նմանօրինակ սխալներ են գործել Աֆրիկայում և Հնդկական տարածաշրջանում՝ տարբեր ցեղերի և էթնիկական խմբերի միևնույն վարչական գաղութում հավաքելով:

Զարմանալի չէ, որ մենք ունենք այդքան փխրուն պետություններ, որտեղ կառավարությունները չեն կարողանում նույնիսկ պաշտպանել սեփական քաղաքացիների կյանքն ու

ունեցվածքը: Եվ այս քարքարոտ հողում ծիլ է տալիս ազատ հասարակությունն ու ազատ տնտեսությունը: Հեշտ չէ վերաստեղծել համագործակցային մշակույթը, եթե այն արդեն խարխլվել է և համագործակցություն հիմնելու համար փոխադարձ հարգանքի և վստահության կապեր չկան: Լավագույնը, որ կարելի է ակնկալել, այն է, որ տարբեր խմբերը կարող են այնպիսի բնակավայրեր ստեղծել, որտեղ կկարողանան համատեղ գոյակցել, նույնիսկ եթե նրանք պատշաճ կարգով չեն համագործակցում: Այնուամենայնիվ, տարբեր մարդկանց միջև համակեցությունն ու համագործակցությունը միշտ շատ ավելի հեշտ կլինի, եթե ստեղծվեն ազատ հասարակության կենսապայմանները՝ արդյունքում փոխշահավետ հեռանկարներ ունենալով:

Ինչո՞ւ կառավարությունը պետք է սահմանափակ լինի

Ի՞նչ պետք է անի կառավարությունը

Այսօր քչերն են գտնում, որ կառավարությունը պետք է վերահսկի մեր կյանքի բոլոր ոլորտները: Բոլորս էլ համարում ենք, որ կառավարության դերակատարությունը ինչ-որ կերպ պետք է սահմանափակվի: Մարդկանց մեծամասնությունն ընդունում է, որ կառավարությունն անհրաժեշտ է, որպեսզի կայացնի այն որոշումները և կատարի այն գործողությունները, որոնք պետք է կայացվեն և կատարվեն հավաքական կերպով, բայց կառավարությունը չպետք է միջամտի այն բաներին, որոնք մենք ինքներս կատարելապես լավ կարող ենք անել: Մտածող մարդկանց մեծ մասը եզրակացնում է, որ մեր առաջնորդները պետք է սահմանափակումների ենթարկվեն՝ իրենց լիազորությունների սահմանազանցումները կանխարգելելու նպատակով:

Խնդիրը ոչ այնքան պետական իշխանության *չափն է*, որքան այն, թե *ինչ է* որոշում և անում կառավարությունը, և *ինչպես* է որոշում և անում: Քանի որ ազատ հասարակությունն ու դրա տնտեսությունը հիմնված են վստահության վրա, ազատ հասարակությունների քաղաքացիները, բնականաբար, ակնկալում են, որ իրենց կառավարությունը պետք է պաշտպանի իրենց խարդախություններից և կողոպուտներից: Սակայն, մենք չէինք

ցանկանա, որպեսզի իշխանությունները ցմահ ազատազրկեին մարդկանց հասարակական տրանսպորտի երթևեկելու վճարը չմուծելու համար, կամ լրտես տեսախցիկներ տեղադրեին յուրաքանչյուրի տանը՝ համացանցից անօրինական երաժշտություն բեռնելու դեպքերը բացահայտելու համար: Կառավարության գործողությունը պետք է համաչափ լինի խնդրին:

Պետական իշխանության սահմանափակման հաջորդ պատճառն այն է, որ անհատների կողմից կայացվող որոշումները, օրինակ՝ առանձին ապրանքի առուծախի վերաբերյալ, լիովին կամավոր են: Սակայն կառավարության որոշումները, օրինակ՝ մարդկանց կողմից որոշակի ապրանքների առուծախի արգելքը, արդյունավետ լինելու համար ուժի կիրառում են պահանջում: Ուժի կիրառումը չարիք է, նույնիսկ եթե այն երբեմն անհրաժեշտ է: Քաղաքական որոշումներ կայացնելիս հարկավոր է հավասարակշռել դրանց օգուտն ու այն չարիքը, որ գալիս է դրանք ապահովող ուժից: Մենք չպետք է շտապենք օգուտ ստանալ՝ առանց մտածելու վնասների մասին:

Ե՛վ տնտեսական, և՛ հասարակական կյանքի զարգացումը պայմանավորված է ազատությամբ: Դրանք զարգանում են փոքրամասշտաբ փորձությունների և սխալների աստիճանական գործընթացի միջոցով: Անհամար նորարարները փորձում են բազմատեսակ գաղափարներ, օրինակ՝ նոր արտադրանք կամ նոր ուսուցողական մեթոդ: Չաշխատող գաղափարները շուտով մերժվում են, իսկ կյանքը բարելավող գաղափարները՝ կրկնօրինակվում և տարածվում մյուսների կողմից: Սակայն տնտեսական և սոցիալական ինստիտուտների նկատմամբ կառավարության վերահսկողությունը մերժում է ցանկացած ոլորտի նորարարներին. արդյունքում փորձությունների և սխալների մշտական, սակայն աստիճանական գործընթացը դանդաղում է:

Ավելին, իշխանությունների միջամտությունը հիմնականում լայնամասշտաբ է: Նրանք որոշումներն են կայացնում ամբողջ ազգաբնակչության համար այնպիսի խնդիրների շուրջ, ինչպիսիք են՝ ինչ ապրանքներ պետք է արտադրվեն կամ ինչպիսի ուսուցողական մեթոդներ պետք է կիրառվեն: Սա նույնպես անխուսափելիորեն դանդաղեցնում է նորարարությունն ու

առաջընթացը: Իսկ երբ կառավարությունը սխալվում է, առանց որի անհնար է, հետևանքները հսկայական են և աղետալի:

Ինչո՞ւ է հարկավոր կառավարությունը

Դեռևս կան որոշակի գործողություններ կատարող կառավարություն ունենալու հիմնավոր պատճառներ: Մենք կարող ենք զգալ իշխանության կարիքը, որպեսզի վերջինս սահմանի և պարտադրի որոշ էական կանոններ, թե ինչպես պետք է գործենք, օրինակ՝ որոշի, թե ճանապարհի որ կողմով է պետք երթևեկել, կամ համոզվի, որ մենք կատարում ենք մեր պայմանագրերը:

Ավելին, կարող են լինել ծրագրեր, որոնց իրականացումը բխում է բոլորի շահերից, սակայն դրանք դժվար թե իրականացվեն (կամ լավ իրականացվեն) որևէ անհատի կողմից: Սրանք այսպես կոչված հանրային բարիքներն են: Որպես օրինակ կարելի է դիտարկել պաշտպանության ու ոստիկանության ծառայությունները. թեև անվտանգության ապահովումը ձեռնտու է բոլորին, ինչո՞ւ պետք է որևէ մեկը կամավոր ծառայի: Մեկ այլ օրինակ է օդի աղտոտումը, որը փչացնում է շատ զարգացող երկրների քաղաքների օդը: Ջեռուցման համակարգերում անծուխ վառելիքի օգտագործումը, ավտոմեքենաներում կատալիտիկ փոխարկիչներ և գործարանային ծխնելույզներում թափոնների զտիչներ տեղադրելը կարող է օգնել լուծել խնդիրը և համընդհանուր կերպով բարելավել կյանքը: Սակայն, մարդիկ կամավոր ծախսեր չեն անի դրանց ապահովման համար, երբ գիտեն, որ մյուսները պարզապես կարող են ձրի օգտվել իրենց զոհողություններից և իրենց հաշվին մաքուր օդ վայելել: Այնպես որ, դրա փոխարեն մենք կարող ենք այս որոշումները կայացնել քաղաքական դաշտում և պարտադրել բոլորին՝ դադարեցնել աղտոտումը կամ բոլորից հարկեր գանձել ոստիկանության և անվտանգության համար վճարելու նպատակով: Այդ դեպքում մենք կունենանք բաներ, որոնք ձեռնտու են բոլորին, բայց չեն կարող ապահովվել շուկայի միջոցով:

Ազատության մի քանի ջատագովներ (մենք կարող ենք նրանց անվանել լիբերտարիաններ) պնդում են, որ մենք այլևս կառավարության կարիքը չունենք: Նրանք ասում են, որ ազատ հասարակությունները չափազանց արդյունավետ են համագործակցության, ինչպես նաև բոլորին օգուտներ բաշխելու ուղիներ գտնելու հարցում, օրինակ՝ մարդասիրական նվիրատվությունների միջոցով, կամ խոհեմ ուղիներ գտնելով՝ ձրիակերությունից հետ պահելու և միայն վճարողներին բարիքներ տրամադրելու համար: Նրանք չեն ընդունում նույնիսկ այն, որ կառավարությունն անհրաժեշտ է պայմանագրերի կատարումը պարտադրելու կամ մեր կյանքը հարձակումից և սեփականությունը կողոպուտից պաշտպանելու համար, գտնելով, որ անհատներն ու խմբերն իրենք կարող են շատ լավ անել այս ամենը:

Ազատ հասարակության մյուս պաշտպանները՝ դասական լիբերալները, պնդում են, որ որոշ քաղաքական որոշում կայացնողներ և իշխանական ուժեր անհրաժեշտ են, որպեսզի պաշտպանեն մեզ, պարտադրեն պայմանագրերի կատարումը և ապահովեն հանրային ապրանքների մատակարարումը, բայց ոչ ավելին: Այդուհանդերձ, լիբերտարիանները դեռևս մտավախություն ունեն, որ եթե կառավարություններին մի թիզ տրվի, նրանք մղոն կվերցնեն. այսօր աշխարհի գրեթե բոլոր կառավարությունները հանրության հաշվին իրենց համար դերեր են սահմանել, որոնք այս հիմնական գործառույթներից շատ ավելին են:

Տեսակետեր անձնական և տնտեսական ազատության վերաբերյալ

Կառավարության դերակատարության ծավալի մասին որոշումը պարզապես «ձախերի» ու «աջերի» հարց չէ: Մարդիկ համաձայնության չեն գալիս ոչ միայն այն հարցի շուրջ, թե արդյոք որոշումները պետք է կայացվեն անհատների թե կոլեկտիվի կողմից, այլև՝ թե արդյոք այդ որոշումները պետք է վերաբերեն նրանց և՛ *անձնական,* և՛ *տնտեսական* ոլորտներին:

Հարց - Արդյո՞ք հենց կառավարությունը պետք է ապահովի այնպիսի բաներ, ինչպիսին է պաշտպանությունը:

Ոչ: Իհարկե կան բաներ, որոնք պետք է *որոշվեն* հավաքականորեն, օրինակ՝ արդյո՞ք անհրաժեշտ է գնալ պատերազմի, թե ոչ, սակայն շատ քիչ բաներ կան, որոնք մասնավոր հիմունքներով անհնար է *ապահովել*: Շատ երկրներ իրենց պաշտպանական գործառույթների որոշ մասը պայմանագրային հիմունքներով լիազորում են մասնավոր կազմակերպություններին, որոնք ստեղծում են տրանսպորտային միջոցներ, նավեր, օդանավեր և սարքավորումներ, կառուցում և պահպանում են զորանոցներ, ապահովում սնունդ և փոխադրումներ:

Ոչ վաղ անցյալում մենք հակված էինք մտածելու, որ միայն կառավարությունները կարող են ուղարկել փոստը, գործարկել հեռախոսային համակարգը, աշխատացնել երկաթգծերը, տրամադրել ջուր, գազ և էլեկտրականություն, կառուցել ճանապարհներ, հիվանդանոցներ և ազատազրկման վայրեր կամ նույնիսկ արտադրել պողպատ և պատրաստել ավտոմեքենաներ: Այժմ այս ամենը անում են մասնավոր ընկերությունները: Եվ քանի որ նրանք մրցակցության են հանդիպում, այն որակը, որը ստիպված են ապահովել, ավելի բարձր է լինում:

Կարող ենք ձևակերպել չորս տարբեր տեսակետ:

- Առաջին խումբը կարող ենք անվանել ինդիվիդուալիստներ (*անհատապաշտներ*): Նրանք կարծում են, որ անհատները պետք է ազատ լինեն ընդունելու իրենց թե՛ անձնական, թե՛ տնտեսական կյանքին վերաբերող սեփական որոշումները:
- Տրամագծորեն հակառակ տեսակետին են հակված ավտորիտարիստները, ովքեր պաշտպանում են և՛ անձնական, և՛ տնտեսական վարքագծի կոլեկտիվ վերահսկողության գաղափարը:
- Երրորդ խմբում ընդգրկված են նրանք, ովքեր պաշտպանում են անհատական ազատությունը տնտեսական որոշումների կայացման հարցում, և կոլեկտիվ իշխանությունը՝ մարդկանց անձնական ընտրությունների

հարցում: Նրանց կարելի է անվանել պահպանողականներ (թեև այս եզրույթը տարբեր մշակույթներում տարբեր բան է նշանակում): Տնտեսական ազատության և միաժամանակ հասարակական վերահսկողության այս համադրումը բնորոշ է շատ ասիական երկրների:

- Վերջին խումբն ընդգրկում է նրանց, ովքեր տնտեսական կյանքի հանդեպ հավաքական վերահսկողության կողմնակից են, սակայն նախընտրում են անհատների հայեցողությանը թողնել իրենց անձնական կյանքը:

Հատկապես դժվար է համապատասխան անվանում գտնել այս վերջին խմբի համար: Միացյալ Նահանգներում նրանց կանվանեին *լիբերալներ*, սակայն դա այս բառի շատ ապակողմնորոշիչ օգտագործում է: Շատ երկրներում լիբերալ նշանակում է դասական լիբերալ. գաղափարն այն է, որ կառավարության կանոնների որոշ շրջանակ պետք է, սակայն տնտեսական և անձնական որոշումների մեծ մասը հարկավոր է թողնել անհատներին: Փաստորեն, այս եզրույթը փոխառվել է ամերիկացի քաղաքական գործիչների և մտավորականների կողմից, ովքեր հավատում են անձնական ազատությանը, սակայն ցանկանում են, որ կառավարությունն ավելի շատ վերահսկողություն ունենա տնտեսական կյանքի նկատմամբ:

Բոլոր այս մեկ բառանոց բնութագրերը բավականին մոտավոր են նկարագրում այն, թե ինչ է իրականում իրենից ներկայացնում տնտեսական և հասարակական հարցերի վերաբերյալ դիտարկումների սպեկտրը: Նույնիսկ յուրաքանչյուր խմբի ներսում կա տեսակետերի լայն շրջանակ: (*Ինդիվիդուալիստների* բազմազանությունը, օրինակ, ընդգրկում է *լիբերտարիաններից*, ովքեր լիակատար ազատության կողմնակից են, մինչև *դասական լիբերալներ*, ովքեր ընդունում են կառավարության սահմանափակ դերը: Մինչդեռ, *ավտորիտարիստների* խումբը ընդգրկում է լիակատար վերահսկողությունը պաշտպանող *տոտալիտարիստներից* մինչև *ստատիստներ*, ովքեր մասնավոր որոշումների կայացման հարցում ընդունում են սահմանափակ դերակատարությունը):

Այնուամենայնիվ, օգտակար է իմանալ, որ քաղաքական հայացքները չեն կարող համարժեքորեն բնութագրվել

պարզունակ, «ձախ-աջ» սպեկտրում, որը համախմբում է հասարակության մասին ամենատարբեր տեսակետներ ունեցող մարդկանց: Ավելի լավ է մտածել այդ մասին այն առումով, թե ինչ չափի ազատությունն են մարդիկ անհրաժեշտ համարում իրենց կյանքի երկու կարևոր՝ *տնտեսական* և *անձնական* կողմերի համար:

Ինչո՞ւ անհատական ընտրություն

Տնտեսական և անձնական կյանքում կան ազատությունը նախընտրելու հիմնավոր պատճառներ: Նախևառաջ, մարդիկ իրենց սեփական կարիքներն ավելի լավ են գիտակցում, քան դա երբևէ կկարողանան անել նրանցից հեռու կառավարությունները: Նրանք ապրում են իրենց սեփական հույսերով, մտավախություններով, երազանքներով, իղձերով, կարիքներով, ցանկություններով ու հավակնություններով: Նրանք շատ ավելի լավ են գիտակցում այն հնարավորությունները, որոնք բաց են նրանց համար, ինչպես նաև այն խնդիրները, որոնք կարող են ծագել տարբեր գործողությունների պատճառով: Այնպես որ նրանք լավագույն դիրքում են գտնվում իրենց կյանքի ու ապագայի վերաբերյալ որոշումներ կայացնելու առումով:

Հարկավոր է հաշվի առնել նաև խնդրի բարոյական կողմը, ըստ որի՝ մարդիկ, որոնց համար որոշումներ են կայացվում, ոչ թե լիարժեք մարդկային էակներ են, այլ պարզապես ստրուկներ: Չունենալով անձնական պատասխանատվություն կատարվածի համար՝ նրանք երբեք դասեր չեն քաղում իրենց հաջողություններից և սխալներից: Նրանք կարող են տուժել իշխանությունների իրականացրած վատ քաղաքականության հետևանքներից, սակայն քիչ բան կարող են անել հետագայում նմանօրինակ բաները կանխելու համար, ուստի փորձելու ոչ մի պատճառ չեն տեսնում: Սակայն այն անձիք, ովքեր վայելում են իրենց հաջողություններից բխող օգուտները և տուժում են սեփական սխալներից, խիստ շահագրգռված են կրկնել այն, ինչն օգտակար է, և խուսափել նրանից, ինչը վնաս է բերում:

Բազմազանության մեջ նաև առավելություն կա: Իրենց որոշումների ընդունման հարցում ազատ մարդիկ կգործեն մի շարք տարբեր եղանակներով: Նրանք կարող են ընտրել այն գործողությունները, որոնք նրանք ճիշտ են համարում իրենց կենսական հանգամանքների պարագայում: Նրանք կարող են փորձել տարբեր կենսակերպեր՝ «ապրելու փորձարկումներ», ինչպես 1859 թվականին անգլիացի փիլիսոփա Ջոն Ստյուարտ Միլը դրանք կոչել է իր «Ազատության մասին» աշխատությունում[11]: Ոմանք կարող են հաջողություն ունենալ, մյուսները՝ ոչ: Բայց մենք բոլորս կարող ենք դասեր քաղել դրանցից և զարգացնել մեր սեփական առաջընթացը, անելով ավելի շատ այն, ինչը արդյունավետ է թվում և խուսափելով նրանից, ինչը արդյունավետ չէ:

Ավտորիտար հասարակությունում, հակառակը, գործողությունների կատարման միայն մեկ տարբերակ է գերակշռում, քանի որ որոշումները բոլորի համար են կայացվում: Ցանկացած սխալ աղետալի է յուրաքանչյուրի համար: Եվ նույնիսկ եթե պաշտոնական մոտեցումը հաջող է, մեզ չի թույլատրվում փորձել այլ բաներ, որոնք կարող են նույնիսկ ավելի լավ աշխատել: Որոշումների կայացման գործընթացը ավելի դանդաղ և բյուրոկրատական է: Այսպիսի աշխարհում մեր առաջընթացը դանդաղ և հաճախ ցավոտ է:

Ազատ տնտեսությունում արտադրողները շարունակական հետադարձ կապի մեջ են իրենց սպառողների հետ: Յուրաքանչյուր օրվա յուրաքանչյուր րոպեին մարդիկ ընտրում են այն ապրանքը, որը նախընտրում են մյուսներից: Նրանք մշտապես դիտարկում են իրենց գնած ամեն մի ապրանքի գինը, հուսալիությունը, չափը, ձևը, գույնը և բազմաթիվ այլ հատկանիշներ: Այս բազմաբնույթ նախապատվություններն ակնթարթորեն փոխանցվում են արտադրողներին, ովքեր տեսնում են՝ ինչն է վաճառվում, և ինչը՝ ոչ: Հասկանալով, որ նրանց մրցակիցներն

[11] John Stuart Mill, ‘On liberty’, 1859, in John Stuart Mill, On Liberty and Other Essays, Oxford University Press, Oxford, 2008.

անում են միևնույն բանը՝ մատակարարները կաշխատեն այնքան արագ, որքան կարող են, որպեսզի արտադրեն ավելի շատ այն, ինչ մարդիկ ուզում են և ավելի քիչ այն, ինչ չեն ուզում: Նրանք շահագրգռված կլինեն փորձարկումներ անել՝ ներկայացնելով նոր և տարբեր ապրանքներ, հույս ունենալով, որ սպառողները դրանք ավելի շատ կհավանեն:

Համեմատենք սա այն տնտեսության հետ, որտեղ իշխանություններն են որոշում, թե ինչ պետք է արտադրվի: Անկախ նրանից, թե նրանք վերահսկում են տնտեսությունն ամբողջությամբ, թե միայն դրա որոշ հատվածներ, ինչպես սովորաբար լինում է, միևնույնն է՝ որոշումների կայացումն այն մասին, թե ինչ պետք է արտադրվի և ինչպես, դանդաղ և անշնորհք գործ է: Լավագույն դեպքում հաճախորդները հնարավորություն կունենան իրենց ընտրությունը արտահայտելու մի քանի տարին մեկ՝ ընտրությունների ժամանակ: Սակայն նրանք չեն քվեարկի առանձին ապրանքների և հատկանիշների համար. եթե անգամ նրանք իրական ընտրության հնարավորություն ունենան, կարող են քվեարկել միայն կիրառվող քաղաքականությունների ամբողջ փաթեթի համար՝ սկսած պաշտպանությունից, կրթությունից և առողջապահությունից մինչև ոռոգում, գյուղատնտեսություն և գյուղական տրանսպորտ: Իշխանությունները չունեն այն մշտական ու շահագրգռող հետադարձ կապը, որը կա շուկայական տնտեսությունում՝ սպառողների և մատակարարների միջև: Իշխանությունների վրա նորարարություններ կատարելու ճնշումը շատ փոքր է, և սպառողները չեն ստանում այն, ինչ իսկապես ուզում են:

Միջամտության ճնշող հետևանքները

Այսօր շատ քիչ երկրներ կան, որտեղ պետությունն ապահովում է կամ անգամ փորձում է ապահովել արտադրանք՝ ամբողջ ազգաբնակչության համար: Առավել տարածված է այն երևույթը, երբ կառավարությունները վերահսկում են առանձին ոլորտներ, հատկապես նրանք, որոնք համարվում են առավել էական, ինչպիսիք են՝ առողջապահությունը, կրթությունը,

գյուղատնտեսությունը կամ ոստիկանությունը, կամ փորձում են ուղղորդել արտադրությունը, հիմնականում դրամական օժանդակության, գնային սահմանափակումների և ձեռնարկատիրության կանոնակարգերի միջոցով:

Նույնիսկ երբ կառավարությունները փորձում են միայն մի քանի ոլորտ ապահովել, որոշումների կայացման դանդաղ և անարդյունավետ գործընթացի հետ կապված խնդիրներ կան, հատկապես, եթե դրանք ծայրաստիճան կարևորություն ունեցող ոլորտներ են: Կառավարությունը կարող է ապահովել, օրինակ, միայն սննդի արտադրությունը, սակայն եթե այն ձախողվի մարդկանց անհրաժեշտ քանակությամբ սնունդ արտադրելու հարցում, ապա արդյունքում համատարած սով կլինի:

Նմանապես, արտադրությունը կառավարելու ուղղությամբ կառավարության ջանքերը հանգեցնում են առաջարկի ու պահանջարկի անհամապատասխանության: Օրինակ՝ քաղաքական գործիչները կարող են փորձել ցածր պահել որոշ ապրանքների կամ ծառայությունների, ասենք՝ սննդի, առողջապահության կամ տոկոսադրույքների գները, դրանց նկատմամբ կիրառելով գնային սահմանափակումներ: Այդ դեպքում, սակայն, արտադրողներն այս ապրանքները մատակարարելուց ավելի քիչ են վաստակում: Արժեքը, որը նրանք ստանում են, չի հիմնավորում այն ջանքը, որը նրանք ծախսում են արտադրության վրա: Արդյունքում, նրանք սկսում են ավելի քիչ արտադրել կամ ընդհանրապես դուրս են գալիս այդ ոլորտից:

Արդյունքը դեֆիցիտն է: Օրենքով պարտադրված արհեստական ցածր գների պայմաններում արտադրողներն ավելի քիչ կմատակարարեն, մինչդեռ սպառողները կցանկանան ավելի շատ գնել: Սնունդը կարող է պաշտոնապես լինել էժան, սակայն դուք կարող եք այն չգտնել խանութների դարակներում, տոկոսադրույքները կարող են լինել ցածր, սակայն հնարավոր չլինի վարկեր վերցնել, առողջապահությունը կարող է անվճար լինել, բայց հարկավոր կլինի հերթ կանգնել դրանից օգտվելու համար:

Նմանօրինակ խնդիրներ ծագում են նաև, երբ կառավարությունը փորձում է միջամտել արտադրական գործընթացին՝ դրամական օժանդակություն տրամադրելով առանձին ապրանքի կամ ծառայության համար: Եվրոպական Միությունը, օրինակ,

վաղուց սուբսիդավորում և պաշտպանում է իր գյուղատնտեսական ոլորտը, ենթադրաբար սննդի առատ և շարունակական մատակարարում ապահովելու համար, սակայն իրականում անարդյունավետ աշխատող եվրոպացի գյուղատնտեսներին միջազգային մրցակցությունից պաշտպանելու համար (ինչպես նաև քաղաքականապես կարևոր այս խմբի աջակցությունը գնելու նպատակով): Սուբսիդիաները խթանում են զանգվածային գերարտադրությունը՝ պահանջարկ չունեցող կարագի «սարերի» և չվաճառվող գինու «լճերի» տեսքով:

Կան նաև այլ հետևանքներ, որոնք պակաս տեսանելի են: Եվրոպական գյուղատնտեսական սուբսիդիաներից ամենաշատ օգտվողներն ամենախոշոր հողատերերն են, այլ ոչ թե ամենաաղքատ գյուղացիները: Արդյունքում լայն տարածում է ստանում կաշառակերությունը, երբ ագարակատերերը սուբսիդիաներ են պահանջում այն մթերքի համար, որ երբեք չեն արտադրել: Ամբողջ աշխարհում կարելի է հանդիպել անհամար նման-օրինակ պատմությունների. շոտլանդացի տնտեսագետ Ադամ Սմիթը իր 1776 թվականի «*Ազգի հարստությունը*» գրքում բողոքում էր ծովատառեխի որսի համար նախատեսված նավակների սարքավորումներից, որոնք ոչ թե որսը, այլ սուբսիդավորումը առավելագույնի հասցնելու նպատակ ունեին[12]:

Արտադրության ցանկացած տեսակի սուբսիդավորումը ռեսուրսներ է ուղղում մի որոշակի ոլորտի՝ դրանք հեռացնելով մյուսներից, որտեղ ժամանակը, ջանքերը և կապիտալը կարող էին ավելի լավ օգտագործվել: Օրինակ, ներկայումս շատ կառավարություններ սուբսիդավորում են հողմային և արևային թանկ էներգիան, փողը վերցնելով ֆիզիկական և իրավաբանական անձանցից, որոնք կարող էին շատ ավելի քիչ ծախսատար ուղիներ գտնել այն ներդնելու համար: Սա խոչընդոտում է տնտեսական աճը, ինչի հետևանքով դժվարանում է հանրության երկարաժամկետ բարգավաճումը:

[12] Adam Smith, The Wealth of Nations, 1776, Book IV, ch. V.

Անհատների, այլ ոչ թե իշխանությունների կողմից որոշում կայացնելը նախընտրելու պատճառներից մեկն այն է, որ ընտրությունը կատարվում է շատերի, այլ ոչ թե մի քանի իշխանավորների կողմից: Անխուսափելիորեն, բոլորի համար որոշումներ կայացնող իշխանավորներին հարկավոր է ուժ՝ իրենց որոշումները գործողության մեջ դնելու համար: Իշխանավորները, սակայն, նույնպես մարդկային էակներ են. չափազանց շատ կլինի նրանցից պահանջել դիմակայել այդ իշխանության կիրառման գայթակղությանը՝ իրենց, իրենց ընտանիքի, ընկերների, հարևանների, կլանի կամ քաղաքական կուսակցության շահերի խթանման համար: Պայմանագրերն ու մենաշնորհները շնորհվում են իրենց ծանոթներին: Պետական ծախսերի անհամաչափ գումար բաժին է հասնում բարձր պաշտոններ զբաղեցնող քաղաքական գործիչների բնակավայրերին: Կառավարության, ոստիկանության կամ դատական համակարգերում աշխատատեղերը բաժին են հասնում ընտրյալներին՝ ըստ վաստակի հատկացվելու փոխարեն:

Որքան քիչ քաղաքական և որքան շատ անհատական որոշումներ կայացվեն, այնքան փոքր կլինի այս կառուպցիոն շրջանակը: Կառավարությունը կարող է կենտրոնանալ հարկադրանքը նվազագույնի հասցնելու իր առաջնային դերի, այլ ոչ թե դրանից շահույթ ստանալու վրա:

Երբեմն սպեկուլյացիան այնքան նուրբ է արվում, որ դժվար է տեսնել այն: Ինչպես գրում է ժամանակակից տնտեսագիտության հայր Ադամ Սմիթը. «Չկա մի արվեստ, որ մի կառավարությունն ավելի շուտ սովորեր մյուսից, քան մարդկանց գրպաններից գումար դատարկելը»[13]: Օրինակ, փոխառություն վերցնելով, կառավարությունները կարող են դա ծախսել այն նախագծերի վրա, որոնք նրանց հաղթանակ են բերում ընտրությունների ժամանակ ու հարստացնում նրանց աջակիցներին՝ դրա վճարումը թողնելով մյուսներին: Նրանք նույնիսկ կարող են վճարումը թողնել հաջորդ սերնդին: Եթե

[13] Ibid., Book V, ch. II, Part II, Appendix to Articles I & II.

նրանց պարտքը չափազանց վախեցնող դառնա, նրանք կարող են պարզապես փող տպել և վճարել իրենց վարկատուներին արժեզրկված արժույթով: Այս գողությունը, սակայն, բաց լինի թե թաքնված, հետ է կանգնեցնում մարդկանց հարստություն ստեղծելուց: Քիչ հավանական է դառնում նոր բիզնեսներ սկսելը և արտադրական կապիտալ ստեղծելը, և ամբողջ հասարակությունը տուժում է:

Իրապես ազատ հասարակության կառավարությանը չէր թույլատրվի պարտք վերցնել, բացառությամբ ծայրահեղ իրավիճակների, երբ այն նույնպես սահմանափակված կլիներ: Այդ կառավարությունը չէր ունենա նաև մենաշնորհ արժույթի նկատմամբ և ի վիճակի չէր լինի տպել ավելի շատ գումար, քան անհրաժեշտ է: Ազատ հասարակությունում հարկերը կլինեն ցածր և կգանձվեն ընդհանուր հիմունքներով, այլ ոչ թե կդրվեն քաղաքական ընդդիմության ու «հարուստների» փոքրամասնության վրա: Հարկերը կլինեն պարզ, թափանցիկ, վճարելու համար հեշտ և կանխատեսելի: Նրանք չեն «մշակվի» հասարակական կամ մասնավոր գործակալությունների կողմից, որոնք շահագրգռված են հարկատուներից գանձվող գումարի քանակի ավելացումով:

Պատերնալիստական փաստարկը

Իշխող վերնախավերի շրջանում ընդհանուր տեսակետն այն է, որ նրանք ստիպված են ընդունելու բոլոր որոշումները, քանի որ հանրությունը երեխաների նման անընդունակ է ինքնուրույն որոշումներ կայացնել: Այսպես նրանք հակասում են իրենք իրենց. նրանք նվաստացնում են «ժողովրդին», որից, ենթադրաբար, ստացել են իրենց իշխանությունը: Անտրամաբանական է համարել, որ մարդիկ բավականաչափ կոլեկտիվ իմաստություն ունեն ճիշտ կառավարություն ընտրելու համար, բայց չունեն բավարար անհատական իմաստություն՝ իրենց սեփական կյանքը կառավարելու համար:

Իհարկե, կան որոշակի դեպքեր, երբ ամբողջ հասարակությունը կշահեր, եթե մարդիկ իրենց ավելի լավ պահեին: Այս

դեպքերի մեծ մասը, սակայն, բարոյական հարցեր են, որն օրենքով պարտադրելու բան չէ: Եվ եթե մենք կարող ենք բարոյա-խրատական կոչեր անել՝ մարդկանց դրդելով անել այնպիսի բաներ, որ կարող են օգնել մյուսներին, ազատ հասարակության կառավարությունը չի կարող դա անել: Այն լիազորված է միայն կանխելու այլոց պատճառվող վնասը, այլ ոչ թե պարտադրելու մարդկանց օգտակար լինել մյուսների համար: «Հանրային բարիքի» փաստարկը մարդկանց քաջալերում է ներդրում անել որոշակի ընդհանուր նախագծերի, ինչպես օրինակ՝ պաշտպա-նության համար, բայց այդպիսի դեպքերը հազվադեպ են:

Ճիշտ է, մարդիկ հաճախ զարմանալի անտարբերություն են դրսևորում այնպիսի հարցերի նկատմամբ, ինչպիսին է պետության կողմից ապահովվող ծառայությունների մատուցման որակը: Դրա պատճառը, որպես կանոն, այն է, որ նրանք անի-մաստ են համարում բողոքելը, քանի որ միևնույնն է՝ ոչինչ չի փոխվի: Եթե մարդկանց ներգրավման արդյունքում որևէ բան իսկապես բարելավվեր, ապա ավելի շատ մարդիկ կներգրավվեին:

Հարց. մենք իսկապե՞ս պարտավորություններ ունենք կառավարության հանդեպ:

Ոչ: Ազատ հասարակությունում կառավարությունն ունի պարտավորություններ մեր հանդեպ: Շատ տեղերում կառավա-րությունները հիմնվել են և շարունակում են իշխանության ղեկին մնալ բացառապես ուժի միջոցով: Սա կառավարության լեգիտիմ ձև չէ: Ազատ հասարակության կառավարությունը կազմավորված է ժողովրդի կողմից այն մի քանի բանը որոշելու կամ անելու համար, որ պետք է որոշվի կամ արվի հավաքական ձևով (օրինակ՝ պաշտպանությունը) կամ անկողմնակալ կերպով (օրինակ՝ արդարադատությունը): Այն կոչված է ծառայելու քաղաքացիներին, այլ ոչ թե հակառակը:

Կառավարության սահմանափակման եղանակները

Ժողովրդավարություն

Շատ հազվադեպ, երբ հավաքական որոշումներն անխուսափելի են, ազատ հասարակությունը խորհրդակցում է ամբողջ բնակչության հետ, քանի որ արդյունքը ազդելու է ամբողջ բնակչության վրա: Այլ կերպ ասած, սա ժողովրդավարության որոշակի տեսակ է:

Հնարավոր չէ, որ ամբողջ բնակչությունն ընդունի բոլոր որոշումները. դա չափազանց ծանր ու ժամանակատար կլիներ: Սովորաբար, ամբողջ հասարակությունը ներկայացուցիչներ է ընտրում իր փոխարեն որոշելու համար: Այդ ներկայացուցիչները պարզապես պատվիրակներ չեն, որոնցից ակնկալվում է ստրկաբար արտահայտել իրենց ընտրողների տեսակետերը. նրանք հիմնվում են իրենց սեփական դիտարկումների վրա:

Ժողովրդավարությունը և պոպուլիզմը նույնը չեն: Հանրության մեծամասնությունը կարող է գտնել, որ կրոնական ու էթնիկ փոքրամասնություններին հարկավոր է կոտորել, սակայն ազատ հասարակության կառավարությունը չի կարող դա անել: Նրա գոյությունը անհրաժեշտ է մյուսներին պատճառվող վնասը կանխելու, այլ ոչ թե դրան նպաստելու համար: Մի հին կատակ ժողովրդավարությունը ներկայացնում էր որպես երկու գայլ և մեկ գառ, որոնք պետք է որոշեն, թե ինչ ուտեն ճաշին: Ազատ հասարակությունում, սակայն, մեծամասնության իշխանության նկատմամբ կիրառվում են սահմանափակումներ՝ փոքրամասնություններին պաշտպանելու նպատակով:

Ամենամեծ խնդիրը ոչ թե կառավարություններ ընտրելն է, այլ նրանց սահմանափակելը: Նրանք պարզապես մարդիկ են. նրանց ձեռքում եղած իշխանությունը կարող է նրանց կոռումպացնել: Եթե ազատությունը երաշխավորման կարիք ունի, ապա պետք է լինեն մեխանիզմներ առաջնորդներին հեռացնելու համար: Ազատ հասարակությունում ընտրությունները ոչ միայն առաջնորդներ ընտրելու, այլև նրանցից ազատվելու համար են:

Որոշ ավտորիտարիստներ պնդում են, որ ընտրությունները միայն անկայունություն են ստեղծում, քանի որ արմատապես տարբեր քաղաքականությամբ տարբեր

կառավարություններ են ընտրվում և հեռանում: Ելնելով այն հանգամանքից, որ ազատ հասարակությունում կառավարության դերակատարումը սահմանափակված է, ապա նվազեցված է ցանկացած անկայունության աստիճանը: Եթե կառավարությունը լեգիտիմ է համարվում, կործանիչ անկայունության հնարավորություններն ավելի քիչ են, հաստատ ոչ ավելի շատ, քան կլիներ լեգիտիմության բացակայության դեպքում: Զենքի ուժով անօրինական կառավարությունը կարող է երկար ժամանակ մնալ իշխանության ղեկին, բայց իրական այլընտրանքը միայն պարբերական, խաղաղ ընտրություններն են կամ հազվադեպ արյունոտ հեղափոխությունները: Ազատ հասարակությունում նախընտրելի են ընտրությունները, որոնք սահմանափակում են հարկադրանքն ու բռնությունը և թույլ են տալիս, որպեսզի փոփոխությունն ու առաջընթացն ավելի արագ տեղի ունենան:

Ընտրությունների լեգիտիմությունն ընդունելու համար պահանջվում են որոշ պայմաններ: Անհրաժեշտ է ապահովել օրինակ, կուսակցությունների իրական ընտրություն: Ընտրությունն ազատ չէ, եթե քվեարկության է դրված միայն մեկ թեկնածու. ազատ հասարակությունում պետք է մշտապես բազմակարծություն լինի: Դա իր հերթին ենթադրում է, որ տարբեր թեկնածուներ պետք է ի վիճակի լինեն արտահայտել և հրապարակել իրենց տեսակետերը, ինչպես նաև ազատ լինեն քննադատելու մյուս թեկնածուներին ու կուսակցություններին: Մարդիկ պետք է կարողանան քվեարկել իրենց նախընտրած թեկնածուի օգտին առանց պատժվելու վախի, ուստի քվեարկությունը պետք է գաղտնի լինի: Որոշ երկրներում սահմանափակումներ են կիրառվում ընտրարշավի ծախսերի նկատմամբ, որպեսզի հարուստ թեկնածուներն ու կուսակցություններն առավելություն չունենան: Շատ երկրներում ընտրությունների միջև ֆիքսված ժամկետներ են սահմանված, որպեսզի գործող կառավարությունն ինքը չորոշի, թե երբ պետք է դրանք անցկացվեն:

Ոչ ազատ երկրների մեծամասնության կառավարություններն իշխանության ղեկին են անցել ուժի միջոցով: Մի քանիսը ուժով մնում են այնտեղ, իսկ շատերն օրինականության տպավորություն ստեղծելու միջոցներ են գտել, օրինակ՝ իրենց հռչակելով կրոնական և մշակութային ժառանգության միակ պահապաններ: Ի հակադրություն դրա, ազատ հասարակությունում կառավարության գոյությունը պայմանավորված է շատ սահմանափակ նպատակներով և հանրության համաձայնությամբ:

Նույնիսկ այդ դեպքում կառավարությունները հաճախ շատ են շեղվում իրենց բուն նպատակներից՝ կանխել վնասը և հավաքականորեն անել այն, ինչը չի կարող արվել անհատապես: Օրինակ, նրանք հաճախ մենաշնորհում են հանրային բարիքի մատուցումը: Թեև որոշումներն առ այն, թե ինչ հանրային բարիք պետք է ապահովել, կարող են հավաքականորեն ընդունվել, այդ բարիքները կարող են ամբողջովին կամ մասամբ մատուցվել մասնավոր գործակալությունների կողմից: Բարեգործական կազմակերպությունները, օրինակ, կարող են խնամել աղքատներին և հիվանդներին: Իսկ մյուսներին վնաս պատճառելու, օրինակ՝ օդի աղտոտման հետևանքները կանխելու դեպքում պատճառված վնասի աստիճանը կարող է չափելու համար դժվար լինել, և կառավարության միջամտությունը չի կարող, ըստ էության, լիովին հիմնավորվել:

Եթե որոշակի որոշումներ պետք է կայացվեն հավաքականորեն, ապա ի՞նչ կանոններով պետք է այդ որոշումները կայացվեն: Իդեալական կլիներ միաձայն որոշումը. յուրաքանչյուրը մասնակցում է որոշումների կայացմանը, և ոչ մի գործողություն չի կատարվում, քանի դեռ բոլորը համաձայն չեն: Քանի որ քիչ հավանական է, որ մարդիկ կքվեարկեն այն կոլեկտիվ գործողության օգտին, որը նրանց կարծիքով կվնասի իրենց, ապա քիչ է հնարավորությունը, որ կոլեկտիվ որոշումները որևէ անհատի կամ խմբի կվնասեն:

Այդուհանդերձ, միաձայնության դժվար է հասնել: Նախ յուրաքանչյուր անձի համար շատ ժամանակատար կլինի յուրաքանչյուր առաջարկ ուսումնասիրել և քվեարկել դրա

համար: Այդ իսկ պատճառով մենք ընտրում ենք ներկայացուցիչ-ների: Եվ հետո, յուրաքանչյուր հարցում համաձայնության հասնելը պայքարի կվերածվեր, քանի որ ամեն մարդ կկարողա-նար վետո դնել ամբողջ ծրագրին: Հետևաբար, կոլեկտիվ որոշումները, որոնք ընդունվում են համաժողովրդական ընտրությունների, հանրաքվեների կամ օրենսդիրի քվեարկու-թյան միջոցով, ընդհանուր առմամբ, ընդունվում են մեծա-մասնության կողմից: Դա կարող է լինել պարզ (50 տոկոս + 1) կամ որակյալ (ասենք երկու երրորդ) մեծամասնություն: Այս դեպքում որոշումների ընդունման բարդությունը նվազում է, միաժա-մանակ ապահովելով, որ որոշումներն ընդունվեն բնակչության մեծ մասի, այլ ոչ թե փոքրաքանակ վերնախավերի կողմից:[14]

Ընտրողների անձնական շահերը

Մի պատմություն կա հռոմեական կայսրի մասին, որը երգի մրցույթի եզրափակիչ փուլի մասնակիցներին գնահատելիս լսում է մեկին և մրցանակը հանձնում մյուսին՝ այն հիմքով, որ երկրոր-դը չի կարող ավելի վատը լինել: Այսօր մարդիկ միտված են մտածել, թե քանի որ դժգոհ են ազատ հասարակության ու ազատ տնտեսության ստեղծած արդյունքներից, կառավարության գործունեությունը պետք է բարելավի իրավիճակը: Եթե շուկան չի կարողանում ապահովել այնպիսի հանրային բարիքներ, ինչպի-սիք են պաշտպանությունն ու բարեկեցությունը, ապա փոխա-րենը դրանք պետք է ապահովի կառավարությունը: Կամ եթե գործարանն աղտոտում է օդը, ապա դա դադարեցնելու համար պետք է կառավարության միջամտությունը: Սակայն դա միարժեքորեն այդպես չէ:

Շուկաները կարող են, իսկապես, երբեմն չբավարարել մեր պահանջմունքները: Սակայն, «շուկայի ձախողման» մասին խոսելիս մենք պետք է հիշենք, որ կառավարությունը նույնպես ձախողվում է: Նույնիսկ հարաբերականորեն ազատ

---

[14] Eamonn Butler, Public Choice – a Primer, Institute of Economic Affairs, London, 2012.

հասարակություններում, կառավարություններն օբյեկտիվ, չափելի, անաչառ և հայրենասեր ուժեր չեն: Սեփական շահին հետևելը տարածված է ամբողջ կառավարությունում՝ վերևից ներքև:

Մարդիկ ընտրությունները պատկերացնում են որպես «հանրային շահի» բացահայտման և այն գործողության մեջ դնելու միջոց: Սակայն, ազատ հասարակությունում կան շատ տարբեր շահեր, և այդ շահերը կարող են իրար հակասել: Ավելի ցածր հարկերի ձգտող ընտրողները տարաձայնություններ են ունենում նրանց հետ, ովքեր ավելի շատ հանրային ծախսերի են կողմ: Նրանք, ովքեր շահում են նոր մայրուղուց, ընդդիմանում են նրանց, ում տները պետք է քանդվեն: Ընտրությունները որոշակի «հանրային շահ» չեն ստեղծում: Դրանք պարզապես հավասարակշռում են բազմաթիվ մրցակցող շահեր: Կոլեկտիվ որոշումներն ընդունվում են հակամարտության այս հիմքի վրա:

Քաղաքական գործիչների անձնական շահերը

Ինչպես քվեարկողների դեպքում էր, քաղաքական գործիչները նույնպես ունեն իրենց շահերը: Շատերը պաշտոնը դիտում են որպես հարստանալու կամ իրենց թշնամիներին հաղթելու միջոց: Պաշտոնյաներին կարող են անգամ թույլ համարել, եթե նրանք չեն օգտագործում իրենց պաշտոնը նման ձևով: Եվ նույնիսկ ավելի ազատ հասարակություններում կոռուպցիան կարող է խնդիր լինել:

Նույնիսկ եթե քաղաքական գործիչներն իրոք ցանկանում են ծառայել հանրությանը, նախևառաջ նրանք պետք է իշխանության անցնեն: Նրանք պետք է բավարար ձայներ հավաքեն ընտրվելու համար: Սակայն սա չի նշանակում, որ նրանք պետք է արտացոլեն լայն հասարակական կարծիքը: Նրանք կարող են ավելի շատ ձայներ ստանալ՝ հիմնվելով փոքրաթիվ, ոչ ներկայացուցչական փոքրամասնությունների վրա:

Հզոր շահերով փոքր խմբերը գերիշխում են քաղաքական գործընթացում, որովհետև նրանք որոշակի շահ ունեն ցանկալի քաղաքականության ընդունման հարցում, օրինակ՝ սուբսիդավորել իրենց արտադրությունը: Լինելով քանակով փոքր և

մեծապես շահագրգռված, նրանք հեշտորեն կազմակերպվում են և ավելի շատ ջանք են ներդնում քարոզչական և լոբիստական գործունեության մեջ: Մինչդեռ ավելի մեծ խմբերը, ինչպիսիք են սպառողները կամ հարկատուները, որոնք առանձնահատուկ տեսակետեր չունեն, ավելի բարդ են կազմակերպվում: Նրանք ավելի քիչ են մոտիվացված, որովհետև քաղաքականության արդյունքները, ինչպես օրինակ՝ արտադրության սուբսիդավորումը, քիչ են անդրադառնում նրանց վրա:

Կոալիցիաներ և փոխադարձ ծառայություններ

Փոքրամասնությունների տեսակետերի գերիշխումը ավելի է մեծանում, երբ շահառու խմբերը համաձայնագրեր են կնքում մյուսների հետ իրենց ձայների միավորման համար: Մի քանի խմբերի կոալիցիաները, որոնք սպառնում են լքել թեկնածուին, ավելի շատ լծակներ ունեն թեկնածուի դեմ, քան որևէ առանձին խումբ:

Առանձին խմբերի շահերի նույնպիսի համախմբում է տեղի ունենում նաև օրենսդրական հարցերում: Քաղաքական գործիչները, որոնք հուսահատորեն ցանկանում են պետական ծախսերի ծրագրեր իրականացնել իրենց սեփական շրջաններում, կարող են ձայների առքուվաճառք անել նրանց հետ, ովքեր հուսահատորեն ցանկանում են այլ ծրագրեր իրենց շրջաններում: Սակայն «դուք քվեարկում եք իմ, իսկ ես քվեարկում եմ ձեզ համար» իրավիճակում, որն անվանում են «ձայների փոխանակում» (logrolling), արդյունքն այն է, որ ավելի շատ այդպիսի առաջարկներ են անցնում, և կառավարության իշխանությունը շատ ավելի է մեծանում, քան որևէ մեկն իսկապես կցանկանար:

Եվ երբ այդ օրենքներն ուժի մեջ են մտնում, ավելի շատ անձնական շահեր են մտնում խաղի մեջ: Լիազորված անձինք նույնպես ունեն իրենց սեփական շահերը: Նրանց կարգավիճակն ու վարձատրությունը մասամբ կախված է մեծ աշխատակազմ ունենալուց, և, գիտակցաբար կամ անգիտակցաբար, նրանք կարող են բյուրոկրատական գործընթացը ավելի բարդ դարձնել, որպեսզի հիմնավորեն իրենց ավելի մեծ աշխատակազմը: Սա մի

գործընթաց է, որը հայտնի է «իմպերիայի կառուցում» անվանմամբ: Նրանք լոբբինգ կունենան ավելի շատ փոքր շահագրգիռ խմբերից, քան հիմնական հանրությունից, այսպիսով, ավելի հակված կլինեն ընդառաջել հատուկ շահերին, հավանաբար նույնիսկ կաշառքներ վերցնել նրանցից:

Կանոններ սահմանելը

Ամփոփելով՝ ասենք, որ կառավարություն ընտրելու, օրենքներ ստեղծելու և կիրառելու հարցում խտացված շահերով փոքրամասնություններն ավելի են գնահատվում, քան ցաքուցրիվ տեսակետեր ունեցող մեծամասնությունները: Քաղաքական որոշումները շատ քիչ են արտացոլում հանրության լայն տեսակետերը: Իսկ պետական հատվածին բնորոշ է իշխանության ընդարձակման միտումը՝ շատ ավելի մեծ չափով, քան շատերը կցանկանային, քան իմաստ ունի, քան անհրաժեշտ է ազատ հասարակությունը պահպանելու համար, հասնելով ընդհուպ մինչև այն կետը, ուր ազատությունն իրականում վերանում է:

Ավելի ազատ հասարակությունները տարաբնույթ կանոններ են ընդունում՝ փորձելով սահմանափակել այս խնդիրները: Ընտրություններն այս ամենի կարևոր մասն են: Սակայն դրանք թույլ սահմանափակումներ են քաղաքական գործիչների և պաշտոնյաների համար: Դրանք հազվադեպ են տեղի ունենում, հաճախ ավելի խոշոր կուսակցությունների գերակշռությամբ, դանդաղեցնելով փոփոխությունը: Անհրաժեշտ են ավելի ուժեղ սահմանափակումներ:

Սահմանադրական համաձայնություն

Քաղաքական գործընթացի սահմանափակման տարածված միջոց է այնպիսի սահմանադրության ընդունումը, որը համաձայնեցվել է բոլորի կամ ճնշող մեծամասնության հետ և սահմանում է կանոններ, ըստ որոնց անցկացվում են ընտրություններն ու ընդունվում քաղաքական որոշումները: Եթե բոլորը

համաձայնվում են ընդհանուր կանոնների հետ, կառավարության համար դժվար է դառնում հօգուտ իրենց մշակված կանոնների պարտադրումը, օրինակ՝ ընդդիմադիր թեկնածուների համար խոչընդոտներ ստեղծելու կամ ընդդիմադիր քվեարկողների համար անհամաչափ հարկեր սահմանելու միջոցով:

Քաղաքական գործընթացները կարող են էլ ավելի սահմանափակվել իշխանությունների տարանջատման միջոցով: Ողջ օրինաստեղծ իշխանությունը մի անձի կամ մարմնի կողմից ղեկավարվելու փոխարեն գալիս է իշխանությունը տարբեր հաստատությունների միջև տարանջատելու գաղափարը, որոնցից յուրաքանչյուրը կարող է արգելափակել, փոփոխել կամ սահմանափակել մյուսների արածը: Այդ իսկ պատճառով այն երբեմն անվանվում է զսպումների և հակակշիռների համակարգ:

Եթե միայն մեկ մարմին, ինչպիսին է պոլիտբյուրոն կամ օրենսդիր խորհուրդը, տիրապետի ողջ իշխանությանը, քաղաքական մեծամասնությունն ու հատվածական խմբային շահերն անպայման փորձելու են գրավել այն իրենց սեփական շահերի համար: Սակայն եթե սահմանադրությունն իշխանությունը տարանջատի կառավարության երկու տարբեր պալատների միջև, ապա առանձին շահեր ունեցող խմբերի համար իշխանության յուրացումը կդժվարանա: Եթե այդ պալատները տարբեր ձևերով ընտրվեն, ապա նույն խմբի համար դժվար կդառնա երկուսում էլ իշխելը: Եթե մի պալատը կարողանա արգելափակել կամ փոփոխել մյուսի կայացրած որոշումները, ապա կաշխատի ձայների փոխանակման մեխանիզմը և փոքրամասնությունների շահագործումը կդժվարանա:

Զսպումների և հակակշիռների այս համակարգում ավելի ազատ հասարակությունների շատ սահմանադրություններ լրացուցիչ զսպող օղակ են նախատեսում՝ նախագահին նշանակելով որպես ամբողջ ժողովրդի ներկայացուցիչ, ով (ակնկալվում է) կարող է վեր լինել քաղաքական պայքարից և վետո դնել փոքրամասնությունների իրավունքները խախտող օրենսդրության վրա:

Շահագործման հաջորդ խոչընդոտը անկախ դատական համակարգն է: Այն կենսական նշանակություն ունի ազատ հասարակության համար: Դատավորները քաղաքական ուղղվածություն չպետք է ունենան և պետք է կարողանան չեղարկել

հակասահմանադրական օրենքները և փոքրամասնությունների շահագործումը՝ առանց վախենալու քաղաքական գործիչների հաշվեհարդարից:

Սահմանադրությունները երբեմն այլ սահմանափակումներ էլ են դնում կառավարության գործողությունների վրա, օրինակ՝ հավասարակշռված բյուջեն, նախատեսելով, որ բյուջեն հավասարակշռված լինի որոշակի ֆիքսված ժամանակահատվածում (ասենք երեք կամ հինգ տարվա ընթացքում), ինչպես նաև բյուջետային սահմանափակումներ դնելով տարեկան վարկի և պետական պարտքի ընդհանուր ծավալի համար: Որոշ սահմանադրություններ իշխանությանը բնորոշ աճի միտումը զսպելու համար սահմանափակում են անգամ ազգային եկամտի այն դրույքաչափը, որը կառավարությունը կարող է ծախսել: Բացի այդ, կարող են լինել կառավարման ժամկետի սահմանափակումներ, որպեսզի քաղաքական գործիչները չկարողանան պաշտոնավարել տարիներ շարունակ, և ավարտական ժամկետներ, որպեսզի պետական հաստատությունները ավարտեն իրենց աշխատանքը, եթե իրենց գործունեության անհրաժեշտությունն այլևս չկա:

Որակյալ մեծամասնություն

Փոքրամասնություններին պաշտպանելու հաջորդ միջոցը որակյալ մեծամասնությամբ քվարկությունն է: Ազատությունը շատ վտանգված կլինի, եթե, օրինակ, իշխող ուժերն օրենսդիր մարմնում պարզ քվեարկության միջոցով կարողանան փոփոխել սահմանադրական կանոնները: Այդ իսկ պատճառով ազատ հասարակությունը նախատեսում է ավելի խիստ սահմանափակումներ, ինչպիսիք են ձայների երկու երրորդը երկու պալատներում, ինչպես նաև նմանատիպ խիստ պահանջներ՝ հանրաքվեների կամ առանձին շրջաններում քվեարկությունների ժամանակ: Այն հարցերում, որտեղ փոքրամասնություններին ավելի հեշտ է շահագործել, որոշումները պետք է ավելի բարձր մակարդակի մեծամասնություն պահանջեն: Օրինակ՝ հեշտ է նշանակել հարկեր, որոնք կարող են մեծ բեռ սահմանել առանձին

խմբերի համար: Այդ պատճառով ազատ հասարակության որոշ պաշտպաններ պահանջում են, որ այն հարկային օրենքները, որոնք վերաբերում են ոչ թե հարկի դրույքին, այլ հարկ վճարողին, որոշվեն միաձայն կարգով, որպեսզի փոքրամասնությունը պաշտպանվի նույնիսկ մեծամասնության գերակշռման դեպքում:

Գերված հանրություն

Շուկայական տնտեսությունում դուք կարող եք գնալ այլ վայրում առևտուր անել, եթե զգում եք, որ տվյալ առևտրականը խաբում է ձեզ կամ պատշաճ որակ չի ապահովում ստացած վճարի դիմաց: Սակայն եթե կառավարությունն է խաբում կամ շահագործում ձեզ, դուք այլ տեղ չունեք գնալու: Միգուցե կարող եք լքել երկիրը, սակայն հաշվի առնելով լեզվական և այլ խոչընդոտները, շատերի համար սա այլընտրանք չէ: Սա հարկադրանքի բաղադրատոմս է, որը ստիպում է մեզ է՛լ ավելի կարևորել, որ կառավարության ու պետական յուրաքանչյուր օղակի դերը և գործողությունները մանրամասն հստակեցվեն և սահմանափակվեն միմիայն այն գործառույթներով, որոնք անհրաժեշտ են բնակչության ազատության պահպանման և ընդլայնման համար:

4. ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ

Հավասարությունն ազատ հասարակությունում

Շատերը պատկերացնում են, որ ազատ հասարակություններում պետք է զգալի անհավասարություն լինի: Ի վերջո, այդ հասարակություններում մարդիկ կարողանում են մեծ հարստություն կուտակել: Դա, իրենց փաստարկմամբ, պետք է տնտեսական մեծ անհավասարություն ստեղծի:

Սակայն այս փաստարկը սխալ է: Ինչպես տեսանք, եկամուտների անհամաչափությունն ազատ և ոչ ազատ երկրներում գրեթե նույնն է: Ամեն դեպքում, ամենաազատ հասարակություններում հավասարությունը մի փոքր ավելի շատ է:

Բացի այդ, ոչ ազատ հասարակություններում կան այլ, ոչ ֆինանսական անհավասարություններ, որոնք չկան ավելի ազատ հասարակություններում: Ազատ հասարակության յուրաքանչյուր քաղաքացի կարող է ձգտել մեծացնել իր հարստությունն ու եկամուտները՝ ավելի լավ աշխատանքի անցնելով կամ ներգրավվելով շահավետ առևտրային գործունեության մեջ: Դա միշտ չէ, որ հնարավոր է ոչ ազատ հասարակություններում: Պետական համակարգում աշխատատեղերը կարող են բաց լինել միայն նրանց համար, ովքեր աջակցում են իշխող կուսակցությանը, կամ իշխանավորների ընկերներն ու ծանոթներն են: Օրենքի կամ նախապաշարմունքների պատճառով կանայք, ազգային փոքրամասնությունների կամ այլ խմբերի ներկայացուցիչները չեն կարող աշխատել որոշակի պաշտոններում: Առանձին ռասայի կամ կաստայի մարդկանց կարող են միայն ցածր վարձատրվող աշխատանք առաջարկել: Ներգաղթածներին կարող է արգելվել բիզնես ստեղծելն ու վարելը կամ նույնիսկ բանկային հաշիվ ունենալը:

Անհավասարությունն առկա է նույնիսկ նրանց շրջանում, ովքեր աշխատանք են ստացել: Խորհրդային Մոսկվայում, օրինակ, Կարմիր հրապարակում գտնվող հանրախանութի հատուկ բաժինը բաց էր միայն արտարժույթ ունեցող զբոսաշրջիկների և կուսակցության բարձրաստիճան պաշտոնյաների համար: Միայն

վերջիններս կարող էին հավակնել երթևեկել «Զիլ» ավտոմեքենաներով, որոնց ընթացքը հեշտացնելու համար երթևեկությունը դադարեցվում էր, կամ միայն նրանք կարող էին վայելել մեկամսյա արձակուրդ անտառային առողջարաններում: Լավագույն բնակարանները և առանձնատները բնակեցված էին պաշտոնյաներով, ովքեր համեմատաբար լավ տները հատկացնում էին իրենց ընկերներին:

Սրանք անհավասարություններ են, որոնցից ելք չկա. դրանցից տուժողները կարող են նույնիսկ օրենքը փոխելու նպատակով անցկացվող քվեարկություններին կամ ընտրարշավին մասնակցելու իրավունք չունենալ: Ի տարբերություն դրա, ազատ հասարակության բոլոր անդամները կարող են առնվազն ձգտել լավ աշխատանք կամ բիզնես ունենալ և ձեռք բերել հարստության ու եկամուտ: Նրանք կարող են հաջողության չհասնել, սակայն ոչ ոք չի կանգնեցնի նրանց:

Հավասարության տեսակները

Հավասարությունը ազատ հասարակությունում մարդկանց հավասար հարստություն, եկամուտ կամ կենսապայմաններ ապահովելը չէ: Դա այն է, որ բոլոր մարդկանց վերաբերվում են միևնույն ձևով:

Հավասարությունն արտահայտվում է չորս կարևոր եղանակներով:[15] Ազատ հասարակության քաղաքացիներն ունեն *բարոյական հավասարություն.* նրանցից յուրաքանչյուրն ունի հավասար իրավունք՝ կատարելու իր ընտրությունը և մյուսների կողմից արժանանալու փոխըմբռնման և հարգալից վերաբերմունքի: Կա *հավասարություն օրենքի առաջ*՝ օրենքը հավասարապես պաշտպանում և վերաբերում է բոլորին՝ անկախ ռասայից, կրոնից, սեռից, ունեցվածքից և ընտանեկան դրությունից: Մարդիկ ունեն նաև *քաղաքական հավասարություն*՝ բոլորը քվեարկելու և քաղաքական պաշտոններում առաջադրվելու

[15] Nigel Ashford's Principles for a Free Society, Jarl Hjalmarson Foundation, Stockholm, 2003.

իրավունք ունեն: Եվ նրանք ունեն *հավասար հնարավորություններ՝* աշխատելու, սովորելու կամ անձնական առաջընթացի այլ ուղիները խոչընդոտող կամայականություններ չկան:

Բարոյական հավասարություն

Ազատ հասարակությունում մարդկանց մասին մտածում են, որ նրանք հավասարապես արժանի են ուշադրության և հարգանքի: Նրանք բոլորը հավասար իրավունք ունեն ընտրություն կատարելու իրենց կյանքի վերաբերյալ, պայմանով, որ այդ գործընթացում նրանք այլոց չեն վնասում:

Այս տեսակետը հիմնված է որպես մարդկային էակներ նրանց էության համոզմունքի վրա, էություն, որը հատուկ է մեզ բոլորիս: Մենք բոլորս ցանկանում ենք կատարել մեր սեփական ընտրությունը, անկախ մեր էթնիկական պատկանելիությունից, կրոնից կամ սեռից, և մենք բոլորս ցանկանում ենք, որ ուրիշները հարգեն մեր այդ իրավունքը: Ազատ հասարակությունում այդ կանոնը հնչում է հետևյալ կերպ. «Վարվիր այնպես, ինչպես կցանկանայիր, որ քեզ հետ վարվեին»:

Չի կարելի ասել, որ մարդիկ հավասարապես բարոյական են իրենց գործողություններում: Նրանք, ովքեր հարձակվում են կամ թալանում մյուսներին, բարոյական արարք չեն կատարում: Ոմանք կարող են միտումնավոր արհամարել սոցիալական կամ սեռային պայմանականությունները: Սակայն նրանց կյանքը արժեք է: Նրանց ոչ իրավաչափ կամ անբարոյական վարքը նրանց համար առաջացնում է այնպիսի հետևանքներ, ինչպիսիք են՝ պատիժը կամ նկատողությունը, որոնք համաչափ են իրենց հանցանքին: Սակայն դա թույլ չի տալիս նրանց կամայական ձևով կամ չափազանց դաժանությամբ վերաբերվել և նվաստացման ենթարկել:

Հավասարությունն օրենքի առաջ

Ազատ հասարակությունում օրենքն անկողմնակալ կերպով պաշտպանում և պատժում է մարդկանց: Ոստիկանությունը, դատարանը կամ բանտերը օրինազանցների նկատմամբ տարաբնույթ վերաբերմունք չեն դրսևորում՝ ըստ հանցագործության հետ չկապված նրանց անձնական այնպիսի հատկանիշների, ինչպիսիք են՝ ունեցվածքը, կապերը, կաստան, սեռը, կրոնը կամ էթնիկական պատկանելիությունը: Քաղաքացիները չեն կարող ենթարկվել կամայական ձերբակալման կամ ոտնձգության միայն այն պատճառով, որ իշխանավորները նրանց չեն հավանում: Վնասվելու կամ թալանվելու դեպքում արդարադատությունը պետք է հավասարապես մատչելի լինի յուրաքանչյուրի համար, անկախ նրանից, թե ով է ինքը, և անկախ նրանից, թե որքան ազդեցիկ է նա, ով մեղադրվում է:

Աշխարհի դատական շենքերի վրա պատկերված արդարադատություն խորհրդանշող կերպարները մի ձեռքում կշեռք, իսկ մյուսում՝ թուր ունեն: Սակայն ամենակարևոր առանձնահատկությունն այն է, որ այդ կերպարը կույր է: Ազատ հասարակությունում արդարությունը կույր է ամեն ինչի նկատմամբ, բացի յուրաքանչյուր դեպքին համապատասխանող փաստերից:

Քաղաքական հավասարություն

Հավասարության մյուս տեսակը, որը բխում է մարդկանց բնույթից՝ որպես մարդկային էակներ, քաղաքական հավասարությունն է: Յուրաքանչյուրի շահերն ու կարծիքները արժանի են դիտարկման: Ուստի, ազատ հասարակությունում ընտրությունների կամ հանրաքվեների քվեարկման իրավունք ունի յուրաքանչյուր ոք, և յուրաքանչյուրն ունի մեկ ձայն: Դա երաշխավորում է, որ յուրաքանչյուրի շահերը հաշվի առնվեն թեկնածուների և ընտրված քաղաքական գործիչների կողմից:

Կան շատ սահմանափակ բացառություններ: Որպես կանոն, մենք երեխաներին թույլ չենք տալիս քվեարկել՝ համարելով, որ նրանք դեռ բավարար հասուն չեն իրենց և մյուսների

կառավարման վերաբերյալ կշռադատված կարծիք արտահայտելու համար: Նույն ձևով, քվեարկությանը չեն մասնակցում նաև ծանր հոգեկան խանգարում ունեցող անձինք, սակայն այդ անկարողությունը պետք է սահմանվի անկախ մարմնի կողմից, որպեսզի կանխվի այս հիմքով իշխող վերնախավի կողմից իրենց հակառակորդներին բացառելը:

Միանշանակ կարծիք չկա այն հարցի շուրջ, թե արդյո՞ք դատապարտված հանցագործներին պետք է թույլ տրվի քվեարկել: Որոշ երկրներում բանտերում գտնվող անձինք կորցնում են քվեարկելու իրենց իրավունքը այն հիմքով, որ օրենքները խախտող անձը չպիտի ներգրավվի դրանց ստեղծման գործընթացին: Մյուս երկրներում միայն ամենալուրջ հանցագործությունների համար ազատազրկված անձանց են արգելում մասնակցել քվեարկությանը: Կան երկրներ, որտեղ բոլոր հանցագործները մասնակցում են քվեարկությանը, որպես արժանապատիվ էություն ունեցող սովորական մարդկային էակներ:

Քաղաքական հավասարության սկզբունքը ենթադրում է, որ կանայք օժտված են քվեարկելու իրավունքով այնպես, ինչպես տղամարդիկ, չնայած որ նույնիսկ համեմատաբար ազատ հասարակություններում այդ իրավունքը սկսել է ճանաչվել ավելի քան մեկ դար առաջ: Առաջինը՝ 1893 թվականին, չափահաս կանանց ընտրելու իրավունքով օժտեց Նոր Զելանդիան: Ավստրալիան դա արեց 1902 թվականին, թեև բնիկ կանանց քվեարկելու սահմանափակումը պահպանվեց մինչև 1962 թվականը: Եվրոպական երկրների մեծ մասը կանանց թույլ տվեց քվեարկել Առաջին համաշխարհային պատերազմից հետո, թեև Ֆրանսիայում դա տեղի ունեցավ միայն 1944 թվականին, իսկ Շվեյցարիայում՝ 1971 թվականին:

Անհրաժեշտ է խստորեն սահմանափակել քվեարկելու իրավունքի ցանկացած բացառում: Ոչ ազատ երկրների իշխանությունների համար չափազանց հեշտ է զրկել իրենց հակառակորդներին ձայնի իրավունքից նրանց ազատազրկելով, մտավոր անգործունակ հայտարարելով կամ մի շարք այլ արդարացումներով: Սա իշխանության չարաշահում է:

Ըստ հնարավորության, յուրաքանչյուր անձի ձայն պետք է նաև հավասար կշիռ ունենա: Օրինակ՝ պետք է հավասար թվով

քվեարկողներ ապահովել յուրաքանչյուր ընտրատարածքում, որից ընտրված են ներկայացուցիչները: Ավելի խոշոր ընտրատարածքը նշանակում է, որ յուրաքանչյուր քվեարկող ավելի քիչ է ազդում արդյունքի վրա: Տարբեր չափերի ընտրատարածքներ ունենալու միակ արդարացումը աշխարհագրական հստակ բաժանումներն են: Ընտրական սահմանները պետք է որոշվեն անկախ մարմինների կողմից, որպեսզի դրանք հնարավոր չլինի աղավաղել հօգուտ իշխող խմբերի:

Քվեարկելու իրավունքի հետ մեկտեղ յուրաքանչյուր ոք ունի ընտրվելու և պաշտոնավարելու իրավունք: Օրենսդիր մարմնում չկան տեղեր, որոնք արգելված են հատուկ սեռի, ռասայի կամ կրոնի անձանց համար: Ընտրական համակարգը պետք է երաշխավորի այս հավասարությունը՝ ապահովելով, օրինակ, որ ցանկացած ոք կարողանա պաշտոնավարել առանց վախենալու սպառնալիքների ու ահաբեկման վախի՝ մասնավորապես իշխող քաղաքական մարմինների կողմից: Դա նշանակում է, որ նրանք պետք է ազատ լինեն քարոզարշավ կազմակերպել և խոսել, հրապարակել և հեռարձակել իրենց տեսակետերն ու քննադատությունն ընդդեմ այլ թեկնածուների, ինչպես նաև քննադատել օրենքներն ու սահմանադրությունը: Ընտրությունները դիտարկվում են որպես գաղափարների մրցակցություն, ընդ որում ազատ ընտրություններն անհնարին են գաղափարների և խոսքի ազատության ճնշման դեպքերում: Որոշ ոչ ազատ երկրներում քրեորեն հետապնդելի արարք է համարվում կառավարությանը քննադատելը, մինչդեռ ավելի ազատ հասարակություններում այդպիսի քննադատությունը ամենօրյա քաղաքական բանավեճի սովորական մասերից մեկն է:

Հնարավորությունների հավասարություն

Հնարավորությունների հավասարությունը ենթադրում է, որ իրենց կրթության, աշխատանքին կամ կյանքի այլ բնագավառում նախանշած նպատակներին հասնելու ճանապարհին անհատները չպետք է առերեսվեն կամայական խոչընդոտների հետ: Օրինակ՝ նրանց ռասան չպետք է խոչընդոտ

հանդիսանա դպրոց կամ սպորտային թիմ ընդունվելու հարցում: Քաղաքական հայացքներն ու սեռը որևէ մեկին չպետք է զրկեն աշխատանք գտնելու հնարավորությունից: Ոչ էլ աղքատությունը կամ սոցիալական ծագումը պետք է, տարբեր հանգամանքներից ելնելով, խոչընդոտեն նրանց ամուսնությունը որևէ մեկի հետ:

Այդուհանդերձ, սա չի նշանակում, որ դպրոցները կամ գործատուները կամ որևէ այլ մեկը ստիպված է ընդունել ցանկացած անձի՝ անկախ նրա որակավորումից: Դպրոցները կարող են իրավացիորեն սահմանափակել իրենց ընդունելությունը՝ քննությունները հանձնած անձանց շրջանակով, իսկ գործատուն կարող է տեղեկանքներ և փորձ պահանջել: Ազատ կինը պարտավոր չէ ամուսնանալ որևէ տղամարդու հետ միայն այն պատճառով, որ նա հավանել է իրեն: Հնարավորությունների հավասարությունը նշանակում է միայն, որ որևէ մեկի ճանապարհին կամայական խոչընդոտներ չկան, և որ մարդիկ պարտադրված չեն անել մի բան, որը չեն ցանկանում: Օրինակ, որոշ մշակույթներում տարածված ծրագրված ամուսնությունները կատարելապես ընդունելի են ազատ հասարակությունում՝ պայմանով, որ երկու կողմերն էլ համաձայն են: Սակայն մարդիկ չեն կարող իրենց ցանկություններին հակառակ հարկադրաբար ամուսնանալ, նույնիսկ եթե նրանց ծնողներն են դա պահանջում: Ազատ հասարակությունում համարվում է, որ ամուսնանալու համար բավարար տարիք ունեցողը բավականին հասուն է իր ընտրությունը կատարելու համար: Ինչպես ցանկացած այլ պայմանագիր, ամուսնությունն առոչինչ է համարվում, եթե որևէ կողմ պարտադրանքի է ենթարկվել:

Թեև իրենց կենսական հարցերի ընտրության ժամանակ մարդիկ սոցիալական խոչընդոտների չպետք է հանդիպեն, իհարկե, կան նաև բնական շեղումներ: Քիչ հավանական է, որ խուլ ծնված անձը դառնա կոմպոզիտոր կամ նվագախմբի դիրիժոր (չնայած հասուն տարիքում Բեթհովենին դա հաջողվել է): Վերջույթներ չունեցող անձը չի կարող ձգտել մագլցել լեռները: Երեխաները տարբեր կերպ են սկսում իրենց կյանքը՝ կախված ընտանեկան հանգամանքներից. մեկի ծնողները կարող են նրա համար գրքեր գնել և օգնել կատարելու տնային աշխատանքը, մինչդեռ մյուսի ծնողները կարող են անտեսել նրան:

Հարց. Աղքատներն ազատ չեն լիմուզին գնելու հարցում, այդպես չէ՞:

Նրանք ազատ են: Ազատ հասարակությունում յուրաքանչյուր ոք ազատ է գնել ճոխ ապրանքներ, նույնիսկ եթե իրականում քչերը կկարողանան դա իրենց թույլ տալ: Սա արդեն հնարավորության հարց է, այլ ոչ թե ազատության. աղքատ մարդիկ վճարունակ չեն գնել մեծ մեքենա, այլ ոչ թե իշխանավորներն ու այլ անձինք են նրանց խոչընդոտում: Յուրաքաչյուր ոք կարող է ձգտել ունենալ ճոխ ապրանքներ՝ ծանր աշխատանքի, փողի խնայողության կամ նույնիսկ պարտք վերցնելու միջոցով:

Հարկ է հիշել նաև, որ աշխարհի ամենահարուստ և ամենաազատ հասարակությունների նույնիսկ աղքատ ընտանիքներն այժմ վայելում են այնպիսի բաներ, ինչպիսիք են՝ բնակարանի տաքացումը, լույսը, հոսող ջուրը, որոնք ընդամենը մի քանի տասնամյակ առաջ ճոխություն էին համարվում: Ոչ ազատ հասարակություններում, հակառակը, մարդիկ նույնիսկ չեն կարող ձգտել, օրինակ, ավելի մեծ տուն կամ ավելի բերրի հող ունենալուն, քանի դեռ իշխանությունները չեն օժանդակում նրանց:

Արևմուտքում ոմանք պնդում են, որ նույնիսկ եթե երեխաները կյանք են մտնում, ունենալով տարաբնույթ ապրելակերպ, ուսումնական հաստատությունները պետք է ձգտեն, որպեսզի չափահաս և աշխատունակ դառնալու պահին նրանք հասած լինեն նույն մակարդակին: Այդ իսկ պատճառով դպրոցները հսկայական միջոցներ են ուղղում կրթությունը հավասարակշռելու համար՝ հաճախ իջեցնելով առաջադեմ երեխաների մակարդակը, փոխանակ էլ ավելի հզորացնելու նրանց ներուժը: Սակայն, իրականում մենք չենք կարող համահարթել բնական տարբերությունները, և սոցիալական տարբերությունների համահարթեցումը կստեղծի մի այնպիսի մղձավանջային իրավիճակ, երբ պետությունը վերցնում է երեխաներին իրենց ծնողներից հենց ծննդյան պահին, և սկսում նրանց բոլորին միատեսակ մեծացնել:

Որոշ երկրներ փորձել են փոխհատուցել բնական տարբերությունները և կոտրել նախապաշարմունքները դրական խտրականության ծրագրերի միջոցով: Սա կարող է պարզապես նշանակել իրենց համար հասանելի հնարավորությունների մասին իրազեկել փոքրամասնություններին, օրինակ՝ խելացի, սակայն աղքատ երեխաներին, որոնք երբեք չեն մտածել առաջատար համալսարաններ դիմելու մասին, և խրախուսել օգտվել այդ հնարավորություններից: Այսպիսի իրազեկումն ու խրախուսումը անվիճելի են, քանի որ պարզապես ավելացնում են այս խմբերին հասանելի ընտրության տարբերակները:

Դրական խտրականությունը կարող է հանդես գալ փոքրամասնություններին արտոնություններ տրամադրելու ձևով, ասենք, ուսումնական հաստատությունների կամ գործատուների համար քվոտաներ սահմանելով, որպեսզի վերջիններս ընդունեն որոշակի թվով փոքրամասնությունների ներկայացուցիչների: Որոշակի դեպքերում այս իրավիճակն արդարացված է. սկսած 1960-ականներից ԱՄՆ-ում դրական խտրականությունը թույլ տվեց սևամորթներին ցույց տալ իրենց հնարավորություններն ուսումնական հաստատություններում և աշխատավայրերում՝ կոտրելով սպիտակամորթների նախապաշարմունքները նրանց նկատմամբ: Սակայն, դրական խտրականությունն անհամատեղելի է ազատ հասարակության հետ: Օգնելով կոտրել նախապաշարմունքները և խթանել ազատությունը, այն արտոնություններ է նախատեսում առանձին խմբերի համար՝ բոլորին հավասարապես վերաբերվելու փոխարեն:

Ոմանք հիմնավորում են նախապատվություններն ու քվոտաները՝ վկայակոչելով փոքրամասնությունների նկատմամբ անցյալի բացասական խտրականությունները: Սակայն եղածը անցյալում է. այսօր հօգուտ որոշ մարդկանց դրական խտրականություն դրսևորելը չի շտկում այն անարդարությունը, որ անցյալում տեղի է ունեցել նույն այդ փոքրամասնության մյուս մարդկանց նկատմամբ: Այդպիսի քաղաքականությունը կարող է դիտարկվել որպես անարդարություն մեծամասնության նկատմամբ, ովքեր պետք է ավելի բարձր ստանդարտներ ապահովեն,

որպեսզի ընդունվեն նույն դպրոցը կամ ունենան նույն աշխատանքային հնարավորությունը: Փոքրամասնությունը կարող է դառնալ նոր արտոնյալ դասակարգ, ինչը կարող է հակադարձ վրդովմունք կամ նույնիսկ բռնություն առաջացնել այդ քաղաքականության և դրանից օգտվող փոքրամասնությունների նկատմամբ:

Բացասական խտրականություն

Խտրականությունը, անշուշտ, ոչ միշտ է միտված օգնել փոքրամասնություններին: Ավելի հաճախ, խտրականության դեպքում մեծամասնությունը քվեարկում է հօգուտ իրենց իրավունքների, արտոնությունների և նախապատվությունների, որոնք անհասանելի են փոքրամասնության խմբերին: Մալազիան և Հարավային Աֆրիկան երկու ակնհայտ օրինակներ են, սակայն աշխարհը լի է դեպքերով, երբ օրենքը խտրականություն է դրսևորում փոքրամասնությունների նկատմամբ՝ բացառապես նրանց ռասայի, կրոնի, լեզվի, սեռական նախապատվության կամ քաղաքական տեսակետերի հիմքով:

Խտրականության այս ձևը նույնպես տեղ չունի ազատ հասարակությունում. այստեղ մարդիկ հավասար են օրենքի առաջ և ոչ մի խումբ չի կարող իր համար հատուկ արտոնություններ սահմանել: Առավել հաճախ, խտրականության այս ձևն արտահայտվում է փոքրամասնություններին հետապնդելու տեսքով: Փոքրամասնություններն այստեղ զրկված են մեծամասնություններին տրամադրված իրավունքներից և հնարավորություն չունեն բարելավելու իրենց վիճակը: Նրանք կարող են դիտվել որպես ցածր դասակարգի մարդիկ, անգամ մարդ չհամարվել: Եվ երբ նրանց դադարում են վերաբերվել որպես մարդկային էակների, այս մարդիկ ենթարկվում են անսահման տառապանքների և անմարդկային վերաբերմունքի:

Արդյունքների հավասարություն

Երբ շատերը խոսում են հավասարության մասին, նրանք նկատի չունեն հավասար վերաբերմունքի արժանանալու իրավունքը՝ ըստ բարոյական հավասարության, օրենքի առջև հավասարության, քաղաքական հավասարության և հնարավորության հավասարության սկզբունքների: Նրանք նկատի ունեն հավասարությունը այնպիսի նյութական խրախուսանքի հարցերում, ինչպիսիք են ունեցվածքը, եկամուտն ու կենսապայմանները: Այս բարիքները հավասարեցնելու համար շատերը պաշտպանում են հարուստներից վերցնելու և աղքատներին հանձնելու վերաբաշխման եղանակը:

Եկամուտների անհավասարության վիճակագրություն

Արդյունքների հավասարության կողմնակիցները հաճախ ցիտում են մի վիճակագրություն, որը կոչվում է Ջինիի գործակից, ի պատիվ իտալացի վիճակագիր և սոցիոլոգ Կորադո Ջինիի: Այն տարբեր մեծությունների, օրինակ՝ եկամտի, անհավասարության ինդեքսն է: Ջինիի 0 գործակիցը նշանակում է, որ առկա է ամբողջական հավասարություն, իսկ 1 գործակիցը՝ ամբողջական անհավասարություն (երբ ամբողջ եկամուտը հասնում է մեկ անձի):

Տարբեր կառույցներ, օրինակ, Համաշխարհային բանկը և ԱՄՆ Կենտրոնական հետախուզական վարչությունը փորձել են չափել տարբեր երկրների Ջինիի գործակիցը և դասակարգելու այդ երկրները՝ ըստ իրենց անհավասարության սանդղակի: Այսպիսի վարկանիշային աղյուսակները ցույց են տալիս, որ զարգացած երկրների մեծ մասի գործակիցները տատանվում են 0.25-ից մինչև մոտ 0.5-ի սահմաններում, ինչը նշանակում է բարձր մակարդակի հավասարություն: Ամենամեծ անհավասարությունը ստացվում է աֆրիկյան պետություններում, մասնավորապես Հարավային Աֆրիկայում, որտեղ այս գործակիցը մոտ 0.7 է:

Հարկ է թերահավատորեն մոտենալ այսպիսի հաշվարկներին և հատկապես այն առաջարկին, որ բարձր գործակից ունե-

ցող երկրների եկամուտները պետք է հարկադրաբար հավասարեցվեն: Նախնառաջ, քիչ երկրներ են, որ հուսալի տվյալներ ունեն եկամուտների վերաբերյալ, ինչը Ջինիի գործակիցը դարձնում է գրեթե անհուսալի չափանիշ (հնարավոր է, հենց դա է պատճառը, որ այն հաշվարկող տարբեր հաստատություններ տարբեր թվեր են ստանում): Երկրորդ, եկամտի խոշոր տարբերությունները կարող են արտացոլել սոցիալական միտումները, որոնք իրապես դրական են: Դրանք կարող են ցույց տալ նոր տեխնոլոգիաների արագ աճը կամ քաղաքներում բարեկեցության ավելացումը, որը դեռ չի հասել գյուղական շրջաններին: Իմաստ չի ունենա խեղդել այս աճող բարեկեցությունը՝ նվազեցնելով քաղաքաբնակ SS ոլորտի աշխատակիցների եկամուտները և դրանք հասցնելով ֆերմերների եկամուտներին: Ավելի շուտ մենք պետք է այս բարեկեցության մասնաբաժինը հասանելի դարձնենք աղքատ մարդկանց համար՝ հեռացելով այն խոչընդոտները (օրինակ, ազատ տեղաշարժման սահմանափակումները), որոնք արգելում են նրանց դա անել:

Վիճակագրության մյուս խնդիրն այն է, որ նրանք համեմատում են «նախնական» եկամուտները՝ անտեսելով մարդկանց վճարած հարկերն ու կառավարությունից նրանց ստացած օգնությունը (սոցիալական ապահովություն, կենսաթոշակներ, անվճար առողջապահություն և այլն): Միացյալ Թագավորությունից վերցնելով չափման մի փոքր այլ մեծություն, գումար վաստակողների առաջատար տասը տոկոսի նախնական եկամուտները մոտ 30 անգամ ավելի են, քան նույն աղյուսակի վերջին տասը տոկոսի մոտ, ինչը մեծապես անհավասար է թվում: Սակայն այն բանից հետո, երբ մարդիկ վճարել են իրենց հարկերն ու ստացել պետական տարաբնույթ նպաստներ, վերջնական թիվը շատ ավելի համեստ է՝ 6 անգամ: Մարդիկ շարունակում են ցիտել առաջին թիվը, որպեսզի հիմնավորեն հետագա վերաբաշխումները, սակայն սա վիճակագրության խարդախ կիրառություն է:

Այն գաղափարը, որ մարդիկ պետք է հավասարապես օգտվեն հասարակության կյանքում ունեցած իրենց մասնակցության համար, անվանում են բարեկեցության հավասարապաշտություն (էգալիտարիզմ): Սակայն եզրույթի իսկական իմաստը դժվար է վերհանել դրա հակասականության պատճառով:

Հավասարապաշտները կարող են չհստակեցնել, թե ինչ հավասարություն են ուզում՝ եկամուտների, թե ունեցվածքի: Եթե նրանք նկատի ունեն, որ եկամուտները պետք է հավասար լինեն, ապա պետք է ընդունեն, որ համարյա հաստատապես կարող են լինել մեծ տարբերություններ ունեցվածքի հարցում: Մեկը կարող է ողջամտորեն խնայել և ներդրումներ կատարել և արդյունքում կապիտալ և ունեցվածք կուտակել, մինչդեռ միևնույն եկամտով մեկ ուրիշը կարող է արկածախնդրության հետևանքով կորցնել այն կամ վատնել րոպեական հաճույքների վրա: Շուտով նրանց ունեցվածքը բոլորովին տարբեր կլինի:

Բացի այդ, եթե բոլոր աշխատանքները հավասարապես վճարվեին, ապա կառաջանար մի ծանր իրավիճակ, երբ մեծ պահանջարկ կունենային հեշտ ու հաճելի աշխատանքները, և զանգվածաբար կպակասեին այն մարդիկ, որոնք պատրաստ են կատարել տհաճ և բարդ աշխատանք: Ինչո՞ւ որևէ մեկը պետք է ջանա աշխատել ավելի շատ, եթե նա վճարվելու է նույնքան, որքան նրա ծույլ գործընկերը:

Աշխատանքը նաև ավելին է, քան նյութական եկամուտը: Դա այն է, որ տնտեսագետներն անվանում են հոգեբանական եկամուտ՝ օրինակ, հաճելի գործընկերներ ունենալը կամ երկրի հաճելի մասում կամ քաղաքի հարմարավետ և լավ ապահովված հատվածում աշխատելը: Այս որակները կարող են բարձր գնահատվել նրանց կողմից, ովքեր վայելում են դրանք, սակայն դրանք անհնար է հավասարեցնել:

Մյուս կողմից, եթե հավասարապաշտներն ի նկատի ունեն, որ պետք է հավասարեցնել ունեցվածքը, ապա դեռևս կլինի եկամուտների մեծ տարբերություն, կախված մարդկանց հմտություններից ու տաղանդից և գործատուների պահանջարկից: Եվ եթե

ոմանք խնայել են և ավելացրել իրենց կարողությունը, մինչ մյուսները ծախսել են և նվազեցրել այն, ապա նրանց ճակատագրերը շուտով կտարբերվեն: Ի՞նչ անել դրանից հետո: Վիլֆրեդ Փիքլեսը, ով 1950-ականներին վարում էր Միացյալ Թագավորության ռադիոյի ամենահայտնի «Փորձե՛ք» շոու-վիկտորինան, մի անգամ իր հաղորդումը սկսեց՝ խնդրելով մասնակիցներին պատմել իրենց և իրենց հավակնությունների մասին: Նրանցից մեկն ասաց. «Իմ նպատակն է ստանալ աշխարհի ողջ գումարը և այն հավասարապես բաժանել բոլորի միջև»: Բոլորը ծափահարեցին նրան՝ այս բարեգործական զգացմունքի համար: Սակայն, մրցակիցը փչացրեց ամբողջ տպավորությունը՝ հավելելով, թե. «Եվ երբ ես ծախսեմ իմ բաժինը, մենք դա նորից կկրկնենք»: Փոփոխվող աշխարհում դժվար է ունեցվածքը հավասար պահել:

Ուստի, եկամուտի կամ ունեցվածքի հավասար արդյունքներն անբնական և անկայուն են: Դրանք հավասարեցնելու և հավասար պահելու համար հարկավոր է ոտնահարել ազատությունն ու սեփականությունը: Դրա համար պետք կլինի ուժով վերցնել ոմանց ունեցվածքն ու տալ մյուսներին և դա անել կրկին ու կրկին, որպեսզի մշտապես ապահովվեն հնարավորինս հավասար պայմաններ:

Որոշակի ունեցվածք անհնար է բաժանել և վերաբաշխել. բարդ, գործող, արտադրանք տվող գործարանը կարելի է բաժանել բաղկացուցիչ մասերի, սակայն այն այլևս ոչինչ չի արտադրի: Այն նաև հնարավոր չի լինի վաճառել գումարը վերաբաշխելու նպատակով, քանի որ հավասար ունեցվածքի աշխարհում ոչ ոք բավարար միջոցներ չի ունենա այն գնելու:

Վերաբաշխման նման քաղաքականությունը պարտադրված և մեծապես անարդյունավետ կլինի: Այն մարդկանց թույլ չի տա ստանալ իրենց սեփական աշխատանքի արդյունքները և կոչնչացնի աշխատելու և խնայելու բոլոր խթանները: Այն կոչնչացնի հարստությունը, այլ ոչ թե պարզապես կվերաբաշխի այն: Դա պարտադրելու համար նաև հսկայական քաղաքական իշխանություն կպահանջվի, իշխանություն, որն անհամատեղելի է ազատ հասարակության հետ:

Հաջորդ խնդիրը որոշելն է, թե ով պետք է մասնակցի վերաբաշխման գործընթացին: Հարուստ երկրներում, հավասարապաշտներն իրենց առաջարկները սովորաբար սահմանափակում են միևնույն երկրի կամ նմանօրինակ երկրների մի խմբի բնակիչներով: Դրա պատճառն այն է, որ եկամտի կամ հարստության բաժանումը աշխարհի մնացած մասի հետ (նույնիսկ եթե այն կիրառելի լիներ) հարուստ երկրների քաղաքացիների համար կնշանակեր կենսապայմանների զգալի վատթարացում: Այսպիսի քաղաքականությունը հավանաբար հեշտ ու հանգիստ չի ընդունվի:

Աղքատ երկրների հավասարապաշտները, հակառակը, հիմնականում ունեն համաշխարհային հավասարության տեսլականը. նրանք պատճառաբանում են, որ հարուստ երկրների հարստության բաժանումը հսկա տարբերություն կառաջացնի իրենց չքավոր բնակչության շրջանում: Սակայն դա անհնար երազանք է, քանի որ ավելի հարուստ երկրները դրան երբեք չեն համաձայնվի:

Ընդ որում, այդպիսի վերաբաշխումը փաստացի չի էլ ապահովի շարունակական հարստություն աղքատների համար: Հարստությունը «զրոյական արդյունքով խաղ» չէ: Չկա հարստության որևէ ֆիքսված պաշար՝ մի անձը կարող է հարստանալ, եթե միայն մյուսը աղքատանա: Հարստությունը ստեղծվում է նորարարության, ձեռնարկատիրության, առևտրի և ձեռք բերվող կապիտալի միջոցով: Եղած արտադրական կապիտալի ոչնչացումը չի օգնի նրանց, ովքեր այն չունեն: Լավագույն քաղաքականությունը պայքարն է այնպիսի երևույթների դեմ, ինչպիսիք են՝ պատերազմները և կողոպուտները, որոնք հուսալքում են ավելի աղքատ ազգերին՝ կուտակել իրենց սեփական կապիտալը:

Այս հարցերից, թե ինչը, ում և ումից պետք է վերաբաշխվի, պարզ է դառնում, որ վերաբաշխման քաղաքականության վերաբերյալ որևէ համաձայնություն երբեք չի կարող լինել: Վերաբաշխման աշխատանք կատարելու համար պետք է լինի որոշակի պլան, որի հետ բոլորը կհամաձայնեն: Համաձայնության բացակայության դեպքում դրան հասնելու միակ միջոցը ուժն է:

Նյութական հավասարության հարկադիր ապահովումն ամբողջովին կսպանի ավելի լավ արդյունքների հասնելու մարդկանց ձգտումները: Եթե ձեզանից վերցնեն նորարարությամբ, ձեռնարկատիրությամբ կամ ծանր աշխատանքով ձեռք բերած նյութական բարիքները, ապա որևէ մեկը ինչո՞ւ պետք է ձգտի դրանք ձեռք բերել: Մարդկությունը շատ ավելի մեծ կորուստներ կունենա: Ձեռնարկատիրությունը ստեղծարար է. մարդիկ ձգտում են ստեղծել ավելի լավ ապրանքներ ու ծառայություններ և այնպիսի նոր արտադրանք, գործընթացներ և տեխնոլոգիաներ, որոնք բարելավում են բոլորի կյանքը: Ձեռնարկատիրական և ստեղծագործական գործունեությունը սահմանափակելով՝ հավասարապաշտությունը փակում է նաև ամբողջ աշխարհի նյութական կյանքի շարունակական բարելավման հեռանկարը:

Հավասարություն և արդարություն

Արդարության երկու իմաստները

Շատերը, ովքեր կողմ են հարստության կամ եկամուտների վերաբաշխմանը, պնդում են, որ «անարդար» է, երբ ոմանք ավելի հարուստ են, քան մյուսները, և երբ մի քանիսը կարող են շատ ավելի հարուստ լինել, քան ամենաաղքատները: Այս «սոցիալական անարդարությունը» բարդացվում է այն փաստով, որ մարդկանց հարստությունն անհրաժեշտորեն չի արտացոլում նրանց «արժեքը հասարակության համար»:

Այնուամենայնիվ, այս փաստարկը ներառում է «արդարություն» բառը, ինչը մենք բոլորս ընդունում ենք որպես լավ ու ցանկալի մի բան, որը մեզ բնորոշում է որպես մարդկային էակ, սակայն դրան բոլորովին այլ իմաստ է վերագրում, օրինակ հավասարություն կամ ազնվություն:

Արդարության նախնական իմաստը վերաբերում է նրան, թե մենք ինչ վարքագիծ ենք ակնկալում միմյանցից: Եթե որևէ մեկը խախտում է պայմանագիրը կամ գողանում է, մենք ասում ենք, որ նա անարդարացի է գործել, քանի որ այսպիսի վարքագիծն արգելված է չվնասելու սկզբունքով և մեր իրավական

և բարոյական կանոններով: Այլ կերպ ասած, արդարության այս իմաստը, որը կոչվում է կոմուտատիվ արդարություն, վերաբերվում է մարդկային էակների վարքագծին: Այն վերաբերում է միայն այն դեպքերին, երբ մարդիկ գործում են միտումնավոր կերպով: Եթե որևէ մեկը գրիպով վարակվի կամ ֆիզիկական հաշմանդամություն ձեռք բերի, ապա դա անհաջողություն է, այլ ոչ անարդարություն, որովհետև ոչ ոք անարդար չի գործել:

«Արդարություն» բառի երկրորդ կիրառումը երբեմն անվանվում է «բաշխման արդարություն» և վերաբերում է ոչ թե միջանձնային վարքագծին, այլ մարդկանց միջև իրերի բաշխմանը: Ազատ հասարակությունում առաջացած հարստության կամ եկամուտների բաշխումը պարզապես հանդիսանում է կամավոր տնտեսական գործունեության արդյունք, որտեղ յուրաքանչյուր ոք հետևում է իրավական և բարոյական կանոններին: Այն չի կարող «անարդար» լինել, քանի որ ոչ ոք անարդարացիորեն չի գործել: Ոչ ոք չի ակնկալել այդ որոշակի արդյունքը. դա պարզապես կյանքի մի փաստ է:[16]

«Արժեք հասարակության համար»

«Սոցիալական արդարություն» եզրույթի օգտագործումը ելնում է այն սխալ դրույթից, թե հասարակությունն անձի մի տեսակ է, որը որոշում է հարստության և եկամուտի մոդելը: Սակայն «հասարակությունը» չունի սեփական կամք. միայն անհատները կարող են որոշումներ ընդունել և գործել դրանց հիման վրա: Անհատները խստորեն տարակարծիք են սոցիալական և տնտեսական քաղաքականության վերաբերյալ: «Սոցիալական արդարություն» գաղափարի՝ շատերի համար այդքան գրավիչ լինելու պատճառները կոնկրետ արդյունքի մասին ծայրահեղ աղոտ պատկերացումն է, որը հարթեցնում է այս տարաձայնությունները:

---

[16] F. A. Hayek, The Mirage of Social Justice, University of Chicago Press, Chicago, IL, 1978.

Երբ մենք փորձում ենք կոնկրետացնել, թե ինչ տեսք կունենա բարիքների «սոցիալապես արդար» բաշխումը, ակնհայտ է դառնում դրան հասնելու վերաբերյալ համաձայնության անհնարինությունը: Շատերը գտնում են, որ եկամուտների լիարժեք հավասարությունը ճիշտ թիրախ չէ, քանի որ անհատները կստանան նույն պարգևները, անկախ նրանից, թե որքան ծույլ կամ վնասակար են եղել: Ակնհայտ է, որ պարգևը պետք է հաշվի առնի ջանքն ու ձեռքբերումը: Ընդհանուր տեսակետը, այդուհանդերձ, այն է, որ լիարժեք հավասարության փոխարեն, պարգևները պետք է տրամադրվեն ըստ մարդկանց՝ «հասարակության համար ունեցած արժեքի»:

Սակայն ո՞վ պետք է որոշի անհատի արժեքը հասարակության համար: Հասարակությունն անհատ չէ և ինքնուրույն արժեք չունի: Մարդիկ չեն կարող որևէ բանին «արժեք» վերագրել, եթե այն ինքնուրույն արժեք չունի: Միայն անհատներն ունեն արժեքները, որոնք շատ տարաբնույթ են և միմյանց իրապես հակասող: Մարդկանց մի խումբը կարող է արժևորել բռնցքամարտիկի գործողությունները, մինչդեռ մյուսները՝ դաշնակահարի կատարումը: Անհնար է ասել, թե որն է ավելի մեծ «արժեք» ներկայացնում հասարակության համար, քանի որ տարբեր մարդկանց զգացողություններն անհամեմատելի են: Մենք ինչպե՞ս կարող ենք երբևէ որոշել բուժքրոջ, մսագործի, հանքագործի, դատավորի, ծովախույզի, հարկային տեսուչի, դեղագործի կամ մաթեմատիկայի պրոֆեսորի «արժեքը հասարակության համար»:

Բաշխում ըստ արժանիքի

Հավասարապաշտների մյուս առաջարկն այն է, որ պարգևները պետք է բաշխվեն ըստ «արժանիքի»: Սակայն կրկին, չկա որևէ անկողմնակալ միջոց որոշելու տարբեր մարդկանց հարաբերական «արժանիքները», և թե ինչպես պետք է դրանք պարգևատրվեն: Տարբեր մարդիկ կարող են տարբեր տեսակետեր ունենալ այն մասին, թե որքան գովելի է այս կամ այն հատկանիշը:

Նույնիսկ այդ դեպքում գործնական խնդիրներ կան առկա արժանիքի չափը որոշելու վերաբերյալ: Արդյո՞ք այն մարդու «արժանիքը», ով տարիներ շարունակ քրտնաջան աշխատել է, բայց ոչնչի չի հասել, պետք է պարգևատրվի, իսկ մեկ այլ անձ, ով միլիոնավոր անձանց արժեքներ է պարգևել՝ պատժվի, քանի որ դա երջանիկ պատահականության արդյունք է եղել: Մենք չենք ցանկանում խրախուսել անարդյունք քրտնաջան աշխատանքը. տնտեսական առաջընթացը վերաբերում է մեր արտադրանքի արժեքի բարձրացմանն ու դրա համար պահանջվող զոհողությունների նվազեցմանը: Անձնական զոհողությունների համար մարդկանց պարգևատրելը պարզապես կխրախուսի զոհողությունները, այլ ոչ թե մյուսներին ծառայություն մատուցելը: Այսպիսի սկզբունքով ոչ մի տնտեսություն չի կարող գոյատևել:

Շուկայի պարգևները չեն արտացոլում արտադրողների բարոյական և անձնական արժանիքները, ինչպես նաև այն ժամանակն ու ջանքերը, որոնք նրանք ներդրել են իրենց ապրանքներն ու ծառայությունները շուկա բերելու համար: Կապ չունի, թե նրանց արտադրանքը արդյոք տարիների քրտնաջան աշխատանք և ներդրում է պահանջել, թե երջանիկ պատահականության արդյունք է: Սակայն շուկայի հավելյալ գումարներն արտացոլում են այն հաճույքն ու արժեքը, որ մարդիկ մատակարարում են մյուսներին: Սպառողներն արտադրողներին վճարում են նրանց արտադրած ապրանքների և մատուցած ծառայությունների համար, որովհետև արժևորում են դրանք: Եվ այս իսկապես իրական իմաստով շուկայի պարգևատրումը կախված է այն արժեքից, որը մարդիկ մատակարարում են հասարակության մյուս անդամներին: Այն նաև արտացոլում է արտադրողների սակավությունն ու տաղանդը, այդ ծառայությունը ցանկացող սպառողների թիվը և գնորդների կողմից այդ արտադրանքը ձեռք բերելու հրատապությունն ու կարևորությունը:

Բաշխում ըստ կարիքի

Հավասարապաշտների հաջորդ առաջարկությունն այն է, որ ռեսուրսները պետք է բաշխվեն ըստ «կարիքի»: Սակայն

կրկին, ո՞վ է որոշում, թե ինչ է «կարիքը»: Չկա որևէ ակնհայտ գիծ, որը տարանջատում է կարիքավոր և ոչ կարիքավոր մարդկանց: Մարդկանց կյանքի հանգամանքները շատ տարբեր են. նրանք տարբեր ունեցվածք և եկամուտներ ունեն, ինչը կարող է մեծապես տատանվել: Նրանք ապրում են գեղեցիկ կամ տհաճ վայրերում, ունեն տարբեր ֆիզիկական և մտավոր ունակություններ, աշխատում են տարբեր մարդկանց հետ տարբեր աշխատատեղերում: Այս ոչ ֆինանսական առավելությունները, օրինակ՝ բարեկամաբար տրամադրված գործընկերների շրջապատում հաճելի աշխատանք ունենալը անհնար է արտահայտել թվերով:

Մարդիկ «կարիքավոր» են, թե ոչ, դա, այդուհանդերձ, վիճելի հարց է, և տարբեր մարդիկ կարող են տարբեր ձևով այն գնահատել: Ըստ կարիքի վերաբաշխումը հնարավոր կլինի միայն այն դեպքում, եթե որևէ քաղաքական մարմնի տրվի «կարիքի» աստիճանը որոշելու և դրա հիման վրա գործելու իրավասություն: Սակայն ազատ հասարակությունում մարդիկ երբեք չեն կարող համաձայնվել որևէ մարմնի այդպիսի իրավասություն տալ: Դա կլինի լիակատար իշխանություն իրենց կյանքի նկատմամբ: Նրանք այլևս չեն լինի ազատ մարդ: Նրանք կլինեն այդ իշխող մարմնի ստրուկները:

Ոչ էլ կարիքի առկայությունն է պարտավորություն ստեղծում մյուսների համար: Երիկամի անբավարարություն ունեցող անձը կարող է նոր երիկամի կարիք ունենալ: Սակայն դա չի պարտադրում որևէ այլ անձի նվիրաբերել իր սեփական երիկամը: Մերձավոր ազգականները կարող են նվիրաբերելու բարոյական և ընտանեկան պարտավորություն զգալ, և նույնիսկ օտարները կարող են կարեկցանքով վերաբերվել: Դա նրանց ընտրության հարցն է: Մենք կարող ենք խրախուսել և ողջունել այդպիսի գործողությունները, սակայն ազատ հասարակությունը չի կարող ստիպել անհատներին զոհողություններ կատարել մյուսներին օգնելու համար:

Ազատ տնտեսությունը իրերը բաշխում է ոչ թե հարկադրանքի, այլ շուկայական տնտեսության կողմից արտադրած տարբեր ապրանքների ու ծառայությունների համար սպառողների կողմից սահմանած արժեքների միջոցով: Եթե մարդիկ, օրինակ, օրգանական ձուկը գերադասեն աճեցրած ձկից, կամ

կոշիկը՝ հողաթափից, ապա կկանխորոշեն այն, թե ինչ պետք է արտադրվի: Ռեսուրսները բաշխվում են նաև այն արժեքների միջոցով, որոնք մարդիկ արտահայտում են իրենց բարեգործական նվերների պարագայում: Այսպիսի որոշումները թողնված են անհատներին. այն գաղափարը, որ միայն պետությունը կարող է իմանալ, թե ինչը կարող է արժանանալ հավանության, մերժված է ազատ հասարակության կողմից:

Հավասարապաշտության հետագա վնասները

«Սոցիալական արդարության» վրա կենտրոնացած հավասարապաշտության վնասակար արդյունքն այն է, որ այն ստվերում է իրական, կոմուտատիվ արդարության գաղափարն ու իրականությունը: Ազատ հասարակություն ստեղծող հիմնարար սկզբունքները, ինչպես օրինակ՝ հավասարությունը օրենքի առջև, խամրել և արժեզրկվել են այս նոր եզրույթով: Վերաբաշխման դեպքում չի կարող լինել վերաբերմունքի հավասարություն. մարդկանց նույնակերպ վերաբերվելու փոխարեն մենք ստիպված կլինենք յուրաքանչյուրից տարբեր գումարներ վերցնել և յուրաքանչյուրին տարբեր գումարներ տալ:

Նյութական ցանկությունները պահպանվում են

Իրական արդարությունը կարգավորում է տարաձայնությունները, մինչդեռ «սոցիալական արդարությունը» գործնականում ստեղծում է դրանք: Երբ կառավարությունը փորձում է վերաբաշխել եկամուտները ըստ արժանիքի, կարիքի կամ հասարակության համար ունեցած արժեքի, այն կարող է լոբբինգի ենթարկվել տարբեր խմբերի կողմից, որոնք պահանջում են ավելի խոշոր հավելյալ գումարներ: Վերաբաշխման արդարացի եղանակների բացակայության պայմաններում քաղաքական կոնֆլիկտը թելադրում է կամայական որոշումներ: Ի վերջո, կառավարությունը կոպիտ կերպով կայացնում է ազատ հասարակության հետ անհամատեղելի որոշումներ:

Անհատները փորձում են շրջանցել համակարգը՝ հոգուտ իրենց և իրենց ընտանիքների: Սա Խորհրդային Միության փորձն է, որտեղ բնակչության գրեթե մեծամասնությունը ներգրավված էր ապօրինի գործողություններում՝ իրենց կենսապայմանների բարելավման համար: Պարտադրված նյութական հավասարությունը օրինապահ մարդկանց պարզապես վերածում է հանցագործների ցեղի:

Հարուստների դերը

Եկամտի և բարեկեցության անհավասարությունն ունի նաև դրական գործառույթներ: Ավելի շատ վաստակելու, գուցեև հարստանալու մարդկանց ցանկությունը հզոր խթան է: Դա դրդում է նրանց փնտրել ավելի լավ աշխատանք, հորինել, արտադրել և բաշխել ավելի լավ արտադրանք, որը կբարելավի մյուսների կյանքը: Հարուստ մարդիկ խաղում են այս նոր ապրանքները փորձարկողների կարևոր դերը:

Շատ նոր ապրանքներ շուկա են մտնում որպես ճոխություն, առանց զանգվածային շուկա ունենալու՝ դրանք ստեղծվում են փոքր քանակություններով և բարձր գնով: Ուստի դրանք գնվում և փորձարկվում են ավելի հարուստ մարդկանց կողմից: Այդ մարդկանց արձագանքները թույլ են տալիս արտադրողներին սահմանել տվյալ արտադրանքի պահանջարկի մակարդակը և այն, թե որտեղ և ինչպես է պետք այն բարելավել: Դա թույլ է տալիս հրաժարվել սխալ արտադրանքից նախքան մեծ մասշտաբների անցնելը և բարելավել այն ապրանքների որակը, որոնք մտնում են զանգվածային շուկա: Այս կերպ հարուստ, առաջնահերթ սպառողների փորձից շահում են բոլորը:

Հարուստ ունեցվածք և բարձր եկամուտ ունեցող մարդիկ նաև այլ կարևոր սոցիալական դերեր ունեն: Նրանք նոր ապրանքներ և ծառայություններ տրամադրելու գործում փորձարկումներ կատարելու ռեսուրսներ ունեն, ինչը ընդլայնում է ընտրությունն ու ապահովում բարելավման գործընթացը: Նրանք կարող են հովանավորել արվեստը, կրթությունը և հետազոտական նախագծերը, որոնք, նրանց կարծիքով,

կառավարությունն անտեսում է: Նրանք ֆինանսական հենք ունեն ճնշող հեղինակություններին մարտահրավերներ նետելու համար՝ այնպիսի նոր քաղաքական գաղափարներ տարածելու միջոցով, որոնք պետական պաշտոնյաները կարող են խորապես վտանգավոր համարել: Սրանք բոլորը կարևոր գործոններ են ազատ հասարակության պահպանման համար:

Կապիտալի ոչնչացումը

Ոչ բոլորն են արտադրական ռեսուրսները հավասարապես լավ կառավարում: Ձեռնարկատիրոջ կարիերա ստեղծող և իրենց նախաձեռնություններով շահույթ ձեռք բերել ցանկացող անձինք պետք է իմանան, թե ինչպես կառավարել ռիսկերը և միավորել արտադրական ռեսուրսները՝ ավելի լավ ու ավելի էժան ապրանքներ արտադրելու համար: Սակայն վերաբաշխումը կվերցնի ռեսուրսները հմուտ գործարարների ձեռքից և կտարածի մյուսների շրջանում: Դա նշանակում է կապիտալի և կապիտալի ստեղծման կորուստ: Սակայն կապիտալը մի բան է, որն ապահովում է տնտեսության արտադրողականությունը. ավելի քիչ բան ստեղծելով և ավելի շատ ռեսուրս սպառելով՝ հասարակության երկարաժամկետ բարեկեցությունը անխուսափելիորեն կգահավիժի:

Անհավասարությունը նույնպես նպաստում է տնտեսական բարելավմանը: Հաջողակ արտադրողների ստեղծած բարձր եկամուտները գործում են որպես մագնիս՝ մարդկանց և ռեսուրսները ուղղելով այնտեղ, որտեղ կարող է ստացվել ամենամեծ արժեքը, հետ պահելով նրանց պակաս արդյունավետ և պակաս արժեքավոր կիրառումից: Այսպիսով, մարդիկ և ռեսուրսներն ուղղվում են այնտեղ, որտեղ նրանք ամենաշատը կավելացնեն ապագա եկամուտները: Սա շարունակական, դինամիկ, աճող գործընթաց է: Անհավասարությունը, որը վրդովեցնում է այդքան շատ մարդկանց, իրականում, ձգողական ուժ է, որը մարդկանց և ռեսուրսներն ուղղորդում է դեպի իրենց ամենաարդյունավետ կիրառումը, ամենուր բարձրացնելով բարեկեցությունը: Եթե մենք վերաբաշխենք եկամուտները հավասարության հասնելու համար, ապա կարգելափակենք այդ ձգողական ուժը և

կկորցնենք այն արժեքը, արդյունքն ու աճը, որոնք կարող էր ստեղծել այդ ուժը ապագայում: Աճող տնտեսությունից կախված աղքատ մարդկանց բազմաքանակ լինելու դեպքում, հենց նրանք են, որ ամենաշատը կտուժեն: Ինչպե՞ս մենք կարող ենք դա «սոցիալական արդարություն» անվանել:

Հարկերի գանձումը և բարեկեցությունը

Հարստության կամ եկամուտների լիակատար հավասարությունը կարող է անհնարին խնդիր լինել, սակայն շատ կառավարություններ փորձում են դրան մոտենալ պրոգրեսիվ հարկերի միջոցով՝ ավելի բարձր հարկեր դնելով ավելի հարուստ մարդկանց վրա: Սակայն այս հարկերը կարող են մեծապես վնասակար լինել: Նվազեցնելով ձեռնարկատիրության և ջանքերի հավելյալ գումարները, դրանք խոչընդոտում են այս օգտակար գործունեությանը և նրա ստեղծած զբաղվածությանն ու բարեփոխումներին:

Ավելի վատ է, երբ այսպիսի հարկերը հաճախ դրվում են խնայողությունների և կապիտալի վրա: Խնայողությունների վրա դրվող հարկերը մարդկանց ավելի քիչ գումար են թողնում՝ դրանք ներդնելու համար բիզնես նախաձեռնություններում, որոնք բարձրացնում են ամբողջ հասարակության բարեկեցությունը: Կապիտալի վրա դրված հարկերը նշանակում են, որ ավելի քիչ ռեսուրսներ են ներդրվելու արտադրական ակտիվների ստեղծման մեջ, նվազեցնելով ամբողջ համայնքի ապագա բարեկեցությունը:

Ազատ հասարակությունում առևտուրը և ապրանքափոխանակությունը բացառապես կամավոր են: Արտադրողները գումար են վաստակում՝ արտադրելով միայն այնպիսի արտադրանք և մատուցելով այնպիսի ծառայություններ, որոնք ուրիշները ցանկանում են և պատրաստ են վճարել դրանց համար: Հարստացող մարդիկ ոչ ոքի չեն կողոպտում: Նրանք մեղավոր չեն որևէ անարդարության համար: Մենք թույլ չենք տա, որ նյութական անհավասարությունը նվազեցնելու նպատակով

որևէ թալանիչ գողանա նրանցից, ուստի մենք ինչո՞ւ պետք է պետությանը թույլ տանք դա անել:

5. ԱԶԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԵՎՏՈՒՐ

Ազատ շուկայական տնտեսությունը

Ազատ հասարակության տնտեսական համակարգն ազատ շուկայական տնտեսությունն է: Այն գործում է մարդկանց միջև ապրանքների ու ծառայությունների կամավոր փոխանակման միջոցով, երբեմն ուղղակիորեն, սակայն հիմնականում փողի միջոցով: Անհատներն ազատ են ընտրելու, թե ինչպես, երբ, որտեղ և ում հետ են նրանք աշխատում, ծախսում, ներդնում, խնայում և առևտուր անում: Ոչ ոք ստիպողաբար չի կարող դառնալ այս գործարքների մասնակից:

Համագործակցության խթանման կանոնները

Ազատ շուկայական տնտեսությունը անօրինության օրրան չէ, որտեղ մարդիկ կարող են անել այն, ինչ ուզում են՝ անկախ մյուսների համար առաջացող հետևանքներից: Այստեղ այնուամենայնիվ գերիշխում է չվնասելու սկզբունքը: Առկա են օրենսդրական շրջանակներ, որոնք կարգավորում են սեփականության ձեռքբերումը, տնօրինումը և փոխանակումը, մարդկանց իրավունքներն իրենց աշխատանքի նկատմամբ և պայմանագրերի կատարումը: Այս կանոնները տարածվում են ոչ միայն անհատների, այլև խմբերի՝ գործընկերությունների, ընկերությունների և բարեգործական կազմակերպությունների վարքագծի վրա: Կառավարության դերն այստեղ մարդկանց սեփականությունն ու ազատությունը պաշտպանող կանոնների պահպանումն է և պայմանագրերի կատարման ապահովումը:

Այնուամենայնիվ, այս դերակատարությունը սահմանափակ է: Կանոնները սահմանված են ոչ թե առևտրի ուղղորդման, այլ դրա հեշտացման համար: Դրանք նման են կրակը վառ պահող կրակարանի, և կարևոր է, որպեսզի շուկայական տնտեսության գործունեությունը չմարի ավելորդ կանոնների և կարգավորումների պատճառով: Սեփականության, ապրանքա-

փոխանակության և գործարքների հիմնական կանոնները հնարավորություն են տալիս մարդկանց համագործակցել միմյանց հետ իրենց ընտրած ձևով, փոխադարձ շահույթի նպատակով, հավատի, վստահության և անվտանգության հիմքի վրա: Դա հանգեցնում է ավելի մեծ տնտեսական համագործակցության և բազմապատկում է դրանից բխող օգուտները:

Կամավոր փոխանակման առավելությունները

Հեշտ է պատկերացնել, որ միայն վաճառողներն են շահում առևտրից: Ի վերջո, նրանք արդյունքում ունենում են ավելի շատ գումար վաճառքից, մինչդեռ գնորդի մոտ գումարը պակասում է: Այս ամենի պատճառով մարդիկ կարծում են, որ վաճառողներն ագահ են և հետաքրքրված են իրենց շահույթով, այլ ոչ թե մյուս մարդկանցով:

Սա սխալմունք է: Ի վերջո, ի՞նչ է փողը: Նախկինում, երբ փողը պարունակում էր ոսկի և արծաթ, այն առնվազն կարելի էր օգտագործել որպես մետաղ՝ թանկարժեք իրեր և զարդեր պատրաստելու համար: Սակայն թղթից և հասարակ մետաղից պատրաստված փողը այլ նպատակներով քիչ է օգտագործվում: Միակ օգտակար բանը, որ կարելի է անել դրա հետ, այլ ապրանքների կամ ծառայությունների հետ փոխանակելն է:

Այլ կերպ ասած, փողը փոխանակման *միջոց* է: Գնորդը փոխանակում է այն ապրանքների կամ ծառայությունների հետ, ապա վաճառողը փոխանակում է այն մեկ ուրիշից այլ ապրանքներ և ծառայություններ ստանալու համար: Երկու կողմերն էլ գոհ են գործարքից: Հակառակ դեպքում, նրանք չէին համաձայնվի դրան:

Ինչպե՞ս է առևտուրն արժեք ստեղծում

Ելնելով նրանից, որ ոչ ոք որևէ բան չի փոխի ավելի պակաս արժեցող մեկ այլ բանի հետ, ինչպե՞ս կարող են երկու կողմերն էլ գոհ մնալ գործարքից: Պատճառն այն է, որ արժեքին, ինչպես գեղեցկությանը, պետք է նայել դիտորդի աչքերով: Դա օբյեկտի

գիտական որակ չէ, ինչպիսիք են՝ քաշն ու չափը: Դա այն է, թե ինչ է մտածում յուրաքանչյուր անհատ այդ օբյեկտի մասին: Անձրևոտ երկրի բնակիչները մի բաժակ ջուրը ցածր կգնահատեն, սակայն անապատում ապրողների համար այն կարող է թանկարժեք համարվել: Նորաձև հագուստը կարող է օդի պես անհրաժեշտ լինել դեռահասների համար, մինչդեռ նրանց ծնողները կարող են դա ծիծաղելի համարել:

Մարդային էակները տարբերվում են հենց նրանով, թե ինչպես են արժևորում այն իրերը, որոնք կարող են ձեռք բերել փոխանակման միջոցով: Շուկայի առևտրականից հավ գնող սպառողը հավն արժևորում է ավելի շատ, քան դրա համար վճարվող փողը: Սակայն, առևտրականը փողն ավելի շատ է արժևորում, քան հավը: Երբ առևտրականը դրանից հետո օգտագործում է այդ փողը այլ բաներ, օրինակ՝ հաց, գնելու համար, տեղի է ունենում նույն բանը: Առևտրականը հացն ավելի շատ է արժևորում, քան այն փողը, որ հացթուխը պահանջում է դրա դիմաց: Բոլոր երեքն էլ շահեցին, ահա թե ինչու նրանք կամավոր համաձայնվեցին կատարել այս փոխանակությունները:

Իրականում, որքան մեծ է նրանց կողմից հավի, փողի և հացի արժևորման տարբերությունը, այնքան ավելի շատ է նրանցից յուրաքանչյուրը շահում դրանց փոխանակությունից: Այն ամենը, ինչի շուրջ նրանք պետք է համաձայնության գան, այն կանոններն են, որոնց միջոցով իրականացվում է ապրանքների առևտուրը, այսինքն՝ սեփականության, ազնվության և գործարքի կանոնները, որոնք կազմում են ազատ շուկայական տնտեսության հիմքը: Բացի դրանից, յուրաքանյուր գործարքի կողմերը լիովին եսապաշտ են. յուրաքանչյուրը հոգուտ իրեն, այլ ոչ թե մյուս անձի օգտին է կատարում փոխանակումը:

Այնուամենայնիվ, հետևելով այս կանոններին յուրաքանչյուրն ակամա օգուտ է տալիս մյուսներին, ասես ղեկավարվելով «անտեսանելի ձեռքի» կողմից, որի մասին նշել է Ադամ Սմիթը[17]: Ելնելով զուտ անձնական շահերից՝ նրանք պատրաստակամորեն համագործակցում են միմյանց հետ:

[17] Adam Smith, The Wealth of Nations, 1776, Book IV, ch. II, para. IX.

Ներկայումս, փողի միջոցով մեզանից յուրաքանչյուրը կարող է առևտուր անել և համագործակցել ոչ միայն այլ անձանց հետ առևտրի միևնույն վայրում, այլև միլիոնավոր մարդկանց հետ, որոնք ապրում են այնպիսի երկրներում, որոնք մենք երբեք չենք այցելի, որոնց լեզվով երբեք չենք խոսի, և որոնց մշակույթն ու քաղաքականությունը կարող է մեզ դուր չգալ: Այս անհամար առօրյա գործարքները ձեռնտու են բոլոր կողմերին: Մարդիկ համագործակցում են: Ստեղծվում է արժեք: Մարդկային էակներն ավելի լավ են ապրում: Մարդկությունը բարգավաճում է:

Աղքատներն ամենաշատն են շահում

Այս ազատ փոխանակման համակարգն այնքան բնական և շահավետ է, որ տարածվել է ամենուր: Նույնիսկ այն երկրներում, որտեղ գաղափարախոսությունից ելնելով՝ մերժում են ազատ շուկաները, այն թաքնված տեսքով գոյություն ունի, կամ էլ նրան հանդուրժողաբար են վերաբերվում: Շատ երկրներ (ներառյալ Ասիայի մի քանի երկրներ), որտեղ իրենց քաղաքացիներին անձնական և սոցիալական սակավաթիվ ազատություններ են տրամադրվում, զգալիորեն ավելի շատ տնտեսական ազատություն են թույլատրում:

Իրոք, առևտրային գործունեությունը կարևոր գործոն էր իսլամական աշխարհի վաղ տարիներին և դրա հետագա տարածման ժամանակ: Համաշխարհային առևտրային ուղիների բացումը ստեղծեց Վերածննդի Եվրոպայի հսկայական հարստությունը, ինչն իր հերթին հանգեցրեց արվեստի, մշակույթի և ուսումնառության ծաղկմանը: Ամերիկան նույնպես բարգավաճեց Եվրոպայի, ապա նաև Չինաստանի հետ ունեցած իր առևտրային կապերի շնորհիվ:

Սակայն միայն հարուստները չէ, որ շահում են մարդկային բարգավաճման աճող ալիքի շնորհիվ: Այնտեղ, որտեղ տարածված է տնտեսական ազատությունը, աղքատների կենսամակարդակն ամենաբարձրն է: Ինչպես նշում է ամերիկացի տնտեսագետ Միլթոն Ֆրիդմանը, կենցաղային հոսող ջուրը աներևակայելի շքեղություն էր Կայսերական Հռոմում, սակայն

հռոմեացի սենատորը դրա կարիքը չուներ, քանի որ նրա ծառաները բերում էին այն[18]: Կայսերական Հռոմում աղքատներն ապրում էին կեղտի մեջ, սակայն ժամանակակից Հռոմի աղքատները սովորական բան են համարում սառը և տաք հոսող ջրի վայելքը:

Այս ազդեցությունը միջազգային առևտրի ընդարձակման և շուկայական սկզբունքների տարածման վերջին զարգացումների ընթացքում կարելի է ակնհայտորեն տեսնել այնպիսի երկրներում, ինչպիսիք են՝ Չինաստանն ու Հնդկաստանը: Արդյունքում, ընդամենը երեք տասնամյակում, հավանաբար մեկ միլիարդ կամ ավելի շատ մարդ դուրս են եկել ծայրաստիճան աղքատությունից: Միլիոնավոր մարդիկ այժմ կարող են հավակնել միջին խավ լինելուն և վայելել այնպիսի ճոխություններ, ինչպիսիք են՝ բջջային հեռախոսները, հեռուստացույցներն ու մոտորային տրանսպորտը, և աշխատել հով, չոր, հարմարավետ գրասենյակներում և գործարաններում, այլ ոչ թե դրսում, ցանկացած եղանակին:

Ինչպես հարստանալ

Արտադրողներն ստիպված են սպասարկել սպառողներին

Ազատ հասարակությունում սպառողներն ունեն ընտրություն: Նրանք հարկադրված չեն գնել որոշակի արտադրողներից, օրինակ՝ կառավարական կամ կլանային մենաշնորհ ունեցողներից: Մատակարարները կարող են գաղտնի համաձայնության գալ գների բարձրացման հարցում, սակայն այդպիսի գաղտնի համաձայնության գալը դժվար է, քանի որ նրանցից յուրաքանչյուրը կարող է խաբել և իջեցնել իր ապրանքների գները՝ ավելի շատ սպառողների գրավելու համար: Միաժամանակ, մյուս մատակարարներն ազատորեն կարող են մտնել շուկա և մրցակցել այն ընկերությունների հետ, որոնք փորձում են գները բարձր պահել:

Այդ պատճառով իրապես մրցակցային, ազատ շուկայական տնտեսությունում, արտադրողներն իրենց սպառողներին շահա-

[18] Milton Friedman and Rose Friedman, Free to Choose, Harcourt Brace Jovanovich, New York, 1980, p. 147.

գործելու իշխանություն չունեն: Եթե նրանք չարտադրեն սպառողի ցանկացած ապրանքը նրա ցանկացած որակով և գրավիչ գնով՝ նրանք շուտով կկորցնեն իրենց բիզնեսը: Անհատները առևտրային ընկերությունների պատանդը չեն: Հակառակը, արտադրողները գոյատևում են միայն հասարակության փոփոխվող պահանջարկին արձագանքելու միջոցով:

Ընկերությունը կարող է խոշոր լինել, սակայն էլի մրցակցության հանդիպել: Խոշոր ընկերությունը հավանաբար բազմաթիվ տարբեր ապրանքներ է արտադրում ու ներգրավված է տարաբնույթ ձեռնարկատիրական գործունեություններում: Սակայն մրցակցային դաշտում խոշոր ընկերությունը մրցում է ոչ միայն իրեն հավասարների հետ, այլ նաև ավելի փոքրերի հետ, որոնք կարող են մրցակցել բիզնեսի որոշակի ճյուղերում: Ավելի քիչ ծախսեր ունեցող ավելի փոքր ընկերությունները կարող են ի վիճակի լինել խոշոր ընկերությունների որոշ ապրանքներ ավելի որակով կամ ավելի էժան գներով արտադրել: Նոր և նորարար ընկերությունները կարող են արտադրել նոր ապրանքներ, որոնց շնորհիվ ավելի խոշոր ընկերությունների արտադրանքները կարող են հնացած թվալ:

Այն, որ կապիտալիզմը տանում է ընկերությունների խոշորացման և, ի վերջո, մենաշնորհների առաջացման, քանի որ ֆիրմաները ձգտում են մասշտաբի շնորհիվ խնայել՝ առասպել է: Մասշտաբն իր գինն ունի. խոշոր կազմակերպությունները դժվար են կառավարվում և դանդաղ են զարգանում: Ուսանելի է նայել, ասենք, հիսուն տարի առաջ հրատարակված ցանկացած արևմտյան ամսագիր: Գովազդվող կազմակերպություններից քչերն են մինչև այժմ գոյատևել: Դրանք բոլորն են հետ են մնացել այն մրցակիցներից, որոնք թեև ավելի քիչ կապիտալով են սկսել, սակայն ավելի նորարար կամ շահութաբեր են եղել:

Անսանձ տնտեսական իշխանություն

Այսպիսով, ընկերությունները, ինչպես նաև դրանք ղեկավարող անձինք չեն կարող սերնդեսերունդ փոխանցել իրենց տնտեսական իշխանությունը: Ազատ տնտեսության դեպքում

անհատները կարող են հարստանալ, սակայն միայն այնքան ժամանակ, քանի դեռ կշարունակեն ծառայել հասարակությանն ու հրապուրել սպառողներին: Իրոք, «նույն շապիկով երեք սերունդ» արտահայտությունը բնութագրում է ավելի ազատ հասարակությունների համար բնորոշ երևույթը. մարդիկ հիմնում են ընկերություններ և իրենց ընտանիքի համար գումար են աշխատում, բայց մինչև նրանց թոռները կներգրավվեն բիզնեսում, մյուս ընկերությունները սկսում են նրանց դուրս մղել:

Սա ավելի ազնիվ համակարգ է, քան երբ վերնախավերը վերահսկում են քաղաքական և տնտեսական իշխանությունը, և ապահովում, որ իրենք և իրենք ընտանիքները լինեն այդ իշխանության մեջ: Ազատ տնտեսությունում յուրաքանչյուրն իր տաղանդով և վճռականությամբ կարող է ձգտել ստեղծել հարստություն՝ պայմանով, որ նրանք ծառայեն մյուսներին: Հարստանալու հնարավորությունը սահմանափակված չէ միայն իշխանության գլուխ կանգնածների ընկերների, ընտանիքի կամ կուսակցության շրջանակով կամ էլ որոշակի էթնիկ կամ կրոնական խմբով: Իսկապես, ամենաբարեկեցիկ մարդկանցից շատերն ազատ հասարակությունում ներգաղթյալներ են, ովքեր գալիս են տարբեր փորձով ու գաղափարներով և ստեղծում նոր արտադրանք կամ նոր ծառայություններ, որոնք մարդիկ հակված են գնել:

Այնուամենայնիվ, այնտեղ, որտեղ կա հզոր կառավարություն, որը կարող է արտոնություններ տրամադրել իր ընկերներին, գործարարները կփորձեն օգտագործել դա հօգուտ իրենց: Նրանք կձգտեն իրենց մրցակիցներին հետ պահող կամ նույնիսկ լիակատար մենաշնորհ ապահովող կարգավորումներ ունենալ: Թեև նրանք կարող են փորձել դա հիմնավորել, ասելով, որ դա կպաշտպանի հանրությանը վատորակ արտադրանքից, նրանց իրական նպատակը շուկայի մոնոպոլիզացումն է: Սակայն, դա նրանց կտա պարտադրող իշխանություն, որն անհամատեղելի է ազատ հասարակության հետ: Կառավարությունները չպետք է ունենան շուկաները աղավաղելու և մենաշնորհներ ստեղծելու իշխանություն, նրանց դերը պետք է լինի ազատության և մրցակցության ընդլայնումը:

Հարց: Արդյո՞ք մրցակցությունը, շահույթը և գովազդը անիմաստ շռայլություն չեն:

Ոչ: Շահույթը խթանում է մարդկանց հանդես գալ, փնտրել հնարավորություններ և ստեղծել ապրանքներ և ծառայություններ, որոնք այլոք պատրաստակամությամբ գնում են: Շահույթը նաև մատնացույց է անում այն ռեսուրսները, որոնք օգտագործվել են արտադրելու ապրանքներ և ծառայություններ, որոնք համայնքն արժևորում է ավելի շատ, քան դրանց համար հումք հանդիսացող ռեսուրսները:

Գովազդը կարևոր է, որովհետև այն պատմում է մարդկանց նոր ապրանքների և եղած արտադրանքի բարելավման մասին: Մրցակցությունը տարբեր ապրանք-ների միջև ընտրելու հնարավորություն է տալիս մարդ-կանց՝ խթանելով մատակարարներին հորինել և ցածր գնով տրամադրել ավելի լավ որակ: Առանց մրցակցության սպառողները թույլ կլինեն: Նրանք ստիպված կլինեն վերցնել այն, ինչը մենաշնորհային մատակարարն է բարեհաճել մատակարարել կամ մնալ ձեռնունայն:

Ձեռնարկատիրությունը

Ազատ տնտեսությունում ծանր աշխատանքը միշտ չէ, որ հաջողություն է բերում, թեև այն հաճախ օգնում է: Դուք պետք է մատակարարեք ապրանքներ և ծառայություններ, որոնք այլ մարդիկ ցանկանում են և պատրաստ են գնել: Դա կարող է ռիսկային լինել, քանի որ պետք է գուշակել, թե որ նոր արտա-դրանքն է պահանջարկ ունենալու, և կազմակերպել արտադրու-թյան շղթա, որը կարող է ներգրավել տարբեր մատակարարներ, աշխատողներ և բաշխողներ: Համեմատաբար քչերն են, որ պատ-րաստ են գնալ ռիսկի և այսպիսի պատասխանատվություն ստանձնել, սակայն պահանջարկի հաջողված կանխատեսումը և արտադրության համակարգի, ցանցերի և ջանքերի կազմակեր-պումը այս գործարարների իրական ներդրումն է: Նրանք մեծ

ռիսկի են գնում, և եթե հանրությունը իսկապես գնում է նրանց արտադրանքը, նրանք պարգևատրվում են:

Դա, իր հերթին, խրախուսում է արտադրողականությունն ու նորարարությունը: Դա խթանում է մարդկանց ստեղծել նոր և ավելի լավ արտադրանք և գործընթացներ այն հույսով, որ նրանք նույնպես ձեռք կբերեն այն հարստությանը, որը ունեին նախորդ գործարարները: Այդ շարունակական կատարելագործումից ու հայտնագործություններից շահում են սպառողները, և արդյունքում շահում է ամբողջ հասարակությունը: Հայտնագործությունները, որ խնայում են մարդկանց աշխատանքը կամ այլ ձևով բարելավում նրանց կյանքը, բարձրացնում են բարեկեցության մակարդակն ու տարածում հարստությունն ավելի լավ, քան բարեկեցության ցանկացած պետական ծրագիր:

Սպառողներն օգտվում են այն ապրանքներից կամ ծառայություններից, որոնք նրանք երբեք ինքնուրույն չէին կարողանա գտնել կամ արտադրել: Բավականաչափ հետազոտություններ և փորձագիտություն է անհրաժեշտ, օրինակ՝ արդյունավետ դեղամիջոց ստեղծելու և մատակարարելու համար: Քիչ հավանական է, որ անհատներն անհրաժեշտ քիմիական, կենսաբանական և արտադրական փորձառություն կունենան, սակայն դեղորայքի մասնագիտական ընկերություններն ունեն այն: Նույնիսկ տեղական դեղագործները կարող են մասնագիտական գիտելիքներ հավաքել իրենց պահեստում եղած հավանաբար հինգ հարյուր կամ ավելի դեղամիջոցների կիրառման, արդյունավետության և կողմնակի ազդեցությունների մասին: Քիչ հավանական է, որ սպառողները կկարողանան այդպիսի մասնագիտական գիտելիքներ ձեռք բերել. հաստատ չեն կարողանա, եթե ստիպված լինեն դառնալ նաև սննդի, խմիչքի, հագուստի, կոշիկի և իրենց առօրյա կյանքում անհրաժեշտ այլ բաների փորձագետներ:

Ձեռնարկատերերը կարող են հարստություն կուտակել: Սակայն նրանք դա չեն անում մյուսների հաշվին: Նրանց վաստակած փողը գալիս է միայն սպառողների կամավոր վճարումներից: Նրանք հարստանում են, օգնելով մյուսներին, այլ ոչ թե հարկելով կամ շահագործելով մարդկանց: Նրանք պահպանում են իրենց հարստությունն այնքան ժամանակ միայն, որքան

շարունակում են ծառայել հանրությանը: Վաստակածը պահպանելու համար նրանք ստիպված են հասկանալ իրենց սպառողներին և կանխատեսել նրանց կարիքները: Այսպիսով, նրանք միշտ փնտրում են որոշակի չլրացված արտադրանքի պակասը և ձգտում վերացնել այն: Սա սպառողներին գոհացնել ջանալու շարունակական գործընթաց է:

Շահույթ և շահամոլություն

Շահույթի հեռանկարը թե՛ խոշոր, թե՛ փոքր արտադրողներին մղում է ռիսկերի, նորարարության, կազմակերպման և աշխատանքի՝ այլ մարդկանց սպասարկելու համար:

Ազատ տնտեսության շատ քննադատներ նսեմացնում են «շահույթի» գաղափարը, սակայն իրականում բոլորս էլ շահույթ որոնողներ ենք: Մենք զոհաբերում ենք որոշ բաներ, որպեսզի ձեռք բերենք այն, ինչն ավելի ենք արժևորում: Օրինակ՝ մենք ժամանակ ու ջանք ենք ծախսում մաքրության վրա, որպեսզի կոկիկ և մաքուր տուն ունենանք: Մենք արժևորում ենք մաքուր տունն ավելի, քան մաքրման ջանքերը՝ տարբերությունը մեր շահույթն է: Սա ֆինանսական շահույթ չէ, սակայն նման է նրան, երբ գործարարը հումք է ձեռք բերում և արտադրում է մի բան, որն ավելի բարձր գնով է վաճառվում, քան պատրաստման համար կատարված ծախսերը: Նույնիսկ այն դեպքում, երբ մենք ներգրավվում ենք համայնքային կամ բարեգործական նախագծերում, ասենք՝ դպրոցի խորհրդի կազմում, մենք դա անում ենք մեր սեփական նպատակների համար, թեկուզ դա լինի բոլոր տեղացի երեխաներին լավ կրթված տեսնելու ցանկությունը: Սա նույնպես (ոչ ֆինանսական) շահույթ է մեզ համար: Սակայն քննադատները կարծես թե միայն ֆինանսական շահույթն են նկատում և քննադատում: Սա անտրամաբանական է և հակասական:

Նույն բանն է, երբ քննադատվում է շահույթի հետապնդումը (սպեկուլյացիա): Իրականում, շահույթի հետապնդումը չի սահմանափակվում ֆինանսական շուկայով: Մենք բոլորս ներգրավված ենք այդ գործընթացում: Գյուղատնտեսները սերմեր

են տնկում՝ վաճառելի բերք աճեցնելու հույսով: Կրթություն ստանալու համար մենք գնում ենք դպրոց, հույս ունենալով, որ այն մեզ ավելի գործունակ կդարձնի: Սրանք շահույթ հետապնդող նախաձեռնություններ են:

Ֆինանսական աշխարհում շահույթի հետապնդումը մեծապես կարևոր է: Նավերը երբեք չէին լողա, եթե ապահովագրական ընկերություններն ու ապահովագրողները պատրաստ չլինեին շահույթի ցանկությունից ելնելով ռիսկի գնալ՝ նավարկությունը անվտանգ համարելով: Ավելի ժամանակակից արտադրությունը գործարան կառուցելու և պահպանելու համար հիմնվում է խոշոր և երկարաժամկետ պայմանագրերի վրա, ինչպիսիք են՝ մատակարարման համաձայնությունները կամ պայմանագրերը: Անհատ արտադրողները իրավացիորեն չեն կարող վերցնել ամբողջ ռիսկը: Այդ իսկ պատճառով նրանք հրավիրում են մյուսներին գնելու իրենց ձեռնարկությունների բաժնետոմսերը: Սա շահույթի հետապնդման մեկ այլ ձև է: Ֆոնդային բորսաներում սպեկուլյանտները գնում և վաճառում են շահույթ ստանալու հույսով, սակայն դա անելու համար նրանք փորձագիտական պատկերացում պետք է ունենան վաճառքում ներգրավված ընկերությունների և նրանց հետագա հեռանկարների մասին: Այս փորձառությունն օգտակար տեղեկատվություն է բերում շուկաներին և օգնում, որ գները հասնեն իրենց ճիշտ մակարդակին ավելի արագ, քան կհասնեին այլ դեպքում՝ ողջ շուկան դարձնելով ավելի պատասխանատու և արդյունավետ:

Շահույթ ստեղծելն ու ագահ լինելը նույն բանը չեն: Մարդիկ շահույթ են հետապնդում՝ ելնելով սեփական շահերից, սակայն դա ագահություն չէ: Եսամոլության որոշակի չափաբաժին անհրաժեշտ է, որպեսզի մեզանից յուրաքանչյուրը գոյատևի, խուսափի վնասվածքներից և սնի իր մարմինը: Սակայն ագահությունը բարոյական հասկացություն է, որը նշանակում է, որ ինչ-որ մեկը չափազանց եսամոլ է՝ ի վնաս մյուսների: Ազատ հասարակությունում արտադրողներն իրենց անձնական շահերը կարող են բավարարել միայն մյուսներին օգնելով:

Բիզնես և հարաբերություններ

Թեև բիզնեսն անչափ կարևոր է, կյանքը միայն բիզնես չէ: Ազատ հասարակությունում նույնիսկ ամենաաշխատասեր գործարարը ընտանիք և այլ հետաքրքրություններ ունի, ինչպիսիք են սպորտը, հոբբին կամ նրա խանդավառությունը կիսող խմբերն ու ընկերակցությունները: Եթե նայենք Իտալիայի նման կապիտալիստական երկրներին, որտեղ ընտանեկան հարաբերությունները շատ ամուր են, կհասկանանք, որ ընտանիքն ու շուկայական տնտեսությունը հեշտությամբ համատեղվում են:

Բիզնեսում լինելը չի արդարացնում այլ մարդկանց հանդեպ կոպիտ վերաբերմունքը և, իհարկե, չի արդարացնում մյուսներին վնաս պատճառելը, որը կարգավորվում է չվնասելու սկզբունքով: Իրականում ամենագնահատվող հարաբերություններից մեկը հենց աշխատավայրի գործընկերների հետ է ստեղծվում: Ազատ շուկայական տնտեսությունը սոցիալական հարաբերությունները խթանում է նաև այլ միջոցներով: Այն մարդկանց հարստություն և ժամանակ է տրամադրում՝ նվիրելու այլ հետաքրքրությունների, ինչպիսիք են կրոնական կամ համայնքային կազմակերպություններն ու բարեգործությունը:

Ինչպես են գործում շուկաները

Գների հեռահաղորդակցման համակարգը

Շատ շուկաներ գործում են փողի միջոցով: Կարող է լինել ուղղակի փոխանակում առանց փողի՝ բարտեր կամ ապրանքափոխանակություն, սակայն դրամը հարմարավետություն է բերում: Վաճառողը կարող է փոխանակել ապրանքը կամ ծառայությունը փողի հետ, ապա փնտրել լավագույն գինը՝ այն այլ ապրանքների կամ ծառայությունների հետ փոխանակելու համար: Սա նշանակում է, որ քաղցած վարսավիրը կարիք չունի փնտրել իր մազերը կտրել ցանկացող հացթուխի, որպեսզի առևտուր անի նրա հետ:

Գները սովորաբար արտահայտվում են փողով: Գները արժեքային ստանդարտներ չեն, քանի որ արժեքը ներգրավված-

ների մտքում է, և տարբեր մարդիկ տարբեր կերպ են արժևորում նույն բանը: Սակայն գները ցույց են տալիս մարդկանց պահանջը ապրանքների և դրանց պակասի վերաբերյալ: Դրանք արտացոլում են այն մակարդակը, ըստ որի մարդիկ պատրաստ են փոխանակել մի բանը մյուսի հետ:

Գները սակավության լավագույն ցուցիչն են:[19] Դրանք ոչ միայն ցույց են տալիս, թե պահանջարկը որտեղ է մեծ: Բարձր գները նաև խթանում են մատակարարներին՝ բավարարել այդ պահանջարկը: Տեսնելով բարձր գներ, արտադրողները մտնում են շուկա, որպեսզի որսան պոտենցիալ շահույթը, պահանջարկի բավարարման համար կենտրոնացնելով ռեսուրսները՝ աշխատանքը և կապիտալը: Ցածր գները, նույն կերպ, ցույց են տալիս, որ պահանջարկը քիչ է, և ավելի լավ է ռեսուրսները այլ տեղում օգտագործել:

Այս ձևով գները վճռորոշ դեր են խաղում ազատ հասարակությունում, օգնելով ռեսուրսներն ուղղել այնտեղ, որտեղ դրանց կարիքն ամենաբարձրն է և ետ պահելով դրանք այնտեղից, որտեղ ավելցուկ կա: Դրանք նաև օգնում են նվազեցնել մեր ծախսը. ամենաբարձր շահույթը ձեռք բերելու համար մատակարարները պետք է գտնեն ծախսատարության առումով ամենաարդյունավետ ներդրումները: Դա օգնում է պահպանել ռեսուրսներն ու ապահովել, որ դրանք օգտագործվեն հնարավորինս արդյունավետորեն:

Այս ազդեցությունը տարածվում է շուկայից շուկա՝ անցնելով ամբողջ տնտեսության միջով և ողջ աշխարհով: Օրինակ՝ ենթադրենք անագի օգտագործման նոր ձև է հայտնաբերվել: Արտադրողները կցանկանան ավելի շատ անագ ձեռք բերել: Նրանք պատրաստ կլինեն ավելի շատ վճարել դրա համար, քան նախկինում: Բարձր գները կխթանեն հանքային ընկերություններին ավելի շատ անագ արտադրել, իսկ մեծածախ առևտուր

---

[19] F. A. Hayek, Individualism and Economic Order, University of Chicago Press, Chicago, IL, 1949.
Eamonn Butler, Friedrich Hayek: The Ideas and Influence of the Libertarian Economist, Harriman House, Petersfield, 2012.

անողներին՝ ավելի շատ անագ մատակարարել: Սակայն, զուգահեռաբար, անագի մյուս օգտագործողները բարձր գներ վճարելու փոխարեն կսկսեն փնտրել դրա փոխարինիչները: Նրանք ավելի շատ փոխարինիչներ կպահանջեն, և դրանց գինը կբարձրանա: Դա կխթանի մարդկանց արտադրել ավելի շատ փոխարինիչներ, իսկ օգտագործողներին կշահագրգռի այդ փոխարինիչների համար ևս փոխարինիչներ փնտրել:

Այս կերպ գները սակավության մասին տեղեկատվություն են փոխանցում ամբողջ տնտեսական համակարգով մեկ: Նոբելյան մրցանակակիր, տնտեսագետ Ֆ. Ա. Հայեկը անվանել է սա շուկայի «լայնարձակ հեռահաղորդակցության համակարգ», որը մշտապես ցույց է տալիս, թե որտեղ են ավելցուկներն ու պակասորդները, հայտնելով մարդկանց, թե որտեղ է ավելի լավ ներդնել իրենց ջանքերն ու ռեսուրսները:

Շուկաները չեն կարող կատարյալ լինել

Երբ տնտեսագիտական դասագիրք ես կարդում, տպավորություն է ստեղծվում, որ շուկաները հիմնվում են միատեսակ ապրանքները միատեսակ սպառողներին վաճառող բազմաթիվ միատեսակ մատակարարների միջև առկա «կատարյալ մրցակցության» վրա: Դա այդպես չէ: Սրանք միայն տեսական աբստրակցիաներ են: Իրականում, շուկաները գործում են և կարող են գործել միայն այն պատճառով, որ կան տարբեր մարդիկ և տարբեր ապրանքներ:

Եթե բոլորը կիսեն նույն արժեքները, ոչ ոք երբեք ոչինչ չի վաճառի կամ գնի: Երկու կողմերն էլ կարժևորեն ապրանքները նույնապես, ուստի կարիք չի լինի փոխանակել դրանք: Փոխանակումը տեղի է ունենում միայն շնորհիվ նրա, որ մենք համաձայն չենք արժեքի հարցում: Եվ կրկին, եթե յուրաքանչյուր մատակարար նույն գներով նույնպիսի ապրանք առաջարկի, ապա սպառողները դրանց միջև ընտրություն կատարելու հնարավորություն չեն ունենա: Որևէ մատակարար չի կարողանա հաղթել մրցակցությունը և բարձր շահույթ ստանալ:

Մինչդեռ ավելի բարձր շահույթն է, որ խթանում է գործարարներին գերազանցել մրցակցությունում: Նրանք դա անում են իրենց ապրանքն էժանացնելով, ասենք, օպտիմիզացնելով արտադրությունը: Սակայն ավելի կարևոր է, որ նրանք դա անում են՝ բարելավելով իրենց սեփական արտադրանքը: Նրանք վերափոխում և տարբերակում են իրենց արտադրանքը: Նրանք սպառողներին տալիս են նոր և ավելի լավ բան, քան հին ապրանքները, որոնց նրանք սովոր էին: Եվ նրանք գովազդում են այդ փոփոխությունները, այն հույսով, որ արդյունքում գնորդները կնախընտրեն իրենց արտադրանքը:

Դա շուկաները դարձնում է զարմանալիորեն դինամիկ, այլ ոչ թե ստատիկ, սառած կամ ոչ շարժուն, ինչպես դասագրքերի պահանջարկի և առաջարկի գրաֆիկները: Մատակարարները մշտապես նորամուծություններ են կատարում, որպեսզի ավելի գրավիչ ապրանք արտադրեն, իսկ սպառողները մշտապես սպասում են նոր բարելավումների:

Կենտրոնական պլանավորման անհնարինությունը

Տնտեսությունը վարելու և մարդկանց կողմից պահանջված ապրանքներն արտադրելու կառավարության փորձերը չեն կարող համապատասխանել այս շուկայական համակարգի հարաշարժությանը:

Կառավարական մենաշնորհների դեպքում նորարարություն կատարելու ճնշումը փոքր է: Բացի այդ, պետական բյուրոկրատները չեն կարող իմանալ, թե հանրության անդամներն իրականում ինչ են ուզում և արժևորում: Նրանք կարող են կատարել հասարակական կարծիքի պատահական հարցումներ, սակայն դա շատ հեռու է շուկայի մշտական մրցակցությունից, որտեղ սպառողների գնման ընտրությունները մատակարարներին րոպե առ րոպե տեղեկատվություն են տալիս իրենց պահանջարկի մասին:

Հաջողության հասնելու համար ձեռնարկատերերը պետք է հասկանան իրենց սպառողներին: Նրանք չեն կարող տարիներով սպասել՝ ապրանքների ողջ փաթեթի վերաբերյալ սպառողների

կարծիքն ստանալու համար, ինչպես իշխանությունն է անում ընտրությունների ժամանակ: Նրանք պետք է զգոն լինեն սպառողների ցանկությունների, մատակարարումների և ներդրումների գնի ու հասանելիության նկատմամբ: Օրինակ, անշարժ գույքի գործակալը ոչ թե ամսից ամիս, այլ օր առ օր և նույնիսկ ժամ առ ժամ պետք է իմանա, թե ինչ է տեղի ունենում տեղական գույքի շուկայում, օրինակ՝ ինչ հեռանկարային գնորդներ են հետաքրքրված որոշակի տեսակի տներով: Ոչ մի իշխանության կենտրոնական մարմին չի կարող անգամ հավաքել այս արագորեն փոփոխվող տեղեկատվությունը, էլ չասած դրան համապատասխան գործելու մասին՝ նախքան ամեն բան կրկին կփոխվի:

Ոմանք կարծում են, թե քանզի ազատ տնտեսությունը պլանավորված չէ կենտրոնից, այն պետք է լինի չհամակարգված և իռացիոնալ: Իրականում շուկաները շատ կանոնավոր են: Հետևելով սեփականության և փոխանակման համաձայնեցված կանոններին, մարդիկ ունակ են առևտուր անել ու համագործակցել և ակնկալել մյուսների գործողությունները մեծ վստահությամբ: Շուկաները նաև ավելի ռացիոնալ են: Նրանք օգտագործում են միլիոնավոր անհատների տեղական փորձը և գիտելիքները, ովքեր բոլորն էլ կազմում են իրենց սեփական նախագծերը և հարմարվում մյուսների փոփոխվող նախագծերին: Ավելի շատ պլանավորում տեղի է ունենում ազատ տնտեսությունում, քան կենտրոնից վերահսկվող տնտեսությունում. դա ավելի շատ ապահովվում է անհատների մակարդակով, քան պետական մակարդակով:

Հարց. Արդյո՞ք ազատ շուկաները չեն ձախողվել շրջակա միջավայրի պաշտպանության հարցում:

Ոչ: Շուկաները չեն ձախողվել: Պարզապես շրջակա միջավայրի ապրանքներից շատերը շուկայից դուրս են: Շուկաները լավ են աշխատում, երբ ապրանքը սահմանափակ է, և չվճարողները դուրս են մնում շուկայից, այլ ոչ թե երբ ապրանքն առատ է, և չվճարողներին անհնար է հետ պահել դրանց սպառումից:

Այնուամենայնիվ, մարդիկ սկսում են տեսնել, որ շրջակա միջավայրի ապրանքների դեպքում ևս կարող է շուկա լինել: Ծովաձկան պաշարները պահպանելու համար մի շարք երկրներում ներկայումս սահմանվում են ծովաձկան որսի կայուն սահմանաչափեր և տրամադրվում համապատասխան թույլտվություններ: Վերջիններս վաճառվում են, և արագորեն շուկա է ստեղծվում՝ խթանելով արդյունավետ օգտագործումը և միաժամանակ պահպանելով պաշարները:

Եվ քանի որ ազատ շուկայական տնտեսության շնորհիվ մարդիկ հարստանում են, նրանք կարող են իրենց թույլ տալ ավելի շատ հոգ տանել իրենց շրջակա միջավայրի մասին: Չինաստանը տառապում է իր արտադրությունների կողմից միջավայրի ծանր աղտոտման պատճառով, սակայն տեղի բնակչությունը տարրական տնտեսական աճն ավելի է արժևորում, քան մաքուր օդի շռայլությունը: Սակայն ինչպես մինչև այդ յուրաքանչյուր հարուստ երկրում, նրանք հարստանում են, այստեղ էլ չափանիշները կփոխվեն և նրանք կկարողանան իրենց թույլ տալ ավելի մաքուր արտադրական գործընթացներ, որոնք ավելի քիչ կաղտոտեն շրջակա միջավայրը:

Պետության կողմից հովանավորվող ձեռնարկությունները

Քիչ պետություններ կան այսօր, որոնք կարծում են, թե կարող են արդյունավետորեն տնօրինել և կառավարել իրենց երկրի ողջ արդյունաբերական գործունեությունը: Աշխարհի տնտեսությունների մեծ մասը «խառը» տնտեսություններ են, որտեղ պետությունը միայն որոշակի արտադրություններ է տնօրինում և փորձում ուղղորդել և կառավարել մյուսների արտադրանքը՝ պլանավորման, կարգավորումների, սուբսիդիաների, հարկերի և պետական բաժնետոմսերի միջոցով:

Քսաներորդ դարում շատ երկրներ ազգայնացրել են այն ոլորտները, որոնք, ըստ նրանց, հատուկ ռազմավարական նշանակություն ունեն, և շատ երկրներ շարունակում են տնօրինել և վերահսկել այս ոլորտները, որոնք կարող են ներառել հեռա-

հաղորդակցությունը, տրանսպորտը, բանկային ոլորտը, կոմունալ ծառայությունները, հանքարդյունաբերությունը և այլն:

Ցավոք, պետության կողմից այս ոլորտների սեփականացումը գրեթե միշտ ստեղծում է պետական մենաշնորհ: Այդպիսի մենաշնորհները չափազանց մեծ են, որպեսզի որևէ մեկը կարողանա արդյունավետորեն կառավարել դրանք: Սակայն կարևոր չէ՝ մենաշնորհը մասնավոր է, թե պետական, այն անպայման կուռչի, կծուլանա և բարձր գնով վատ ծառայություն կտրամադրի:

Այս ոլորտների ռազմավարական նշանակությունը պետության կողմից տնօրինելու պատճառ չի կարող լինել: Ամենահարուստ երկրների մեծամասնության բանկերը մասնավոր են. դրանք պետական մենաշնորհին հանձնելը շատ շուտով կոչնչացներ բանկերը և դրանցից կախված բիզնեսներն ու ընտանիքները: Որպես պետության մատակարար գործող կամ սպառողների հետ ուղղակիորեն գործակցող առևտրային ընկերությունները այժմ մատուցում են աշխարհի հեռահաղորդակցության, տրանսպորտի և կոմունալ ծառայությունների մեծ մասը: Շատ երկրներ մասնավորեցրել են իրենց պետական հիմնարկները, ընդունելով, որ այս կարևոր ծառայությունները ավելի լավ կարող են տրամադրվել մրցակցող ընկերությունների կողմից, որոնք կարող են մասնավոր կառավարման փորձ և մասնավոր կապիտալ ներմուծել:

Այնուամենայնիվ, կառավարությունները սովորել են, որ կարող են վերահսկել արտադրություններն առանց տնօրինելու դրանք: Նրանք պարզապես կարող են բաժնեմաս գնել կարևոր (և անվանապես մասնավորեցված) ընկերությունում և որպես բաժնետերեր օգտագործել իրենց իրավունքները՝ վերահսկելու, թե ինչ է անում ընկերությունը և ով է նշանակված նրա խորհրդում: Երբեմն նրանք վերցնում են «ոսկե բաժնետոմսեր», որը առանցքային հարցերի շուրջ նրանց վերջին խոսքի իրավունք է տալիս:

Այսպիսի սողոսկող միջամտությունը մերժելի է ազատ հասարակությունում: Այն հավասարազոր է պետական տնօրինմանն ու յուրացմանը, քանի որ թույլ է տալիս կառավարությանը որոշումներ կայացնել տվյալ ոլորտում՝ առանց այն գնելու: Կողոպտվում է սեփականատերերի, այդ թվում՝ սովորա-

կան մարդկանց, ունեցվածքը, որոնք կարող են ներդնել իրենց խնայողություններն ու կենսաթոշակները եկամտաբեր ընկերություններում: Իսկ կոռուպցիոն հնարավորություններն անհամար են. մտերիմները կարող են շահութաբեր պաշտոններ զբաղեցնել խորհուրդներում, գործարանները կարող են տեղադրվել նախընտրելի տարածքներում, իսկ շահույթը կարող է օգտագործվել աջակիցներին շահագրգռելու համար:

Կառավարությունները կարող են արդյունավետորեն վերահսկել մասնավոր ընկերությունները նաև կարգավորումների միջոցով: Կարգավորումները կարող են սահմանափակել կամ թելադրել, թե ինչպես գործեն ընկերությունները, ինչ արտադրեն, որքան գումար գանձեն, որտեղ ներդրում կատարեն և աշխատատեղեր ստեղծեն, որքան գումար վճարեն իրենց աշխատողներին և այլն: Մասնավոր ռեսուրսների պետական վերահսկողության այս տեսակը շատ տարածված է նույնիսկ այն երկրներում, որոնք իրենց ազատ են անվանում, սակայն այն լիովին հակասում է մասնավոր սեփականության սկզբունքին, որն իրապես ազատ հասարակության կարևորագույն հիմքն է հանդիսանում:

Միջազգային առևտուրը

Առևտուրն ընդդեմ հովանավորչության

Միևնույն երկրի անհատների միջև իրականացվող ազատ առևտրից բխող շահույթն առաջանում է նաև այն ժամանակ, երբ մարդիկ միջազգային առևտուր են անում: Առևտուրը թույլ է տալիս ազգերին մասնագիտանալ նրանում, ինչն իրենց մոտ ամենալավն է ստացվում, և ուղարկել դրա ավելցուկը այն երկրներ, որոնք ավելի լավ են տեղակայված այլ բաներ անելու համար: Օրինակ, ամբողջ աշխարհում կտրված ծաղիկների զգալի մասնաբաժինը գալիս է Քենիայից, որտեղ հողն ու կլիման բարենպաստ են դրանց աճի համար, մինչդեռ Չիլին, Ավստրալիան և Ֆրանսիան հայտնի են որպես գինի արտադրող առաջատարներ իրենց հողի, կլիմայական պայմանների և ձեռք բերած փորձառության շնորհիվ: Հնդկաստանն իր համեմատաբար էժան, բայց լավ կրթված աշխատուժով կարևոր երկիր է դարձել

ՏՏ ծառայությունների և արտադրության համար: Միջազգային առևտուրը թույլ է տալիս մարդկանց մասնագիտանալ և զարգացնել իրենց կապիտալը, օրինակ՝ գործիքներն ու սարքավորումները, իրենց արտադրությունն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով:

Եվ քանի որ տարբեր երկրներում ապրող մարդկանց արժեքներո ամենայն հավանականությամբ ավելի հիմնովին են տարբերվում, քան միևնույն երկրի բնակիչներինը, առևտրի միջոցով փոխադարձ օգուտի պոտենցիալ հնարավորություններն ավելի մեծ են: Միջնադարում, օրինակ, եվրոպական ճանապարհորդները բարձր գին էին վճարում տարբեր ապրանքների, օրինակ թեյի համար, որը հեշտությամբ և առատորեն աճում էր Հնդկաստանում և Չինաստանում, կամ համեմունքների համար, որ էժան և տարածված էին Մերձավոր Արևելքում: Այսօր մարդիկ անցնում են երկրագնդի կեսը, որպեսզի տեսնեն Վենետիկի ճարտարապետությունը կամ Թայլանդի մշակույթը՝ զարմանալով, թե որքան տարբեր են դրանք իրենց հայրենի երկրներից:

Ազատ հասարակությունը բաց է բոլոր երկրների ապրանքների համար: Այն ընդունում է առևտրի դինամիկ առավելությունները և առևտրի դերը բարեկեցության տարածման գործում: Այլընտրանքը հովանավորչությունն է, որով երկրները փորձում են պաշտպանել իրենց սեփական մատակարարներին՝ մերժելով ներմուծումը այլ երկրներից: Սա հեշտացնում է հայրենական մատակարարների գործը: Սակայն սա նաև նշանակում է, որ հայրենական սպառողները արտասահմանից եկող ավելի լավ կամ ավելի էժան ապրանքներ ու ծառայություններ չեն ունենում: Նրանք ավելի բարձր գներ են վճարում պաշտպանված հայրենական արտադրողներին, ավելի քիչ ընտրություն ունեն և ստիպված են համակերպվել ցածրորակ ապրանքների հետ:

Հովանավորչությունը վատնող է

Երբ երկիրը որևէ բան է արտադրում իր ներսում, որը կարող է ավելի լավ կամ ավելի էժան արտադրվել դրսում, դա վատնում է ռեսուրսները (ներառյալ շրջակա միջավայրի

ռեսուրսները): Ադամ Սմիթը նշում էր, որ խաղողը կարող է ջերմոցների միջոցով մշակվել սառը, անձրևոտ Շոտլանդիայում, սակայն դա երեսուն անգամ ավելի թանկ կնստի, քան երբ այդ նույն խաղողը աճեցվում է Ֆրանսիայի բնական արևի ներքո: Ինչու վատնել ձեր ռեսուրսները՝ ժամանակը, փողը և ջանքերը, փորձելով ինչ-որ բան ինքնուրույն անել, եթե որևէ մեկն այդ անում է ավելի լավ կամ ավելի ցածր գնով:[20]

Զարմանալի չէ, որ արդյունավետ արտադրողները վրդովվում են, երբ այլ երկրներում փորձում են թույլ չտալ նրանց ապրանքի մուտքը՝ արգելքների, քվոտաների և սակագների միջոցով: Այս արտադրողների երկրները կարող են պատասխան միջոցներ ձեռնարկել՝ ստեղծելով իրենց արգելքները: Այսպիսի առևտրային պատերազմից ոչ ոք չի շահում: Դա ավելի վատ է մասնավորապես երկու երկրների ամնաաղքատ բնակիչների համար, որոնք ամենաշատը կօգտվեին էժան արտադրանքից, եթե բոլոր խոչընդոտները հանվեին և մարդիկ կարողանային առևտուր անել ըստ իրենց ընտրության:

Նույնը վերաբերում է ներգաղթին: Ազատ հասարակությունում կառավարությունը խոչընդոտներ չի ստեղծի երկրից երկիր տեղափոխվող անձանց համար: Ներգաղթյալները բերում են էներգիա և նոր գաղափարներ, որոնցից օգտվում է իրենց ընդունած երկիրը: Ներգաղթյալների ալիքները Եվրոպայում և Հյուսիսային Ամերիկայում, օրինակ, հսկայական բարեկեցություն են ստեղծում: Տասնամյակներ շարունակ գործող վերահսկողության մերժումը կարող է դժվար լինել և հսկայական ժամանակավոր խնդիրներ բերել, սակայն դա պետք է շարունակի մնալ ազատ հասարակության նվիրյալների վերջնական նպատակը:

Ազատ առևտուրը գործնականում

Ազատ առևտրային ռեժիմներով երկրներն ավելի արագ են բարգավաճում, քան այդպիսի առևտուր չունեցողները: Դիտարկենք այնպիսի փոքր առևտրային քաղաքներ, ինչպիսիք

[20] Adam Smith, The Wealth of Nations, 1776, Book IV, ch. II.

են Հոնգ Կոնգը և Սինգապուրը. դրանցից ոչ մեկում մեծաթիվ բնական ռեսուրսներ չկան, որ կօգներ նրանց: 1960-ական թվականներին նրանք նույնքան աղքատ էին, որքան հսկայական ռեսուրսներ ունեցող աֆրիկյան և կարիբյան երկրները: Սակայն այսօր, առևտրի և տնտեսական ազատության շնորհիվ, նրանք բազմակի անգամ ավելի հարուստ են:

Առևտրի տարածումը մեծամասշտաբ կերպով նվազեցրել է աղքատությունն աշխարհում: Ոմանք ունեն այն մտավախությունը, որ ներմուծումների և օտարերկրյա ներդրումների թույլատրումը կհանգեցնի տեղական բնակչության շահագործմանը, օրինակ, աշխատանքի ծանր պայմաններով կոշիկ կամ հագուստ արտադրող արտադրամասերում: Ճշմարտությունն այն է, որ ոչ ոք չի ստիպում որևէ մեկին աշխատել գործարաններում, սակայն շատերը կանոնավոր աշխատավարձով գործարանային աշխատանքը նախընտրում են դաշտերում ու թեժ արևի տակ անորոշ և ցածր վարձատրությամբ աշխատանքից: Այնպիսի երկրներում, ինչպիսին Վիետնամն է, օտարերկրյա ներդրումներով աշխատող գործարանների աշխատակիցները այժմ կարող են հավակնել ունենալ մոտորային սկուտերներ, հեռուստացույցներ և այլ ճոխություններ, որոնց մասին նախկինում չէին կարող երազել:

Այսօր գրեթե ցանկացած բարդ ապրանքի՝ օրինակ, բջջային հեռախոսի կամ շարժական համակարգչի արտադրության համար պահանջվում են աշխարհի տարբեր ծայրերից հավաքած ռեսուրսները, հմտություններն ու փորձառությունը: Մշակողները կարող են ապրել Կալիֆորնիայում, սակայն արտադրությունը կարող են կառավարել Հոնգ Կոնգում գտնվող մարդիկ, իսկ իրականացնել՝ Չինաստանի բնակիչները: Ապրանքների մեջ օգտագործվող մետաղն ու այլ նյութերը կարող են ստացվել Ասիայի, Ավստրալիայի կամ Հյուսիսային Ամերիկայի հանքերից: Ապրանքները կարող են փոխադրվել հունական նավուղիներով կամ նիդերլանդական ավիաուղիներով: Իսկ օգտատերերը, իհարկե, ամբողջ աշխարհում են:

Քանի որ մարդիկ առևտուր են անում օտարերկրացիների հետ, նրանք փորձում են ավելի լավ հասկանալ նրանց կամ գոնե հարգել: Առևտրականներն իրենց չեն կարող վեր դասել այլ ազգի

կամ ռասայի իրենց գործընկերներից: Իրենց սեփական օգուտի համար նրանք ստիպված են խաղաղ առևտուր անել մյուսների հետ՝ որպես մատակարար, գործընկեր կամ սպառող: Միջազգային առևտուրը փոխըմբռնում և խաղաղություն է ստեղծում, որն իր հերթին շատ ավելի լայն առավելություններ է տալիս: Զարմանալի չէ, որ ամենաազատ և բաց հասարակությունները նրանք են, որոնք ամենաազատ և բաց առևտուրն ունեն:

6. ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

4-րդ գլխում մենք տեսանք, որ «արդարությունը» շատ կոնկրետ իմաստ ունի, այն է՝ ինչպես պետք է մարդիկ վերաբերվեն միմյանց, այլ ոչ թե ինչպես պետք է նրանց գործողությունների արդյունքները բաշխվեն նրանց միջև: Սակայն անհատների միջանձնային հարաբերությունները կարգավորող կանոնները բարդ են: Վարքագծի այս կանոնների պահպանումն ու կիրառումը պահանջում է որոշակի արժեքներ և սոցիալական ինստիտուտներ, ինչպիսիք են՝ սեփականությունը, օրենքի գերակայությունն ու մյուսների իրավունքների հարգումը:

Մասնավոր սեփականություն

Գույքի նշանակությունը

Ազատ հասարակության կենսագործունեության համար հիմնարար կարևորություն ունի մարդկանց գույքային իրավունքի իրացման կարողությունը: Գույքի նկատմամբ սեփականության իրավունքներ ունենալը նշանակում է, որ դուք կարող եք ունենալ և վերահսկել որևէ բան, և, ամենակարևորը, իրավասու եք մյուսներին դա թույլ չտալ: Դուք կարող եք վայելել այն, տալ վարձակալությամբ, վաճառել, տալ ուրիշին կամ նույնիսկ ոչնչացնել, սակայն մյուսները չեն կարող առանց ձեր թույլտվության այն օգտագործել կամ վերցնել: Ձեր գույքը չի կարող օրինական հիմքով օտարվել ձեզնից:

Գույք կարող են ունենալ ոչ միայն անհատները, այլև առանձին խմբեր, ինչպիսիք են ամուսնական զույգերը, իրավաբանական անձինք և դրանց միավորումները, կառավարությունն ու պետական մարմինները:

Սեփականությունը ոչ միշտ է *նյութական և անշարժ*, ինչպես ասենք՝ հողակտորը կամ շինությունը: Այն կարող է նաև *շարժական* լինել, օրինակ՝ գյուղատնտեսական կենդանիները, բեռնատար մեքենաները կամ հագուստը, ինչպես նաև *ոչ նյութական*, օրինակ՝ մտավոր սեփականությունը, ինչպիսին է

առևտրային ապրանքանիշը կամ որևէ ստեղծագործության կամ ձայնագրության հեղինակային իրավունքը կամ մշակման արտոնագրային իրավունքը: Սեփականությունը ներառում է նաև ընկերության բաժնետոմսերը, ձեզանից վերցրած պարտքերը կամ ձեր խնայողությունները: Այն կարող է լինել որևէ մեկի հողամասը զբաղեցնելու՝ որոշակի ժամանակով տրված վարձակալության իրավունք, կամ ռադիոկայանի՝ որոշակի հաճախականություն օգտագործելու իրավունք: Այսինքն, պարտադիր չէ, որ գույքը լինի ֆիքսված և նյութական:

Սեփականությունը կարող է նաև *ստեղծվել.* նույն բեռնատար մեքենան կամ հագուստը տարբեր բաղադրիչներից կազմվելով՝ սեփականության նոր միավոր են դառնում, գյուղատնտեսական կենդանիները բազմանում են, մարդիկ նոր գրքեր են գրում և այլն: Թվային տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս բջջային հեռախոսների ահռելի թվով ալիքներ ստեղծել, որոնք սեփականության նոր տեսակներ են հանդիսանում:

Կարևոր է նաև գիտակցել, որ սեփականության իրավունքն ընդգրկում է նաև ձեր իրավունքները սեփական մարմնի և ձեր գործունեության արդյունքների նկատմամբ: Ազատ հասարակությունում դուք չեք կարող առանց հիմնավոր պատճառի ձերբակալվել կամ բանտարկվել: Ձեզ չեն կարող օրինական հիմունքներով ստիպել աշխատել ուրիշի համար: Ոչ ոք իրավունք չունի գողանալ այն, ինչ դուք ստեղծել եք ձեր սեփական ունակությունների, տաղանդի, գիտելիքների կամ ջանքերի շնորհիվ:

Սեփականություն և առաջընթաց

Մասնավոր սեփականության ինստիտուտն այնքան հին է, որքան մարդկությունը, չնայած որ այն ոչ միշտ է հարգվել: Հին Սպարտայում արհամարհում էին անձնական սեփականության գաղափարը: Ոչ այնքան վաղ անցյալում այնպիսի երկրներ, ինչպիսիք են Ռուսաստանն ու Չինաստանը, փորձարկեցին ֆերմաների և գործարանների կոլեկտիվ սեփականության գաղափարը: Սակայն միայն մասնավոր սեփականության աստիճանական ընդունումը և դրա պաշտպանությունը, որպես արդյունք,

հնարավորություն ստեղծեց ժամանակակից առևտրի զարգացման համար, հարստության հսկայական աճ արձանագրելով առևտրով զբաղվող ազգերի շրջանում:

Դրա պատճառը հեշտ է հասկանալ: Բնապահպան Գարեթ Հարդինը նկարագրել է դա «Համայնքների ողբերգությունը» աշխատության մեջ[21]: Ռեսուրսը տնօրինելու դեպքում մարդիկ ավելի շատ են հետաքրքրված դրա պահպանմամբ, քան թե երբ չեն տնօրինում այն: Մասնավոր սեփականատիրոջ հողամասն ավելի լավ է մշակվում, քան կոլեկտիվ սեփականություն հանդիսացող հողը: Բազմաբնակարան շենքի աստիճաններն ու միջանցքները հաճախ կեղտոտ են և ավերված, թեև անհատների բնակարանները կարող են հիանալի պահպանված լինել: Մարդիկ չեն հասկանում, թե ինչու պետք է իրենց ժամանակն ու ջանքերը ծախսեն մի բանի վրա, որն իրենց չի պատկանում, իսկ մյուսները ճաշակեն դրա պտուղները՝ անգամ եթե որևէ աշխատանք չեն տարել այդ ուղղությամբ:

Գույքի պաշտպանությունն ու գույքի սեփականության նկատմամբ հարգանքը թույլ է տալիս մարդկանց արտադրական կապիտալ ստեղծել: Գյուղատնտեսներն ավելի հակված կլինեն սերմեր ցանել, մշակել բույսերը և տրակտորներ գնել, եթե դրա արդյունքում ստացված բերքը իրենց պատկանի: Ձեռնարկատերերը ավելի շատ ռիսկի կդիմեն՝ գործարաններ, սարքավորումներ և արտադրական ցանցեր ձեռք բերելու համար ներդրումներ կատարելիս, եթե կարողանան իրենք որոշել, թե ինչպես տնօրինեն այդ գույքը և իմանան, որ մյուսներն իրավունք չունեն այն վերցնել: Եթե գույքային իրավունքները պաշտպանված և հարգված են, մարդիկ արտադրական կապիտալ են ստեղծում, և արտադրողականությունն աճում է, որից օգտվում է ողջ հասարակությունը: Սակայն եթե մյուսները կարող են գողանալ կամ ոչնչացնել գույքը, կամ որևէ մեկը կարող է վերցնել դրա արտադրած արդյունքը, ապա մարդիկ որևէ խթան չեն ունենա իրենց հմտությունները, ժամանակը, գումարը, ջանքերը կամ

[21] Garrett Hardin, ‘The tragedy of the commons’, Science, 162(3859), 1968, pp.1243–8.

փորձը արտադրությունում ներդնելու համար, և կտուժի ողջ հասարակությունը:

Սեփականությունն ու այլ իրավունքները

Ազատ հասարակության ներկայացուցիչների իրավունքներն ու ազատությունները խարսխված են սեփականության ինստիտուտի վրա: Առանց մասնավոր սեփականության անհնար է որևէ իրավունքի կամ ազատության գոյությունը:

Վերցնենք, օրինակ, խոսքի ազատության, այլ անձանց հետ միավորումներ ստեղծելու, քաղաքական գործընթացներին մասնակցելու իրավունքները: Եթե չլիներ մասնավոր սեփականությունը, օրինակ, եթե կառավարությունը վերահսկեր բոլոր ռեսուրսները, ապա ինչպե՞ս կկարողանային թեկնածուներն իրենց նախընտրական արշավն իրականացնել: Իրենց ասելիքը հանրությանը հասցնելու համար նրանց անհրաժեշտ է տարածք վարձակալել, թռուցիկներ տպագրել, հեռարձակել իրենց տեսակետերը: Սակայն եթե հանդիպման բոլոր վայրերը, թղթի մատակարարման ու տպագրության վերահսկողությունը, բոլոր զանգվածային լրատվամիջոցները պատկանեն իշխանությանը, ապա ցանկացած ընտրարշավ շատ շուտով կձախողվի:[22] (Իրոք, եթե թեկնածուն քննադատաբար է արտահայտվել իշխանության կամ նրա քաղաքականության մասին, ապա դրա հավանականությունը շատ մեծ է): Ավելին, եթե մարդիկ որևէ սեփականություն չունենան, չի լինի ոչ մի լծակ, որը կկանգնեցնի իշխանությանը լռեցնելու իր քննադատներին՝ վերջիններիս ձերբակալելու կամ անգամ սպանելու միջոցով: (Ցնցող է, բայց նման շատ օրինակներ կան:)

Առանց սեփականության չկա արդարություն: Եթե դուք ձեր սեփական մարմնի, աշխատանքի կամ ունեցվածքի նկատմամբ իրավունքներ չունենաք, ձեզ առանց փոխհատուցման կարող են զրկել դրանցից: Եթե դուք իրավունքներ չունենաք ձեր սեփական մարմնի նկատմամբ, ձեզ կարող են կամայական կերպով ձերբակալել, բանտարկել և սպանել, եթե դուք իրավունքներ

[22] F. A. Hayek, The Road to Serfdom, Routledge, London, 1944.

չունենաք ձեր ունեցվածքի նկատմամբ, ձեզ կարող են թալանել: Անարդարությունից որևէ պաշտպանություն չի լինի:

Սեփականության բարոյական առավելությունները

Սեփականությունն ու սեփականության իրավունքների պաշտպանությունը էական նշանակություն ունեն անհատների համար՝ որպես պաշտպանիչ օղակ իշխանությունների և հարկադրանք կիրառող այլ անձանց դեմ: Սեփականության իրավունքներ ունենալով՝ մարդիկ հնարավորություն են ստանում պաշտպանել իրենց, կատարել սեփական ընտրությունը, ինքնուրույն կենսագործել իրենց նախագծերը, հետապնդել սեփական ձգտումները կամ արտահայտել սեփական տեսակետը, առանց ենթարկվելու մյուսների, օրինակ՝ իշխանության կամ անհատների կամայականությունների:

Սեփականությունը և դրանից բխող առևտրի ու փոխանակման կանոնները նաև թույլ են տալիս անհատներին խաղաղ համագործակցել փոխշահավետ նպատակների համար: Դա նրանց հնարավորություն է տալիս ապրել կողք կողքի, համատեղ օգտագործել բնական ռեսուրսները և կենսագործունեության արդյունքները՝ ըստ համաձայնեցված կանոնների, առանց վեճերի, բռնության և ճնշումների:

Սեփականությունը ոչ միայն նպաստում է խաղաղ համագործակցությանը, այլև այն *անհրաժեշտ* է դարձնում բոլոր նրանց համար, ովքեր ցանկանում են բարելավել իրենց կենսապայմանները: Մարդիկ չեն կարող պարզապես ուժով վերցնել այն, ինչ ցանկանում են: Սեփականությունը կարող է փոխանցվել՝ վաճառվել, վարձակալության տրվել, համատեղ օգտագործվել կամ օտարվել, բայց միայն սեփականատիրոջ համաձայնությամբ: Ավելի ազատ հասարակությունները հզոր մեխանիզմներ ունեն այս կարևոր իրավունքը պաշտպանելու համար, օրինակ՝ պարտքերի վճարման և պայմանագրերի կատարման կանոնները: Ազատ մարդիկ սա դիտում են որպես ռեսուրսների փոխանցման ավելի բարոյական միջոց, քան ուժով վերցնելը կամ խարդախությամբ գողանալը:

Միայն սեփականատերերը չեն, որ օգտվում են այս ամենից: Ներդրումները, կապիտալի ստեղծումը և առևտուրը խթանելով՝ շահում է ամբողջ հասարակությունը: Օրինակ, հողակտորի սեփականատեր չհանդիսացող քաղաքաբնակները սնվում են շնորհիվ գյուղացիների՝ իրենց բերքը մշակելու և սպառողներին կամավոր կերպով վաճառելու ցանկության: Դա տեղի է ունենում շնորհիվ իրենց հողամասի և բերքի նկատմամբ գյուղացիների սեփականության իրավունքի: Այս առավելությունն առավել ակնառու է դառնում, երբ ուսումնասիրում ենք այն երկրների փորձը, որտեղ սեփականության իրավունքը չի պաշտպանվում: Օրինակ՝ Զիմբաբվեում, Ռոբերտ Մուգաբերի օրոք, մարդկանց խրախուսում էին գրավել գյուղացիների հողերը: Երբ գյուղացիները (որոնք հիմնականում սպիտակամորթ էին) հեռացան, արդյունքը ոչ թե ավելի մեծ բարեկեցությունն էր, այլ հակառակը՝ առանց հողային սեփականության հստակ կանոնների, արտադրողականությունը նվազեց և քաղաքաբնակները այլևս բավականաչափ սնունդ չունեին:

Այդ իսկ պատճառով ազատ հասարակությունում սեփականության իրավունքների պաշտպանությունը կառավարության կարևոր պարտականությունն է: Այն օգնում է մարդկանց պաշտպանվել հանցագործներից և ազդեցիկ կամ հարուստ վերնախավից: Սեփականության իրավունքի ինստիտուտը հասարակության հենասյունն է և խաղաղ համագործակցության մղող ուժը: Սեփականության իրավունքից շահում են բոլորը, քանի որ այն նպաստում է սեփականաշնորհված ռեսուրսների արդյունավետ կառավարմանն ու օգտագործմանը, թույլ տալով, որպեսզի արտադրական կապիտալը ստեղծվի և պահպանվի: Ազատ հասարակությունում գույքի սեփականությունը սակավաթիվ մարդկանց հատուկ արտոնությունը չէ: Այն բոլորի համար է, և դրանից շահում են բոլորը:

Արդարության կանոնները

Արդարություն փնտրելիս

Արդարությունը վերաբերում է այն կանոններին, ըստ որոնց նշանակվում են պարգևներն ու պատիժները: Այն հիմնված է մարդկային ընդհանուր ընկալման վրա այն մասին, թե ինչի են մարդիկ արժանի իրենց գործողությունների համար: Օրինակ, եթե անհատը դիտավորությամբ վնաս է պատճառում մյուսներին, մարդկանց մեծ մասը կհամաձայնի, որ նա պետք է փոխհատուցի տուժողին և պատիժ կրի իր հանցանքի համար:

Մենք չենք կարող ինքներս մեզ համար հորինել արդարության կանոններ: Նրանք մեր էության մասն են: Ոմանց կարծիքով, այս «բնական իրավունքը» մեզ տրվել է Ստեղծողի կողմից և բացահայտվում է կրոնի միջոցով: Մյուսները, ինչպես Նոբելյան մրցանակակիր, տնտեսագետ և փիլիսոփա Ֆ. Ա. Հայեկը, հակված են էվոլյուցիոն տեսակետին՝ պնդելով, որ արդարության կանոնները զարգացել են մեզ հետ զուգընթաց, քանի որ օգնում են մեզ խաղաղ ապրել միմյանց հետ՝ որպես հասարակական էակներ: Ամեն դեպքում, կարծես թե մենք արդարության բնական զգացում ունենք, որն օգնում է խթանել համագործակցությունն ու ապահովել հասարակության արդյունավետ կենսագործունեությունը: Եթե մենք այդ զգացումը չունենայինք և չզգայինք որևէ անարդարություն, օրինակ, եթե ոչինչ չանեինք՝ տեսնելով, որ մարդկանց թալանում են կամ սպանում, մենք երկար չէինք գոյատևի:

Այդ իսկ պատճառով, ազատ հասարակության օրենսդիր և դատական մարմինները չեն կարող թելադրել, թե որն է արդարությունը: Նրանց հորինած ցանկացած կանոն դժվար թե ավելի լավ աշխատի, քան այն կանոնները, որոնք մեր էության մասն են կազմում: Նրանք միայն կարող են հույս ունենալ, որ կբացահայտեն արդարության կանոնները:[23]

Դա կարելի է տեսնել ընդհանուր կամ տեղական իրավունքի կենսագործման ընթացքում: Անհատների միջև վեճերը՝ օրինակ, հարևանների միջև սահմանային վեճերը, հասնում են

[23] F. A. Hayek, The Mirage of Social Justice, University of Chicago Press, Chicago, IL, 1978.

դատարան: Դատարանը պետք է որոշի, թե որ լուծումն արդար կլինի՝ հաշվի առնելով կոնկրետ գործի հանգամանքները: Հաջորդ սահմանային վեճը կարող է որոշ նմանություններ ունենալ այս գործի հետ, բայց ամբողջովին նույնը չի լինի, և դատարանը պետք է մեկ անգամ ևս փորձի արդար լուծում գտնել: Դատավորները կամայականորեն վճիռ չեն կայացնում: Նրանք կիրառում են երկարատև ժամանակահատվածում ընդունված սկզբունքները՝ յուրաքանչյուր նոր դեպքի համար: Եվ այսպիսի փորձերի երկարատև գործընթացից հետո աստիճանաբար ընդհանուր պատկերացում է առաջանում, թե հարևանների միջև ո՛ր վարքագիծը կարող է համարվել արդար, իսկ որը՝ անարդար:

Արդարությունը օրենք, բարոյականության կամ հավասարություն չէ

Ազատ հասարակությունում արդարության կանոնների հիմնարար հատկանիշն այն է, որ դրանք պետք է հավասարապես կիրառվեն բոլորի նկատմամբ: Միևնույն հանգամանքներում, տարբեր մարդկանց հարկավոր է նույնակերպ վերաբերմունք ցույց տալ:

Օրենքները և արդարությունը միշտ չէ, որ նույնն են: Օրինակ, օրենքները կարող են ոչ միշտ հավասար ձևով վերաբերել մարդկանց: Դրանք կարող են ստեղծված լինել վերնախավի կողմից՝ իրենց ընկերներին օգնելու և թշնամիներին վնասելու համար: Սրանք *անարդար* օրենքներ են:

Ոչ էլ արդարությունն ու բարոյականությունն են նույնը: Շատերը կարող են նախաամուսնական սեռական հարաբերությունները վերին աստիճանի անբարոյական համարել: Սակայն դա չի նշանակում, որ դրանք անարդար են: Ոչ ոք վնաս չի կրում նման փոխհամաձայնեցված գործողություններից, այսինքն՝ վնաս չպատճառելու կանոնից ելնելով, արդար չէ պատիժ կիրառել այն անձանց նկատմամբ, որոնք ձեռնարկել են այդ գործողությունները: Եվ կրկին, այդպիսի նորմ սահմանող օրենքը անարդար օրենք է: Եթե օրենքը կարող է պատժել մարդկանց միայն նրա

համար, որ մյուսների կարծիքով նրանց արարքը վիրավորական է, ապա մեզանից ոչ մեկի համար ազատություն չի մնա:

Հավասարությունն ու արդարությունը նույնպես նույնը չեն: Այն փաստը, որ ոմանք հարուստ են, իսկ մյուսները՝ աղքատ, հասարակությունը անարդար չի դարձնում: Անհավասար կենսապայմաններ ունեցող հասարակությունում կարող է արդարության նույն մակարդակը լինել, որը կա հավասար կենսապայմաններով հասարակությունում: Եթե մարդիկ իրենց սեփականությունը ձեռք են բերում օրինական ճանապարհով՝ առանց ուժի կիրառման, ապա նրանք լիովին արդար են գործում:

Մասնավոր սեփականության որոշ քննադատներ պնդում են, որ սեփականությունը կարող է առաջանալ միայն գողության արդյունքում: Սա ճիշտ չէ: Այն մարդիկ, որ առաջինը սեփականացրեցին չօգտագործվող և անպետք վայրի տարածքները, ոչ մեկի վնաս չեն պատճառել: Եթե դրանից հետո նրանք օգուտ են ստացել այնտեղ գյուղատնտեսությամբ զբաղվելու կամ օգտակար հանածոներ գտնելու շնորհիվ, դա նրանց բարի բախտն է. ոչ մեկը դրանից չի տուժել, ուրեմն որևէ անարդարություն տեղի չի ունեցել: Նմանապես, եթե մի գործարար նոր ապրանքի կամ գործընթացի մեջ ներդրում է կատարում և հարստանում է՝ դրանք գնել ցանկացող գնորդներին վաճառելու հետևանքով, ոչ ոք վնաս չի կրում, ընդհակառակը, ամբողջ աշխարհն է շահում այդ նորարարությունից:

Արդարության կիրառումը

Ազատ հասարակության հիմնական նպատակն ուժի կիրառումը նվազագույնին հասցնելն է: Բայց արդարությունը պետք է ինչ-որ կերպ կիրառվի: Եթե մարդիկ վնաս են պատճառում այլոց, մենք ակնկալում ենք, որ նրանք կպատժվեն՝ տուգանք կվճարեն կամ կազատազրկվեն: Սա նշանակում է ուժ կիրառել հանցագործի նկատմամբ: Արդարության ապահովման համար որոշակի հարկադրանքն անխուսափելի է:

Ազատ հասարակությունը լուծում է այս դիլեման՝ քաղաքացիական իշխանությանը տալով հարկադրանք կիրառելու

մենաշնորհը: Միայն նրանք կարող են ուժ կիրառել և, անգամ այդ պարագայում, միայն արդարության կիրառման կամ արտաքին և ներքին թշնամիներից քաղաքացիներին պաշտպանելու համար: Ուժի կիրառումն այլ անհատների կողմից արգելվում է:

Եթե կառավարությունը պետք է ուժ կիրառելու մենաշնորհ ունենա, ապա այն պիտի լինի շատ սահմանափակ: Կառավարությունները կազմված են մարդկանցից, իսկ ոչ մի մարդկային էակի չի կարելի վստահել հարկադրանքի անաչառ կիրառումը: Սեփական շահերի համար այն օգտագործելու գայթակղությունը չափազանց մեծ է:

Համապատասխանաբար, ազատ հասարակության արդարադատության համակարգը սահմանում է խիստ կանոններ, որոնք սահմանափակում են իշխանությունների՝ ուժի կիրառման լիազորությունները: Օրինակ, խիստ օրենքներ են անհրաժեշտ հետաքննության և ձերբակալության լիազորությունների, գործերի քննության և պատիժների կիրառման վերաբերյալ: Այս *ընթացակարգային* կանոններն այն մասին են, թե *ինչպես* են որոշումները կայացվում, այլ ոչ թե այն մասին, թե *ինչ* որոշում պետք է ընդունվի: Այս կանոններին պետք է հետևել, որպեսզի դատական գործընթացն արդար համարվի:

Արդարության սպառնալիքները

Այս համակարգը պետք է հուսալի լինի, որպեսզի անհատներն անարդարացիորեն չհետապնդվեն իշխանությունների հարկադրական ուժի կողմից: Այս կանոնը հաճախ է խախտվում, նույնիսկ այն մարդկանց կողմից, որոնք կարծում են, թե գործում են ի շահ արդարության: Դատավորները, օրինակ, երբեմն կարծում են, որ իրենց աշխատանքն է արդար լուծում գտնել, ոչ թե հետևել ընթացակարգային կանոններին: Բայց այսպիսի *դատական ակտիվիզմը* դատավորների անձնական կարծիքներն արդարությունից բարձր է դասում: Դա նաև դատական գործընթացների ելքերը անկանխատեսելի է դարձնում. միևնույն հանցանքի համար կարող է տարբեր պատիժ կիրառվել՝ կախված կոնկրետ դատավորից: Եվ սա իշխանավորներին

ավելի մեծ հնարավորություն է տալիս գործընթացի արդյունքների վրա ազդելու համար. եթե նրանք կարողանան կաշառել կամ վախեցնել դատավորներին, ապա կարող են փոխել մարդկանց պատիժները: Բայց եթե կան հստակ ընթացակարգային կանոններ, որոնց պետք է հետևել ցանկացած դեպքում, այսպիսի ազդեցությունը բացառվում է: Սա կենսական պաշտպանություն է նրանց համար, ովքեր կանգնում են դատարանի առջև:

Արդարության վարչարարությունը խարխլող մեկ այլ մոտեցում է «սոցիալական արդարության» գաղափարը: Ունեցվածքի և եկամուտի միտումնավոր ավելի հավասարաչափ բաժանումը հակադրության մեջ է սեփականության և արդարության սկզբունքների հետ: Հավասար սեփականություն ստեղծելու համար այն պետք է վերցվի մեկից և տրվի մեկ ուրիշին: Սեփականության կանոնները, որոնք մարդկանց հնարավորություն են տալիս ունենալ և իրենց ցանկությամբ տնօրինել սեփականությունը, պետք է վերացվեն: Եվ կրկին, հենց որ մենք իշխանավորներին նման կործանարար լիազորություններ տանք, ոչ ոք այլևս վտանգից ապահովված չի լինի: Ձեռնարկությունների գործունեությունը ևս կխոչընդոտվի. ինչո՞ւ է պետք դիմել ռիսկի կամ ջանք ծախսել գույք ձեռք բերելու համար, եթե իշխանությունը կարող է առգրավել այն:

Սեփականության իրավունքի նկատմամբ կիրառվող կոնկրետ կանոնները, այնուամենայնիվ, միշտ չէ, որ ակնհայտ են: Արդյո՞ք իմ հողամասի սեփականության իրավունքն ինձ թույլատրում է օգտագործել դրա տակ գտնվող հանածոները: Արդյո՞ք դա ինձ թույլ է տալիս ինքնաթիռներին արգելել թռչել դրա վրայով: Արդյո՞ք ես կարող եմ կանխել, որ հարևան գործարանի ծուխն աղտոտի իմ օդը: Այս մանրամասները պետք է որոշվեն:[24] Եվ ազատ հասարակությունում այդպես էլ լինում է դատարաններում շարունակական փորձարկումների և կատարելագործման միջոցով, անկողմնակալ դատավորների կողմից, ովքեր փորձում են միայն մատնացույց անել արդարության իրական կանոնները:

---

[24] Milton Friedman and Rose Friedman, Capitalism and Freedom, University of Chicago Press, Chicago, IL, 1962.

Բնական արդարություն

Ազատ հասարակությունում բոլոր օրինաստեղծ և իրավակիրառ մարմինները պետք է հետևեն արդարության սկզբունքներին՝ սկզբունքներ, որոնք այնպես են արմատացել մարդկության մեջ, որ կոչվում են *բնական արդարություն*:

Նախ և առաջ, օրենքը պետք է լինի *հայտնի, պարզ և որոշակի*: Եթե օրենքը գաղտնի է կամ անընդհատ փոխվում է, ապա անհատները չեն կարող իմանալ, որ իրենք խախտում են այն, և չեն կարող իրենց պաշտպանել հետապնդումից:

Օրենքները նաև պետք է *կանխատեսելի* լինեն: Անհատները պետք է կարողանան հասկանալ, թե որ դեպքերի համար են դրանք կիրառվում, և որոնք են օրենքը խախտելու հետևանքները: Նույնիսկ ենթադրյալ ազատ հասարակություններում օրենքները հաճախ ներկայացվում են որևէ նպատակի համար, օրինակ, պայքարել ահաբեկչության կամ կազմակերպված հանցավորության դեմ, բայց հետո օգտագործվում են բացարձակ այլ նպատակով: Քաղաքացիները կարող են խիստ պատժի ենթարկվել իրականում շատ թեթև զանցանքի համար:

Երկրորդ, օրենքները չպետք է *հետադարձ ուժ* ունենան: Դրանք կարող են կիրառվել միայն ապագա գործողությունների նկատմամբ: Այլապես մարդիկ կարող են մեղադրվել այնպիսի գործողությունների համար, որոնք լիովին օրինական էին դրանց կատարման ժամանակ: Կրկին, ենթադրյալ ազատ հասարակությունները չեն հետևում դրան: Օրինակ, 2008 թվականին Միացյալ թագավորությունում ընդունված հարկերից խուսափելու մասին մի օրենք փոփոխեց օրենսդրությունը այնպես, որ 3000 մարդ հարկային պարտավորություն ձեռք բերեցին, այն դեպքում, երբ իրենք նախկինում ապօրինի չէին գործել:

Արդարության երրորդ կանոնն այն է, որ օրենքը չի կարող անձանցից *անիրագործելին* պահանջել, քանի որ անհնար կդառնա մարդկանց կողմից այն չխախտելը: Անգամ ենթադրյալ ազատ հասարակությունները ևս չեն համապատասխանում այս պահանջին, մասնավորապես այն դեպքում, երբ օրենքներում հակասություններ են լինում: Այսպես, հակահիդեհային կանոնները կարող են սեփականատիրոջից պահանջել հրշեջ սանդուղք

ունենալ շենքում, այնինչ նախագծային օրենքներն արգելում են նրան փոփոխություններ կատարել. այսպիսով, ցանկացած դեպքում անձը խախտում է օրենքը: Ավելի անհանգստացնող է սակայն այն, որ անարդար կառավարությունները կարող են դիտավորյալ օգտագործել անիրագործելի օրենքներ՝ իրենց հակառակորդներին հետապնդելու համար:

Բնական արդարության մեկ այլ կարևոր կանոն է *անմեղության կանխավարկածը*: Ոչ մեկի չի կարելի վերաբերվել որպես մեղավորի, քանի դեռ նրա մեղքը չի հաստատվել, անգամ եթե բոլոր հանգամանքները նրա դեմ են: Սա հատկապես կարևոր է այն առումով, որ *մեղքի ապացուցումը* իշխանությունների պարտականությունն է, իսկ մարդիկ պարտավոր չեն ապացուցել իրենց անմեղությունը: Սա դժվարացնում է իշխանությունների կողմից իրենց թշնամիներին շինծու մեղադրանքներով հետապնդելը՝ բոլոր մեղադրանքները պետք է ապացուցվեն դատարանում, մինչ մարդիկ դրանց համար պատիժ կկրեն:

Վերջին հիմնական սկզբունքն այն է, որ դատավորները և դատարանները պետք է *անկախ* լինեն քաղաքական ուժերից: Օրենքը ընդունողների և կիրարկողների միջև պետք է իշխանության բաժանում լինի: Դատավորները չպետք է սոսկ քաղաքական գործիչների գործակալները լինեն, նրանց քաղաքական հայացքները չպետք է կապված լինեն իրենց կողմից կայացվող վճիռների հետ: Եթե դատավորներն այնքան մոտ են քաղաքական գործիչներին, որ հեշտորեն կարող են նրանց կողմից ազդեցության կամ սպառնալիքի ենթարկվել, ապա դատական համակարգը գալիս է ծառայելու քաղաքական շահերին, ոչ թե ճշմարիտ արդարությանը: Ավելի ազատ հասարակությունները դատավորներին նշանակող անկախ հանձնաժողովներ են ունենում կամ նշանակում են նրանց ցմահ, ինչը նվազեցնում է քաղաքական գործիչների կողմից նրանց նկատմամբ կիրառվող լծակների ազդեցությունը:

Օրենքի գերակայությունը

Օրենքի գերակայության նշանակությունը

Ոչինչ այնքան հստակ չի տարբերակում ազատ հասարակությունը ոչ ազատից, որքան օրենքի գերակայությունը: Սա նշանակում է, որ քաղաքացիները պետք է կառավարվեն օրենքի հստակ և ընդհանուր սկզբունքներով, այլ ոչ թե թագավորների և քաղաքական գործիչների կամայական քմահաճույքներով: Օրենսդիրները չեն կարող իրենց ուզած ձևով վարվել: Նրանց ստեղծած օրենքները պետք է հավասարապես տարածվեն բոլորի, այդ թվում՝ հենց իրենց վրա:

Օրենքի գերակայության նպատակն է պաշտպանել անհատներին իշխանության կամայական իրականացումից: Եթե մենք կառավարությանը ուժի կիրառման մենաշնորհ ենք տրամադրում, ապա պետք է ապահովենք, որ այն կիրառվի միայն նախատեսված նպատակների համար, կանխատեսելի կերպով, պատշաճ հաշվետվողականությամբ և հօգուտ ողջ հասարակության, այլ ոչ թե որևէ վերնախավի շահի:

Օրենքի գերակայությունը նաև ապահովում է, որ իրավախախտումների համար իշխանավորները նույն քրեական պատիժը ստանան, ինչ մնացած բոլորը: Մտահոգիչ մեծ թվով երկրներում իշխանության ներկա և նախկին առաջնորդներին անձեռնմխելիություն են շնորհում, և այդ առաջնորդների մտահոգիչ մեծ թիվը արդյունքում խուսափում է արդարադատությունից: Եթե քաղաքական գործիչներին, ինչպես և ցանկացած ուրիշ մարդկանց, անհրաժեշտ է պաշտպանել անհիմն (կամ քաղաքական դրդապատճառներից բխող) և սևեռուն հետապնդումներից, ապա իրական արդարադատությունից խուսափելու համար որևէ մեկին անձեռնմխելիություն տրամադրելու որևէ հիմք չկա:

Այսինքն, օրենքի գերակայությունը հիմնվում է ընդհանուր և կայուն սկզբունքների, այլ ոչ թե ղեկավարների փոփոխվող և կամայական որոշումների վրա: Այն բնական արդարություն է երաշխավորում այնպիսի կանոններով, ինչպիսիք են՝ հավասարությունն օրենքի առջև, պատշաճ իրավական վարույթը, անկախ դատական համակարգը, կույր արդարադատությունը, «հաբեաս կորպուսը» (առանց դատաքննության երկարատև չպահվելու

իրավունքը), իշխանությունների կողմից հետապնդման չենթարկվելը (օրինակ, միևնույն հանցագործության համար բազմակի անգամ դատապարտվելու՝ այսպես կոչված, կրկնակի քրեական պատասխանատվության միջոցով), անմեղության կանխավարկածը (դուք մեղավոր չեք կարող համարվել, քանի դեռ ձեր մեղքը չի ապացուցվել դատարանում) և, իհարկե, օրենքների կայունությունն ու իրագործելիությունը: Եվ ամենակարևորը, օրենքներ ստեղծողները պետք է այդ օրենքներին ենթարկվեն այնպես, ինչպես ցանկացած մեկ այլ անձ: Հասարակությունը չի կարող ազատ լինել, եթե ոմանք, ինչքան էլ որ բարձր դիրք գրավեն, պատասխանատու չլինեն իրենց գործողությունների համար:

Օրենքի գերակայության պաշտպանությունը

Տարբեր երկրներում տարբեր միջոցներ կան՝ իշխանությամբ օժտվածների կողմից օրենքի գերակայության խախտումը կանխելու համար: Այս միջոցները ներառում են գրավոր ամրագրված սահմանադրությունները, ընդհանուր իրավունքի և նախադեպի վրա հիմնված դատական վարույթը և բնական արդարության տարրական սկզբունքների պահպանումը:

Գրավոր սահմանադրությունը կարող է ամրապնդել օրենքի գերակայությունը: Սակայն շատ ավելի հեշտ է այդ սահմանադրությունը ստեղծել նոր երկրի ստեղծման պահին, երբ քաղաքացիներն առաջին անգամ են համախմբվում, քան հասուն երկրում, որտեղ վերնախավերը և թաքնված շահերը արդեն իշխանության նկատմամբ վերահսկողություն են ձեռք բերել և, ամենայն հավանականությամբ, ցանկացած նոր սահմանադրություն կձևափոխեն հօգուտ իրենց շահերի:

Օրենքի գերակայությանը կարող է օգնել նախադեպերի բազմամյա փորձը, քանի որ տարբեր գործեր են հասնում դատարան: Անհատները կարող են վիճարկել օրենսդիրների ու պաշտոնատար անձանց որոշումները և դրանց արդարությունն ու օրինականությունը ստուգել դատարանում: Նախադեպերի ամբողջությունն աստիճանաբար ուրվագծում է պաշտոնական իշխանության սահմանները:

Օրենքի գերակայության խթանման երրորդ միջոցը արդարության կանոնների և սոցիալական ներդաշնակության հիմնարար սկզբունքների քննարկման խթանումն է: Եթե ազատ խոսքը գերիշխում է և բոլորն ազատ են քննարկելու այդ գաղափարները, ապա իշխանությունների համար ավելի է բարդանում դրանք հօգուտ իրենց մեկնաբանելը:

Օրենքի գերակայության քննարկումների առանցքային գաղափարն այն է, որ եթե մարդիկ առաջին անգամ հավաքվեն որոշելու այն սկզբունքները, որոնցով ցանկանում են կառավարվել, ոչ ոք չի համաձայնվի հարկադրանքի ենթարկվել մյուսների կողմից, բացառությամբ այն դեպքերի, որոնք բոլորն իրենց երկարաժամկետ շահերից բխող կհամարեն, օրինակ՝ գողությունների կամ բռնության համար պատիժը: Այսպիսով, մենք կարող ենք ողջամտորեն ենթադրել, որ բոլոր ազատ հասարակությունները պետք է հիմնվեն ընդհանուր կանոնների վրա, որոնք սահմանափակում են հարկադրանքն ու կանխում առանձին խմբերի շահագործումը մյուսների կողմից:

Արդարության վարչարարությունը

Ինչպիսի ընդհանուր ուղիներ էլ ընտրվեն օրենքի գերակայության ապահովման համար, կան որոշակի միջոցներ, որոնք իսկապես օգնում են:

Դատավորները պետք է անձնապես, ինչպես նաև քաղաքականապես անկախ լինեն: Հակառակ դեպքում դատական համակարգը հարգանք չի վայելի և արդարության անունից հսկայական անարդարություններ կիրականացվեն: Շատ երկրներում դատավորները վատ են վարձատրվում, հաշվետու չեն և քիչ են վերահսկվում. արդյունքում նրանք վճիռները կայացնում են կաշառքների, այլ ոչ թե օրենքի հիման վրա: Փոխարենը, դատավորները պետք է պատշաճ վճարվեն և կանոնավոր հսկողության տակ լինեն, որպեսզի կաշառակերության համար ո՛չ անհրաժեշտություն լինի, ո՛չ էլ հանդուրժողականություն:

Արդարադատության համակարգին պետք է աջակցել նաև դատական վարչարարության միջոցով: Շատ երկրներում անգամ

փոքր վեճը կարող է ամիսներ կամ նույնիսկ տարիներ պահանջել դատարան հասնելու համար՝ հսկայական բյուրոկրատիայի և պաշտոնատար անձանց կողմից վեճերը լուծելու խթանների բացակայության պատճառով: Նախադեպային իրավունքի վրա հիմնված իրավական համակարգում պետք է նախկին գործերը և վճիռները արագ գտնելու հնարավորություն լինի, որպեսզի վեճերը անիմաստ չհասնեն դատարան միայն այն պատճառով, որ նախկին նախադեպերի արձանագրություններ չկան:

Շատ երկրներում ոստիկանությունը նույնպես ավելի շատ խնդիրներ, քան լուծումներ է առաջ բերում: Ձերբակալման և կալանավորման իրենց լիազորությունների պատճառով նրանք կարող են մեծ անարդարություններ գործել և կոռուպցիոն գործարքների մեջ ներգրավվել: Ճանապարհային կանոնների իրական կամ ենթադրյալ փոքր խախտումների համար փոքր «տուգանքներ» սահմանող պաշտոնյաներն այս երևույթի ախտանիշն են: Սա ձևավորված մշակույթի մաս է դառնում, բայց հենց որ կաշառակերության սկզբունքն ընդունվում է, ապա ավելի վատ բաները կանխելու հնար էլ չկա: Ոստիկանները պետք է պատշաճ ուսուցում և վերահսկողություն ունենան, ցանկալի է, որևէ անկախ գործակալության կողմից, որը լիազորված է քննել նրանց դեմ բերված բողոքները և համապատասխան գործողություններ ձեռնարկել:

Նույն կերպ, պետական ապարատի ծառայողները պետք է նշանակվեն ըստ արժանիքի, այլ ոչ թե քաղաքական ծառայություն մատուցելու համար: Նրանք պետք է պատշաճ կերպով հաշվետու լինեն: Քաղաքական կամ անձնական օգուտի համար որոշումների ընդունումը պետք է պատժվի:

Ընտրությունները պետք է արդար անցկացվեն, որպեսզի արդարությունն ու օրենքի գերակայությունը գերիշխեն: Պետք է ազատ խոսք լինի, որպեսզի թեկնածուները, որոնք քննադատում են իշխանություններին, կարողանան ելույթ ունենալ և առաջ տանել իրենց տեսակետերը: Ընտրատարածքների արդար բաժանում և ազնիվ ընտրություններ ապահովելու համար պետք է գաղտնի քվեարկություն և իրապես անկախ ընտրական հանձնաժողով լինի:

Արդարությունն ու տնտեսական առաջընթացը

Օրենքի գերակայությունը կարևոր է ինչպես սոցիալական, այնպես էլ տնտեսական տեսակետից: Ամեն տարի Համաշխարհային բանկը դասակարգում է երկրները՝ ըստ դրանցում բիզնեսով զբաղվելու դյուրինության: Արտասահմանից ներդրումների կամ գործարարների ներգրավումը և հայրենիքում մարդկանց համար բիզնես վարելու հեշտությունը, իհարկե, կարևոր գործոն է տնտեսական զարգացման և բնակչության բարեկեցության համար: Այս ցուցանիշը սահմանելիս հաշվի է առնվում հարկերի և կարգավորումների թափանցիկությունը, պաշտոնյաների շրջանում կոռուպցիայի մակարդակը և այն, թե որքան հեշտ կարող են մարդիկ բիզնես սկսել, գրանցել սեփականությունը, սահմանից դուրս առևտուր անել, սնանկության խնդիրները լուծել և այլն:

Սինգապուրը, որը տնտեսական առումներով շատ ազատ երկիր է (սոցիալական տեսակետից շատ ավելի պակաս ազատ երկիր լինելով), յոթ տարի գլխավորել է համաշխարհային աղյուսակը, հետևում թողնելով հարաբերականորեն ազատ այլ երկրների, ինչպիսիք են՝ Հոնգ Կոնգը, Նոր Զելանդիան, Դանիան, Միացյալ Թագավորությունն ու Միացյալ Նահանգները: Ապա գալիս է Կորեայի Հանրապետությունը, մեկ այլ տնտեսապես ազատ, բայց սոցիալապես սահմանափակ երկիր: Աղյուսակը եզրափակում են այնպիսի երկրներ, որտեղ արդարությունն ու օրենքի գերակայությունն ակնհայտորեն թույլ են, օրինակ՝ Կոնգոն, Վենեսուելան, Զիմբաբվեն, Իրաքը, Կամերունը, Բոլիվիան և Ուզբեկստանը:

Օրենքի գերակայության սպառնալիքները

Շատ երկրներում, հատկապես զարգացող պետություններում, առկա են արդարադատական տարաբնույթ համակարգեր: Ի լրումն պետական օրենքների և արդարադատական համակարգերի հաճախ առկա են տեղական, ցեղային և կրոնական իրավահամակարգեր, ինչպես նաև անհատների միջև

հարաբերություններ կանոնակարգող մասնավոր օրենքներ կամ պայմանագրեր:

Կոռուպցիայի առկայությունն ավելի հավանական է պետական համակարգերում: Տեղական, կրոնական կամ մասնավոր իրավահամակարգերը սովորաբար բնական արդարադատության ավելի խոր արմատներ ունեն և, հետևաբար, համընդհանուր ճանաչում: Ի հակադրություն դրա, պետական համակարգերը հաճախ պարտադրված են եղել գաղութային կամ օկուպացիոն ուժերի կողմից: Նրանք կարող է երբեք ընդունված չլինեն մեծ շրջանակներում, սակայն այդ համակարգերի իշխանությունն ու հովանավորչությունը կիրառվում է ցանկացած կոռուպացված անձի կողմից:

Կառավարության և պետական դատական համակարգերի պաշտոնյաները հաճախ որևէ վատ բան չեն տեսնում պետական իշխանության շահագործման մեջ: Ռազմական, ոստիկանության մարմիններն ու պաշտոնատար անձիք վերցնում են կաշառքներ: Քաղաքական գործիչներից գրեթե ակնկալվում է թալանել պետությանը՝ հօգուտ իրենց տեղական համայնքի կամ հենց իրենց: Սակայն ինչը վատ է համարվում անձնական կյանքում, պետք է վատ համարվի հանրային ոլորտում ևս:

Այն վայրերում, որտեղ ճանապարհորդությունն ու հաղորդակցությունը սահմանափակ են, իսկ տեղական հարցերն ավելի հրատապ և կարևոր են, համակարգերի խառնուրդը կարող է իմաստալից լինել: Բայց արդարադատության բոլոր համակարգերի նպատակը պետք է լինի ունենալ տեղական օրենքների հեղինակությունն ու համաձայնությունը, պետական օրենքների պարզությունն ու սկզբունքայնությունը և օրենքի գերակայության օբյեկտիվությունը:

Մարդու իրավունքներ

Մարդու իրավունքների սահմանումը

Արդարադատության մասին այս մտորումներից է ծնվում մարդու իրավունքների գաղափարը:[25] Գաղափարն այն է, որ մարդիկ, իրենց մարդկային էության շնորհիվ, օժտված են հիմնարար ազատություններով. դրանք այն իրավունքներն են, որ բնական օրենքների նման խթանում են հասարակության սահուն կենսագործունեությունը և միաժամանակ ճանաչված են որպես *համընդհանուր* (կիրառվում են ամենուր և բոլորի նկատմամբ) և *անօտարելի* իրավունքներ (դրանցից չի կարելի հրաժարվել և դրանք չեն կարող հերքվել մյուսների կողմից):

Մարդու այս «իրավունքները» երևի ավելի ճիշտ է անվանել մարդու ազատություններ: Դրանք ներառում են այնպիսի ազատություններ, ինչպիսիք են գույքի սեփականությունը, ինքնորոշումը և սեփական մարմինն ու աշխատանքը տնօրինելը, տեղաշարժման և ընտրած վայրում գտնվելու ազատությունը, դավանանքի ազատությունը: Դրանց նշանակությունը պետության սահմանափակումն է մարդկանց հանդեպ վերաբերմունքի հարցում:

Ցավոք, «մարդու իրավունքները» հաճախ շփոթում են օրինական իրավունքների հետ, որոնք սահմանվում են քաղաքական կառույցի կողմից, ինչպես նաև սոցիալական ու մշակութային նորմերի հետ: Սակայն աշխատողներին վճարովի արձակուրդ տալու վերաբերյալ օրենքները, օրինակ, մարդու իրավունքներ չեն, քանի որ դրանք *համընդհանուր* չեն: Դրանք վերաբերում են միայն աշխատողներին և միայն այն երկրներին, որտեղ այդպիսի ճոխությունները մատչելի են: Դրանք կարող են *օտարվել*, օրինակ՝ աշխատողը կարող է գումարի դիմաց հրաժարվել տոնական օրը հանգստանալուց, առանց որևէ ազատություն կորցնելու: Նմանապես, տղամարդկանց և կանանց հավասար վարձատրության իրավունքները մարդու իրավունք-

---

[25] Nigel Ashford, Principles for a Free Society, Jarl Hjalmarson Foundation, Stockholm, 2003.

ներ չեն, որովհետև դրանք մարդու ազատության պահանջ չեն, այլ հարկադրանք գործատուների հանդեպ:

Խմբի իրավունքները նույնպես մարդու իրավունքներ չեն: Դրանք համընդհանուր կերպով չեն կիրառվում: Օրինակ, Ամերիկայի բնիկների նկատմամբ դրսևորած հատուկ վերաբերմունքը սոսկ իրավական արտոնություն է՝ մյուսները այն չունեն: Որևէ բան չի կարող «մարդու իրավունք» հանդիսանալ, եթե այն վերաբերում է ոչ թե մարդկային էությանը, այլ որոշակի խմբերին նրա անդամակցությանը:

Ազատություններ, իրավունքներ և պարտականություններ

Կարևոր է հստակություն մտցնել այս հարցերում: Մարդու իրավունքները սոցիալական նորմերի և իրավական արտոնությունների հետ շփոթելու դեպքում այդ արտոնություններին արհեստական հեղինակություն է տրվում, իսկ սոցիալական նորմերի գաղափարը խեղաթյուրվում է: Թեև որոշ բաներ՝ հավասար վարձատրությունը, վճարվող տոները կամ նույնիսկ որոշ խոցելի խմբերին արտոնյալ կարգավիճակի շնորհումը, կարող են ցանկալի լինել, սակայն փաստն այն է, որ ամեն ցանկալի բան մարդու իրավունք չէ:

Մարդու «իրավունքները» երաշխավորում են մեր ազատությունը. դրանք որևէ մեկի համար հարկադրանք չեն հանդիսանում: Խոսքի ազատությունը, օրինակ, որևէ պարտականություն կամ պարտավորվածություն չի դնում որևէ մեկի վրա, բացի այն հարգելու պարտականությունից և պարտավորվածությունից: Ոչ ոք պարտավոր չէ ձեզ թերթի սյունակ կամ ռադիո շոու տրամադրել, որպեսզի դուք հեռարձակեք ձեր տեսակետը, կամ հավաստիանալ, որ դուք իրականում ազատ եք արտահայտվում, կամ նույնիսկ լսել, թե ինչ եք ասում:

Ի տարբերություն դրա, Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում ներառված է անվճար կրթության «իրավունքը»: Սակայն անվճար կրթությունը մարդու իրավունք չէ, որովհետև ենթադրում է, որ այլ մարդիկ պարտավոր են վճարել դրա համար: Կրթության

ապահովումն ունի իր արժեքը՝ այն տրամադրելու համար անհրաժեշտ է ժամանակ, ջանքեր, նյութեր և դրամական միջոցներ ծախսել: Իրապես ազատ հասարակությունում ոչ ոք չի կարող անվճար կրթություն վայելելու *իրավունք* ունենալ, քանի որ դա *կպարտավորեցնի* այլ մարդկանց տրամադրել այդ ռեսուրսները: (Իհարկե, շատերը կարող են միանգամայն պատրաստակամ լինել մասնակցելու այդ ծախսերին, բայց ազատ հասարակությունը չի կարող նրանց *հարկադրել*):

Շատ հաճախ մարդիկ խոսում են *իրավունքների* մասին՝ չնշելով կամ անգամ չընդունելով մյուսների ենթադրվող պարտավորությունները, այն հարկադրանքը, որ անհրաժեշտ է դրանց կիրառման համար, և այն մեծ վնասը, որ հասցնում է այդ հարկադրանքը:

Կրկին նշենք, որ ազատ հասարակությունում չկա բարեկեցության *իրավունք*. դա կնշանակեր, որ ոմանք պարտավոր են աջակցել մյուսներին, երբ նրանց միակ պարտականությունը վերջիններիս չվնասելն է: Սակայն սա չի նշանակում, որ աղքատ և հաշմանդամ անձինք այստեղ ավելի անտեսված են, քան բարեկեցության մշակույթում: Բարեկեցության համար գանձվող հարկերը կարող են բացասաբար անդրադառնալ աշխատանքի ու ձեռնարկատիրության խթանման վրա, աղքատացնելով ամբողջ հասարակությանը, իսկ բարեկեցության համակարգի նպաստները կարող են կախվածություն ստեղծել: Հարուստ, ազատ հասարակությունների բարեգործական կազմակերպությունները կարող են ավելի լավ աջակցել կարիքավորներին, քան բյուրոկրատական պետական գործակալությունները:

7. ԻՆՔՆԱԲՈՒԽ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Կարգ ու կանոն առանց հրահանգների

Ազատ հասարակությունը կարող է ինքնակազմակերպվել առանց մեծ պետության միջամտության: Կարող է զարմանալի հնչել, բայց մարդկային կյանքը լի է օրինակներով: Ինչպես ամերիկացի տնտեսագետ Դանիել Քլեյնն է նկատում, դուք կարող եք մտածել, որ անվաչմուշկների սահադաշտում, որտեղ հարյուրավոր մարդիկ՝ մանկահասակ երեխաներից մինչև ծերեր, տարբեր արագություններով պտտվում են սահադաշտում՝ առանց սաղավարտների, ծնկակալների և չմշկելու հմտության, բազմաթիվ պատահարներն անխուսափելի են: Սակայն, իրականում, չմշկողները կարողանում են ղեկավարել իրենց սահքը սահադաշտով մեկ, շրջանցելով մյուսներին, չունենալով արագության սահմանափակումների, շրջադարձի կամ կանգառի ազդանշանների կարիք:[26] Հարկավոր չէ որևէ պլանավորող կամ քաղաքականություն մշակող գործակալություն, որը կհուշի նրանց, թե որտեղ և ինչ արագությամբ սահել: Լինելով ուշադիր, ինչպես նաև տարրական քաղաքավարություն ցուցաբերելով մյուսների նկատմամբ, նրանք վայելում են փոխադարձաբար շահավետ զվարճանք՝ խուսափելով բախումներից:

Ավելի տպավորիչ է այն, որ մարդկային լեզուն բարդ կառուցվածք ունի և շատ կիրառական է մեզ համար, չնայած որ այն հատուկ չի մշակվել որևէ իշխանության կողմից: Քերականության կանոնները, որոնք նպաստում են լեզվի ճիշտ կիրառմանը, բնական զարգացում են ապրել դարերի ընթացքում, քանի որ թույլ են տվել մեզ հասկանալ միմյանց: Մենք հետևում ենք այս կանոններին, նույնիսկ եթե դրանք նուրբ են և բարդ, և կդժվարանանք դրանք գրի առնել: Ոչ մի պետական հանձնաժողով չի կարող մշակել այդպիսի նրբություն, բարդություն և

[26] Daniel B. Klein, ‘Rinkonomics: A window on spontaneous order’, Online Library of Liberty (Articles), 2006.

արդյունավետություն ունեցող կանոններ: Դրանք պարզապես զարգացում են ապրել մեզ հետ միասին:

Մարդկային հասարակության շատ հատվածներ աշխատում են նման կերպ: Առանց պաշտոնյաների կողմից վարվեցողության մասին հրահանգներ ստանալու, մենք գործում ենք ճիշտ, կանոնավոր և կանխատեսելի եղանակներով, պարզապես հետևելով մի քանի հիմնական կանոնների, որոնց հետ միասին մենք մեծացել ենք, և որոնք մեր էության մի մասն են կազմում: Հետևելով դրանց, մենք ստեղծում ենք մեծաքանակ և շատ շահավետ հասարակական կարգեր: Այն պարզ կանոնները, որոնք մեզ թույլ են տալիս, օրինակ, խաղաղ կերպով առևտուր անել միմյանց հետ, ստեղծել են միջազգային շուկայական տնտեսություն, որի միջոցով համագործակցում է ողջ աշխարհը:

Կանոններով ուղղորդվող հասարակություններ

Ազատ հասարակությունում միջանձնային կանոնները մարդկանց ավելի շատ ինքնուրույնություն են տալիս, քան կառավարության կողմից վերահսկվող հասարակություններում: Ազատ մարդիկ կարող են բազմաթիվ բաներ անել, որոնք արգելված չեն, այլ ոչ թե սահմանափակված լինեն կատարելու այն մի քանի բաները, որոնք իշխանությունները թույլ են տալիս: Սա նշանակում է, որ ազատ հասարակությունները կարող են լինել շատ ավելի ճկուն և հարմարվող, հրահանգների սպասելու փոխարեն հեշտորեն արձագանքելով փոփոխվող հանգամանքներին:

Այս կանոնները, ինչպես օրինակ, սեփականության և գույքային կանոնները շուկայական տնտեսության մեջ, մարմնավորում են տարիների ընթացքում բացահայտված իմաստությունն այն մասին, թե ինչն է աշխատում, իսկ ինչը՝ ոչ: Նրանք հարմարվում և փոփոխվում են այնպես, ինչպես հանգամանքներն են փոխվում, արտացոլելով երկար տարիների փորձարկումների և սխալների դասերն ու միլիոնավոր մարդկային շփումները: Դրանք ներառում են վարքագծային նորմեր այն մասին, թե ինչպես վերաբերվել այլ մարդկանց, իրավական նորմեր, որոնք

փորձում են գրավոր ձևակերպել բնական օրենքները, ինչպես նաև ընդհանուր իրավունքը, որը կառուցվում է մեծաթիվ նախադեպերի հիման վրա:

Կանոններով ուղղորդվող, ինքնաբուխ այս հասարակությունը ոչ միայն ավելի ստեղծարար ու հարմարվող է. այն կարող է շատ ավելի բարդ լինել, քան կենտրոնից թելադրվողը: Ինչպես լեզուն, այն կարող է այնքան բարդ լինել, որ մեզանից ոչ ոք չի կարող նույնիսկ նկարագրել նրա բոլոր կանոնները, և սակայն կարող է շարունակել շատ լավ աշխատել: Իշխանության հրահանգների վրա հիմնված հասարակությունն անխուսափելիորեն սահմանափակված է և՛ քանակով, և՛ բնույթով, պայմանավորված նրանով, թե ինչ կարող է փչել մի քանի իշխանավորների գլխին: Սակայն այն հասարակությունները, որոնք հիմնված են հազարամյակների ընթացքում միլիոնավոր մարդկային շփումների արդյունքում ստեղծված կանոնների վրա, ունեն շատ ավելի լայն և խոր իմաստություն: Կենտրոնից ուղղորդված հասարակությունը հիմնվում է մի քանիսի սահմանափակ իմաստության վրա, իսկ կանոններով առաջնորդվող հասարակությունը իր մեջ ներառում է մարդկային զանգվածների իմաստությունը:

Այստեղից էլ պետական իշխանությունների կողմից հաճախ թույլ տրվող այն սխալը, թե նրանք կարող են հասարակությունը կամ տնտեսությունը պլանավորել ավելի լավ և ավելի ռացիոնալ, քան սոցիալական և տնտեսական փոխգործողությունների ամենօրյա կանոնները: Անտեսելով և աղավաղելով կանոնների այս բարդ համակարգում առկա իմաստությունը, նրանք անդառնալիորեն վատթարացնում են իրավիճակը:

Ցրված գիտելիքն ու իշխանությունը

Ինքնաբուխ, կանոններով ուղղորդվող հասարակությանը բնորոշ իմաստությունը որևէ տեղ չի կենտրոնացված: Այն միլիոնավոր անհատների մոտ է, ովքեր ապրում են իրենց առօրյա կյանքով: Քանի որ իշխանությունը ցրված է, այդ անհատները կարող են իրականացնել ապրելու՝ իրենց սեփական, փոքրածավալ փորձը: Նրանք կարող են ռիսկի դիմել՝ վտանգելով միայն

իրենց: Բայց եթե այդ ռիսկը փոխհատուցվում է, բոլորը կարող են այդ փորձը կիրառել և դրանից օգուտ քաղել: Դա խթանում է փորձարարությունն ու փոփոխվող հանգամանքների հանդեպ հարմարվողականությունը, փոփոխական աշխարհում հաջողության հասնելու ավելի մեծ հնարավորություն տալով ինքնաբուխ հասարակությանը: Ի տարբերություն դրան, պետական իշխանությունները որոշումներ են ընդունում բոլորի համար, դրանով ռիսկի ենթարկելով բոլորի կյանքն ու բախտը: Այսինքն, նրանք պետք է ազատ անհատներից ավելի պահպանողական լինեն կամ ռիսկի դիմեն՝ կատարելով զանգվածային սխալներ: Արդյունքում, ոչ ազատ հասարակություններն ավելի դանդաղ և պակաս հաջողությամբ են հարմարվում իրականությանը:

Իհարկե, ինքնաբուխ հասարակությունն ու տնտեսությունը երբեք չեն կարող կատարյալ լինել: Դրանք մարդկային (թեև ոչ միշտ մարդկանց կողմից նախանշված) գործունեության արդյունք են, իսկ մարդկային էակները երբեք կատարյալ չեն: Մենք չենք կարող, օրինակ, կանխատեսել ապագան, ուստի դրան հարմարվելու փորձերը կարող են սխալների հանգեցնել: Մեզանից յուրաքանչյուրի ունեցած տեղեկատվությունն անխուսափելիորեն մասնակի է և տեղական բնույթի: Սակայն ազատ մարդկային փոխազդեցության աշխարհում այս տեղական և մասնակի տեղեկատվությունը հանգեցնում է նկատելիորեն խելացի և հարմարվող հասարակության ու տնտեսության:

Ազատ հասարակության մեջ մարդիկ պետք է պարզեն, թե ինչպես լավագույնս հարմարվեն մյուս մարդկանց՝ նրանց, ովքեր, իրենց հերթին, փորձում են հարմարվել մյուս բոլորի գործողություններին: Դա, ավելի շուտ, նմանվում է պիկ ժամին մարդկանցով լի երկաթուղային կայարանում գտնվելուն, երբ յուրաքանչյուրը փորձում է ճանապարհ հարթել դեպի բազմաթիվ ելքերից մեկը, կամ, մտնելով բազմաթիվ մուտքերից մեկով, փորձում է հասնել իր գնացքին: Նրանցից յուրաքանչյուրը տեսնում է, թե ուր է գնում, սակայն ակնհայտ է, որ նրանցից ոչ բոլորի ուղեգիծն է բացարձակ ուղիղ: Նրանք ստիպված են լինում շրջանցել այլ մարդկանց, բոլորին, ովքեր ցանկանում են նույն ձևով վարվել, փոխելով ուղղությունները, քանի որ մյուսները զբաղեցնում են իրենց ճանապարհը: Դա կարող է նմանվել քաոսի, սակայն

իրականում յուրաքանչյուրն առանց բախումների հասնում է իր նշանակման վայրին: Եթե իշխանության որևէ ներկայացուցիչ այդ կայարանի հարյուրավոր կամ հազարավոր մարդկանցից յուրաքանչյուրին ասեր, թե ուր և երբ շարժվեն, ապա նրանց տեղ հասնելը ժամեր կամ օրեր կտևեր: Խնդիրը չափից ավելի բարդ է կենտրոնացված կերպով լուծելու համար: Բայց ինքնաբուխ հասարակությունը լուծում է այն հեշտությամբ և իրական ժամանակում:

Հանդուրժողականություն

Հանդուրժողականության իմաստը

Այսպիսով, ազատ հասարակությունում յուրաքանչյուր անձ պետք է հարմարվի մյուսների գործողություններին: Ուստի կարևոր է, որ մարդիկ հանդուրժողականություն դրսևորեն մյուսների հանդեպ՝ այդ թվում նրանց, ում գործողությունների և կենսակերպի հետ համաձայն չեն կամ նույնիսկ դրանք անտանելի են համարում:

Ազատ հասարակության մեջ մենք չենք կարող որևէ մեկին ետ պահել որևէ արարքից զուտ այն պատճառով, որ մենք դա չենք հավանում: Մենք կարող ենք միջամտել միայն այն դեպքում, երբ նրանց գործողությունները վնաս են պատճառում կամ հնարավոր է, որ վնաս պատճառեն ուրիշներին: Ջոն Ստյուարտ Միլի համար պարզ էր, որ այստեղ խոսքը գնում է ֆիզիկական վնասի մասին: Եթե «վնասը» ներառեր այնպիսի բաներ, ինչպիսիք են՝ ցնցումը, բարոյական վրդովմունքը կամ շփոթմունքը, ապա գրեթե յուրաքանչյուր գործողություն պետք է արգելվեր, և այդ դեպքում ազատություն ընդհանրապես չպետք է լիներ: Ամեն դեպքում, այդպիսի վարքն արգելել ցանկացողների բարոյական պոռթկումը դեմ կառնի այն մարդկանց բարոյական բռնությանը, ովքեր վրդովվում են՝ տեսնելով, որ իրենց ազատությունը գործնականում սանձվում է: Անկախ նրանից, թե որքան մեծաքանակ կամ զգացմունքային է յուրաքանչյուր կողմը, միևնույն է, նրանցից մեկին առավելություն տալու որևէ օբյեկտիվ հիմք չկա: Եվ քանի որ ազատ հասարակությունը թույլ չի տալիս, որ

տարաձայնությունները ուժով լուծվեն, յուրաքանչյուր կողմը պարզապես պետք է հանդուրժի մյուս կողմի կարծիքները, վարքագիծը և կենսակերպը:

Սա նույնը չէ, ինչ բարոյական անտարբերությունը: Երեխայի վատ պահվածքի հանդեպ անտարբեր ծնողը ոչ թե հանդուրժողականություն չի դրսևորում, այլ անտեսում է երեխայի բարոյական դաստիարակությունը: Եթե հասուն մարդու արարքը մենք անվայել ենք համարում, ապա իրավունք ունենք ասել այդ մասին և փորձել համոզել, որ նրանք իրենց այլ կերպ պահեն, իհարկե առանց բռնություն կիրառելու:

Հանդուրժողականություն չէ նաև բարոյական հարաբերապաշտությունը՝ այն գաղափարը, որ բոլոր բարոյականությունները հավասարապես կիրառելի են, քանի որ մարդիկ համաձայնության չեն գալիս, թե ինչ է բարոյականությունը, և դրանց միջև ընտրություն կատարելու համար չկա օբյեկտիվ գնահատական: Մենք լիովին իրավունք ունենք հավատալու, որ մեր բարոյական կամ կրոնական պատկերացումները ավելի լավն են, քան մյուսներինը, բայց միևնույն է, մենք իրավունք չունենք մեր գաղափարները պարտադրել մեկ ուրիշին:

Հանդուրժողականություն, տարասեռություն և ընտրություն

Մյուսներին հանդուրժելը կարող է դժվար լինել, երբ բնակչությունը գնալով ավելի տարասեռ (հետերոգեն) է դառնում: Ավելի դյուրին դարձած միջազգային ուղևորությունները, ներգաղթի խոչընդոտների վերացումը և մեր ավելի գլոբալիզացված տնտեսությունը միայն մի քանիսն են այն պատճառներից, թե ինչու բազմաթիվ երկրների բնակչությունները հիմա շատ ավելի բազմազան են, քան մի քանի տասնամյակ առաջ:

Ոմանք պնդում են, որ ընտրության ավելի մեծ հնարավորությունը կհանգեցնի տարաբնույթ ռասայական, մշակութային, ազգային, լեզվաբանական կամ կրոնական խմբավորումների առավել առանձնացմանը՝ մեծացնելով լարվածությունը, որը կխարխլի հանդուրժողականությունը: Օրինակ՝ ծնողները կարող

են ցանկանալ, որ իրենց երեխաները մեծանան միևնույն ռասայի ներկայացուցիչների հետ, և եթե նրանք կարողանան ընտրել հատուկ դպրոցներ, ապա կարող է առաջանալ ավելի մեծ տարանջատում, քան եթե երեխաները պարզապես ստիպված լինեն հաճախել պետական մարմինների ընտրած դպրոցները:

Իրականում, երբ կառավարությունն է որոշում դպրոցի վայրը, հավանական է, որ դպրոցներն ավելի քիչ ինտեգրված լինեն, քանի որ երեխաները սովորաբար ուղարկվում են մոտակա դպրոցները: Եվ քանի որ նույն էթնիկ խմբի անդամները ձգտում են ապրել իրար կողքի, դպրոցականների կազմն արտացոլում է բազմազանության այս բացակայությունը: Բայց եթե ծնողներն են դպրոցներ ընտրում, ապա նրանք կարող են ընտրել այլ վայրերում գտնվող դպրոցներ կամ ընտրություն կատարել ըստ այնպիսի հատկանիշների, որոնք նրանք ավելի շատ են արժևորում, քան էթնիկ պատկանելությունը, ինչպես օրինակ՝ գիտական, երաժշտական կամ լեզվաբանական որակավորումները:

Էթնիկ տարանջատումը միանգամայն բնական է, և մարդիկ ձգտում են ընկերներ և գործընկերներ ընտրել հենց իրենց խմբից: Բայց դա պետք է տարբերել այլ համայնքների հանդեպ անհանդուրժողականությունից: Ամենամեծ էթնիկ լարվածությունն այնպիսի վայրերում է, որտեղ որոշ խմբեր զրկված են մյուսների ունեցած իրավունքներից և առավելություններից, այլ կերպ ասած՝ երբ ազատ հասարակության հիմնարար սկզբունքները խախտված են:

Ֆունդամենտալիստական սպառնալիքը հանդուրժողականության նկատմամբ

Հանդուրժողականության նկատմամբ մեծագույն սպառնալիքը բարոյական, գաղափարական և կրոնական ֆունդամենտալիզն է: Կրոնական խիստ հայացքներ ունեցող շատ մարդիկ կարող են միասեռականությունը կամ նախաամուսնական սեռական հարաբերությունները զզվելի, ամոթալի, վրդովեցուցիչ կամ անբարոյական համարել: Նրանք կարող են լիակատար չարիք համարել այնպիսի բաներ, ինչպիսիք են՝ սրբապղծու-

թյունը, աստվածների պատկերումը, կրոնական տեքստերի ժխտումը, կրոնական բարոյական օրենքների մերժումը կամ այլ կրոնի դավանանքը: Նրանք կարող են գտնել, որ դա բավականաչափ հիմնավոր պատճառ է՝ այդպիսի վարքագիծը օրենքից դուրս համարելու և պատժելու համար:

Այնուամենայնիվ, որքան էլ մեծ նողկանք կամ վրդովմունք առաջացնեն որևէ անհատի գործողությունները, և որքան էլ չար համարվեն նրա արարքները կրոնական տեսակետից, ազատ հասարակությունում ոչ ոք իրավունք չունի նրան սահմանափակել, քանի դեռ այդ արարքները ֆիզիկապես չեն վնասել այլոց կամ չեն սպառնում դա անել: Իհարկե, սա չի կանգնեցնում հոգևորականներին՝ քննադատել այդ արարքները և պայքարել դրանց դեմ կամ մարդկանց հանել կրոնական համայնքից՝ պայմանով, որ նրանցից ոչ մեկի հանդեպ սպառնալիք կամ իրական պատիժ չկիրառվի: Բայց դա ոչ մեկին՝ ներառյալ կառավարությանը, իրավունք չի տալիս սահմանափակել, գրաքննության ենթարկել, կալանավորել, ազատազրկել, խոշտանգել, խեղել, աքսորել կամ մահապատժի ենթարկել որևէ անհատի կամ խմբի՝ իր հայացքների և գործողությունների համար:

Համաշխարհային կրոններից շատերի հիմնադիր տեքստերը այլոց հանդեպ հանդուրժողականության կոչ են անում՝ չնայած երբեմն իշխանությունները, ելնելով իրենց շահերից, դա այլ կերպ են մեկնաբանում: Օտար տերությունները, որոնք որոշակի տարածք են զավթել, հաճախ տիրել են նաև այդ տարածքի կրոնին, այլափոխելով դրա բարոյական և դատական նորմերը՝ իրենց անձնական իշխանությունը արդարացնելու կամ դրանք իրենց շահերին ծառայեցնելու նպատակով: Որոշ ամբողջատիրական կառավարություններ նույնիսկ փորձել են ամբողջովին ճնշել կրոնը՝ դրանում տեսնելով իրենց գաղափարախոսության կամ իշխանության ախոյանին: Բայց ազատ հասարակության համար կապ չունի՝ ֆունդամենտալիզմը կրոնական, թե գաղափարախոսական բնույթ ունի: Միևնույն է, այն ոչ մեկին իրավունք չի վերապահում բռնանալ նրանց, ում գործողությունները, բարոյականությունը, կրոնը կամ գաղափարախոսությունը տարբերվում են:

Քաղաքական կոռեկտություն

Հանդուրժողականության հանդեպ մի ավելի նուրբ սպառնալիք կա՝ քաղաքական կոռեկտությունը: Այստեղ է, որ սոցիալական և քաղաքական ճնշում է գործադրվում անհատների վրա՝ ընդունել իշխող վերնախավի կարծիքներն ու վերաբերմունքը: Ընդհանուր առմամբ, նրանց, ով չի համաձայնում գերակա կարծիքի հետ, ծաղրի են ենթարկում որպես խելագար կամ չարագործ, նպատակ ունենալով նրանց կարծիքները ևս որպես խելագար կամ չարագործ ներկայացնել: Սա հնարավորություն է տալիս, որ այս կարծիքները հեշտությամբ անտեսվեն, այլ ոչ թե քննարկվեն: Սա նաև ենթադրում է, որ վերնախավի կարծիքները շատ ավելի կայուն են, քան դրանք իրականում կան:

Այս գործընթացն իրականացվում է հարկադրանքի նուրբ ձևի հիման վրա, երբ տարբերվող կարծիք ունեցողներն այնպես են հեղինակազրկվում, որ նրանց դժվար է դառնում հասարակության մեջ կայանալը: Օրինակ՝ մարդածին գործոններով պայմանավորված կլիմայական փոփոխությունները կասկածի տակ դնող գիտնականները կարող են մերժում ստանալ համալսարաններում աշխատանքի ընդունվելու կամ պաշտոնի բարձրացում ստանալու հարցում: Ազատ հասարակություններում գործարարները, իհարկե, պարտադրված չեն աշխատանքի վերցնել մարդկանց, ում հետ նրանք համաձայն չեն, ոչ էլ զանգվածային լրատվամիջոցն է պարտավոր հակասական տեսություններ հրապարակել: Բայց այնտեղ, որտեղ կրթական հաստատությունները կամ տեղեկատվական միջոցները կառավարության մենաշնորհ են կամ մոտ են դրանց, փոքրամասնական կարծիք ունեցող մարդկանց այսպիսի բացառումը դառնում է իրական պարտադրանք:

Հանդուրժողականությունը և ճշմարտության որոնումները

Ազատ հասարակությունում հանդուրժողականությունը կրոնական կամ գաղափարական տարբերությունների շրջանա-

կից շատ ավելի լայն է: Օրինակ, այն ներառում է արտահայտման ազատություն՝ բանավոր, գրավոր, հեռարձակման կամ այլ տեղեկատվական միջոցներով, ինչն իր հերթին ենթադրում է գրաքննության բացակայություն:

Շատերը կարող են չափազանց մտահոգիչ համարել աշխարհին առանց գրաքննության: Նրանք կարող են խորապես ազդվել այն բառերից, պատկերներից, փաստարկներից և գաղափարներից, որոնք կարող են առաջ քաշվել այդպիսի ազատ աշխարհում: Սակայն, ազատ հասարակություններում մենք իրավունք չունենք կանխել ազատ խոսքը կամ սահմանափակել մարդկանց կարծիքները, եթե նույնիսկ համարյա բոլորս չենք համաձայնում ասվածի հետ, այն համարում ենք վիրավորական կամ անբարոյական:

Իհարկե, որոշակի դեպքերում կա ազատ խոսքի սահմանափակում, եթե այն, ինչ ասվում է, վնաս է պատճառում այլոց, օրինակ՝ թատրոնում «Հրդե՛հ» գոռալը: Մենք օրինաչափորեն պատժում ենք նրան, ով այս կերպ անխոհեմորեն վտանգի է ենթարկում ուրիշներին: Նմանապես, մենք պաշտպանում ենք երեխաներին այն բառերից կամ պատկերներից, որոնք մեր կարծիքով կարող են վնասել նրանց: Մենք չենք կարող թույլ տալ դեղամիջոցների ակնհայտ գովազդը, ասենք, դպրոցների մոտ գտնվող գովազդային վահանակների վրա: Եվ կան լուրջ դեպքեր, երբ պետք է մարդկանց տեղեկություններ հաղորդել, օրինակ՝ ֆիլմերի դասակարգումների մասին, որպեսզի նրանք ակամայից չհայտնվեն սթրես առաջացնող իրավիճակներում:

Որոշակի բառերի, պատկերների, փաստարկների և գաղափարների հեռարձակման արգելքը տարբերվում է ուղղակի գրաքննությունից: Իրապես ազատ հասարակություններում կարող է այդպիսի գրաքննություն չլինել, քանի որ ազատ հասարակությունը հիմնված է հրապարակայնության և ընտրության վրա: Մարդիկ պետք է իմանան իրենց հասանելի տարբերակները, որպեսզի ռացիոնալ ընտրություն կատարեն և փորձարկեն նոր գաղափարներ, որոնք կարող են բարելավել բոլորի ապագան: Գրաքննությունն արգելափակում է այդ տարբերակներն ու ընտրությունները և այդպիսով կանխում առաջընթացը:

Մենք չենք էլ կարող վստահել գրաքննադատներին: Ճշմարտությունն ու իշխանությունը երկու տարբեր բաներ են: Իշխանություն ունեցողները կարող են ունենալ գաղափարների հեռարձակումն արգելելու սեփական պատճառները, օրինակ՝ ինքնապահպանությունը: Բայց եթե նույնիսկ գրաքննադատները առաջնորդվեն հանրության լավագույն շահերով, նրանք անսխալական չեն: Նրանք իմաստության մենաշնորհ չունեն, ոչ էլ ճիշտ ու սխալի արտակարգ իմացություն: Դա կարող են որոշել միայն բանավեճը, փաստարկը և փորձը: Գրաքննադատները կարող են սխալմամբ ճնշել ճշմարտությունը: Նրանք երբեք չեն կարող վստահ լինել, որ չեն ճնշում այնպիսի գաղափարներ, որոնք վերջին հաշվով կարող են ճշմարիտ լինել: Որոշ գաղափարներ կարող են հիմնականում սխալ լինել, բայց պարունակեն ճշմարտության հատիկ, որը հետագայում կարող է կյանքի կոչվել: Այլ գաղափարների ճշմարտացիությունը կարող է ակնհայտ դառնալ միայն ժամանակի ընթացքում:

Միակ ճանապարհը՝ համոզված լինելու, որ մենք ճշմարտությունը և օգտակար գաղափարները չենք ճնշում, դա բոլոր գաղափարներին հրապարակման հնարավորություն տրամադրելն է, վստահ լինելով, որ դրանց արժեքը կամ թերությունը կբացահայտվի քննարկման միջոցով: Սա նշանակում է մարդկանց թույլ տալ հիմնավորել իրենց գաղափարները, նույնիսկ եթե մեծամասնությունը դրանք համարում է անտարակուսելի փաստեր: Ճշմարտությունը կարող է ամրապնդվել միայն այդպիսի մրցակցության միջոցով: Սա է պատճառը, որ 1587-ից մինչ 1983-ը Հռոմեական կաթոլիկ եկեղեցին նշանակում էր «սատանայի դատապաշտպան»՝ քննելու այն մարդու գործը, ով առաջադրված էր սրբացման համար: Մեր համոզմունքները հարցականի տակ դնելը օգտակար է: Եթե մենք համարում ենք, որ ուրիշները սխալվում են իրենց հայացքներում, այդ հայացքները պետք է քննարկվեն և մերժվեն, այլ ոչ թե լռության մատնվեն:

Սկսած Սոկրատեսից, պատմությունը լի է այնպիսի մարդկանց պատմություններով, ովքեր հետապնդվել են իրենց հայացքների համար: Այդպիսի հետապնդումները հաճախ մարդկանց ստիպում են լուռ մնալ՝ թեև նրանց գաղափարները հետագայում հաստատվում են: Վախենալով Հռոմեական

կաթոլիկ եկեղեցու ցասումից, Նիկոլայ Կոպեռնիկոսը մինչև իր մահը՝ 1543 թվականը, չհրապարակեց իր հեղափոխական տեսությունը, ըստ որի մոլորակները պտտվում են արևի շուրջ: Նրա հետևորդը՝ Գալիլեո Գալիլեյն ինկվիզիցիայի կողմից կտտանքների ենթարկվեց և մնացած ողջ կյանքն անցկացրեց տնային կալանքի տակ: Այսպիսի ահաբեկումները ճնշում են ճշմարտությունը, բանավեճը և առաջընթացը: Դա վնասում է հասարակությանը, այդ թվում՝ հետապնդվող հերետիկոսներին:

Եթե մենք առանց որևէ փաստարկի պարզապես ընդունում ենք գերակա գաղափարները, դրանք շատ անհուսալի հիմքի վրա են լինում: Դրանց ընդունումը քննադատական ճանապարհով չի անցնում: Դրանք դառնում են անմտություններ, այլ ոչ թե իմաստավորված ճշմարտություններ: Եվ երբ, ի վերջո, նոր գաղափարները ճեղքում են պատը, հնարավոր է, որ դա լինի բռնի և ավերիչ ձևով:

Մենք կարող ենք անհարմարություն զգալ, երբ մարդիկ ասում են մի բան, որի հետ մենք արմատապես համաձայն չենք, արտահայտում են գաղափարներ, որոնք մենք էապես սխալ ենք համարում, կատարում են արարքներ, որոնք մենք համարում ենք խորապես վրդովվեցուցիչ, կամ նույնիսկ ծաղրում են մեր բարոյական կամ կրոնական համոզմունքները: Բայց այս ամենի հանդեպ մեր հանդուրժողականությունը ցույց է տալիս մեր նվիրվածությունը ազատությանը և մեր հավատը առ այն, որ տարբերվող գաղափարները ճնշելու փոխարեն դրանց քննարկման հնարավորություն ընձեռելով՝ ավելի մեծ առաջընթաց կարձանագրենք և ավելի արագ կբացահայտենք նոր ճշմարտություններ:

Արգելքներ

Մենք կզայրանայինք, եթե շատ բաներ, որ մենք վայելում ենք մեր ամենօրյա կյանքում, արգելվեին: Դժբախտաբար, դրանցից շատերն արդեն արգելվում են:[27]

---

[27] John Meadowcroft (ed.), Prohibitions, Institute of Economic Affairs, London, 2008.

«Մի՛ վնասիր» կանոնն ասում է, որ մենք իրավունք չունենք կանխել գործողությունները, եթե նրանք չեն վնասում կամ չեն սպառնում վնասել մյուսներին: Բայց շատ գործողություններ արգելվում են այն հիմքով, որ դրանք վնաս են պատճառում հենց այդ գործողությունը կատարողին: Հենց այս պատճառով են արգելում թմրամիջոցների օգտագործումը, ծխելը, ալկոհոլը և այլն: Վտանգն այն է, որ սեփական անձին վնասելուց մարդկանց պաշտպանելու արդարացումը թույլ կտա արգելել գրեթե ցանկացած արարք: Շատ հեշտ է փաստարկել, որ մարդիկ վնասում են իրենց կամ ռիսկի են ենթարկվում՝ քաղցր ըմպելիք խմելով, յուղոտ սննդամթերք ուտելով, վտանգավոր մարզաձևերով զբաղվելով, մարմնավաճառության կամ միասեռական կապերի մեջ ներգրավվելով, այլ կրոն ընդունելով կամ իշխանություններին կասկածի տակ դնելով: Նկատի ունենալով այս ամենը հիմնավորող մարդկանց թիվը, հենց որ հանդուրժողականության սկզբունքը կորչի, ենթադրաբար երկար ժամանակ չի անցնի մինչև բուն ազատության սկզբունքը ճնշելը:

Արգելքները գործնականում հաճախ ունեն նաև վնասակար արդյունքներ: Երբ մի բանի պահանջարկը ընդհատակ է մղվում, այն ավելի դժվար վերահսկելի է դառնում, և դրանց մատակարարման համար կարող են ի հայտ գալ հանցագործները: Միացյալ Նահանգներում, օրինակ, դեռևս չեն կարողանում ձերբազատվել քրեական մաֆիայի ներկայությունից, որի իշխանությունը ծաղկեց մեկ դար առաջ՝ «արգելքի» տարիներին, երբ ալկոհոլի մատակարարումը քրեական հանցագործություն էր համարվում: Մոլախաղերի և մարմնավաճառության շարունակական արգելումը ԱՄՆ-ի մեծ մասում նպաստեց այն քրական տարրերի հետագա աճին, որոնք հաճույքով պատրաստ են մատակարարել այս ծառայությունները առկա պահաջարկը բավարարելու համար:

Արգելքների պատճառով մարդիկ ավելի դժվարությամբ կհասկանան իրենց վարքի հետևանքները: Մարդիկ, միևնույն է, թմրամիջոցների պահանջ ունեն, բայց եթե թմրամիջոցներն արգելված են, դրանց վտանգների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերումը դժվարանում է: Օգտագործողների համար դժվարանում է նաև իրենց գնած միջոցի որակի

ստուգումը: Թմրամիջոցներից կախվածություն ձեռք բերած մարդկանց համար դժվարանում է սոցիալական կամ բժշկական օժանդակության հայթայթումը, քանի որ այդպես նրանք կընդունեն իրենց հանցավորությունը: Եվ մարդիկ այլ ռիսկերի են ենթարկվում, ինչպիսին է ՁԻԱՀ-ի վտանգը, որով վարակվում են չմանրէազերծված ասեղներ օգտագործելու պատճառով, քանի որ թմրամիջոցների անօրինականությունը անհնար է դարձնում դրանք ապահով միջավայրում ընդունելը: Արդյունքն այն է, որ թմրանյութերի օգտագործման մեծ, եթե ոչ մեծագույն վնասը բխում է նրանց անօրինական լինելու փաստից:[28]

Նման արգելքները քրեականացնում են ազնիվ մարդկանց, որոնք վնաս չեն տեսնում ժամանցային թմրամիջոցներ օգտագործելու, մոլախաղեր խաղալու կամ տանը ընկերների հետ ալկոհոլ խմելու մեջ, որոնցից ոչ մեկը այլ մարդկանց վնաս չի պատճառում: Եվ չնչին զանցանքի համար օրենքը խախտելուց հետո նրանք կարող են համարձակվել կատարել ավելի լուրջ և վտանգ պարունակող հանցագործություններ:

Հարց - Արդյո՞ք մենք պետք է մարդկանց պաշտպանենք իրենցից:

Ոչ: Դու ցանկանու՞մ ես «պաշտպանվել» ինքդ քեզանից: Թե՞ գտնում ես, որ ինքդ պետք է որոշես, թե ինչպես ես ապրելու քո կյանքը: Իշխանություններին թույլ տալ որոշել, թե ինչն է լավ և ինչն է վատ մեզ համար, անարդյունավետ է. մենք հեռավոր պաշտոնյաներից շատ ավելի լավ կարող ենք դատել, թե ինչ ռիսկերի ենք մենք գնում: Բացի այդ, դա վտանգավոր է. կառավարությունները կարող են սկսել արգելել այնպիսի բաներ, որոնք, ցանկացած մարդու կարծիքով, վնասակար են, բայց հենց որ այդ սկզբունքն ընդունվի, նրանք կարող են արգելել ցանկացած բան:

Արդյո՞ք պետք է մեզ հետ պահել կոկաին օգտագործելուց, ծխախոտ ծխելուց, ալկոհոլ խմելուց, ճարպային սնունդ ուտելուց կամ քաղցր խմիչքներ ըմպելուց: Արդյո՞ք պետք է օրենքով ստի-

[28] Milton Friedman and Rose Friedman, Capitalism and Freedom, Chicago University Press, Chicago, IL, 1962.

պեն մեզ մարզվել, չզբաղվել վտանգավոր մարզաձևերով և եկեղեցի հաճախել: Արդյո՞ք մեզ պետք է արգելել «վտանգավոր» գրքեր կարդալը կամ ղեկավարներին քննադատելը: Ազատ հասարակություններում պատասխանն է՝ ո՛չ: Եթե մարդիկ վիրավորում են մեր բարոյականությունը կամ ինչ-որ վտանգավոր բան են անում, մենք դա պետք է ասենք նրանց: Բայց, քանի դեռ նրանք վնաս չեն տալիս որևէ մեկին, մենք իրավունք չունենք նրանց խանգարել:

Արգելքները գրեթե երբեք չեն գործում: ԱՄՆ-ում ալկոհոլի արգելումը խմիչք օգտագործելը պարզապես ընդհատակ մղեց, որտեղ այն չի կարող վերահսկվել: Թմրամիջոցների վերաբերյալ խիստ օրենքները և թմրամիջոցների տարածման համար նախատեսված խոշոր տուգանքներն ամբողջ աշխարհում չեն կանխել դրանց առևտուրը, որը հաշվարկվում է հարյուր միլիարդավոր դոլարներով:

Տարածված վարքագիծն արմատախիլ անելու փորձերն անիմաստ են: Եվ դրանք նաև սպառնում են ազատությանը, քանի որ զանգվածային մոնիտորինգի և հարկադրանքի ապարատ է անհրաժեշտ որևէ ազդեցություն ունենալու համար: Սա պարզապես իրավական հարկադրանքի ռեսուրսները շեղում է իրապես վնասակար հանցագործությունների հետաքննությունից և հետապնդումից: Դա նաև կոռուպցիայի հնարավորություն է ստեղծում ոստիկանության և դատարանների համար՝ նույնիսկ եթե խաղամոլությունը կամ թմրամոլությունը որևէ վնաս չեն տվել կամ չնչին չափով են վնասել մյուսներին, պատիժները կարող են չափազանց մեծ լինել՝ պաշտոնյաներին թույլ տալով ներգրավված անձանցից մեծ կաշառքներ պոկել:

Հանրային և մասնավոր վարքագիծ

Ազատ հասարակության կանոնները կառավարում են հանրային վարքագիծը. այն, թե ինչպես են անհատները վերաբերվում ուրիշներին: Բայց մասնավոր վարքագիծը, որն ազդում է միայն շահագրգիռ անհատների վրա, մնում է մասնավոր ոլոր-

տում: Այն դառնում է իրավական խնդիր միայն այն դեպքում, երբ մյուսներին վնաս է պատճառում:

Այդուհանդերձ, ազատ հասարակությունում անհրաժեշտ է շատ զգույշ լինել, քանի որ փաստացի վնասը կամ վնասի սպառնալիքն իրական է: Արդյո՞ք մարդկանց պետք է թույլատրել թույն վաճառել: Ընդունելով, որ թույնը կարող է ունենալ շատ կիրառություններ, որոնք մարդկանց վնաս չեն պատճառում, ավելի շատ վնաս կարող է հասցնել դրա վաճառքի արգելումը, քան թե այն թույլ տալը: Կարող է նաև այնպիսի իրավիճակ լինել, որ հրապարակվեն նրանց անունները, ովքեր թույն վաճառում են և գնում, այնպես որ թունավաճառները հասկանան, որ իրենց կարող են հայտնաբերել, բայց ոչ ավելին:[29]

Արդյո՞ք պետք է օրենք լինի հասարակական վայրում հարբեցողության դեմ: Արդյո՞ք պետք է օրենք հասարակաց տների կամ խաղատների դեմ: Այո՛, եթե դրանք առաջացնում են բռնություն, ինչի համար երկրները նախընտրում են լինցենզավորել դրանք: Բայց, մեծ մասամբ այս գործողություններն ազդում են միայն շահագրգիռ անձանց վրա: Մնացած մարդիկ կարող են գարշանքով մտածել դրանց մասին, բայց եթե մենք թույլ տանք, որ արարքներն արգելվեն նաև ցանկացած այլ հիմքով, բացի ուրիշներին օբյեկտիվ վնաս պատճառելուց, ապա ոչ մի մարդկային արարք անվտանգ չէ բարոյախոսների տեսակետից:

Արդյո՞ք մարդկանց պետք է թույլ տրվի առնտուր անել եկեղեցական տոն օրերին: Կամ թույլատրելի՞ է արդյոք բազմակնությունը: Սա այդ մարդկանց գործն է, այլ ոչ թե մերը. դա վնաս չի պատճառում ուրիշ մեկին: Ազատ հասարակության օրենքները գոյություն ունեն պահպանելու և ընդլայնելու անհատների ազատությունը, այլ ոչ թե ոմանց բարոյականությունը պարտադրելու մյուսներին:

Այնուամենայնիվ, ազատ հասարակություններում մարդկանց թույլ է տրվում իրենց ունեցվածքի վրա հաստատել իրենց սեփական կանոնները՝ այն պայմանով, որ չվնասելու կանոնը չի խախտվի: Շատ երկրներում որոշ հասարակական տարածքներ

[29] John Stuart Mill, On Liberty, 1859, in John Stuart Mill, On Liberty and other Essays, Oxford University Press, Oxford, 2008.

(ինչպիսիք են առևտրային կենտրոնները) մասնավոր են, այլ ոչ թե վերահսկվում են քաղաքական իշխանությունների կողմից: Այսպես, 2005 թվականին Անգլիայի հարավ-արևելքում գտնվող Բլուվոթեր (Bluewater) առևտրային կենտրոնն արգելեց հայհոյելը, ծխելը, թռուցիկներ բաժանելը և այնպիսի հագուստներ հագնելը, որ թաքցնում են դեմքը (ինչպես օրինակ՝ գլխանոցը): Ալկոհոլի բաց վաճառքն արգելված է Անգլիայի կենտրոնում գտնվող Բորնվիլում (Bournville), որը շոկոլադագործ Ջորջ Քեդբերիի կողմից ստեղծված գործարանային ավան է և կառավարվում է նրա սկզբունքներին հավատարիմ մասնավոր մի ձեռնարկության կողմից: Քանի որ Բլուվոթերը և Բորնվիլը մասնավոր սեփականություններ են, դա լիովին նրանց իրավունքների շրջանակում է:

Այլասիրության խնդիրը (ալտրուիզմ)

Շատերն անհանգստանում են այն մտքից, որ ազատ հասարակությունը և ազատ տնտեսությունը գործում են ներգրավվածների անձնական շահերի հիման վրա: Նրանք կնախընտրեին մի աշխարհ, որն առաջնորդվում է ալտրուիզմով՝ ուրիշների շահերի և բարեկեցության մասին անձնուրաց մտահոգությամբ: Բայց սա ավելի շատ խնդիրներ է առաջացնում, քան լուծումներ:[30]

Ուրիշներին օգնելու ոչ մի ուղեցույց

Նախևառաջ, արդյո՞ք մենք կարող ենք երբևէ իմանալ, թե որն է այլ մարդկանց շահը: Մենք որևէ անմիջական կապ չունենք նրանց մտքերի և արժեքների հետ: Եթե մենք փորձեինք նրանց շահերից բխող որևէ բան անել, մենք կոպիտ սխալներ կգործեինք: Ցանկացած մարդ, որն իր ծննդյան օրվա առթիվ երբևէ միանգամայն անհամապատասխան նվեր է ստացել, գիտի, որ նույնիսկ ընտանիքի անդամները և ընկերները հաճախ կարող են անտեղ-

[30] Mao Yushi, ‘The paradox of morality’, in Tom G. Palmer, The Morality of Capitalism, Students for Liberty and Atlas Foundation, Arlington, VA, 2011.

յակ լինել այլ անձի ճաշակից: Նվիրելու մշակույթը կարծես թե այնքան էլ արդյունավետ չէ՝ ողջ հասարակության կառավարումը դրա վրա հիմնելու համար:

Դժվար է նաև քննադատորեն մոտենալ այլ մարդկանց կողմից մեզ տրվող նվերներին: Մենք նվերներն ընդունում ենք թվացյալ երախտապարտությամբ, եթե նույնիսկ ամենևին չենք հավանում դրանք: Սա նշանակում է, որ ալտրուիստական հասարակությունում մարդիկ երբեք չեն սովորի, թե ինչ են ուրիշներն իսկապես ցանկանում: Սա ամբողջովին հակադրվում է սեփական շահի վրա կառուցված տնտեսությանը, որտեղ եթե սպառողները մատակարարից ձեռք չեն բերում հենց այն, ինչ ցանկանում են, նրանք ասում են այդ մասին և սպառնում իրենց բիզնեսն այլ տեղ տեղափոխել: Սեփական շահը ստիպում է մատակարարներին մարդկանց տալու ճիշտ արտադրանքը հնարավորինս էժան գնով:

Ալտրուիզմը կոնֆլիկտ է առաջացնում

Եթե ուրիշներին միտումնավոր օգնելու փորձը գործարքների հիմնական դրդապատճառը լիներ, գնորդների և վաճառողների միջև նույնքան լարվածություն կլիներ, որքան ներկայիս եսակենտրոն աշխարհում է: Գնորդները կպահանջեին բարձր գներ, որպեսզի վաճառողները օգուտ ստանան: Վաճառողները կփորձեին գնորդներին ցածր գներով վաճառել՝ մեծացնելու գնորդների շահույթը: Սա պարզապես կլիներ այսօրվա իրավիճակի հայելային արտացոլումը:

Շուկայական տնտեսությունում սեփական շահով հետաքրքրված մարդիկ տարաձայնություններ ունեն միմյանց հետ, բայց նրանք բանակցությունների միջոցով կարող են լուծել իրենց կոնֆլիկտները: Եթե միակ շարժառիթը լիներ ուրիշներին օգտակար լինելը, կոնֆլիկտների լուծման որևէ ճանապարհ չէր լինի: Յուրաքանչյուր ալտրուիստ կպնդեր, որ դիմացինը պետք է ավելի լավ լինի: Քանի որ ոչ ոք չէր ցանկանա հաղթել գործարքի մեջ, սեփական կարիքների հրատապությունը նրանց չէր օգնի համաձայնության գալ:

Եսակենտրոն շահը և ծախս-օգուտ կապը

Եսակենտրոն շահը մատակարարների, ինչպես նաև հաճախորդների ջանքերը կենտրոնացնում է այն ուղղությամբ, որ գործարքից ստացած օգուտը գերազանցի կատարած ծախսերը: Առանց վարձատրության աշխատող ալտրուիստ մատակարարը բոլորին կուղարկեր մի ապակողմնորոշիչ ազդանշան այն մասին, որ իր ժամանակը և կենսափորձը ոչ մի արժեք չունեն: Հաճախորդները, ընդունելով այս ազդակը որպես անվանական արժեք, շուտով իրենց պահանջարկով կողողեին մատակարարներին: Մատակարարները ծառայության մատուցումը մերժելու հնար չէին ունենա, եթե դրա օգուտն արժեքի համեմատությամբ նույնիսկ աննշան կամ չնչին լիներ:

Օրինակ, կաշեգործները կարող էին հանդիպել վերանորոգման կարիք ունեցող ապրանքներով մարդկանց անվերջ հերթի: Եսակենտրոն շուկայական տնտեսությունում այդպիսի առևտրականները հաճախորդներին կտրուկ կասեին, որ նրանց ապրանքները վերանորոգման ենթակա չեն կամ այնքան բարձր գին կդնեին, որ հաճախորդները կորոշեին չանհանգստացնել նրանց: Շուկան կառավարում է պահանջարկը, և իր ջանքերը կենտրոնացնում է այն բանի վրա, ինչն իսկապես արժեքավոր է:

Ալտրուիստական աշխարհում մարդիկ կշտապեին օգնել հարևաններին բոլոր հարցերում, ասենք՝ տուն կառուցելով: Բայց ծախսերի արդյունավետության և պրակտիկ տեսանկյունից հարևանի համար գուցե շուկա գնալը և արհեստավարժ շինարարներ վարձելը ավելի լավ լիներ, քան ոչ հմուտ ընկերների աշխատանքին ապավինելը: Կորուստը կրկնապատկվում է այն դեպքում, եթե այդ հարևանները կարող էին իրենց տաղանդն ավելի արդյունավետ օգտագործել այլ տիպի աշխատանքներում: Շուկան խրախուսում է մարդկանց իրենց ժամանակն ու հմտությունները ներդնել այնտեղ, որտեղ դրանք ավելի արժևորված են:

Հարց - Արդյո՞ք մենք պետք է վերահսկենք գները, որպեսզի աղքատ մարդիկ կարողանան իրենց թույլ տալ իրեր գնել:

Ոչ: Գները սակավության ազդանշաններ են: Դրանք մեզ ասում են, թե որտեղ են ավելցուկներն ու պակասորդները: Նրանք արտադրողներին ասում են, որ որևէ արտադրանք ավելի շատ է անհրաժեշտ և հաճախորդներին ասում են, թե նրանք որ ծախսը պետք է կրճատեն կամ ինչ այլընտրանքներ փնտրեն: Գնի կառավարումը ճնշում է այս ազդանշանները, և այսպիսով, պահանջարկը առաջ է անցնում առաջարկից, և պակասորդ է առաջանում: Սա սովորաբար հանգեցնում է սակավաթիվ ապրանքի չափորոշմանը, որն էլ ավելի քիչ արդյունավետ է:

Որպես օրինակ կարող է ծառայել բնակարանի վարձի վերահսկողությունը, որն իրականացվում է կացարանն ավելի հասանելի դարձնելու համար: Իրականում այդ վերահսկողությունն ավելի է դժվարեցնում կամ անհնարին է դարձնում կացարան գտնելը, քանի որ տանտերերը որոշում են, որ իրենց ստացած վարձավճարները չեն համապատասխանում իրենց տան արժեքին, և իրենց սեփականությունը հանում են շուկայից: Եթե որոշ մարդիկ չեն կարող իրենց թույլ տալ հիմնական ունեցվածք ձեռք բերել, լավագույն լուծումն է չխառնվել շուկայական մեխանիզմներին, այլ նրանց գումար տալ կա՛մ մասնավոր բարեգործության միջոցով, կա՛մ էլ հարկային ֆինանսավորմամբ նվազագույն եկամտի դրույքով: Այդ դեպքում նրանք կարող են գնումներ կատարել նույն արդյունավետ և մրցակցային շուկայում, ինչպես յուրաքանչյուր այլ մարդ:

Շուկայի բարոյականությունը

Այն փաստը, որ ազատ շուկայական տնտեսությունը հիմնված է եսակենտրոն հետաքրքրության վրա, նրան անբարոյական չի դարձնում: Շուկայական հարաբերություններում մարդիկ կարող են բարգավաճել միայն համագործակցելով ուրիշների հետ՝ մատակարարելով ապրանքներ, որոնց կարիքը նրանք ունեն: Հակասոցիալական վարքագիծը պատժվում է. ինչո՞ւ պետք է ինչ-որ մեկը առևտուր անի կոպիտ մարդատյացի հետ, երբ կան բազմաթիվ ավելի հաճելի մարդիկ, ովքեր պատրաստ են բիզնես անել:

Կան նաև կանոններ, որոնք ապահովում են շուկաների հարթ աշխատանքը՝ առանց հարկադրանքի: Բայց ֆորմալ կանոնները չեն կարող գործ ունենալ յուրաքանչյուր կոնկրետ դեպքի հետ: Շուկաներն անխուսափելիորեն հիմնվում են վստահության վրա, և պարգևատրում են նրանց, ովքեր վստահելի և հուսալի լինելու հեղինակություն ունեն: Չնայած խթանող ուժն անձնական շահն է, շուկաները խրախուսում են փոխշահավետ բարոյականությունը:

Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն

Շատերը ցանկանում են, որ բիզնեսն ավելի բարոյական գործի և խթանում են «կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը»: Բազմաքանակ մեծ միջազգային բիզնեսներ ներկայումս տարեկան զեկույցներ են հրատարակում՝ բացատրելով, թե ինչ են իրենք անում, որ լավ քաղաքացի լինեն:

Սակայն միայն անհատները կարող են պատասխանատու կամ անպատասխանատու, բարոյական կամ անբարոյական լինել: Խմբերը չունեն իրենց յուրահատուկ բարոյականությունը: Երկիրը, քաղաքը, ռասան, ցեղը, ակումբը կամ կազմակերպությունը չեն կարող բարոյական կամ անբարոյական լինել, այդպիսիք են միայն նրանց անհատ անդամները: Իհարկե, մենք կցանկանայինք, որ բիզնեսի առաջնորդները իրենց կազմակերպություններում բարոյական մշակույթ ստեղծեին: Բայց բարոյականությունն ու պատասխանատվությունն արտացոլվում են գործողություններում, իսկ գործողություններն իրականացնում են անհատները, ոչ թե խմբերը:

Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության շարժումն իրականում փորձ է քաղաքացիական և բարեկեցությանն ուղղված ծրագրերի իրականացումը հանձնել բիզնեսին: Բիզնեսները փորձում են ցույց տալ, թե ինչպիսի պատասխանատվությամբ են իրենք ֆինանսավորում տեղական դպրոցները, համայնքային խմբերը և այլն: Այս ամենը բիզնեսի տեսանկյունից կարող է շահեկան լինել նրանց համար. ի վերջո, նրանք պետք է աշխատակիցներ վարձեն այդ դպրոցներից, և դպրոցի հետ լավ

հարաբերությունները կարող են հեշտացնել աշխատակիցներ ընդունելու գործընթացը: Բայց սա պետք է լինի գործադիրների և բաժնետերերի կողմից ինքնակամ ընդունված բիզնես որոշում, այլ ոչ թե պարտադրվի նրանց էթիկայի անվան տակ:

Եթե բիզնեսն իսկապես մրցակցային է, ամեն դեպքում ազատ դրամ չի ունենա բիզնեսի կոմերցիոն հեռանկարներին չծառայող տեղական նախագծերին օժանդակելու համար: Եթե ֆիրմաները գումար ունեն այսպիսի նախագծերի վրա ծախսելու համար, դա ցույց է տալիս, որ շուկան չի աշխատում (օրինակ՝ կառավարական կարգավորումը այդ ընկերություններին պաշտ-պանում է մրցակցությունից): Իրական մրցակցային շուկայում այսպիսի ֆիրմաները կպարտվեն նրանց, ովքեր անտեսել են շղարշային տեղական նախագծերը և արդյունքում շահավետ եկամուտ են ձեռք բերել:

Գործարարների դեպքում նույնպես չենք կարող համոզված լինել, որ համայնքային նախագծերին հատկացված գումարներն իրականում արդյունավետ են ծախսվում: Ավելի լավ կլիներ նրանց խորհուրդ տալ կենտրոնանալ մարդկանց ապրանքներ և ծառայություններ տրամադրելու միջոցով եկամուտ ձեռք բերելու իրենց հիմնական գործառույթի վրա, ինչն իր հերթին ստեղծում է համընդհանուր հարստություն, որը մարդասիրությունն ավելի հասանելի է դարձնում:

8. ՄԱՍՆԱՎՈՐԵՑՈՒՄ ԵՎ ԳԼՈԲԱԼԻԶԱՑԻԱ

Միգրացիա և տեխնոլոգիաներ

Աշխարհը բացվում է

Մոլորակի ամենահեռավոր անկյուններն այլևս հեռու չեն: Հեռուստատեսության, ռադիոյի, ինտերնետի և հաղորդակցության այլ միջոցների շնորհիվ մենք հեշտորեն տեղեկանում ենք օտարերկրյա մշակույթների, ապրելակերպի, ռասաների, մարդկանց, երկրների և պետական համակարգերի մասին: Օդային կամ ցամաքային արագընթաց տրանսպորտային միջոցների շնորհիվ հնարավոր է դարձել ավելի շատ վայրեր այցելելը:

Այս ամենի արդյունքում, իշխանություններին ավելի դժվար է թաքցնել իրենց սխալները հասարակությունից: Այլևս իմաստ չունի պատ կառուցել իրենց շուրջը՝ հուսալով, որ այն կօգնի քաղաքացիներին անտեղյակ պահել իրենց բացթողումներից: Սոցիալական լրատվամիջոցների կամ արբանյակային ալեհավաք ափսեների միջոցով ընդունվող օտարերկրյա հեռուստակայանների հաղորդումների միջոցով մնացած աշխարհի հետ ամենօրյա շփման շնորհիվ քաղաքացիները, ամենայն հավանականությամբ, տեղյակ են այլ տեղերում ընձեռվող հնարավորություններին:

Որպես արդյունք, շատ երկրներ արդեն դադարեցրել են աշխարհից փակ մնալու իրենց փորձերը. նրանք բացվում են զբոսաշրջիկների և այլ այցելուների համար: Վերջին մի քանի տասնամյակների ընթացքում Ռուսաստանը, Չինաստանը, Վիետնամը, Բիրման (Միանմա) և այլ խոշոր երկրներ ավելի թափանցիկ են դարձել միջազգային հանրության համար: Այսօր Աֆղանստանի բնակչության մեկ հինգերորդն իր կյանքի մի որոշ ժամանակաշրջան ապրել է արտերկրում:

Նոր աշխարհում մարդիկ ոչ թե պարզապես ճամփորդում են, այլև ճամփորդելով տարածում են իրենց գաղափարները: Օտարերկրյա զբոսաշրջիկները տարբեր պատմություններ են պատմում իրենց երկրների մասին, որտեղ մարդիկ ունեն գործելու, մտածելու և խոսելու ազատություն: Տեղացիները մեկնում են արտասահման և զարմանում, երբ տեսնում են, որ այդ ամենը ճիշտ է: Ինտերնետից կամ արբանյակային հեռուստատեսությունից օգտվող անձինք ևս իրենց լսած պատմությունների հաստատումն են գտնում էկրանին:

Նույն ազդեցությունն ունի նաև առևտուրը: Երբ երկիրը բաց է միջազգային առևտրի համար, նրա քաղաքացիները զբաղվում են գործարարությամբ, ընկերանում այլ մշակույթների քաղաքացիների հետ և սկսում հասկանալ նրանց ապրելակերպը:

Այս ամենն ստիպում է պետություններին ավելի բաց լինել: Մարդիկ, որոնք իրականում տեսնում են ազատությունը և դրանից օգտվելու փորձ ունեն, հասկանում են դրա հսկայական ազդեցությունն առաջընթացի ապահովման և բարեկեցության տարածման վրա: Նրանք իրենց համար ևս ցանկանում են նույնպիսի առաջընթաց և բարեկեցություն: Տեխնոլոգիաները, առևտուրը, միգրացիան, զբոսաշրջությունը և գլոբալ շուկաները ազատ հասարակության դեսպաններն են:

Ազատ հասարակության աճը

Ոչ ուղղահայաց կապիտալիզմ

Ազատ հասարակության ստեղծումը հեշտ չէ հատկապես այնտեղ, որտեղ այն նախկինում չի եղել: Նորաստեղծ կառավարություններն ու միջազգային օգնության գործակալությունները հաճախ փնտրում են այնպիսի խոշոր, տպավորիչ փոփոխություններ, ինչպիսիք են՝ ողջ վարչական բյուրոկրատիայի փոխարինումը կամ պետական խոշոր արտադրությունների մասնավորեցումը:

Հաճախ այս մոտեցումն աղետալի հետևանքներ ունի: Անձնական շահերի համար իշխանության օգտագործման մշակույթի և շուկայի ու մրցակցության սխալ ընկալման պայմաններում մասնավորեցման շատ նախաձեռնություններ պարզապես պետական մենաշնորհները հանձնել են կլանների ձեռքը (օրինակ, Մեքսիկայում՝ 1980-ականների վերջում): Հանրությունը տարբերություն չի տեսնում նախկին պետական հովանավորչության և ներկա կլանային կապիտալիզմի միջև: Քանի որ արդարադատության համակարգի բարեփոխումը կարող է տասնամյակներ տևել, դատարանները նույնպես չեն առարկում այս հովանավորչության դեմ: Արդյունքում մարդիկ նույնքան կասկածամիտ են մասնավորեցման գործընթացի հանդեպ, որքան պետական վերահսկողության խնդրի դեպքում: Շատերն սկսում են հավատալ, որ միայն ծայրահեղականներն ու հեղափոխականները կարող են առաջարկել այնպիսի թարմ մոտեցումներ, որոնցից կօգտվի ոչ թե վերնախավը, այլ հանրությունը:

Ազատության նորահայտ առաջնորդները

«Ուղղահայաց» կապիտալիզմի մոտեցումը ձախողվում է, քանի որ փորձում է փոխել սոցիալական ինստիտուտներն առանց դրանց ստեղծող և աջակցող հիմնարար վերաբերմունքի, գործողությունների և խթանների փոփոխության:

Ազատ հասարակության ստեղծարարությունն ու առաջընթացը սնվում են իրավական և բարոյական որոշակի կանոններից, որոնք սահմանում են համատեղ և ազատ կյանքի ու համագործակցության սկզբունքներ: Եթե մենք կարողանանք ներկայացնել գործողության կանոնների այդ պատկերը և մարդկանց տալ այդ կանոնների շրջանակում իրենց կյանքը վարելու ազատություն, ապա ողջ հանրության բնական էներգիան և փառասիրությունը կհանգեցնի համակարգային փոփոխության:

Օրինակ, ենթադրենք մարդկանց համար մենք հեշտացրել ենք նոր բիզնես ստեղծելը, վստահությամբ բիզնես սկսելն ու վարելը, գույքի նկատմամբ երաշխավորված սեփականության իրավունք ունենալը, կապիտալն արդյունավետ կուտակելն ու

ազատ առևտուր անելը: Դրանով մենք ստեղծում ենք այնպիսի կանոններ և խթաններ, որոնք շուտով կառաջացնեն տնտեսական աճ և կխթանեն համակարգված սոցիալական բարեփոխումները: Մարդիկ կսկսեն փոքր բիզնեսներ բացել, կսովորեն ինչպես վարել բիզնեսը և կբարգավաճեն՝ հասնելով ոչ միայն ֆինանսական ձեռքբերումների, այլև ավելի մեծ ինքնավստահության: Ինքնավստահ հասարակությունն ավելի ունակ կլինի լուծել այնպիսի մեծ ինստիտուցիոնալ խնդիրներ, ինչպիսիք են՝ բյուրոկրատիայի և պետական արտադրության բարեփոխումը:

Այնպես որ, ողջ պետական համակարգի բարեփոխման փորձը չպետք է սկսել մակրո մակարդակից: Մենք պետք է սկսենք միկրո մակարդակից, զարգացնելով այն խթանները, որոնք ողջ ինստիտուցիոնալ կառույցի համակարգային փոփոխություն կառաջացնեն:

Սեփականության իրավունքները գործողության մեջ

Սեփականության իրավունքները Պերուում

Հետաքրքիր օրինակ է Պերուի սեփականության իրավունքների բարեփոխումը 1990-ական թվականների սկզբին, որի ակունքում տնտեսագետ Հերնանդո դե Սոտոն էր: Դե Սոտոն բողոքում էր, որ Պերուում առկա բյուրոկրատիայի և կոռուպցիայի պայմաններում նոր բիզնեսի գրանցումը կարող է մոտավորապես մեկ տարի տևել: Դժվար էր նաև ունեցվածք ձեռք բերելը: Արդյունքում միլիոնավոր փոքր ձեռնարկատերեր իրենց ընկերությունը, փոքր բիզնեսը կամ տունը օրինական հիմունքներով չէին տնօրինում: Դա դժվարեցնում էր նրանց կողմից ձեռնարկությունն ընդլայնելու նպատակով վարկ ստանալը: Նրանք չէին կարող վաճառել իրենց տունը կամ բիզնեսը: Նրանք չէին կարող դիմել դատարաններին իրենց գույքային կամ գործարար վեճերը կարգավորելու համար:

Պերուում, փաստացի, կար երկու տեսակի տնտեսություն. առաջինը գործում էր օրենքի շրջանակներում և օգտվում օրինականության և իրավական պաշտպանության բոլոր տնտեսական առավելություններից, երկրորդը միլիոնավոր ձեռնարկատերերի

պահում էր աղքատության թակարդում, որովհետև նրանց տներն ու բիզնեսներն իրավաբանորեն գոյություն չունեին: Կառավարությունը կորցնում էր եկամուտը, քանի որ անհնարին էր գնահատել կամ հավաքել հարկերն անօրինական փոքր բիզնեսներից: Առանց նրանց նկատմամբ կիրառվող իրավական պաշտպանության այս ձեռնարկատերերը հեշտությամբ շահագործվում էին հանցագործների և «Փայլող ճանապարհ» կոմունիստական կուսակցության պարտիզանների կողմից:

Դե Սոտոյի և մյուսների առաջադրած լուծումն էր՝ վերացնել նոր բիզնեսի գրանցման ընթացքում բյուրոկրատական կարգավորումների, լիզենցիաների և թույլտվությունների մեծ մասը, որոնց ստանալը պարտադիր էր: Իրականացվեցին նաև հողային բարեփոխումներ, ըստ որոնց ավելի քան մեկ միլիոն պերուացի ընտանիք առաջին անգամ ձեռք բերեց օրինական հողային վկայագիր: Արդյունքում բարձրացավ փոքր բիզնեսի արդյունավետությունը, քանի որ սեփականատերերը կարող էին վարկ վերցնել ունեցվածքի ընդլայնման և գնման ու վաճառքի համար: Քանի որ մարդիկ կապիտալ և խնայողություններ ձեռք բերեցին, բարելավվեցին բնակարանային չափանիշները, և ծնողները սկսեցին ավելի շատ ծախսել իրենց երեխաների կրթության վրա:

Բարեփոխումները զերծ չմնացին քննադատությունից: Ոմանք պնդում էին, որ հողի տրամադրումն անարդար էր, քանի որ դժվար էր սահմանել, թե ոչ պաշտոնապես ով ինչ էր «տնօրինում»: Մյուսները պնդում էին, որ հողի սեփականաշնորհումից շահեցին խոշոր կալվածատերերը, այլ ոչ թե քիչ ունեցվածք ունեցող աղքատ գյուղացիները, որ սեփականաշնորհումը վերաբերում էր ընդհանուր հողերին, որոնցից օգտվում էին ամենաաղքատ գյուղացիները, կամ որ սեփականաշնորհումը խախտեց հողի ժառանգական տնօրինման մեխանիզմները, որոնք թեև ոչ պաշտոնապես, սակայն լավ աշխատում էին: Մյուսները պնդում էին, որ հողային բարեփոխումը «արծաթյա փամփուշտ» չէ, և որ տնտեսական զարգացման ամենամեծ խոչընդոտները սովորույթի կողմից մարդկանց ձգտումների վրա դրվող սահմանափակումներն են:

Երբեք հեշտ չէ հիմնել լավ գործող շուկա, եթե այն դրանից առաջ չի եղել: Ավելի հեշտ է ձկնապուրը պատրաստել ակվարիումից, քան ակվարիումը ձկնապուրից: Այնուամենայնիվ, մյուս երկրները ձգտում են վերարտադրել Պերուի բարեփոխումները, իսկ Դե Սոտոն շատ խորհրդատվություններ է մատուցել Լատինական Ամերիկայում և Աֆրիկայում:

Սատարող բարեփոխումներ

Թեև լավ գործող գույքային իրավունքներն ունեն որոշիչ նշանակություն, սատարող այլ բարեփոխումներն էլ անշուշտ անհրաժեշտ են: Օրինակ, պետք է լինի գործող *վարկավորման և միկրովարկավորման շուկա*, որը կարող է հեշտությամբ խաթարվել դժվար կարգավորման և բյուրոկրատիայի պատճառով: (Միկրովարկավորման հետաքրքիր օրինակ է Բանգլադեշի Grameen Bank-ը («Գյուղացիական բանկ»), որը փոքր վարկեր է տրամադրում գյուղական բիզնեսներին, ներառյալ՝ վարկեր, որոնցով հող չունեցող կին-գործարարները կարող են իրականացնել հեռախոսային սպասարկում՝ օգտագործելով անլար հեռախոսներ:)

Հարկավոր է նաև ապահովել *վստահելի և արդյունավետ իրավահամակարգի* առկայություն, որպեսզի մարդիկ կարողանան արագորեն և հստակ կարգավորել իրենց վեճերը: Մենք չպետք է սպասենք մինչև օրենսդիրները հատուկ բարեփոխումներ մտածեն և իրականացնեն պետահիրավական համակարգում: Անհատական առանձին գործերից կազմված ընդհանուր օրենք ստեղծելն ավելի արագ է ստացվում, և այն կարելի է համակցել սահմանված նախադեպերի հիման վրա կառուցված արդեն տեղական իրավահամակարգի հետ, որը համապատասխանում է տեղացի բնակիչների արդարության ընկալումներին: Սակայն մեզ պետք է սահմանել *հիմնական կանոններ, թե ինչպես պետք է գործեն բիզնեսները*, օրինակ՝ սեփականության կառույցների, անձնական պատասխանատվության, փայատերերի իրավունքների և սնանկության մեխանիզմների վերաբերյալ:

Մենք նաև պետք է *կրճատենք այն կանոնակարգերը*, որոնք կանխում են մուտքը դեպի շուկաները, որպեսզի կարողանան առաջանալ նոր գաղափարներ: Օրինակ, Նեպալում (մի երկիր, որը նախքան 1950-ական թվականները գրեթե ամբողջությամբ փակ էր արտաքին աշխարհի համար) օրենսդիրները մերժեցին իրենց հեռախոսային համակարգի բաց վաճառքն այն հիմքով, որ մարդիկ կսարսափեն այդ համակարգն աշխատեցնող մասնավոր ընկերությունների գաղափարից: Բայց նրանք համաձայնվեցին նորեկների մուտքը թույլատրող նոր լիցենզիաներ տրամադրել: Այդ նորեկներն այնքան հաջողակ էին, որ Նեպալն այժմ ունի հեռախոսային ժամանակակից նախանձելի համակարգ:

Որքան շատ են այն օրինակները, երբ փոքր բիզնեսների և նոր շուկաների եկվորները աճում են, ստեղծում աշխատատեղեր, բարձրացնում բարեկեցության մակարդակն ու բարելավում բաժանորդների սպասարկումը, այնքան ավելի հավանական է, որ մարդիկ կհասկանան ազատության հսկայական ներուժը եկամտի և հարստության ստեղծման գործում: Որքան ավելի շատ աջակցություն այն վայելի, այդքան քիչ մարդ կձգտի ռադիկալ, բայց արդյունքում բռնի այլընտրանքների:

Գյուղատնտեսական բարեփոխումներ

Գույքային իրավունքների իրացման ուժի մեկ այլ օրինակ են Խորհրդային Ռուսաստանի, Չինաստանի և Վիետնամի գյուղատնտեսական բարեփոխումները: Նրանց կոմունիստական կառավարությունները գյուղատնտեսությունը կառուցում էին հողի համայնքային սեփականության և գյուղացիական ձեռնարկությունների միջոցով: Համայնքները վերահսկում էին հողն օգտագործելու իրավունքները և պարտադրում էգալիտար բաշխման համակարգ: Դա, սակայն, աղետալի մոդել էր: Համայնքները մեծ էին, ոչ ճկուն և բյուրոկրատական: Եվ քանի որ անհատները ստիպված էին իրենց ջանքերի արդյունքները կիսել շատ ուրիշների հետ՝ շատ քիչ էին ավելի ժրաջան և արդյունավետ աշխատելու նրանց շարժառիթները:

Հրաժարվելով համայնքային սեփականության սկզբունքից, 1970-ականների վերջին Չինաստանը ոչնչացրեց այս աղետալի խորհրդային մոդելը: Առաջացավ «կենցաղային պատասխանատվության համակարգը»՝ իրենց առանձին փոքր հողակտորներում աշխատող ընտանիքներով: Այն վերականգնեց կապը ջանքերի և արդյունքներ ստանալու միջև: Չինաստանի գյուղատնտեսությունը վերելք ապրեց: 1980-ականների սկզբին ֆերմաների եկամուտներն արագ աճ արձանագրեցին. հացահատիկի տարեկան աճը կազմեց գրեթե հինգ տոկոս, բամբակինը՝ ութ տոկոս, իսկ յուղատու մշակաբույսերինը՝ տասնչորս տոկոս:[31]

Բայց այս առաջընթացը երկար չտևեց: Համակարգը դեռևս խեղաթյուրված էր: Հույս ունենալով հավասարեցնել հողի որակի տարբերությունները՝ մեկ մեծ հողատարածքի փոխարեն իշխանությունները ընտանիքներին տրամադրեցին մի քանի փոքր հողակտորներ: Քանի որ յուրաքանչյուր ընտանիք աշխատում էր հինգ կամ վեց հողակտորների վրա, հնարավոր չէր կատարելագործել աշխատանքի մեթոդները: Բացի այդ, հողակտորների միջև անցնող ճանապարհները զբաղեցնում էին մշակվող հողերի մեծ հատվածներ: Բաշխման համակարգը հաշվի չէր առնում ընտանիքների արտադրողականության տարբերությունները:

Արդյունքում որոշվեց հողի տեխնիկական սեփականության հարցերը թողնել անփոփոխ, սակայն ներմուծել հողօգտագործման իրավունքների համակարգը՝ ընտանիքներին տալով հողը մշակելու, բերք ստանալու և դրանից շահույթ ունենալու երկարաժամկետ իրավունքներ, ինչպես նաև այդ իրավունքները այլոց հանձնելու հնարավորություններ:

Այդ համակարգը ևս կատարյալ չէր ազատ շուկայի կամ սեփականության իրավունքների տեսակետից: Պետական գնումների և գնագոյացման համակարգը խարխլեց իրենց սեփական որոշումներն ընդունելու և սեփական աշխատանքի արդյունքները վայելելու ֆերմերների կարողությունը: Գրեթե բացակայում էր հողի իրական շուկան ու հողակտորների միավորումը:

[31] Wolfgang Kasper, ‘The Sichuan experiment’, Australian Journal of Chinese Affairs, 7, February 1981, pp. 163–72.

Սակայն աստիճանաբար հողի շուկային նմանվող մի բան առաջացավ:

Հյուսիսային Գուիժուի Մեյթան նահանգում, օրինակ, գյուղացիներն ու պաշտոնատար անձինք սահմանեցին հողօգտագործման ժամկետները քսան տարի ժամկետով՝ օգնելով ընտանիքներին երկարաժամկետ պլաններ մշակել: Ֆերմերներին տրվեցին իրենց ժամկետները կտակելու և փոխանակելու, ինչպես նաև հողամասերը միավորելու իրավասություններ: Ստեղծվեցին անմշակ հողերը մշակելու շարժառիթներ: Արդյունքում, ավելի շատ հողեր մշակվեցին, բարելավվեց հողի որակը, որովհետև ընտանիքներն ավելի լավ էին հոգ տանում դրա մասին, ինչպես նաև ներմուծվեցին ժամանակակից սարքավորումներ: 1995 թվականին ազգային կառավարությունը կոչ արեց մյուս գյուղերին ևս հետևել Մեյթանի օրինակին, և սկսեց տարածվել գույքային իրավունքների համակարգին նմանվող ինստիտուտը:

Ջրային իրավունքներ

Ջուրը ևս մեկ սակավ ռեսուրս է, որը սեփականության իրավունքների առկայության պայմաններում կարող է ավելի լավ տնօրինվել, քան կառավարությունների կողմից: Մի անգամ ԱՄՆ-ի չոր արևմուտքում երաշտի սպառնալիքը համընդհանուր տարածում էր գտել ոչ միայն ջրի պակասի, այլև դրա կուտակման գերկարգավորված համակարգի պատճառով: Օրինակ, նրանք, ովքեր առաջինն էին օգտվել հոսող ջրից, առաջնահերթություն ունեին իրենց հաջորդողների համեմատությամբ, սակայն այս իրավունքի պահպանման համար նրանք մշտապես պետք է օգտվեին ջրից, նույնիսկ եթե նրանց ջրի կարիքն աննշան էր:

1990-ականների սկզբին, այնպիսի նահանգներ, ինչպիսիք են Մոնտանան և Արիզոնան, սկսեցին թույլ տալ մարդկանց վաճառել իրենց ջրային իրավունքները: Թեև դեռ կային այս շուկայի զարգացմանը խանգարող շատ կանոնակարգեր, այս փոփոխությունն օգնեց ապահովել ջրի ամենաարժեքավոր օգտագործումը: Քանի որ ջրային ռեսուրսների իրավունքները կարող են գնվել և վաճառվել, մարգինալ օգտագործողները

(ովքեր կարող են օգտագործել քիչ ջուր կամ վերամշակված ջուր) այժմ թարմ ջրի օգտագործման իրենց իրավունքները փոխանցում են ավելի հրատապ կարիք ունեցողներին: Այս համակարգի առավելությունների պատճառով ջրային իրավունքների շուկան այժմ տարածված է ողջ արևմտյան ԱՄՆ-ում:

Մասնավորեցման մեխանիզմներ

Պետականորեն վերահսկվող արտադրությունները հաճախ մենաշնորհներ են, որոնք հաճախորդներին ընտրության հնարավորություն չեն տալիս: Այսպիսով, նրանք կարող են (և այդպես էլ անում են) ավելի բարձր գներ գանձել երկրորդական ապրանքների և ծառայությունների համար: Նույնիսկ եթե նրանք «պարզված ձեռքի հեռավորության» վրա են ղեկավարներից, նրանք շարունակում են վերահսկվել իշխող վերնախավի կամ նրանց ընկերների կողմից:

Օրինակ, Իրանում կեղծ բարեգործական ընկերությունները վերահսկում են իրանական տնտեսության մեկ հինգերորդը, որը ներառում է գույքային զարգացման, գյուղատնտեսության, մշակող արտադրության և բեռնափոխադրման ոլորտները: Ի սկզբանե հիմնադրվելով շահի կողմից, դրանք լայնորեն քննադատվել են ոչ թե իրական բարեգործական ընկերություններ, այլ վարչակազմի հովանավորչության ու շահույթի միջոցներ լինելու համար: 1979 թվականի հեղափոխությունից հետո նորաստեղծ կառավարությունը համարեց, որ դրանցից չպետք է հրաժարվել մեծ եկամտաբերության պատճառով: Այդպիսով, նրանք պահպանվեցին, ստացան հատուկ հարկային արտոնություններ և կառավարության սուբսիդիաներ, նրանց տրվեցին նաև բռնագրավված մասնավոր ունեցվածքները: Դրանք կոչված են գոյություն ունենալ ի նպաստ աղքատների, սակայն նրանց հիմնական շահառուները, կարծես թե, իշխանության գլխում կանգնածներն են:

Պետական բիզնեսների մասնավորեցումը *պետք է* բյուրոկրատական մենաշնորհների մեջ ներմուծի մասնավոր սեփականության և մրցակցության դինամիկ ազդեցությունը, իսկ կոռուպցիան փոխարինի առևտրային հրապարակայնությամբ:

Այն կարող է նաև օգնել հասարակությանը վերադարձնելու այդ ոլորտների կապիտալը: Սակայն, այս ամենին հասնելու համար պահանջվում է ունենալ տեսլական, տոկունություն և քաղաքականության մանրակրկիտ ձևակերպում:

Չկա որևէ եզակի մեխանիզմ: Պետական բիզնեսների մասնավորեցումը քաղաքականության, ինչպես նաև տնտեսագիտության հարց է: Յուրաքանչյուր արտադրություն տարբեր է և տարբեր մոտեցում է պահանջում: Արտադրությունները լինում են տարբեր տեսակների ու չափերի և ունեն բարեփոխումներն արգելափակող, տարաբնույթ շահեր ունեցող խմբեր: Այսպես, մոտեցումն այնպիսի անհրաժեշտ ռեսուրսներին, ինչպիսիք են՝ ջուրը և էլեկտրաէներգիան, ինչից կախված է ողջ բնակչությունը, պետք է լիովին տարբերվի դեպի մշակման արտադրության ընկերությունն ունեցած մոտեցումից, որի արտադրանքից համեմատաբար քիչ մարդիկ են օգտվում:

Փոքր ձեռնարկությունների դեպքում կարող է օգտակար լինել դրանք վաճառելը առևտրային, մասնավորապես օտարերկրյա օպերատորին, որը կարող է թարմ գաղափարներ և կապիտալ ունենալ: Սակայն պետական ընկերությունների վաճառքն օտարերկրացիներին կարող է հակառակ արդյունք տալ:

Խոշոր ձեռնարկությունների համար օգտակար կլինի լայնորեն բաշխել սեփականությունը՝ հանրության շրջանում բաժնետոմսեր վաճառելու միջոցով: Դա կարող է կրթական միջոցառումներ պահանջել, սակայն հնարավոր է, որ գործ ունենանք միայն պարզունակ ֆոնդային շուկայի հետ և շատերը չիմանան, թե ինչ են բաժնետոմսերը: Խորհրդային վարչակարգի փլուզումից հետո Ռուսաստանը սկսեց «վաուչերի մասնավորեցումը», որի միջոցով հասարակությանն արդյունավետ կերպով պետական ձեռնարկությունների հավասար բաժնետոմսեր տրամադրվեցին: Սակայն շատերն այդ բաժնետոմսերը վաճառեցին էժան գներով, և վերահսկողությունն ի վերջո կենտրոնացավ բիզնես «օլիգարխների» նոր վերնախավի ձեռքերում:

Շուկայական սկզբունքների ներմուծում

Որպես մասնավորեցման գործընթացի մաս՝ անհրաժեշտ է վերացնել մենաշնորհները: Կառավարությունը կարող է մտածել, թե ավելի մեծ եկամուտ կստանա բիզնեսները վաճառելով և միաժամանակ մենաշնորհային արտոնություններն անձեռնմխելի պահելով, սակայն այդ մենաշնորհը շարունակում է պահպանել իր վատ ազդեցությունը հասարակության վրա: Եթե պետական մենաշնորհը բաժանվի մրցակցող տարրերի, ապա դրանից երկարաժամկետ կտրվածքով կշահեն ինչպես կառավարությունը, այնպես էլ հասարակությունը: Նոր կազմակերպություններն ավելի առողջ, դինամիկ և նորարար կլինեն, քան իրենց մենաշնորհային նախորդները:

Գվատեմալայի հեռախոսային համակարգի 1996 թվականի մասնավորեցումը ցույց է տալիս մրցակցության կարևորությունն այս գործընթացում: Այնտեղ հեռահաղորդակցության շուկան բացվեց մրցակցության համար նախքան հեռահաղորդակցության մենաշնորհի մասնավորեցումը: Եթերը նույնպես մասնավորեցվեց, արդյունավետորեն ստեղծելով սեփականության իրավունքներ էլեկտրամագնիսական սպեկտրում, որոնք նոր հեռահաղորդակցության կազմակերպությունները կարող էին հեշտությամբ գնել և օգտագործել: Արդյունքը եղավ մրցակցության ընդլայնումը, որն իր հետ բերեց ավելի մեծ ընտրություն և ավելի լայն ծածկույթ: Գները նվազեցին, դառնալով ամենացածրը Լատինական Ամերիկայում, և բջջային հեռախոս օգտագործողների թիվը մեկ տասնամյակից մի փոքր ավելի ժամանակահատվածում ավելացավ մի քանի հարյուր անգամ:[32]

Մասնավորեցման պատշաճ իրականացում

Միջազգային առկա մեծածավալ փորձը և փորձագիտությունը կարող են օգնել բարեփոխիչներին պատշաճ կերպով

[32] Wayne A. Leighton, ‘Getting privatisation right: a case study’, Institute of Economic Affairs blog, London, 2013.

իրականացնել մասնավորեցման քաղաքականություններն ու մեխանիզմները:

Առանցքայինն այն է, որ գործընթացն ամբողջովին բաց պետք է լինի, և որ հասարակությունը պետք է մասնակցի դրան: Հակառակ դեպքում, բարեփոխումը համատարած չի ընդունվի: Օրինակ, Աֆրիկայի որոշ պետություններ մասնավորեցրել են կոմունալ այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են ջուրը և բանկային գործունեությունը՝ հրավիրելով արտասահմանյան ներդրողներ, սակայն չբացելով սեփականաշնորհման որևէ հնարավորություն տեղի բնակչության համար: Սա ոչ միայն քաղաքական միամտություն է, այլև դեմ է ազատ հասարակության հավասար վերաբերմունքի սկզբունքին:

Բացի այդ, սեփականության իրավունքները անձանց նեղ շրջանակին հանձնելու դեպքում վտանգ կա, որ իշխանական կլանները նորից իրենց կվերադարձնեն վերահսկողությունը մասնավորեցված ոլորտների նկատմամբ: Դա կթունավորի հետագա մասնավորեցումների գաղափարը և կխափանի շուկայական գաղափարների ներդնումը պետական վերահսկողության տակ գտնվող մյուս ոլորտներում: Հասարակությունը պետք է համոզված լինի, որ ցանկացած նոր կառույց պետք է ծառայի հաճախորդներին, այլ ոչ թե կոռումպացված վերնախավին: Դրա երաշխավորման լավագույն ճանապարհը հնարավորինս շուտ և հնարավորինս լայնածավալ մրցակցության ներմուծումն է:

Հանրային ծառայություններն առանց կառավարության

Ենթադրվում է, որ որոշ հանրային ծառայություններ կարող է մատուցել միայն պետությունը, մասնավորապես, առողջապահության, կրթության և բարեկեցության ոլորտների «հումանիտար» ծառայությունները:

Ոմանք ասում են, որ այդպիսի հիմնարար ծառայությունները չափազանց կարևոր են, որպեզի թողնվեն շուկային: Իրականում դրանք չափազանց կարևոր են կառավարությանը թողնելու համար: Երբ ծառայություններ մատուցողները ֆինանսավորվում են հարկերից, նրանք ստիպված չեն ապրուստի միջոց

վաստակելու համար հաճոյանալ հաճախորդներին, ինչպես դա անում են մրցակցող մասնավոր մատակարարները: Նրանք ուղղորդվում են իշխանության, այլ ոչ թե հանրության կողմ:

Մասնավոր ընկերություններն ավելի շատ մրցակցության են հանդիպում, քան կառավարության կողմից մատուցվող ծառայությունները: Հաճախ, պետական ծառայությունների հետ մրցելն օրենքից դուրս է: Այսպիսով, պետական հատվածի մատակարարները կարիք չունեն նորարարություն անելու կամ նույնիսկ թարմացնելու իրենց ծառայությունները, քանի որ նրանց հաճախորդները ուրիշ տեղ չունեն գնալու:

Այդուհանդերձ, կառավարությունը որքան էլ շատ ցանկանա մատուցել հանրային ծառայություններ, մարդիկ միշտ էլ մենաշնորհները շրջանցելու ուղիներ են գտնում: Աշխարհի տարբեր վայրերում բազմաթիվ օրինակներ կան, որտեղ ոչ պետական և ոչ ֆորմալ մատակարարները մատուցում են այս կարևոր ծառայությունները և նույնիսկ ավելի լավ են դա անում:

Կրթությունն առանց կառավարության

Վերցնենք, օրինակ, կրթությունը: Շատերը պատկերացնում են, որ մասնավոր կրթությունը միայն հարուստների համար է: Սակայն կրթության փորձագետ պրոֆեսոր Ջեյմս Թուլեյի կողմից իրականացված՝ Հնդկաստանի, Գանայի, Նիգերիայի և Քենիայի երկամյա ուսումնասիրությունը հակառակն է ապացուցում: Այս երկրների ամենաաղքատ մասերում դպրոցականների մեծ մասը հաճախում է ոչ պետական դպրոցներ: Հիդերաբադի, Ակրայի և Լագոսի ամենաաղքատ վայրերում դպրոցների միայն մեկ երրորդն է պետական: Դպրոցականների երկու երրորդը կամ ավելին հաճախում է մասնավոր դպրոցներ, որոնցից շատերը ոչ ֆորմալ են և պետականորեն ճանաչված չեն: Այս ոչ պետական դպրոցները հիմնականում գտնվում են մասնավոր սեփականատերերի ձեռքում: Դրանցից քչերն են ստանում բարեգործական աջակցություն, ոչ մեկը կառավարության կողմից չի

ֆինանսավորվում, և դրանց միակ եկամուտը ծնողների հաճախ շատ չնչին վճարներն են:[33]

Թուլեյը պարզել էր, որ նույնիսկ այս պայմաններում մասնավոր դպրոցների ձեռքբերումները զգալիորեն ավելի բարձր էին: Հիդերաբադում միջին մաթեմատիկական միավորները շուրջ մեկ հինգերորդով բարձր էին պետական դպրոցների նույն միավորներից, չնայած մասնավոր հատվածի ուսուցիչների աշխատավարձի չափը կազմում էր պետական հատվածի ուսուցիչների աշխատավարձի կեսից մինչև քառորդը: Նույն կերպ բարձր էին նաև մյուս ստանդարտները: Թուլեյը պետական դպրոցների ուսուցիչներին գտնում էր իրենց աշխատասեղաններին քնած: Պետական դպրոցներում ավելի շատ էր նաև ուսուցիչների անհարկի բացակայությունը: Մասնավոր դպրոցներն ավելի լավ էին ապահովված գրատախտակներով, խաղահրապարակներով, նստարաններով, խմելու ջրով և զուգարաններով: (Համեմատության համար նշենք, որ պետական դպրոցների միայն կեսում կան զուգարաններ, մինչդեռ մասնավոր դպրոցների 96 տոկոսում դրանք առկա են:)

Իշխանությունները կարծես անտեղյակ են աղքատ շրջաններում մասնավոր կրթության հսկայական նշանակության մասին: Գանսյուի լեռնային նահանգում չինական կառավարությունն արձանագրում է միայն 44 մասնավոր դպրոց, մինչդեռ Թուլեյի հետազոտողները հայտնաբերել են 696 դպրոց, որոնցից 593-ում կրթվում էին 61.000 երեխա ամենահեռավոր գյուղերից: Դրանց ճնշող մեծամասնությունը գործում էր ծնողների և գյուղացիների ջանքերով: Այդ դպրոցները զարգացան անկախ նրանից, որ Գանսյուում միջին եկամուտը կազմում էր տարեկան 150 ԱՄՆ դոլար: Նույնիսկ Քիբերայում (Քենիա), որը Հարավ-Սահարյան Աֆրիկայի շուրջ 750.000 բնակչությամբ ամենամեծ ետնախորշն է, Թուլեյը հայտնաբերել է 76 մասնավոր դպրոց 12.000 դպրոցականներով:

---

[33] James Tooley, The Beautiful Tree: A Personal Journey into How the World's Poorest People Are Educating Themselves, Cato Institute, Washington, DC, 2009.

Ակնհայտ է, որ նույնիսկ աշխարհի ամենաաղքատ վայրերում մասնավոր նախաձեռնությունը կրթությունը կարող է հասցնել և հասցրել է պետության համեմատ ավելի բարձր ստանդարտի: Դրա գինը բավականին ցածր է և մատչելի աղքատ ընտանիքների համար: Կրթության համար կարծես թե կառավարությունն այլևս պետք չէ:

Զարմանալի չէ, որ հարուստ երկրները, որոնք հաճախ ունեն պետական դպրոցների լայնածավալ ծրագրեր, ձգտում են մրցակցության և ծնողական ընտրության որոշ տարրեր մտցնել կրթության մեջ: 1991 թվականին Շվեդիան նոր համակարգ ներկայացրեց, ըստ որի՝ կառավարությունը շարունակում էր վճարել հանրակրթական դպրոցների հիմնական ծախսերը, բայց մասնավոր շահույթ չհետապնդող և առևտրային խմբերը կարող են ստեղծել իրենց սեփական դպրոցները և ըստ ներգրավված աշակերտների թվի ստանալ այդ ֆինանսավորումը: Նույնիսկ այնպիսի քննադատները, ինչպիսիք են ուսուցիչների միությունները, որոնք ի սկզբանե դեմ էին այս բարեփոխմանը, այժմ աջակցում են դրան: Այն մեծ ազդեցություն ունեցավ մասնավորապես ամենադժվար և աղքատ վայրերում ստեղծված հազարից ավելի դպրոցների արդյունավետության, նորարարության և որակի վրա: Այժմ այլ երկրներ նույնպես ներդնում են այդ մոդելը:

Առողջապահությունն առանց կառավարության

Առողջապահությունը մյուս կարևոր ծառայությունն է, որը շատ երկրներում ապահովվում է կառավարության կողմից, հաճախ իրավական արտոնությունների, հարկային ֆինանսավորման սուբսիդիաների և կարգավորումների միջոցով պաշտպանված լինելով մրցակցությունից Այս դեպքում ևս, մատակարարները կենտրոնանում են կառավարությունից ավելի շատ գումար և մեծ արտոնություններ ստանալու վրա, հաճախորդներին լավ ծառայություններ մատուցելու փոխարեն:

Միացյալ Նահանգներին հաճախ քննադատում են իբր «ազատ շուկայական» սկզբունքով ստեղծված իրենց առողջապահական համակարգի բարձր գնի համար: Այն, իհարկե, թանկ է,

սակայն իրականում այն աշխարհի ամենակարգավորված համակարգերից մեկն է, և կառավարության՝ մեկ շնչի հաշվով այս ոլորտին հատկացվող ծախսերը գտնվում են երրորդ տեղում աշխարհում (Նորվեգիայից և Լյուքսեմբուրգից հետո): Հարկերն ու կարգավորող նորմերը առողջապահության ապահովագրությունը կապում են աշխատատեղերի հետ, ինչի արդյունքում մինչև նոր աշխատանք գտնելը չաշխատող մարդիկ ապահովագրված չեն: Մինչդեռ աշխատողները (խրախուսվելով բժիշկների կողմից) պահանջում են զննում և բուժում, որոնց կարիքն իրականում չունեն, պարզապես քանի որ այդ ծախսերը հատուցում են իրենց գործատուները, այլ ոչ թե իրենք: Կարգավորումները սահմանում են նաև, թե ինչ պետք է ներառեն ապահովագրական պայմանագրերը և ինչպես պետք է վաճառվեն (օրինակ, ապահովագրողներին միայն իրենց հայրենի նահանգի սահմաններում գործունեություն ծավալելու վերաբերյալ սահմանափակումը): Նույն կերպ, բժշկական պրակտիկան կարգավորվում է լիցենզավորման պահանջներով, որոնք հիմնականում մշակել են բժիշկները՝ թույլ տալով իրենց մասնագիտության դեպքում սահմանափակել բժիշկների քանակը և պահպանել նրանց բարձր վարձատրությունը: Այս բոլոր (և նույնիսկ ավելի շատ) կանոնները բարձրացնում են ԱՄՆ-ի առողջապահության գինը:

Ի հակադրություն դրան, Սինգապուրը, որը, փոքր երկիր լինելով, իրականում ԱՄՆ-ից հարուստ է, Ամերիկայի մեկ շնչին հասնող ծախսերի միայն մեկ վեցերորդն է ծախսում պետության կողմից ֆինանսավորվող առողջապահական ծրագրերի վրա: Այս ամենի համար միայն պահանջվում է, որ ընտանիքներն իրենց եկամուտի մեկ հինգերորդը խնայեն առողջապահության, կենսաթոշակային և բնակարանային ապագա ծախսերի համար (թեև բժշկական անհապաղ օգնության համար կառավարության կողմից ֆինանսավորվող ծրագիր կա): Այն փաստը, որ մարդիկ իրենց գումարները խնայում են սեփական առողջության համար նախատեսվող խնայողական հաշիվներում, ստիպում է նրանց ձգտել ավելի լավ ծառայություն ստանալ, իսկ մասնավոր բժիշկներն ու կլինիկաները մրցակցում են իրենց հաճախորդների համար:

Շվեյցարիայում ապահովագրությունը պետության կողմից չի իրականացվում. մարդիկ ապահովագրություն և բժշկական ծառայություններ են գնում մասնավոր մատակարարներից: Պետության դերը սահմանափակվում է սուբսիդիաներ տալով ոչ թե մատակարարներին, այլ այն հաճախորդներին, որոնք չեն կարող ինքնուրույն լուծել իրենց հիմնական առողջապահական խնդիրները: Այսպիսով, ի տարբերություն ամերիկացիների, շվեցարացիներն արժևորում են առողջապահության ծախսերի համար տրամադրվող գումարները: Շատ եվրոպացիներ Շվեյցարիայի առավելապես ազատ շուկայական համակարգը համարում են աշխարհի թերևս լավագույն առողջապահական համակարգը:

Բարեկեցություն առանց կառավարության

Աղքատ մարդու բարեկեցության ապահովման լավագույն ձևը վճարվող աշխատանք ունենալն է: Սակայն կառավարության առաջադրած բարեկեցության սխեմաները վերացնում են աշխատատեղերը: Մի շարք եվրոպական երկրներում «սոցիալական ապահովագրությունը» ֆինանսավորվում է աշխատողների համար կոնկրետ հարկեր սահմանելով, ինչն ավելացնում է գործատուների ծախսը և դժվարեցնում նրանց կողմից նոր աշխատողներ վարձելը: Հետևաբար, գործազրկության նպաստների ավելացումը հանգեցնում է հարկերի բարձրացմանը, ինչն էլ բերում է աշխատատեղերի պակասեցմանը: Դա վայրընթաց պարույր է:

Շվեդիան ազատ, ցածր հարկերով և բարեկեցիկ երկիր էր մինչև քսաներորդ դարի կեսերը: 1970 թվականից հետո երկու տասնամյակի ընթացքում այն սկսեց շատ բարձր հարկեր պարտադրել իր համապարփակ սոցիալական ապահովության ծրագրերի ֆինանսավորման համար: (Իրոք, 1976 թվականին մի շվեդացի հեղինակ բողոքել էր, որ իր մարգինալ հարկի դրույքաչափը հասել է 102 տոկոսի:) Այս բարձր հարկերը աշխատանքի և գործարարության համար հիմնական խոչընդոտ էին: Դրանք երկու տասնամյակ շարունակ Շվեդիան ցածր աճի

դատապարտեցին, մինչև քաղաքականությունը սկսեց փոխվել 1990-ական թվականներին:

Ազատ երկրները, որպես կանոն, ավելի հարուստ են, իսկ հարուստ երկրներն ավելի շատ միջոցներ են ծախսում կարիքավորների սոցիալական աջակցության վրա: Դա բարոյապես ավելի առողջ է, քան երբ պետությունը հարկերի միջոցով մարդկանց գումարները վերցնում է իր նախագծած սոցիալական աջակցության ծրագրերի վրա ծախսելու համար, և ոչ միայն այն պատճառով, որ իշխանությունը ձգտում է արտոնություններ սահմանել իր ընկերների համար և հարկեր պարտադրել նրանց հակառակորդներին: Իրական բարեգործությունը կատարվում է մի անձից մյուսին կամավոր փոխանցման միջոցով, այլ ոչ թե հարկադրանքով:

Պետական սոցիալական աջակցության ծրագրերի հաջորդ խնդիրը կախվածության մշակույթի ստեղծումն է: Որպես խոշոր ծրագրեր, որոնք իրագործվում են պետական ծառայողների կողմից, դրանք անհրաժեշտաբար գործում են ըստ կանոնների, այլ ոչ թե շահառուների կարիքների և ներուժի անհատական գնահատման հիման վրա, ինչպես որ դա արվում է իրական բարեգործության դեպքում: Դա խրախուսում է մարդկանց «խաղի մեջ» մտնել այդ կանոններով՝ ավելի նպաստավոր որակավորում ձեռք բերելու համար: Երբեմն աղքատ ընտանիքները միտումնավոր վատթարացնում են իրենց կենսապայմանները՝ ավելի բարձր նպաստների պահանջներին համապատասխանելու համար, ինչը հակասում է մեր նպատակին: Պետական սոցիալական աջակցություն ապահովող ամենահին և ամենամեծ երկրներում, ինչպիսին, օրինակ, Միացյալ Թագավորությունն է, քաղաքական գործիչներն այժմ տեսնում են երրորդ սերնդի կախվածություն՝ նպաստի հույսին ապրող ընտանիքներ, որոնց ծնողները, տատերն ու պապերը նրանցից առաջ նույնն էին անում:

Մասնավոր բարեգործության վրա հիմնված ինքնուրույն օգնությունն ավելի մարդասիրական, շահագրգռող և ազդեցիկ այլընտրանք է: Նախքան 1940-ական թվականները Միացյալ Թագավորությունն ուներ բանվորական դասակարգի բարեկեցության ծաղկուն համակարգ, մինչև որ պետական սոցիալական աջակցության համակարգը վերացրեց այն: Դրանք

բարեկամական հասարակություններ էին, որոնց անդամները կատարում էին շաբաթական ներդրումներ ի պատասխան որոշակի օժանդակության, ինչպիսիք էին՝ գործազրկության նպաստը, բժշկական ապահովագրությունը և նույնիսկ հուղարկավորության ծախսերը: Դրանք սովորաբար կենտրոնացած էին առանձին մասնագիտությունների շուրջ՝ այդ աշխատողների առանձնահատուկ պահանջները բավարարելու համար: Միլիոնավոր ընտանիքներ, մասնավորապես աղքատ մարդիկ, անդամագրվել են այս մարմիններին: Համատարած բարեկեցության ապահովումն առանց կառավարության, իհարկե, իրագործելի է:

Բարեգործական ոլորտի վերածնունդ

Զարգացած պետական սոցիալական աջակցության համակարգ ունեցող երկրներում ապրող բազմաթիվ մարդիկ պնդում են, որ մասնավոր բարեգործությունն ու մարդասիրությունը չեն կարող հնարավորինս փոխարինել հարկային ֆինանսավորմամբ իրականացվող սոցիալական նպաստների ու կենսաթոշակների առատաձեռնությանը: Պետության համար, անշուշտ, շատ հեշտ է այլ մարդկանց գումարի հաշվին «մեծահոգի» լինել, և քաղաքական գործիչները ներկայումս շռայլ արտոնություններ խոստանալու շարժառիթներ ունեն՝ մտածելով, որ դեռևս չծնված սերունդն ի վերջո կվճարի դրանց համար: Միայն սա արդեն իսկ կարող էր քաղաքական գործիչներին սոցիալական աջակցությունից մեկուսացնելու լավ առիթ հանդիսանալ: Սակայն, բացի այդ, պետական նպաստների բարձր լինելու դեպքում ավելի քիչ են դրանց հաշվին ապրելու փոխարեն աշխատանք գտնելու և իրենց ծախսերը հոգալու շարժառիթները ընտանիքների և անհատների համար, առավել ևս, որ աշխատողները պետք է բարձր հարկեր վճարեն պետական սոցիալական աջակցության համակարգի ֆինանսավորման համար: Թեև այս ամենն ի սկզբանե ստեղծվել է բարի նպատակներով, վերջնական արդյունքում այն հանգեցրել է մարդկանց իրենց հույսերից և ձգտումներից զրկելուն, և նրանց կյանքը կախվածության դատապարտելուն:

Այն երկրները, որոնք ցանկանում են շարժվել ազատության ուղղությամբ, պետք է սկսեն իրենց հսկայական պետական աջակցության համակարգերն ավելի փոքր և տեղական համակարգերի բաժանելուց: Դրանք կարող են նույնիսկ «անհատականացվել» անձնական հաշիվների ձևով: Դա կարող է օգնել ընտանիքներին պատկերացնել իրենց սեփական պարտականությունները և հասկանալ, որ նրանց աջակցությունը տրամադրվում է իրական հարկատուներից, այլ ոչ թե ցրված «համակարգի» կողմից: Համակարգն այս կերպ կոտրելը թույլ է տալիս ապահովել դրա ավելի արդյունավետ կառավարումը մասնավոր հատվածի մատակարարների կողմից:

Որպես օրինակ կարող է ծառայել Չիլիի կենսաթոշակային համակարգը: 1981 թվականին երկիրն իր ձախողված և անարդար կենսաթոշակային համակարգը փոխարինեց անձնական հաշիվներով: Աշխատողներին պարտադրվում էր խնայողություններ անել մինչ կենսաթոշակի տարիքի հասնելը, սակայն իրենց միջոցները կառավարելու համար նրանք կարող էին ընտրություն կատարել մի քանի մասնավոր մատակարարների միջև: Համակարգը խթանեց խնայողություններ կատարելու անձնական պատասխանատվությունը, նպաստեց աշխատավարձերի բարձրացմանը, և դրանից հետո այն կիրառվել է աշխարհի մի շարք երկրների կողմից:

Հաջորդ օրինակը Սինգապուրի առողջապահական խնայողական հաշիվների համակարգն է (տես վերևում), որը զգալի պատասխանատվություն է դնում անհատների և ընտանիքների վրա՝ խրախուսելով մարդկանց հոգալ իրենց սեփական առողջապահական և այլ կարիքները: Միացյալ Թագավորության հին բարեկամական հասարակությունը ևս մեկ մոդել է, որը կարող է հեշտորեն վերականգնվել՝ պետական նպաստները անձնական, մասնավոր հաշիվներին փոխանցելու միջոցով:

Պետական աջակցության թերի ապարատի այսպիսի բարեփոխման արդյունքում պետությանն ապավինելու փոխարեն անհատները սկսում են աշխատանք փնտրել և հույսը դնել սեփական ուժերի և ընտանիքների վրա: Դեռևս կպահպանվի մասնավոր բարեգործության և մարդասիրության կարիքը, սակայն դա կլինի ավելի կառավարելի չափերով: Ինչպես

տեսանք, ազատությունն ու ցածր հարկերը լավ միջոցներ են, որպեսզի մարդկանց տրամադրվի առատաձեռն լինելու կամք և հարստություն՝ շարժառիթ, որը վերացնում են պետական միջամտությունն ու բարձր հարկերը:

Գլոբալիզացիա և առևտուր

Գլոբալիզացիայի առավելությունները

Ինչպես Նեպալում, շատ այլ երկրներում ևս մտահոգված են այն մասին, թե ինչպես նրանց վրա կանդրադառնան ավելի ու ավելի գլոբալիզացված շուկաները: Սակայն մտահոգությունների մեծ մասն անտեղի է, իսկ գլոբալիզացիայի և առևտրի դրական օգուտները՝ էական:

Շուկայական գների մեխանիզմի շնորհիվ՝ մենք այսօր ուղղակի և անուղղակի ձևով կարող ենք առևտուր անել այլ մարդկանց հետ ամբողջ աշխարհում: Մեր հագուստը, կերակուրը, բնակարանների, գրասենյակների ու գործարանների սարքավորումները՝ բոլորն էլ զարմանալիորեն մեծաքանակ և հեռու երկրների արտադրանք են:

Սակայն շուկաների գլոբալիզացիան աշխատում է երկու ուղղությամբ: Այն ոչ միայն հնարավորություն է տալիս հարուստ երկրներին գնումներ կատարելու ամբողջ աշխարհով մեկ: Այն նաև երբեմնի հեռավոր երկրների մարդկանց համար իրենց վիճակը բարելավելու հեռանկարներ է բացում՝ նրանց արտադրանքը միջազգային շուկայում ներառելու միջոցով: Օրինակ, ի՞նչ մշակաբույսեր պետք է աճեցնի տեղի հողագործը: Նախկինում, մշակաբույսերի գների մասին տեղեկատվության միակ աղբյուրը տեղական վաճառականները կամ պետական մարմիններն էին, որոնք, իհարկե, իրենց սեփական շահերն ունեին: Տեղական գները կարող էին լայնորեն տատանվել՝ կախված այնպիսի գործոններից, ինչպիսին եղանակն է: Տեղական շուկաները ոչ միշտ էին լավ կազմակերպված: Այսօր գյուղացին կարող է վերցնել բջջային հեռախոսը և մուտք գործել ցանկացած թվով կայքեր, որոնք գրեթե բոլոր մշակաբույսերի համար ներկայացնում են շուկայական գները, այդ թվում՝ ապագա գնային

առաջարկները, ամբողջ աշխարհի անհամար շուկաներում: Այժմ ցանկացած վայրում գյուղացին կարող է վաճառք կատարել կազմակերպված, միջազգային շուկայում շատ ավելի կանխատեսելի գներով:

Նոր Զելանդիայի բացահայտումը

Նոր Զելանդիան մի երկրի օրինակ է, որը հրաժարվեց առևտրի կանոնների կարգավորումներից: 1980-ական թվականների սկզբին այդ կարգավորումները հանգեցրել էին մի շատ ընկճված և ծանր տնտեսական իրավիճակի: Սակայն, սկսած 1984 թվականից այնտեղ վերջ դրվեց հովանավորչությանն ու ազատականացվեց միջազգային առևտուրը, բացելով երկրի շուկաները համաշխարհային մրցակցության առջև: Վերացվեցին արդյունաբերությանն ու գյուղատնտեսությանը հատկացվող սուբսիդիաները: Վերակարգավորվեցին ներքին շուկաները, ներառյալ՝ լավ կարգավորված աշխատաշուկան. արհեստակցական միությանն անդամակցելը դարձավ կամավոր, և պայմանագրերը կազմվեցին աշխատողների և ղեկավարների միջև ընթացող բանակցությունների հիման վրա:

Լոբբիստների, գիտնականների, կրոնական առաջնորդների և արհմիության պաշտոնյաների մռայլ կանխատեսումները, թե այս վերակարգավորումները կբերեն «տաժանակիր» տնտեսության, չհամապատասխանեցին իրականությանը: Միջին աշխատավարձը բարձրացավ: Աշխատանքային պայմանագրերը սկսեցին ավելի հաճախ կնքվել: Գործադուլային շարժումը հասավ գրեթե զրոյի: Գործազրկությունը նվազեց, հատկապես մարդիացիների, ներգաղթյալների և այլ աղքատ կամ խոցելի խմբերի շրջանում: Նոր Զելանդիան դարձավ աշխարհի ամենաազատ և մրցունակ երկրներից մեկը:[34]

---

[34] Roger Douglas, Toward Prosperity, David Bateman, Auckland, NZ, 1987.

Ոմանք անհանգստանում են, որ շուկաների գլոբալիզացիան կարող է երկրներից խլել իրենց յուրահատուկ ինքնությունն ու մշակույթը: Մասնավորապես, ամերիկյան ապրանքանիշերի տարածումը մտահոգությունների տեղիք է տալիս, որ երբեմնի տարբերվող երկրները կսկսեն ձանձրալիորեն նմանվել, որ արևմտյան ապրանքներն ու վերաբերմունքը կհեղեղեն մյուս վայրերը, և որ աշխարհի բարձրագույն մշակույթները կճնշվեն մեկ ընդհանուր ցածր հայտարարի գալու գործընթացում:

Իհարկե, տնտեսական և սոցիալական մշակույթները փոխվում են: Այն ապրանքները, որոնք նախկինում յուրահատուկ էին որևէ առանձին երկրի համար, այժմ կարելի է գտնել բոլոր երկրների գլխավոր փողոցներում: Դա չի նշանակում, որ ընտրությունն ու բազմազանությունն անհետանում են: Ընդհակառակը, դա նշանակում է, որ ցանկացած երկրի ժողովուրդ այժմ ավելի շատ ընտրություն ունի, քան նախկինում: Միացյալ Թագավորության քաղաքացիները, օրինակ, այլևս կարիք չունեն հանդուրժել փափուկ և չափից շատ եփած սննդամթերքը, որով նախկինում հայտնի էր նրանց երկիրը: Այժմ նրանք կարող են գտնել ռեստորաններ, առաքող խանութներ և սուպերմարկետներ, որտեղ վաճառվում են հնդկական, վիետնամական, լատինաամերիկյան, իրանական, մոնղոլական, լեհական և անհամար տեսակի այլ սննդամթերք: Ողջ աշխարհով մեկ բազմաթիվ մարդիկ նույնպես վայելում են նմանօրինակ ընտրությունը. ընտրություն, որը նախկինում հասու էր միայն այն սակավաթիվ երջանիկներին, որոնք բավականաչափ հարուստ էին ճանապարհորդելու համար: Այս դեպքում մշակույթները չեն կորչում, այլ այնքան են տարածվում, որ յուրաքանչյուրը կարող է վայելել դրանք:

Մշակույթները երբեք չեն մնում ստատիկ և անփոփոխ, ինչպես ենթադրում են նրանք, ովքեր ցանկանում են հետ պահել դրանք գլոբալիզացիայից: Երկրի մշակույթն անընդհատ փոխվում է, և որքան վառ ու կենդանի է մշակույթը, այնքան նոր մշակութային գաղափարներ է այն առաջացնում և այնքան շատ է այն փոխում: Ամենավառ երկրների արվեստը, երաժշտությունը, գրականությունը, ապրելակերպը, խոհանոցը և նորաձևությունն

այսօր բավական անծանոթ կլինեն նրանց համար, ովքեր այդտեղ ապրել են ընդամենը մեկ դար առաջ:

Մշակույթները շահում են՝ ենթարկվելով այլ մշակույթների ազդեցությանը, թույլ տալով մարդկանց՝ ընտրել իրենց սեփական կյանքին և ժամանակին ավելի հարմար տարրեր: Միջազգային առևտրի շնորհիվ մենք տեսնում և հասկանում ենք արտասահմանյան մշակութային տարրերը, որոնք մենք օգտակար ենք համարում և հարմարեցնում մեր մշակույթին: Սակայն փոփոխությունների այս գործընթացը տեղի էր ունենում շատ ավելի վաղ, մինչև գլոբալիզացիայի մասին խոսք լինելը:

Ընդ որում, շատ փոփոխություններ, որոնց համար մենք ափսոսում ենք, մեր արվեստի ամենավառ մասերի կորուստը, ոչ թե արտասահմանյան մշակութային իմպերիալիզմի, այլ արդիականացման պարզ ազդեցությունների արդյունք է: Հնագույն արարողությունները, սովորույթներն ու ազգային տարազներն անհետանում են ոչ թե գլոբալիզացիայի, այլ այն պատճառով, որ կյանքն ինքնին փոխվում է: Կոնկրետ եղանակներին նշվող փառատոները կարևոր էին հողագործական համայնքների համար, սակայն ներկայումս շատ քիչ հնչեղություն ունեն ժամանակակից աշխարհում, որտեղ մարդկանց կեսն ապրում է քաղաքներում:[35]

Հավանաբար, նաև լավ է, որ մշակույթները փոխվում են: Աշխարհի շատ մշակույթներ պարտադրվել են իրենց ժողովուրդներին իշխանությունների կողմից, և սահմանափակ ազատությամբ երկրների շատ մշակույթներ իրականում վնասակար են: Մենք պետք է ողջունենք այն փաստը, որ ավելի շատ ճանապարհորդությունները և ավելի լայն հարցադրումները դժվարացրել են երկրների կողմից այն մշակույթի պահպանումը, որի պայմաններում որոշ խմբեր պարբերաբար շահագործվում են, ճնշվում կամ խտրականության ենթարկվում:

Հարց - Արդյո՞ք հարուստ երկրները չափազանց շատ չեն օգտվում աշխարհի հարստությունից:

---

[35] Mario Vargas Llosa, ‘The culture of liberty’, in Tom G. Palmer, The Morality of Capitalism, Students for Liberty and Atlas Foundation, Arlington, VA, 2011.

Ոչ: Հարստությունն այնպիսի բան է, որը դուք ստեղծում եք ձեր հմտությունների, գործարարության, էներգիայի, ջանքերի, կազմակերպվածության և ներդրումների միջոցով: Հարուստ երկրները, իհարկե, սպառում են հարստությունը, բայց նրանք նաև ստեղծում են այն: Եվ ոչ միայն իրենց համար. նրանք բացահայտում և զարգացնում են կենսական կարևորության այն ապրանքներն ու գործընթացները, որոնք բարելավում են բոլորի, հատկապես մոլորակի ամենաաղքատ մարդկանց կյանքը:

Օրինակ, բժշկության առաջընթացն օգնում է արմատախիլ անել աշխարհի ամենավնասակար հիվանդություններից մի քանիսը, ինչպիսիք են տուբերկուլյոզն ու մալարիան: Գենետիկական տեխնոլոգիաներն օգնում են բարձրացնել բրնձի և այլ մշակաբույսերի եկամտաբերությունն ու դիմադրողականությունը վնասակար միջատներից: Նոր նյութերը շենքերը դարձնում են ավելի էժան և ավելի ապահով:

Չկա որևէ ֆիքսված հարստություն, որի մեծ մասնաբաժինը անարդար կերպով զավթում են հարուստ երկրները: Ընդհակառակը, հարուստ երկրների փորձը նոր հնարավորություններ է ստեղծում մյուսների համար:

Խաղաղության կարևորությունը

Ադամ Սմիթը գրել է. «Պետությունը բարբարոսության ամենացածր աստիճանից բարեկեցության ամենաբարձր աստիճանին հասցնելու համար անհրաժեշտ է միայն խաղաղություն, թեթև հարկեր և հանդուրժող վարչարարություն արդարադատության կողմից… »[36]:

Խաղաղությունը երկրի ներսում, ինչպես նաև երկրի սահմաններից դուրս, անշուշտ, պարտադիր պահանջ է ազատ տնտեսության զարգացման համար: Մարդիկ ձեռնարկություններում ներդրումներ չեն կատարի և արդյունավետ կապիտալ չեն ստեղծի, եթե մտածեն, որ իրենց հարստությունը, հավանաբար,

[36] Lecture in 1755, quoted in Duguld Stewart, Account of the Life and Writings of Adam Smith LLD, Section IV, 25.

կթալանվի պատերազմող զինյալների կամ ներխուժող բանակների կողմից: Այն երկրները, որոնց քաղաքացիները առևտուր են անում այլ երկրների քաղաքացիների հետ, քիչ հավանական է, որ հակամարտություն փնտրեն նրանց հետ: Ըստ տասնիններորդ դարի ֆրանսիացի տնտեսագետ և քաղաքագետ Ֆրեդերիկ Բաստիատի՝ «Եթե ապրանքները չանցնեն սահմանները, ապա դա կանեն բանակները»[37]:

Խաղաղության առավելությունները և՛ տնտեսական են, և՛ մշակութային: Խաղաղությունը թույլ է տալիս ջանքերն ու ռեսուրսները կենտրոնացնել արգասաբեր, այլ ոչ թե ապակառուցողական գործունեության վրա: Այն մարդկանց թույլ է տալիս պլանավորել իրենց և իրենց ընտանիքների ապագան: Այն նրանց տալիս է ժամանակ, հարստություն և վստահություն մշակութային և կրթական գործունեություններ իրականացնելու համար: Խաղաղությունը նպաստում է մարդկանց, ապրանքների և գաղափարների ազատ տեղաշարժին՝ տարածելով փոխըմբռնում, բարեկեցություն ու նորարարություն:

Ադամ Սմիթի հաջորդ գաղափարն այն էր, որ մենք կարիք չունենք աղքատացնել մյուս երկրներին հարստանալու համար: Մեզ համար ավելի լավ է, երբ մեր սպառողները հարուստ են, ոչ թե աղքատ:[38] Նույն կերպ, ուժեղ լինելու համար մենք չպետք է թուլացնենք մյուսներին: Երկու կողմերն էլ շահում են խաղաղության առավելություններից:

Ժամանակ առ ժամանակ պետք է պայքարել խաղաղության համար: Սեփականությունն ու մարդիկ պետք է պաշտպանվեն: Անհրաժեշտ ռեսուրսներ հավաքագրելը կարող է պահանջել կառավարության (սահմանափակ) ներգրավվածությունը: Սակայն աճող իշխանությունը հաճախ դառնում է նաև չափազանց ռազմատենչ. հավանաբար ձգտելով քողարկել բարգավաճման և ազատության պակասը և քարոզելով, որ ազգի անվտանգությունը պահանջում է զոհաբերություն, նպատակների միասնություն և ռազմական ուժ: Ազատ հասարակություններում

---

[37] Frédéric Bastiat, Bastiat's 'The Law', Institute of Economic Affairs, London, 2001 [1850].

[38] Adam Smith, The Wealth of Nations, 1776, Book IV, ch. III, Part II.

մարդիկ պակաս հավատարիմ չեն իրենց երկրին. սակայն նրանց նվիրվածությունը ուղղված է դեպի բաց ու ազատ հասարակությունը, իրենց ընտանիքները, ընկերները, հաճախորդները և կամավոր միավորումները, այլ ոչ թե դեպի բռնապետը, դրոշը կամ որևէ ազգայնական երազանք:

Ոմանք պատկերացնում են, որ խաղաղության կարելի է հասնել որևէ վերազգային համաշխարհային կառավարություն ստեղծելու միջոցով: Թեև օգտակար է կազմակերպել միջազգային ֆորումներ, որտեղ կարելի է բարձրաձայնել տարբերություններն ու վնասազերծել պոտենցիալ տարաձայնությունները, մենք չպետք է ենթադրենք, որ համաշխարհային կառավարությունը կարող է ավելի լավը լինել, քան մեր գործող ազգային պետությունները: Հաշվի առնելով նրա հսկայական մասշտաբներն ու հանրությունից ավելի մեծ առանձնացվածությունը, ավելի մեծ կլինեն իշխանությունն ընդարձակելու և չարաշահելու նրա միտումները: Ոչ ոք չի կարող խուսափել այդ չարաշահումներից աշխարհի մյուս մասը տեղափոխվելով: Ո՛չ, խաղաղության խթանման լավագույն միջոցը պետությունները փոքրացնելն է, այլ ոչ թե մեծացնելը, ապավինելով մարդկային էակների՝ խաղաղ համագործակցության և իրենց կենսապայմանները բարելավելու բնական միտմանը:

9. ՀԱՄԱՌՈՏ ՓԱՍՏԱՐԿՆԵՐ

Փաստարկ հօգուտ ազատության

Ազատությունը նպաստում է բարգավաճմանը: Ազատություն ձեռք բերած հասարակությունները հարստացել են, իսկ մյուսները մնացել են աղքատ:

Բայց ազատ հասարակությունն ունի առավելություններ նաև ոչ նյութական առումներով: Այն գործում է անհատների միջև փոխադարձ վստահության և համագործակցության, այլ ոչ թե ուժի և հարկադրանքի հիման վրա: Նրա քաղաքացիները միմյանց հետ խորը մշակութային, անձնական և բարոյական կապեր ունեն: Նրանք կամավոր հիմունքներով ընդունում են միջանձնային վարքագծի կանոնները՝ իրենց փոխադարձ շահի համար, այլ ոչ թե պարտադրված: Նրանց կառավարությունները ստացել են կառավարվողների համաձայնությունը, և իրենք էլ ղեկավարվում են կանոններով՝ իրենց լիազորությունների ցանկացած չարաշահում կանխելու նպատակով:

Ազատ հասարակությունը բացահայտում է մարդկային տաղանդը, հայտնագործություններն ու նորարարությունը: Դա նրան հնարավորություն է տալիս հարստություն ստեղծել այնտեղ, որտեղ այն նախկինում գոյություն չի ունեցել: Ազատ հասարակության մարդիկ չեն հարստանում մյուսներին շահագործելով, ինչպես դա անում են ոչ ազատ երկրների վերնախավերը: Նրանք չեն կարող հարստանալ՝ մյուսներին աղքատացնելով: Նրանք հարստանում են միայն մյուսներին տրամադրելով այն, ինչ վերջիններս ուզում են, և բարելավելով մյուս մարդկանց կյանքը:

Սահմանափակ լիազորություններով կառավարություն

Շատերը համաձայնվում են, որ կառավարությունն անհրաժեշտ է արդարադատություն իրականացնելու, ինչպես նաև այնպիսի որոշումներ ընդունելու համար, որոնք անհատ մարդիկ չեն կարող ընդունել միայնակ: Այդուհանդերձ, գրեթե բոլորը համաձայն են, որ կառավարության իշխանությունը պետք է սահմանափակ լինի: Ազատ հասարակության կառավարության գոյության նպատակն է կանխել իր քաղաքացիներին վնաս պատճառելը: Կառավարությունն ապահովում և հարկադրում է արդարադատություն՝ բնական կանոններ, որոնք հնարավորություն են տալիս մարդկային էակներին խաղաղ համագործակցել:

Ազատ հասարակության կառավարությունը կաշկանդված է օրենքի գերակայությամբ: Օրենքները կիրառվում են բոլորի նկատմամբ հավասարապես: Նրա առաջնորդները չեն կարող թալանել իրենց քաղաքացիներին՝ ելնելով սեփական շահերից, արտոնություններ շնորհել իրենց ընկերներին կամ օգտագործել ունեցած լիազորությունները իրենց թշնամիների դեմ: Նրանց լիազորություններն ու պաշտոնավարման ժամկետները սահմանափակ են՝ իշխանության եկողների մոտ կոռուպցիան նվազեցնելու նպատակով: Ժողովրդավարական ինստիտուտները, ինչպիսիք են, օրինակ, ազատ և բաց ընտրությունները, ազատ խոսքի իրավունքը, ներկայացուցչական մարմինների ժամկետային սահմանափակումները և սահմանադրական նորմերը, սահմանափակում են քաղաքական առաջնորդների լիազորությունները:

Ավելի մեծ հավասարություն

Ազատ հասարակությունների տնտեսական շարժունության գլխավոր շահառուներն աղքատներն են: Ազատ հասարակությունները տնտեսապես ավելի հավասար են, քան ոչ ազատները: Ամենաազատ հասարակություններում աղքատներն այնպիսի ճոխություններ են իրենց թույլ տալիս, որոնց մասին չէին կարող

երազել մի քանի տարի առաջ. ճոխություններ, որոնք ոչ ազատ երկրներում հասանելի են միայն իշխող վերնախավերին:

Ազատ հասարակությունը չի փորձում նյութական հավասարություն պարտադրել: Այն ընդունում է, որ հարստությունն ու եկամուտը հավասարակշռելու փորձերն անարդյունավետ են: Այն խափանում է ինքնակատարելագործման, ծանր աշխատանքի և ձեռնարկատիրական ձգտումները: Այն մարդկանց ետ է պահում այնպիսի միջավայր ստեղծելուց, որը բարձրացնում է ողջ հասարակության արտադրողականությունը: Այն կանխում է անհատների կողմից նոր հարստություն և նոր արժեքներ ստեղծելը:

Սակայն ազատ հասարակություններն ունեն հավասարության ավելի կարևոր դրսևորումներ, որոնք հաճախ չկան ոչ ազատ հասարակություններում: Ճանաչվում է մարդկանց բարոյական հավասարությունը. յուրաքանչյուր մարդկային կյանք դիտվում է որպես պաշտպանության ենթակա արժեք: Առկա է օրենքի առջև հավասարությունը. դատավճիռները կախված են գործի փաստերից, այլ ոչ թե նրանից, թե դուք ով եք: Քաղաքացիներն ունեն քաղաքական հավասարություն. նրանք բոլորն էլ ունեն քվեարկելու, ընտրություններին մասնակցելու և իրենց քաղաքական տեսակետերն արտահայտելու իրավունքներ, անկախ նրանից, թե որքանով է դա ոչ ձեռնտու իշխանությունների համար: Նրանք ունեն հնարավորությունների հավասարություն. մարդիկ խտրականության չեն հանդիպում իրենց աշխատանքի կամ կրթության ընթացքում և կարող են կատարելագործվել անկախ իրենց ռասայից, կրոնից, էթնիկ պատկանելիությունից կամ ցանկացած այլ հատկանիշից:

Ազատ տնտեսություն

Ազատ հասարակությունը մարդկանց տալիս է իրենց սեփական տնտեսական ընտրությունը կատարելու ազատություն: Ազատ հասարակությունում մարդիկ արժեքներ են ստեղծում կամավոր փոխանակման միջոցով, ինչը երկկողմանի շահավետ է, հակառակ դեպքում նրանք դա չէին անի:

Անհատները բարգավաճում են մյուս մարդկանց հետ համագործակցելով և նրանց կողմից պահանջված ապրանքները մատակարարելով ու փոխարենը իրենց ցանկացածը ստանալով: Շահույթ ստանալու հեռանկարը խրախուսում է գործարարներին փնտրել այն, ինչ ուզում են մյուսները, և մատակարարել դա: Գները տեղեկացնում են պակասորդի և ավելցուկի մասին, ուղղորդելով, թե ինչ պետք է արտադրվի, և ինչը պետք է պահպանվի: Այս կերպ ժամանակը, հմտությունը, ջանքը, կապիտալն ու այլ ռեսուրսներն ավտոմատ կերպով ուղղվում են այնտեղ, որտեղ պահանջարկը հրատապ է, զերծ մնալով պակաս կարևոր նպատակներով օգտագործվելուց: Անհրաժեշտ չէ, որ կառավարությունը մարդկանց ասի, թե նրանք ինչ անեն:

Գործելու համար ազատ տնտեսությանն անհրաժեշտ է միայն մարդկանց փոխհամագործակցության մասին կանոնների սահմանված շրջանակ: Այն ներառում է սեփականության և գույքի փոխանցման, ինչպես նաև պայմանագրերի կնքման մասին կանոններ: Մասնավոր սեփականությունն անհրաժեշտ է անհատների կողմից բիզնեսներ ստեղծելու և ապրանքներ փոխանակելու դեպքերում: Բայց այն կարևոր է նաև այլ ազատությունների պաշտպանության համար: Եթե իշխանությունները վերահսկում են ամբողջ ունեցվածքը, ապա քաղաքական գործունեությունն ու բաց երկխոսությունն անհնար են դառնում:

Արդարադատություն և օրենքի գերակայություն

Արդարադատությունը չի կարող թելադրվել օրենսդիրների կողմից: Արդարադատության կանոնները մարդկային բնույթի մի մասն են. մեր կենսական մասը, որն օգնում է իրականացնել խաղաղ համագործակցություն անհատների միջև:

Ազատ հասարակությունում մարդիկ ունեն բնական արդարադատության իրավունք՝ մարդկային էակ լինելու շնորհիվ: Բնական արդարադատությունը համարում է, որ օրենքները պետք է լինեն հստակ և որոշակի, հավասարապես վերաբերվեն բոլոր մարդկանց, չպահանջեն անհնարինը, չլինեն հետահայաց, և որ պատիժները լինեն կանխատեսելի և հանցագործությանը

համաչափ: Բոլոր դեպքերում անհրաժեշտ է պատշաճ իրավական գործընթաց՝ արդար դատաքննությամբ, և ոչ մի երկարաժամկետ ազատազրկում առանց դատաքննության: Հանցագործությունների կատարման մեջ մեղադրվողին հարկավոր է վերաբերվել որպես անմեղի, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ, և արգելվում է անձին մի քանի անգամ դատապարտել նույն հանցագործության համար: Նման սկզբունքներն ընդունում են գրեթե բոլորը, անկախ իրենց երկրից, մշակույթից, ռասայից կամ կրոնից:

Այս բնական արդարադատության երաշխավորումն ու օրենքի գերակայության ապահովումը պահանջում են քաղաքական առաջնորդներին չենթարկվող անկախ դատական համակարգ: Ոստիկանությունը նույնպես պետք է անկախ լինի: Եթե գերիշխում է ազատությունը, ապա ոստիկանությունն ու դատական համակարգը կաշառք և կոռուպցիա չեն կարող հանդուրժել:

Ինքնաբուխ հասարակություն

Ազատ հասարակությունն ինքնաբուխ հասարակություն է: Այն կառուցվում է այն անհատների գործողություններից, ովքեր հետևում են խաղաղ համագործակցության կանոններին: Այն չի պարտադրվում վերևից՝ քաղաքական իշխանությունների կողմից:

Մարդիկ ստիպված չեն համաձայնվել ամեն ինչի հետ՝ փոխադարձ շահերի համար համագործակցելու նպատակով: Ապրանքներ փոխանակող անձինք համաձայնության են գալիս միայն գնի հարցում: Բայց այդ համագործակցության արդյունավետությունն ապահովելու համար անհատները պետք է հարգեն մյուսների տեսակետներն ու գործողությունները: Ազատ հասարակությունն անհատներին կամ կառավարություններին թույլ է տալիս միջամտել միայն իրական վնասը կանխելու համար: Մարդկանց վարքագիծը չհավանելու կամ վիրավորական համարելու պատճառով նրանց ազատության սահմանափակումը վերացնում է իրենց բարոյապես ավելի բարձր դասող մարդկանց

կողմից անհատի ազատության սահմանափակման բոլոր արգելքները:

Հասարակությունը շահում է այլ մարդկանց գաղափարները և ապրելակերպը հարգելու դեպքում: Ճշմարտությունը միշտ չէ, որ ակնհայտ է. այն առաջանում է գաղափարների ճակատամարտում: Մենք չենք կարող վստահ լինել, որ գրաքննիչները կճնշեն միայն սխալ գաղափարները: Նրանք կարող են սխալմամբ ճնշել այն գաղափարներն ու գործողության եղանակները, որոնք ապագայում կարող են շահեկան լինել հասարակության համար:

Ազատության աշխարհը

Ավտորիտար կառավարությունների համար գնալով ավելի է դժվարանում թաքցնել իրենց գործողությունները մնացած աշխարհից: Արդյունքում մեծանում է առևտրի և զբոսաշրջության համար բաց երկրների թիվը, տարածվում են նոր գաղափարներ: Ավելի շատ մարդիկ են տեսնում տնտեսական և սոցիալական ազատության առավելությունները և պահանջում դրանք:

Ազատության բացակայության պայմաններում դժվար է ստեղծել ազատ հասարակության բարոյականություն և ինստիտուտներ: Դրանց կիրառումը մեծաքանակ եղանակով պարտադրելու փոխարեն ավելի լավ է սկսել ցածր մակարդակից՝ ստեղծելով այնպիսի պայմաններ, որոնք թույլ են տալիս մարդկանց ազատորեն գործել և իրենց գործողություններով ստեղծել ազատ հասարակություն: Այս ամենի առանցքային մասն է գույքային իրավունքների ապահովումը, որպեսզի մարդիկ կարողանան կառուցել իրենց բիզնեսը և իրականացնել առևտուրը՝ վստահ լինելով, որ իրենց սեփականությունը չի առգրավվի:

Բարեփոխումները պետք է իրական տնտեսական ազատություն ապահովեն, այլ ոչ թե կլանային կապիտալիզմ: Այն մեծաթիվ կառավարությունները, որոնք պնդում էին, թե հարկավոր է մասնավորեցնել պետական ձեռնարկությունները, իրականում դրանց սեփականության իրավունքները փոխանցել

են իրենց ընկերներին ու բարեկամներին: Իրական փոփոխության համար հարկավոր է, որպեսզի ամբողջ բնակչությունը ներգրավվի տնտեսական բարեփոխումների մեջ:

Երկրները չեն տուժում միջազգային առևտրի մեջ ներգրավվելով: Հայրենական արտադրողների պաշտպանությունը մրցակցությունից պարզապես նշանակում է ավելի բարձր գներ և ավելի ցածր որակ ներքին սպառողների համար: Միջազգային առևտրային հանրության մաս կազմելը ներքին գործարարներին նոր շուկաներ և հնարավորություններ է տալիս: Վերջին երեք տասնամյակների ընթացքում բաց առևտուրն ավելի քան մեկ միլիարդ մարդու հանել է ծայրահեղ աղքատությունից: Մարդկության պատմության մեջ ազատությունն իսկապես ամենաազնիվ և արդյունավետ ուժերից մեկն է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ashford, N. (2003), Principles for a Free Society, Stockholm: Jarl Hjalmarson Foundation.
2. Bastiat, F. (2001 [1850]), Bastiat's 'The Law', London: Institute of Economic Affairs.
3. Benn, E. (1964), Why Freedom Works, London: Sir Ernest Benn Ltd.
4. Butler, E. (2009), The Best Book on the Market: How to Stop
5. Worrying and Love the Free Economy, Oxford: Capstone Books.
6. Butler, E. (2012), Public Choice – a Primer, London: Institute of Economic Affairs.
7. Butler, E. (2012), Friedrich Hayek: The Ideas and Influence of the Libertarian Economist, Petersfield: Harriman House.
8. Friedman, M. with R. Friedman (1962), Capitalism and Freedom, Chicago, IL: University of Chicago Press.
9. Friedman, M. and R. Friedman (1980), Free to Choose, New York: Harcourt Brace Jovanovich.
10. Hayek, F. A. (1944), The Road to Serfdom, London: Routledge.
11. Hayek, F. A. (1960), The Constitution of Liberty, London: Routledge.
12. Meadowcroft, J. (ed.) (2008), Prohibitions, London: Institute of Economic Affairs.
13. Mill, J. S. (1859), On Liberty, in J. S. Mill (2008), On Liberty and Other Essays, Oxford: Oxford University Press.
14. Norberg, J. (2003), In Defense of Global Capitalism, Washington, DC: Cato Institute.
15. Palmer, T. G. (ed.) (2011), The Morality of Capitalism, Arlington, VA: Students for Liberty and Atlas Foundation.
16. Pirie, M. (2008), Freedom 101, London: Adam Smith Institute.
17. Wellings, R. (ed.) (2009), A Beginner's Guide to Liberty, London: Adam Smith Research Trust.

ԱԶԱՏ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

ԷՅՄՈՆ ԲԱԹԼԵՐ

Անգլերենից հայերեն թարգմանությունը՝ «Լայն հնարավորություններ» երիտասարդական հասարակական կազմակերպության

FOUNDATIONS OF A FREE SOCIETY

EAMONN BUTLER

The present Armenian translation from English was done by “Wide Opportunities” Youth NGO

Տպագրությունը՝ օֆսեթ
Չափսը՝ 60x84 1/16
Թուղթը՝ օֆսեթ 70 գ/մ^2, 1,8 ծավալային կշռով
Տառատեսակը՝ Sylfaen
Ծավալը՝ 12,4 պայմ. տպ. մամուլ
Տպաքանակը՝ 2000 օրինակ

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
Հասցեն՝ Երևան, 0070, Հ. Քաջազնունու փող., 14/10
Հեռ.՝ (+374 10) 55-48-84, (41) 55-48-84
Կայք՝ www.tirpublishing.com
Էլ. փոստ՝ tirpublishinghouse@gmail.com

Տպագրվել է ,Տիր» հրատարակչության տպագրատանը
Հասցեն՝ Տավուշի մարզ, գ. Կողբ, 4-րդ փող., տուն 10
Հեռ.՝ (+374 266) 5-26-39